

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ», 9

ՄԻՔԱՅԵԼ ԲԱՐԹԻԿՅԱՆ

ԱՐՆԱՇԱՂԱԽ ԻԶՄԻՐԸ



ՕՀԱՆԷՍ (ՕՆՆԻԿ) ՂԱԶԵՐԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ




ARMENIAN GENOCIDE MUSEUM-INSTITUTE FOUNDATION
MEMOIRS OF SURVIVORS OF THE ARMENIAN GENOCIDE, 9

MIKAYEL BARTIKYAN
BLOODY IZMIR

OHANES (ONNIK) GHAZERIAN
BIOGRAPHICAL NOTES

Editor, author of the prefaces and references
TEHMINÉ MARTOYAN



ФОНД “МУЗЕЙ-ИНСТИТУТ ГЕНОЦИДА АРМЯН”
МЕМУАРЫ АРМЯН, ПЕРЕЖИВШИХ ГЕНОЦИД, 9

МИКАЕЛ БАРТИКЯН
ОКРОВАВЛЕННЫЙ ИЗМИР
ОГАНЕС (ОННИК) ГАЗЕРЯН
БИОГРАФИЧЕСКИЕ ЗАМЕТКИ

Редактор, автор предисловий и примечаний
ТЕГМИНЕ МАРТОЯН

AGMI PUBLISHING HOUSE / ИЗДАТЕЛЬСТВО МИГА
Yerevan / Ереван
2022

947, 9 2
ՀԱՅԿԵՆՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐԻ
ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ», 9

ՄԻՔԱՅԵԼ ԲԱՐԹԻԿՅԱՆ
ԱՐՆԱՇԱՂԱԽ ԻԶՄԻՐԸ

ՕՂԱՆԷՍ (ՕՆՆԻԿ) ՂԱԶԵՐԵԱՆ
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

11
110282

Խմբագիր, առաջաբանների և ծանոթագրությունների հեղինակ՝
ԹԵՀՄԻՆԵ ՄԱՐՏՈՅԱՆ



ՀՅԹԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Երևան 2022

Տպագրվում է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գլխավոր խորհրդի որոշմամբ

Բարթիկյան Միքայել Օհանէս (Օննիկ) Ղազերեան
Արնաշաղախ Իգմիրը / Միքայել Բարթիկյան; Կենսագրական նօթեր /
Բ 347 Օհանէս (Օննիկ) Ղազերեան; Խմբագիր, առաջաբանների և ծանոթագրությունների հեղինակ՝ Թեհմինե Մարտոյան. — Եր.: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, 2022.- 320 էջ. — («Հայոց ցեղասպանությունը վերապրածների հուշագրություններ», 9):

«Արնաշաղախ Իգմիրը» հուշագրությունը Ջյոտնիայի հայերի և հույների բնացնցման, քաղաքի հրկիզման և տարագրության մասին Միքայել Բարթիկյանի (1887-1968) վկայությունն է: Ժամանակի իրողությունները, հասարակական-քաղաքական և գաղափարական բախումները (Օսմանյան պետությունից մինչև Հունաստան, ապա՝ Խորհրդային Հայաստան) Բարթիկյանը ներկայացնում է ոչ միայն որպես ականատես-վերապրող, այլև քաղաքական անցուղարձը խորապես ըմբռնող անձ: Բարթիկյանի հուշապատումն ընդհանուր առմամբ 24 տարվա պատմություն է (1922-1946), թեև կան ավելի վաղ շրջանի տեղեկություններ: Հուշագրությունն ինչպես Օսմանյան պետության, այնպես էլ Հայաստանի ու Հունաստանի տվյալ ժամանակաշրջանի պատմության կարևոր սկզբնաղբյուր է:

«Կենսագրական նօթեր» հուշագրությունը Օհանէս (Օննիկ) Ղազերյանի (1897-1969) պատմությունն է՝ մանկությունը, ընտանեկան կյանքը հայկական միջավայրում, հարկադիր ծառայությունն օսմանյան բանակում (1915-1919), որտեղ ապրել է ողջ ողբերգությունը, անցել փորձություններով, առերեսվել հայ ժողովրդի եղերական ճակատագրին: Հուշագրության միջոցով Ղազերյանն իր բազմանդամ ընտանիքի հերոսական պատմության օրինակով ընթերցողին է փոխանցում կյանքի իր փորձառությունը, ավանդական հայ ընտանիքի բարեվարքությունը, Ջյոտնիայում վերաբնակվելու շարժառիթներն ու հետևանքները: Այն շարադրված է պատմական ակնարկի տեսքով՝ Օսմանյան պետության քաղաքական իրավիճակից մինչև Ջյոտնիայի կործանումը: Անդրադարձ կա նաև օսմանյան սահմանադրությանը և Առաջին աշխարհամարտին:

Նախատեսված է ցեղասպանագետների, պատմաբանների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 93/94

ISBN 978-9939-822-99-0

ԳՄԴ 63.3

© «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ, 2022

ՄԻՔԱՅԵԼ ԲԱՐԹԻԿՅԱՆ
ԱՐՆԱՇԱՂԱԽ ԻԶՄԻՐԸ



Միքայել Բարթիկյանը
Բարթիկյան ընտանիքի արխիվ



Միքայել Բարթիկյանը կնոջ՝ Արփինե Բարթիկյանի հետ
Բարթիկյան ընտանիքի սրբիչ



Միքայել Բարթիկյանը կնոջ և որդիների հետ
Բարթիկյան ընտանիքի արխիվ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սարսափին աչքերում լույսի սպասելիս 10

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Քեմանն ու քեմալական Թուրքիան	22
Մեծ ախորժակով փոքրը	40
Իզմիրի զինվորական գրախումբը	42
Թշնամի «բարեկամներ»	47
Տարպեյան ժայռը	52
Սպարապետին օրակարգը	55
Մահիկն ու աստղը	58
Գյուզել Իզմիր	61
Բերդը՝ ներսից	64
Ճակատը՝ ճեղքված	65
«Լքումներ»	69
Առաջին խուճապը	80
Բախտին անիվը դարձվե՞լ է	82
Անխոհեմ թափառումներ	84
Թրքական թակարդը	87
Հայ եմ	90
Դեպի Բարափ	92
Կրակն ու քանդումը	95
«Ս. Կարապետի վանքը»	99
«Վանք»-ին գրավումը	103
Որբերն ու որբուհիները	106
Դեպի շոգենավ	112
Ս. Ստեփանոս եկեղեցին	115
Ազգային հիվանդանոցը	120
Ամբաստանություններ	126
«Բախտավոր» վախճանը	138
Կարմիր ջարդը	143
Խնամք... և աշխատանք	161
Սիվրիսարյան եղբայրը	68
Դեպի ազատություն	171
Դեպի նավ	176
Վերջապե՛ս ազատ	179

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Բողոքի՞ց շահագործված, բողոքի՞ց խաբված	182
Միակ փրկություն – հայրենադարձություն	202
Դեպի արևաշող Երևան	206

ՍԱՐՍԱՓՆ ԱԶՔԵՐՈՒՄ ԼՈՒՅՍԻ ՍՊԱՍԵԼԻՍ

«Արնաշաղախ Իզմիրը»¹ հուշագրության² հեղինակ անվանի հրապարակախոս, գրական-հասարակական գործիչ, խմբագիր Միքայել Հակոբի Բարթիկյանը (1887-1968) ծնվել է Թուրքիայի Կոնիա³ քաղաքում: 1907 թ. ավարտել է ճենանյան քոլեջը⁴: 1911 թ. Կոնիայում հիմնադրել է «Շախիդ» տպարանը և

¹ *Իզմիր* անվանումը հարմարեցված է թուրքերենի հնչյունային օրենքներին (թուրք. 'İzmir, օսմ. 'ازمير, հուն. 'Σμύρνη, հայերեն՝ Զմյուռնիա):

² Հուշագրությունը 2012 թ. հունիսի 2-ին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին է նվիրաբերել Նունե Հրաչի Բարթիկյանը՝ Միքայել Բարթիկյանի թոռնուհին: Ձեռագիրը (85 էջ) պահվում է «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի թանգարանային ֆոնդերում (բաժին 8, ֆ. հ. 376) և կրում է «Արնաշաղախ Իզմիրը» խորագիրը: Նունե Բարթիկյանի հեռու համագործակցությամբ ձեռք բերվեց հուշագրության մեքենագիր տարբերակը (217 էջ)՝ հետևյալ էջերի բացակայությամբ (1, 16, 35, 36, 40, 41, 53-58, 65-71, 75, 78-80, 91-102, 104, 110, 120-123, 126, 133, 152-154, 162-164, 167-174, 182, 194): Հուշագրության այս տարբերակը վերնագրված է «Արնաշաղախ Իզմիրից արևաշող Երևան»: Բովանդակության մեջ մի քանի վերնագիր, պայմանավորված էջերի բացակայությամբ, ևս ներառված չէ աշխատանքում («Շպարված աշխարհ», «Մի արհավիրքի գիշեր» (78-80), «Խավարից լույս» (104), «Երկրորդ ձեռքակալությունը» (110), «Վերջին աստղն էլ հանգում է», «Դեպի ճամփան, որ մահն է տանում», «Մի այլ հուսախաբություն», «Լռության սարսափը» (167-174)): Հուշագրությունը հրատարակության պատրաստելիս համեմատել և համադրել ենք ձեռագիր ու մեքենագիր տարբերակները:

³ *Կոնիա* (Գոնիա, Դոնյա, Բոնյա), քաղաք Թուրքիայում Կոնիայի նահանգում: Տեղամունները ծանոթագրելիս օգտվել ենք հետևյալ բառարանից՝ Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, 5 հատոր (Երևան, ԵՊՀ, 1986-2001), հ. 3, 207:

⁴ *Ճենանյան քոլեջ*, Հայ ավետարանական դպրոցի և դաստիարակության պատմության մեջ առանձնահատուկ ներդրում ունի Վեր. Հայրություն Ա. Ճենանյանը (1858-1907): Տարտնում իր հիմնած քոլեջի տնօրենության տարիներին լուրջ դժվարությունների հանդիպելով միսիոներների հետ՝ հրաժարվում է պաշտոնից և 1892 թ. հունվարին Կոնիայում հիմնում է ցեղեկային դպրոց, իսկ հաջորդ տարվա սեպտեմբերին՝ զիջելով իր բաժին:

միաժամանակ դասավանդել ճենանյան քոլեջում (1912-1914), խմբագրել «Իկոնիոն» ամսաթերթը: Զմյուռնիայում հրատարակել է «Ատրուշան» կիսամյան (1919)⁵, Աթենքում՝ «Ֆորթիֆոր» երգիծաթերթը (1924-1925): 1929 թ. ավարտել է Լոնդոնի լրագրողական դպրոցը: 1935 թ. Աթենքում հիմնադրել է «Ատրուշան» տպարան-հրատարակչությունը և լույս ընծայել «Ամրոց» շաբաթաթերթը (1936-1937): 1946 թ. կնոջ և երեք որդու հետ հայրենադարձվել է Հայաստան, աշխատել ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի Գրականության ինստիտուտում, ապա՝ ԳԱ Հիմնակազմ գրադարանում: Մահացել է Երևանում:

1894 թ. հաստատությունն իր առաջին սեփական շենքն է ունենում, իսկ 1895 թ. դառնում է քոլեջ: 1899 թ. աստվածաբան, մանկավարժ, լեզվաբան և երաժիշտ Վեր. Արմենակ Հայկազյանն ընդունում է ճենանյանի հրավերը՝ ստանձնելու «Փոքր Ասիոյ Ափոսթոլիզ Բնսթիթսիոյ» (ճենանյան քոլեջ) կրթական տեսուչի պաշտոնը: Ճենանյան քոլեջի ուսումնառության գլխավոր լեզուն անգլերենն էր: Հայկազյանը Կոնիայի ճենանյան քոլեջի ուսումնական մակարդակը բարձրացնում է այնքան, որ «Թուրքիոյ ամեն կողմէն. մինչեւ անգամ Եգիպտոսէն ու Պոլկարիայէն ուսանողներ կը խուժեն Փրոֆ. Հայկազեանի ծունկին տակ ուսանելու ...»: Քեմալական իշխանություններն իրագործում են Կոնիայի հայ բնակչության տեղահանությունը, հետևաբար, ի թիվս այլ հաստատությունների, փակվում է նաև ճենանյան քոլեջը: Արմենակ Հայկազյանը ձեռքակալվում է 1921 թ. հունիսի 6-ին: Կոնիայից Խարբերդ տարագրության ճանապարհին մահանում է: Տե՛ս Երուանդ Լ. Քասունի, «Փրոֆ. Արմենակ Յ. Հայկազեան (1870-1921)», *Ջահասէր* (Պէրոյթ), մարտ, 2005, 57-61, Վեր. Համբարձում Յ. Աշճեան, *Ատաւայի եղևնը և Գոնիայէ Յուշեր (պատմութեան համար)* (Նիւ Եորք, Կոչնակ, 1950), 238-239:

Քեյրոյթի Հայկազյան համալսարանը, որը կրում է Արմենակ Հայկազյանի անունը, Սփյուռքի ամենանշանակալի կրթական հաստատություններից է և հայկական միակ բարձրագույն ուսումնական հաստատությունը:

⁵ *Ատրուշան*, գրական, գիտական եւ գեղարուեստական կիսամսեայ հանդէս (խմբ.՝ Ռուբէն Մինասեան, Անտոն Դազէ, Տսօրէն-խմբ.՝ Միքայէ Յակոբի Բարթիկեան) (Իզմիր, Մամուրյան տպարան, 1919), http://tert.nla.am/mamul/Atrushan_izmir/Table.html, դիտվել է՝ 14.07.2022:

publizistische Tätigkeiten

1911-12 als Herausgeber des "Kultur- und Wissenschafts-Blattes":

1912-13 als Herausgeber des "Kultur- und Wissenschafts-Blattes":

1913-14 als Herausgeber des "Kultur- und Wissenschafts-Blattes":

1915-16 als Herausgeber des "Kultur- und Wissenschafts-Blattes":

1917-18 als Herausgeber des "Kultur- und Wissenschafts-Blattes":

1918-19 als Herausgeber des "Kultur- und Wissenschafts-Blattes":

1919-20 als Herausgeber des "Kultur- und Wissenschafts-Blattes":

1921-22 als Herausgeber des "Kultur- und Wissenschafts-Blattes":

1923-24 als Herausgeber des "Kultur- und Wissenschafts-Blattes":

1925-26 als Herausgeber des "Kultur- und Wissenschafts-Blattes":

1927-28 als Herausgeber des "Kultur- und Wissenschafts-Blattes":

1929-30 als Herausgeber des "Kultur- und Wissenschafts-Blattes":

1931-32 als Herausgeber des "Kultur- und Wissenschafts-Blattes":

*Ինքնակենսագրություն*⁶

Կոչվում եմ՝ Բարթիկյան Միքայել Հակոբի:

Ծնվել եմ 1887-ին, Գոնիա (Թուրքիա):

Նախնական կրթությունս ստացել եմ տեղվույն Ազգ. վարժարանը:

1907-ին ավարտել եմ նույն քաղաքի The Apostolic college՝ ամերիկյան գոլէճը:

1913-ին հետևել եմ նույն գոլէճի հետ-շրջանավարտի միամյա

փիլիսոփայության և հոգեբանության դասընթացին:

1928-ին ավարտել եմ Լոնդոնի The London School of Journalism⁸

հրապարակագրական վարժարանի դասընթացը, տեսչությամբ՝ հայտնի վիպագիր Max Pemberton⁹-ի:

1912-1914 եղել եմ ուսուցիչ և խմբագիրը վերոհիշյալ գոլէճի ամսագիր

«Իկոնիոն»-ի, ունենալով և իմ սեփական տպարանը, «Շաւիղ» անունի տակ, Գոնիայում:

1919-ին օգնական-խմբագիրը եղել եմ Իզմիրի «Դաշինք» օրաթերթի:

Հրատարակելով նաև իմ տնօրէն-խմբագրությունով՝ «Ատրուշան»

կիսամյա գրական-գիտական-գեղարվեստական պարբերաթերթը:

1924-1925 խմբագիրը եղել եմ Աթենքի «Ֆորթի-Ֆոր» երգիծաթերթի:

1935-1937 Աթենքում ունեցել եմ իմ սեփական «Ատրուշան» անունով

տպարան-գրատուն-հրատարակչականը: Այս շրջանում եղել եմ «Ամրոց»

թերթի խմբագիրը, մաս կազմել եմ «Նայիրի» գրական պարբերաթերթի

խմբագրությանը, որոնք լույս տեսել են իմ տպարանից՝ ուրկե լույս տեսել

են և իմ «Հելլեն Դիք»-ը¹⁰, «Թեսէոս Հերոս Իշխանը»¹¹ ևն:

1945-1946 եղել եմ Հունաստանի Հայկական վարժարանների Կրթական քննիչ:

1946 օգոստ. ին ներգաղթել եմ Մովեստ. Հայաստան, բերելու իմ ուժերը

հայրենիքի վերելքին և վայելելու նրան փառքը:

Տիրապետել եմ՝ Հայերեն, Անգլիերեն, Ֆրանսերեն, Թրքերեն և Հունարեն լեզուների:

Ունեմ «Արվեստների թեկնածու» ի կոչումը:

⁶ Մեջբերված է քնագրային տարբերակը:

⁷ Ճենանյան բոլեջ:

⁸ Լոնդոնի լրագրողական դպրոց:

⁹ *Մարս Փեմբերտոն* (1863-1950), բրիտանացի հայտնի բժիշկ, լրագրող և գրող:

¹⁰ Միքայել Բարթիկեան, *Դիցապաշտ Հելլասիս կամ Հելլեն Դիք* (Աթենք, Ատրուշան, 1936):

¹¹ Միքայել Բարթիկեան, *Թեսէոս հերոս իշխանը: Հելլեն ժողկարսղ* (Աթենք, Ատրուշան, 1936):

Միքայել Բարթիկյանի հուշագրությունը հրատարակության պատրաստելու նախապատմությունը

Միքայել Բարթիկյանի «Արնաշաղախ Իզմիրը» հուշագրության ձեռագիրն առաջին անգամ ընթերցել եմ 2012 թ. ամռանը Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում հետազոտական աշխատանք իրականացնելիս:

Հայաստանի ազգային արխիվի «Ներգաղթ» կոմիտեի 1946-1948 թթ. արտասահմանից Հայաստան վերադարձող հայերի հաշվառման մատյանում Երևանում վերաքնակեցված հայ գաղթականների ցուցակներում¹² ընդգրկված են նաև 1946 թ. Հունաստանից հայրենադարձված Բարթիկյանները (Բարթիկյան Միքայել Հակոբի՝ 60 տարեկան, ավագ գիտաշխատող (Գրականության ինստիտուտ), հասցեն՝ Տոլստոյի 27, կինը՝ Բարթիկյան Արվիինե Եղիայի¹³, 45 տարեկան, տնտե-

¹² *Հայաստանի ազգային արխիվ* (ՀԱԱ), ֆ. 362, ց. 13, գ. 5:

¹³ Միքայել Բարթիկյանի ծոռնուհի Իռա Բարթիկյանը մեծ տատիկի՝ Արվիինե Բարթիկյանի մասին գրում է. «... Ուզում եմ պատմել պապիկիս մոր պատմությունը, որը լսել եմ մորիցս, իսկ նա էլ՝ իր տատիկից՝ Արվիինեից: Արվիինեն ծնվել է Աֆիոն Գարսիսաքում 1903 թ.: 12 տարեկանում Արվիինեն և քնտանիքի անդամները՝ հայրը, մայրը, եղբայրը և քույրը, ինչպես նաև քաղաքի ողջ հայ քնակչությունը տեղահանվում են Դեր Զոր: Մի որոշ ժամանակ անց տղամարդկանց առանձնացնում են՝ քշելով բլուրն ի վեր: Արվիինեի եղբայրը շրջվել և ձեռքով հրաժեշտ է տվել քույրերին ու մորը: Այդ տեսարանը նրա աչքի առաջ է եղել մինչև կյանքի վերջ: Հիշում էր նաև ծարավից բղավող փոքրիկ երեխային, որին մայրը փորձում էր մեզ խմեցնել, սակայն, չկարողանալով կույ տալ, երեխան ձեռքով հարվածում է անոթին, հեղուկը թափվում է գետնին: Մայրն ու երեխան շատերի պես մնում են ինչ-որ տեղ՝ ինչպես և Արվիինեի մայրը: Արվիինեի քույրը՝ Իլմոնիկը, պապիկիս մորաքույրը, տասը տարեկան է եղել: Նրան ճանապարհից առևանգել են բրդերը, երեխան փրկվել է: Բուրդը բարի մարդ է եղել, ունեցել է երեք տղա: Իլմոնիկին պահել է իր երեխայի պես, բայց երբ աղջնակը մեծացել է, հարևանը պահանջել է կնության տալ իր որդուն՝ հակառակ դեպքում սպառնալով մորթել հայրացուի երեք որդիներին: Անուանանում և այդ բրդից երկու աղջիկ է ունենում: Բսմանական թվականներին հայ երիտասարդները ծպտված շրջում էին Թուրքիայով ու իրենց ազգությունը

սուսի, տղաներ՝ Բարթիկյան Վահե¹⁴ 23 տարեկան, երգիչ (Հայֆիլիհարմոնիա), Բարթիկյան Հրաչ¹⁵ 21 տարեկան, ուսա-

հիշող երեխաներին գտնում, տանում էին Եվրոպա: Իլմոնիկին իր երկու աղջկա հետ փախցնում են քուրդ ամուսնուց և տանում Հունաստան: Արվի-նեն աֆիոնզարահիարցիների հետ հասնում է Դեր Զոր, հետո հայտնվում Զմյուռնիայում, թե ինչպես, ինքն էլ չէր հիշում: Ապրել է արաբների նկուղում, երբ 1922 թ. թուրքերը Զմյուռնիայում կոտորած են իրագործել: Այդ օրերին եկել է ծովեզերք և ցանկացել, իրեն ծովը նետելով, կյանքին վերջ տալ. ջուրն ամբողջովին ծածկված է եղել դիակներով, ու նա այդպես էլ չի համարձակվել իրականացնել իր ռոտումը: Մի որոշ ժամանակ անց այլ տարագիրների հետ նավ է բարձրացել ու հասել Հունաստան, զրտել էլ Արվինեն ամուսնացրել են պապիկիս հոր՝ Միքայել Բարթիկյանի հետ: Արվինեն տատիկն ապրել է 96 տարի», նամակ էլեկտրոնային հասցեին. 01.07.2021:

Արվինեն Բարթիկյանը վկայում է. «... Իզմիրը կրակի տվին: Առաջին կրակը Հայնոցը տվին: Ս. Ստեփանոս եկեղեցին այրեցին, քանի որ բոլոր հայերը այդ եկեղեցին մտած էին, որ պաշտպանվեն: Վերջը հայերս փախանք, գնացինք ծովեզերք: Ծովին վրա լիքը նավակներ էին, բայց թուրքերը նախօրոք բոլոր նավակները ծակել էին, որ ջուր լցվեր, ու հայերը չկրնան ազատվի: Նավակ էին նստում խեղճ հայերը, քիչ մը կլողար նավակը, վերջը՝ լՂԿ-լՂԿ, ջուրը կլեցվեր մեջը: Բոլորը ծովի մեջ շոտ կուզային, ծովի վրա լիքը ուռած մարմիններ էին»: Տե՛ս Վերծինե Սվազլյան, *Հայոց ցեղասպանություն, Ակսուստես վերապրողների վկայություններ* (Երևան, Գիտություն, 2011). 392:

¹⁴ Վահե Բարթիկյան, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի երկարամյա ավագ գիտաշխատող:

¹⁵ Հրաչ Բարթիկյան, հայ-բյուզանդական հարաբերությունների պատմության ուսումնասիրող, Աթենքի ակադեմիայի և Հռոմի «Տիբերինա» արվեստի, գրականության և գիտության ակադեմիայի ակադեմիկոս: Ծնվել է Աթենքում, ավարտել հունական գիմնազիան (1945), ԵՊՀ պատմության ֆակուլտետը (1953), ապա ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրան՝ Հովսեփ Օրբելու ղեկավարությամբ: 1957 թվականից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում որպես ավագ գիտական աշխատող: Սկիզբ է դրել ՀԽՍՀ ԳԱ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի «Բյուզանդական աղբյուրներ» ենթաշարին՝ լույս ընծայելով «Պրոկոպիոս Կեսարացի» (1967) և «Կոստանդին Ծիրանածին» (1970) գրքերը: 1973 թ. աշխարհաբարի է վերածել, առաջարկում ու ծանոթագրություններով հրատարակել Մատթեոս Ուռիայեցու «Ժամանակագրությունը»:

նող (Համալսարան), Բարթիկյան Պարթև¹⁶ 17 տարեկան (44 դպրոց)):

Գրականության և արվեստի թանգարանում պահպանվել են Ավետիք Իսահակյանին Բարթիկյանի հղած երեք նամակ և մեկ հեռագիր (1946)¹⁷, ինչպես նաև «Գառնի Գեղարդ» խորագրով ճամփորդական տպավորությունների վերաբերյալ նյութերը¹⁸: Իսահակյանին Բարթիկյանի հղած նամակներից պարզեցինք, որ Բարթիկյանները, 1946 թ. Հունաստանից հայրենադարձվելով Հայաստան, քնակություն են հաստատել նախ Տավուշի մարզի Լճկաձոր¹⁹ գյուղում, ապա տեղափոխվել Երևան:

Խմբագրական սկզբունքների շուրջ

Հայոց և Հունաց ցեղասպանությունների ուսումնասիրության համատեքստում ակնատես-վերապրող ու վավերագրող Միքայել Բարթիկյանի հուշագրությունը պատմական բարձրարժեք սկզբնաղբյուր է: Արձանագրված փաստացի նյութը, նկարագրվածի հավաստիությունը պայմանավորված են նախևառաջ Բարթիկյանի կրթական բարձր մակարդակով և իրավիճակի ճշգրիտ գիտակցմամբ:

Վավերագրողի ազգային-հոգեբանական կերպարի մասին ընթերցողը գաղափար է կազմում նրա տեքստերից. Բար-

¹⁶ Պարթև Բարթիկյան, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի գիտաշխատող:

¹⁷ Ե. Չարևեցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ), Ավետիք Իսահակյանի ֆոնդ, 1029, ք. 2:

¹⁸ ԳԱԹ, Գրական թերթի ֆոնդ, 411:

¹⁹ Լճկաձոր (Աչկաձոր, Աչքաձոր, Լիճքաձոր), գյուղ ՀՍՄՀ Նոյեմբերյանի շրջանում, Դերեղ գետի աջափնյակում. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, 593-594:

թիկյանին բնորոշ են հետևյալ հատկանիշները՝ բծախնդրություն, դիտողունակություն, կյանքի բարդագույն իրավիճակներում ելք գտնելու ունակություն, հավասարակշռվածություն, հոգատարություն և պատասխանատվության հզոր զգացում, գործն ավարտին հասցնելու կամք և կարողություն:

Հուշագրության տողատակերում, հեղինակային ծանոթագրություններին զուգահեռ, անհրաժեշտ ենք համարել ծանոթագրել նաև կարևորագույն իրադարձությունները, պատմական, աշխարհագրական անունները: Հեղինակի ոճին և ուղղագրությանը հավատարիմ մնալով՝ հուշագրության բուն տեքստում տրվում են բառեզրային, ուղղագրական զուգաձևությունների ժամանակակից տարբերակը, վերականգնված բառը կամ արտահայտությունը՝ հետևյալ նշումով՝ [], իսկ բացակա էջերն այսպես՝ [բացակայում է ձեռագրի 16-րդ էջը]: Պահպանել ենք հայատառ թուրքերեն, հունարեն, ֆրանսերեն մեջբերումները, որոնք հարկ ենք համարել տողատակերում ներկայացնել թարգմանաբար:

Հուշագրության կառուցվածքը և բովանդակությունը

Բարթիկյանի հուշագրության հենքն օրագրային բնույթի գրառումներն են՝ միահյուսված պատմական հարուստ նյութին:

Հուշագրության կառուցվածքի և բովանդակության առանձնահատկությունները նկատի ունենալով՝ կատարել ենք հետևյալ պայմանական բաժանումները.

Պատմական ակնարկ. 1922 թ. Զմյուռնիայի հայերի և հույների բնաջնջմանը, ապա քաղաքի հրկիզմանը նախորդող շրջանի ներկայացում և վերլուծություն:

Ականատես-վերապրողի օրագրային գրառումներ. Զմյուռնիայում 1922 թ. սեպտեմբերի 8-ից մինչև, Բարթիկյանի բնորոշմամբ, «վերջապես ազատ» լինելու շրջան (08.10.1922 –

19.11.1923), Բարթիկյանի և իր ընտանիքի՝ Ջոյունիայում վերապրած օրերի հանգամանակից նկարագրություն:

Տարագրություն Հունաստան. Բարթիկյան ընտանիքի պատմության մանրամասն նկարագրություն:

Հայրենադարձություն. Հայաստանում հաստատվելու Բարթիկյանների նպատակն ու դրա իրագործումը:

Հաշվի առնելով այն փաստը, որ հեղինակը չի նշում հուշագրությունը գրի առնելու ժամանակն ու տեղը, ենթադրում ենք, որ այն շարադրել է կամ նկարագրվող դեպքերին համընթաց, կամ դրանցից անմիջապես հետո: Դեպքերի և դեմքերի մանրամասն նկարագրությունն ու բազմազանությունը վկայում են Բարթիկյանի փայլուն հիշողության, գրագիտության և շրջահայացության մասին. հուշագրողն ամենայն մանրամասնությամբ տիրապետել է քաղաքի անցուդարձին, ինչն էլ նպաստել է ճիշտ ժամանակին և տեղում կողմնորոշվելուն և սթափ որոշումներ կայացնելուն:

Նյութի կարևորության հստակ գիտակցմամբ՝ ձեռագրի վերջնական շտկումներն ու գրաշարումը Բարթիկյանը կատարել է կամ Աթենքում, կամ «արևաշող Երևանի» ընտանեկան ջերմ ու ապահով միջավայրում խորապես համոզված լինելով, որ հուշագրությունն արժանանալու է ընթերցողի դատին:

Միքայել Բարթիկյանի թոռնուհու՝ Նունե Բարթիկյանի (Հրաչ Բարթիկյանի կրտսեր դուստր) հետ իմ հանդիպումը բարեբախտություն էր. հուշագրությունը հրատարակության պատրաստելիս Նունեն սիրով տրամադրել է գրաշարված տարբերակը, փաստաթղթեր և ձեռագրեր, ընտանեկան լուսանկարներ՝ հնարավորություն տալով ընթերցողին ներկայացնել Միքայել պապի հերոսական կյանքի ու գործունեության ամբողջական պատկերը:

Հուշագրությունն ընթերցելիս, խմբագրելիս, ծանոթագրելիս Բարթիկյան հրապարակախոսի, խմբագրի, մարդու, վերապրողի հետ մտովի ճանապարհորդել եմ «ակամատեսը»

լինելով Զմյուռնիայի գրավմանը, առաջին խուճապին, շարժվել շոգենավ, հուսախաբություն ապրել, հանդիպել Սիվրի-սարյան եղբայրներին, բոլորից շահագործված, բոլորից խաբված՝ միակ փրկությունը հայրենադարձությունը համարելով բռնել «արևաշող Երևան» տանող ճանապարհը:



Հուշագրությունը շարադրելիս Բարթիկյանը կատարել է երկու բաժանում. իրադարձությունները ներկայացնելով ծագման հերթականությամբ՝ առաջին մասում ընդգրկել է 32, իսկ երկրորդում 3 իրապատում:

Ժամանակի իրողությունները, հասարակական-քաղաքական և գաղափարական բախումները (Օսմանյան պետությունից մինչև Հունաստան, ապա Խորհրդային Հայաստան) Բարթիկյանը ներկայացնում է ոչ միայն որպես ականատես-վերապրող, այլև՝ քաղաքական անցուղարձը խորապես ըմբռնող անձ. «Ուրբաթ, 8 Սեպտեմբեր 1922 թվի երեկոյան, պաշտոնատեղիես ելած, հակառակ սովորությանս, ուզեցի Պունթայի հրշեջների կայանի առաջից ու քարափից շրջան անելով տուն գնալ: Այդքնի երկաթուղու կայարանի մթերանոցի առաջ պարզվող տեսարանը առանց հուզվելու չէր կարող դիտել մարդկային զգացում ունեցող որևէ մարդ... Կողոպուտ, անկարգապահություն, անպատասխանատվություն, հասել էին իրենց գագաթնակետին: Չկար հովիվ և մոլորած էին ոչխարները» (էջ 76):

Հուշագրությունն ընթերցելիս դառնում ես դեպքերի ականատեսն ու մասնակիցը: Վավերագրողի սրատես աչքը գրանցել է յուրաքանչյուր մանրուք. Բարթիկյանը գիտակցաբար է թղթին հանձնել տեսածի, լսածի, կատարվածի մանրամասնությունները: Տեղին է մեջբերել Բարթիկյանի օրագրային հետևյալ գրառումը. «Շաբաթ կեսօրից հետո փորձեցի տնից դուրս գալ և գնալ Հայնոցի ծայրը... շարքով անցնում

էին սիվիլ հագնված թուրք չեթեներ՝ թափթփած, անճոռնի, բարձր մուգ գույն ֆեսուլ և թևերնին կապած կարմիր շորով, ուսերնին կամ ձեռքերնին բռնած մավզեր գենթով մարդիկ: Բոլորն էլ անխտիր նստել էին առանց թամբի մերկ ձիերի վրա...» (էջ 84-85):

Հուշագրության ժամանակագրական սահմաններն ընդգրկուն են՝ վերապրողի հուշերին բնորոշ: Բարթիկյանի հուշապատումն ընդհանուր առմամբ 24 տարվա պատմություն է (1922-1946), թեև հանդիպում ենք նաև ավելի վաղ շրջանի տեղեկությունների:

Արժուրեղով հուշագրությունը՝ կարող ենք այն դիտարկել ինչպես Օսմանյան պետության, այնպես էլ՝ Հայաստանի ու Հունաստանի տվյալ ժամանակաշրջանի պատմության սկզբնաղբյուր:



Հուշագրությունը հրատարակության պատրաստելը պատասխանատու, հետաքրքիր ու հաճելի գործընթաց է: Բարեբախտաբար, նվիրյալների հետ համագործակցությունը, նրանց պատրաստակամությունը, հոժարակամ և բժախնդիր վերաբերմունքն աշխատանքի ընթացքում մեծապես նպաստեցին, որ «խարխսի գցենք Զմյուռնիայի ծովածոցին»: «Մեր նախնապահով ափ հասավ»՝ շնորհիվ պատասխանատու անձնակազմի:

Զեռազիրը վերծանել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Թանգարանային ցուցադրության և սպասարկման բաժնի աշխատակից Անահիտ Զիլինգարյանը: Համակարգչային մուտքագրումն իրականացրել է ՀՅԹԻ Գրահրատարակչական, խմբագրական և թվայնացման բաժնի ավագ օպերատոր Հասմիկ Ղուբասարյանը: Հայատառ թուրքերեն բառերը, արտահայտությունները և նախադասությունները թարգմանել է ՀՅԹԻ Արտաքին կապերի և լրատվության

բաժնի հասարակայնության հետ կապերի պատասխանատու, թուրքագետ Սերինե Մուրադյանը: Հունարեն և ֆրանսերեն բառերի, արտահայտությունների, առանձին տեքստերի թարգմանության և մշակման, անհրաժեշտ խորհրդատվության հարցում մեծապես օգնել են Էդիտա Մարտոյանը և Հայկուհի Գևորգյանը:

Խորին շնորհակալություն «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի տնօրեն Հարություն Մարությանին, տնօրենի խորհրդական Միհրան Մինասեանին, ՀՅԹԻ գիտքարտուղար, Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական ուսումնասիրությունների բաժնի վարիչ Նարինե Մարգարյանին խորհրդատվության, ուղղորդման և քաջալերման համար: Երախտագիտություն եմ հայտնում Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի խմբագիր-սրբագրիչ Աշոտ Մկրյանին բարդ ու պատասխանատու աշխատանքում բարեխղճության և անհրաժեշտ խորհրդատվության համար:



Հայոց ցեղասպանությունը հաստատող վավերագրությունների շարքում առանձնացող «Արնաշաղախ Իզմիրը» հուշագրության լուսարնծայումը խնկարկում և աղոթք է Միքայել Բարթիկյանի և Զմյուռնիայում նահատակված քրիստոնյաների՝ հայերի և հույների հոգինեւրի հանգստության համար:

Թեհմինե Մարտոյան

Պատմական գիտությունների թեկնածու

*«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի
Հայոց ցեղասպանության գոհերի ու վերսպրողների փաստագրման և
ուսումնասիրության բաժնի ախագ գիտական աշխատող*

ՔԵՄԱԼՆ ՈՒ ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐԹԻԱՆ

Ա. համաշխարհային [Առաջին համաշխարհային] պատերազմի սկզբնավորության Օսմանյան գահի վրա գտնվող Սուլթան Մեհմետ Բեշատ Ե-ի¹ մահից հետո, 1918 թվին իրեն հաջորդել էր Մեհմետ Զ. Վահիտետտին², որը ստեղծված պայմանների տակ ազդեցություն և իշխանությունից զուրկ էր: Համաձայնական տերությունների կողմից գրավյալ և ոչ-գրավյալ շրջանների զինվորականության մեջ սակայն բարոյական կապը պահվում էր կենտրոնաձիգ ուժ դարձած մի զինվորականի՝ Մուսթաֆա Բենալի³ կողմից: Ո՞վ էր այս անձը, որ օրվան սուլթանին չկարողացածը կատարում էր, իրեն էր ենթարկում զինվորականներն ու ժողովուրդը:

Ըստ Դամատ Ֆերիդ փաշայի⁴ Մուսթաֆա Բենալ հրեա-

¹ *Մեհմեդ V Ռեշադ* (1844-1918), 1914 թ. նոյեմբերի 11-ին սուլթան Մեհմեդ V Ռեշադի հատուկ հայտարարագրով Օսմանյան պետությունը պատերազմ է հայտարարում Ռուսական կայսրությանը, միաժամանակ հրապարակվում է սուլթանի դիմումը բանակին և նավատորմին: Սուլթան-խալիֆը իսլամական ողջ աշխարհին ջիհադի՝ կրոնական «սրբազան պատերազմի» կոչ է անում: Տե՛ս Հրաչիկ Սիմոնյան, *Թուրք սզգային բորժուսզիայի զաղախարարանությունը և քաղաքականությունը* (Երևան, Հայաստան, 1986), 329-330:

² *Մեհմեդ VI Վահիդեդին* (1861-1926), Օսմանյան պետության վերջին սուլթանը:

³ *Մուսթաֆա Բենալ Աքսթուրք* (Ալի Ռեզաօղլու Մուսթաֆա), Թուրքիայի Հանրապետության հիմնադիր և առաջին նախագահ (1923-1938): Մուսթաֆա Բենալի ձևորում կենտրոնացած էր գործադիր և օրենսդիր իշխանությունը: Նա միաժամանակ հանրապետության ցմահ նախագահն ու իշխող Հանրապետական ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) անփոփոխ ղեկավարն էր: Տե՛ս *Թուրքիայի Հանրապետության պատմություն*: Բուհական դասագիրք, պատասխանատու խմբագիր՝ Ռուբեն Սաֆրաստյան (Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2018), 335-336:

⁴ *Դամադ Ֆերիդ փաշա* (Դամադ Մեհմեդ Ադիլ Ֆերիդ, 1853-1923), օսմանյան պետական գործիչ, սուլթան Մեհմեդ VI Վահիդեդինի օրոք երկու անգամ զբաղեցրել է Մեծ վեզիրի պաշտոնը:

կան ծագում ուներ, պատկանում էր Ռումելիի⁵ այն հրեաների շառավիղին, որոնք ԺԸ դարու Սաբբատայի ապստամբության⁶ հետևանքով իսլամություն էին ընդունել, ազատվելու համար կոտորածից: Իր զինվորական դաստիարակությունը ստացել էր Պանկալտիի (Պոլիս)⁷ զինվորական վարժարանը և ավարտել էր Գերմանիայում: Եղել էր Սոֆիայի զինվորական կցորդ, և ինչպես առհասարակ բոլոր Օսմանյան զինվորականները, Քեմալն էլ եղել էր թունդ գերմանասեր: Ընդհանուր պատերազմում գտնվել էր Դարդանեյի պաշտպանության դիրքերում:

1915 ապրիլ 25-ի Արը-Բուրնուլի⁸ հարձակումին անուն շահեց, այդ դիրքը պաշտպանելով երեք ամիս, իսկ իր համբավը կերտում էր Անաֆարտայի (Տարդանեյ)⁹ պատերազմում (1915 թ. օգոստոս 7) և իր անունը տրվեց այդ բլուրին: «Զորա-

⁵ *Ռումելիա* (հուն.՝ Ρούμελη), Բալկանների, ինչպես նաև Արևելյան Հռոմեական կայսրության անվանումը, ներկայում՝ Բուլղարիայի հարավարևելյան մասը: Երբեմն Ռումելիա են անվանում Թուրքիայի եվրոպական հատվածը՝ Արևելյան Թրակիան:

⁶ *Շարաթայ Տվի* (1626-1676), հայտնի կարալիստ (զադոնուսուց թեոսոֆիական համակարգ հրեաների շրջանում) և կեղծ Մեսիա: Հրապարակայնորեն հրաժարվել է հուդայական հավատքից և իսլամ ընդունել: Օսմանյան պետության մեջ և Թուրքիայի հանրապետությունում Շարաթայ Տվիի հետևորդները հայտնի էին դոնմե (թուրք.՝ Dönme. հավատորացնելը) անվան ներքո: Մանրամասն տե՛ս *The Role of the Sabbatean DONME* Jewish-Turkish* Sect in the Armenian Genocide*, The Planned, Organized, Executed Genocide of Armenians by Jack Manuelian, April 24, 2005, *ԸՑԹՐ գիտական ֆոնդեր*, բաժին 14, ակտ 3639, ֆ. հ. 452, *Sabbatai Zevi*, <https://www.jewishhistory.org/sabbatai-zevi/>, դիտվել է՝ 07. 07. 2021, Marc David Baer, *The Dönme: Jewish converts, Muslim revolutionaries, and secular Turks* (California, Stanford University Press, 2010).

⁷ *Պանկալտի* (թուրք.՝ Bankaltı), Կ.Պոլսի Բանբալթը թաղամաս:

⁸ *Արդրուրնու* (թուրք.՝ Arburnu), Գալիպոլիի (Չանաքքալե) ճակատամարտի (1915-1916) հայտնի ճակատներից:

⁹ *Անաֆարթալար* (թուրք.՝ Anafartalar), 1915 թ. օգոստոսի 6-ին բրիտանական զորքերի ափ իջնելու վայրը՝ Սուվլա գյուղի մոտ:

վար»-ի աստիճանին բարձրացած, Սիրիական ճակատի վրա էլ զորաբանակի հրամանատար եղավ:

Մոլեռանդ օտարապետ էր: Հակառակ իրեն հավատարիմ իսլամ ձևացնելուն, ո՛չ կրոնքի և ո՛չ էլ դուրանի հավատացյալ էր: Ինք որ արգիլեր էր օղի խմելը, ամենամեծ զինեմոլներից էր: Ազգայնական թրքերը նրա մեջ տեսնում էին ապագա պետական մի նոր տան հիմնադիրը: Պոլիս իր ներկայությունը անբաղձալի էր դարձել կենտրոնական կառավարության կողմից, ծրագրում էր Անգարան ճակատել Պոլսո ղեմ, իսկ իր հավատարմական արտահայտություններն օրվա Մուլթանին բացարձակապես կեղծ էին թաքցնելու համար իր հետին ծրագիրը:

Մուսթաֆա Բեմալ իր վճռական և խիզախ խառնվածքով կասկած էր ներշնչել Բարձրագույն Դռան: Եվ Դամադ Ֆերիդ փաշան պատեհ առիթը գտել էր Բեմալը գավառ ուղարկելու, նրան տալով Գ. զորաբանակի ընդհանուր քննիչի տիտղոսը: Նպատակը սակայն անհանդարտ զինվորականը հեռացնել և նույն ատեն էլ նրա կազմակերպչական կարողություններից օգտվել և զինադադարի պայմաններով ցրված զինվորները կազմակերպելն էր:

Մուսթաֆա Բեմալ հազիվ Անատոլու անցած, կոմիտեի դրոշը բարձրացրած, «Թուրքիան թրքերի խամարի» լոզունգը նետեց հրապարակ, ինչ որ բոլոր Իթթիհատականները իրեն քաշելու ծառայեց: Իթթիհատական օջախը վերականգնվել էր: Հին շարքերը մնում էին, թեպետ գլուխները, շեֆերը՝ Էնվեր ու Թալաթ, չկային հրապարակի վրա: Այդ դիրքը զրավելու հարմարագույն անձը ներկայացնում էր Մուսթաֆա Բեմալ:

Ռինե Պյոուն¹⁰ 1919 փետրվարի 11-ին Իզմիրից Փարիզ «Թան» թերթին հեռագրել էր. ««Իթթիհատ վե Թերագզը»

¹⁰ *Ռենե Պյոն* (René Puaux, 1878-1937), լրագրող, բանաստեղծ և պատմաբան, աշխատել է «Revue», «Le Temps» թերթերում: «L'Illustration» թերթում հրատարակել է Հունական հարցի հետ կապված մի շարք հոդվածներ:

(Միությունն և Առաջադիմությունն) կոմիտեի կազմակերպությունը շարունակում է գործել Փոքր Ասիայում, ժեռն թուրքերը¹¹ զինում են արձակված զինվորներին և գաղտնորեն կազմակերպում են պարտիզանների մի հսկա սիստեմ: Իրենց ծրագիրն է ոչնչացնել քրիստոնյաներին. մի նոր հալածանք է պատրաստվում, ներկա Օսմանյան կառավարության (Պոլսի) տված հավաստիքները անարժեք են, որովհետև նա անգոր է Փոքր Ասիայում»:

Զինադադարը երևութապես վերջ էր տվել Իթթիհատականության, մաշվել էր այդ ֆիրման: Այժմ հարկավոր էր մի նոր անունով հրապարակ գալ: Այդ անունը փոխարինել էր «ազգայնականությունը» (միլլիճիություն) և էնվերին հաջորդել էր Զեմալը: Անձերի և անունների միայն փոփոխություն էր տեղի ունենում, իսկ Իթթիհատական տեղահանություններն ու կոտորածները կարող էին կրկնվել այս նոր պիտակի տակ գործող հին կազմակերպության կողմից:

Մուսթաֆա Զեմալ ոչ միայն ներքին՝ թրքական օժանդակություն էր գտել, այլ Համաձայնական պետությունների հայտնի, թե գաղտնի, ուղղակի, թե անուղղակի օժանդակությունը, դիտավորյալ անտեսումը: Սա բավական էր եղել վերակազմելու բանակը, որի անհրաժեշտ ատաղձն ու տարրերը գտել էր պատրաստի: Զինադադարի զինաթափության պայմանները ոչ մի աստեն և լրջորեն չէին գործադրվել: Զենքի մթերքը, որ այս կամ այն կերպով հավաքվել, կենտրոնացվել էր կամ Համաձայնականների կողմից մթերված էին երկաթուղագծերի մոտ, իբր թե փոխադրվելու նպատակով, և հանձնվել էին հնդիկ կամ այլ գաղութային զորքերի հսկողությանը, փոքրիկ հարձակումով, բոլորն էլ գրավվել և փախցվել էին: Այս կարգից էին Կելիպոլուի¹², Աֆիոնի

¹¹ *Ճևոն/ժյոն թուրքեր* (թուրք.՝ jön türkler), երիտթուրքեր:

¹² *Գալիպոլի* (հուն.՝ Καλλίπολις), թերակղզի ներկայիս Թուրքիայի Լվոնպական հատվածում. Էգեյան ծովի և Դարդանեյի նեղուցի միջև:

Գարահիսարի¹³ և այլ կենտրոնացման վայրերի գենքի հաիշտակությունները: Իսկ ներքին գավառների՝ Անգարա, Սվազ և այլն, նախկին գենքի մթերանոցների մեջ գտնվող մեծ քանակությամբ ռազմանյութերը ամբողջությամբ անցել էին միլլիճիների ձեռքը, որոնց հավաքման համար ոչ մի դժվարության չէին հանդիպել, քանի որ Համաձայնական պետությունների մեջ սկսած էին հակասություններ և կային այնպիսիներ, որոնք ոչ միայն արգելելու մասին էին մտածում, այլև օգնում էին նյութապես և բարոյապես: Իտալացիների կողմից գրավված Ատալիան Անգարայի մթերման նավահանգիստն էր դարձել:

Հուլիսի 23, 1919 թվին, Մուսթաֆա Բենալ այնքան զորավոր էր և ինքնավստահ, որ Էրզրումի մեջ գումարեց «Իրավունքների պաշտպանության ընկերության» իր առաջին կոնգրեսը և հայտարարեց «Ազգային ուխտ»-ը (Միսաքը Միլլի)¹⁴, որի խմբագրությունն ու կարգավորումը եղել էր նախկին ժեռն թուրքերի կողմից քվեարկելով, խանդավառ ողջուններով:

¹³ *Աֆիոն Գարահիսար* (թուրք.՝ Afyonkarahisar), քաղաք Փոքր Ասիայի արևմտյան մասում, մյուս գարահիսարներից տարբերվելու համար ստացել է Աֆիոն անվանումը՝ պայմանավորված քաղաքի շրջակայքում խաշխաշի (աֆիոն) մշակման և մեծագույն կենտրոն լինելու փաստով: Այժմ Թուրքիայի տարածքում, Անկարայից 250 քմ. հարավ-արևմուտք:

¹⁴ Բենալականների արտաքին քաղաքականության ռազմավարության հիմքում ընկած էր «Ազգային ուխտը» (Misak i-Milli, 1920 թ. հունվարի 28): Բենալական շարժման ազգային քաղաքականության հիմնական սկզբունքները մշակվել են 1919 թ. սեպտեմբերին Սերաստիայի համագումարում. «ազգային սահմանի» սկզբունքը պահանջում էր Թուրքիայի տարածք ճանաչել այն բոլոր հողերը, որոնք Օսմանյան պետության կազմում էին Մուդրոսի զինադադարի (1918) կնքման պահին, բացառությամբ արաբական երկրների: «Ազգային ուխտը» ոտնահարում էր հույների, բրիտերի, ասորիների կենսական շահերը, սակայն ամենամեծ հարվածը հասցնում էր հայ ժողովրդին՝ բացառելով միացյալ և անկախ Հայաստանի ստեղծումը Փոքր Ասիայի արևելքում: Բենալականները, պղպիսուղ, շարունակում էին ազգային փոքրամասնությունների նկատմամբ իրենց նախորդների քաղաքականությունը:

«Ազգային ուխտ»-ի առաջին հոդվածը հայտարարում էր, որ արևելյան նահանգները Օսմանյան կայսրության անբաժան մասն են կազմում:

Երկրորդ հոդվածը հայտնում էր, թե որևէ գրավման, կամ հայերի, կամ հույների ի նպաստ միջամտության փորձ, որոշել են միանձնորեն մերժել և ընդդիմանալ: ... «Երբեք չենք դեղևում»¹⁵ պաշտպանել մեր բոլոր ուժովն մեր իրավունքն, մեր սրբազան ստացվածքները այն բոլոր քայլերի դեմ, որոնք լինելու են Համաձայնականների կողմից և ի նպաստ քրիստոնյաների»:

Երրորդ հոդվածը, իբր հիմնական սկզբունք ունենալով Օսմանյան կայսրության իսլամների խալիֆայության պաշտպանությունը, կառաջադրեր կայսրության ուրիշ նահանգների հետ գործակցել և, երբ հնարավոր չլիներ այս գործակցությունը, *արևելյան նահանգներին պաշտպանել առանձին* (ընդգծումը հեղինակինն է՝ Մ. Բ.):

Չորրորդ հոդվածը հայտարարում էր, թե պատահի, որ Օսմանյան կայսրությանը պարտավորեցվի այս նահանգները թողելու հանձնարարության տակ մտնել և ստորագրելու որևէ դոկումանտ¹⁶, որոշում են իսկույն հայտարարել առժամյա կառավարություն արևելյան նահանգներում, վերադարձնելու և պահելու պետություն և իշխանություն և կառավարել Օսմանյան օրենքներով, այդ ավտոնոմ կառավարության կազմությունը հաղորդելով պետություններին:

Հինգերորդ հոդվածը խստիվ արգելում էր գաղթողների վերադարձը արևելյան նահանգներ: Տեղական իշխանությունները կարող են միջոցներ ձեռք առնել բռնահամման համար:

Վեցերորդ հոդվածի համաձայն, յոթ արևելյան նահանգ-

¹⁵ *Չեղևել* (ինացած), այս ու այն կողմ շարժվել, տարրվերվել, երերալ: Տե՛ն Էդուարդ Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, հ. 1 (Երևան, Հայաստան, 1976), 285:

¹⁶ *Դոկուման*, փաստաթուղթ, վավերագիր:

ները կազմելու էին մի ամբողջական միավոր և մուսուլմանների իրավունքը ոչ մի կերպ չէր տուժելու:

Յոթներորդ հողվածով բոլոր կուսակցությունները և բոլոր ընկերությունները, որոնցից կազմվելու էր հայրենիքի պաշտպանությունը կրելու էր «Արևելյան Անատոլիի իրավունքների պաշտպանության ընկերակցություն» անունը:

Կոնգրեսը հրապարակեց և մի հայտարարություն, որով պարզում էր մուսուլմաններին, թե իրենց նպատակն է գործել *հայերի և հույների դեմ* (ընդգծումը հեղինակիին է՝ Մ. Բ.), թե վճռել են Արևելյան Անատոլուն պաշտպանել՝ Անտանտի դեմ:

Համաձայնական պետությունների դեմ մշակված այս ծրագիրը և գործելու հայտարարությունը վատ տպավորություն թողուց սուլթանական և Բարձրագույն Դոան շրջանակներում: Այդ բոլորը նշանակում էր, որ Քեմալ ըմբոստացել էր և մերժում էր ենթարկվել:

Իսկ Քեմալը ո՞վ էր, որ գործադրելու էր ձեռքակալելու հրամանները: «Միլլի»¹⁷ ուժերի շիամակերպող, նրա հրամանին չենթարկվողներ անիննա հալածվում էին և պատժվում, Մուսթաֆա Քեմալ տեր ու տիրական էր Անատոլիի մեջ, ամեն կարգի պաշտոնյաներ և ամեն աստիճանի կառավարիչներ նշանակվում էին իր կողմից: Զինվորական հրամանատարները, լինելով առհասարակ Իթթիհաստականներ, ընդդիմադիրները իսկույն հեռացվում էին և կամ բանտարկվում:

Սեպտեմբերի 1, 1919 թվին մի երկրորդ կոնգրես գումարվեց Սերաստիայում Մուսթաֆա Քեմալի կողմից, ուր Դամադ

¹⁷ *Միլլի* (թուրք.՝ Milli Mücadele), Ազգային ուխտով տարածքային ամբողջականության պահպանմանն ուղղված ազգային շարժում (1919-1922), որի նպատակն իրականում Օսմանյան պետությունն ազգային փոքրամասնություններից, մասնավորապես՝ հայերից և հույներից, «մաքրելն» էր. շարժումն առաջնորդել է Մուսթաֆա Քեմալը: Մանրամասն տե՛ս Ռեզիսա Գալուստյան, «Մուստաֆա Քեմալի 1927 թ. ճառը՝ որպես թուրքական պատմագրության կառուցման հիմնարար», *Տեղասպանագիտական հանդես* 2, no. 2 (2014), 79:

Ֆերիդ փաշայի դահլիճը հայտարարվեց անկյալ: Եվ, պատրաստելով մի հուշագիր, դրկեցին սուլթանին: Սուլն հուշագրի մեջ հայտնում էին, թե մերժում են որևէ ձևով իրենց անկախության սահմանափակումը, թե ոչ մի թիզ հող չեն տա Հայաստանի և կամ ուրիշ որևէ տերության, նշանակում էին երկրին հարավային սահմանը, թե եթե եվրոպական տերություններ փափագող են, որ արյունահեղություն չլինի, անմիջապես պարպելու են Իզմիրը, Ադանան և այլ շրջանները և դուրս քաշեն իրենց գրավման բանակները: Սպառնում էին, թե որևէ մերժում այս պահանջներին, կարող է ահավոր հետևանքներ ունենալ, որի պատասխանատվությունը կթողուն սուլթանին¹⁸:

Որոշ է, որ Միլլի շարժումը նախ և առաջ ուղղված էր Համաձայնական պետությունների և երկրորդ՝ երկրի հալ և հույն տարրին դեմ: Շարժումը ուներ մի կերպ Պանթուրքական և Պանիսլամական բնույթ: Իթթիհատականությունը վերակենդանացեր, հաջողության ճամփան էր մտել, այս անգամ էլ Մուսթաֆա Բեմալի, Րեուֆ¹⁹, Ալի Ֆուատ²⁰ և որիշների կողմից: Զինադադարով լուծված «Իթթիհատ վե Թերագզը» կազմակերպությունը իսկույն ստեղծել էր մի շարք նոր հա-

¹⁸ Սերաստիայի համաժողովի մասին տե՛ս Мустафа Кемаль, *Путь новой Турции 1919-1927, Подготовка Ангорский базы, 1919-1920*. т. II (Москва, Государственное социально-экономическое издательство, 1932). 300.

¹⁹ *Հյուսեին Ռուսֆ բեյ* (Օրբայ) (1881-1964), 1918 թ. Տրապիզոնի հաշտության բանակցություններում Թուրքիայի պատվիրակության նախագահ:

²⁰ *Ալի Ֆուաթ Զեքույ* (1883-1968), թուրք պետական, ռազմական գործիչ, դիվանագետ: Մասնակցել է Բալկանյան պատերազմներին (1912-1913) և Առաջին աշխարհամարտին (1914-1918): Բեմալական շարժման մասնակից, Մուսթաֆա Բեմալի մտերիմը: 1919 թ. նշանակվել է Թուրքիայի ազգային ուժերի գլխավոր հրամանատար, այնուհետև քնտրվել Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատգամավոր, դարձել Արևմտյան ռազմաճակատի հրամանատար: Կարևոր դեր է խաղացել խորհրդաթուրքական դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործում:

ջորդներ՝ Թեճեստայուտ²¹ (վերանորոգում) պարտիան, Հուրի-եթիերվերան²² (ազատականներ), Միլլի կոնգրես (Ազգային ժողով), Միլլի բլոկ (Ազգային բլոկ) և այլն, և այլն, պատերազմի ընթացքին հայերից հափշտակված հարստությունները այս ձևով ծառայեցնելով պանթրքական դատին: Ադրբայջան գտնվող Էսվեր հարաբերության մեջ էր Մուսթաֆա Քեմալի հետ, թեպետ ատում էր իր միցակցին և սակայն ջանում էր ծառայել նրան:



Օսմանյան կայսրությունը, որ իսլամական կրոնքի ուժով միացրել էր բազմազան ցեղային և ազգային գույնի մարդիկ՝ թուրք, թաթար, չերքեզ, քուրդ, արաբ, չեչեն և այլն, այժմ թրքական ազգ կերտելու ձգտումը՝ օսմանցիության փոխարեն թրքության լոզունգն էր հրապարակվել Քեմալականների կողմից: Վերջին երկու երեք տասնամյակներում թուրք ինտելիգենցիայի մեջ և նրա կողմից տարված պրոպագանդան և ազիտացիան, այժմ ձև ու մարմին ստացած, դարերով անարգական դարձած «թուրք» անունը ի պատվի էր և փոխանորդում էր «օսմանցի»-ն: Թուրանական ծագումն ու «դեպի Թուրան» կարգախոսը ջատագովվում էր: Ճենկիզ խան և Լենկ Թիմուր անունները հերոսական իդեալներ էին դարձել: Նրանց ավանդությունները զոդվել էին «թուրք» անունին հետ: Եվ աչքերը հառած էին դեպի արևելք, դեպի իրենց ծագման կենտրոնը՝ ստեղծելով պանթուրանական մի իդեոլոգիա, իր մեջ ձուլելով ամեն ազգության պատկանող բնակչություն:

²¹ *Թեճեստայուտ* (թուրք.՝ Teceddüt), կուսակցություն՝ ստեղծված 1918 թ. նոյեմբերի 5-ին:

²² *Հուրիեթիերվերան* (թուրք.՝ Hürriyetperver Avam), կուսակցություն՝ ստեղծված 1918 թ. նոյեմբերի 1-ին:

Այս գաղափարախոսությունը ոչ միայն տարածվել էր հին Օսմանյան տան վրա, այլ և լեզվի վրա, ամեն ճիգ թափելով թրքացնելու՝ արաբական, պարսկական և թրքական լեզուներու խառնուրդ պետական և ժողովրդական լեզուն: Սկսեցին որդեգրել մոնղոլական բառապաշարը, գործածությունից դադարեցվեց արաբական գիրն ու ուղղագրությունը, որդեգրվեց լատինական այբուբենը²³:



Էրզրումի և Սեբաստիայի քեմալական համագումարները պարտված և անդամահատված Օսմանյան կայսրության միջից մի նոր թրքական պետություն էին ստեղծում, ազգայնական և միատարր: Ստեղծվեց թուրքական հանրապետությունը, ջնջվեցին սուլթանությունն ու խալիֆայությունը: Օսմանության ավանդական մայրաքաղաքը լինելուց դադարեց Պոլիսը և փոքրասիական Անգարան եղավ նորաստեղծ թուրք պետության մայրաքաղաքը:

Ահա նման մի պետական մեխանիզմի դեմ էր, որ պայքարելու հարկադրանքին տակ գտնվելու էր առաջիկայում հունական գրավման բանակը: Հին պալատական քաղաքականությանը, սուլթանական ղեկավարության դարավոր նեխվածությանը, նրա անշաղախ, կենտրոնախույս, իրարամերժ կառուցվածքին միայն ծանոթ հույն քաղաքագետները չէին կարողացած թափանցել Փոքր Ասիայի խորքերում խմորվող

²³ Խալիֆայության վերացմանը գուզընթաց Թուրքիայի հանրապետության հռչակումից հետո (1923 թ. հոկտեմբերի 29) սկսվում է պետական և կրթամշակութային համակարգի աշխարհիկացման գործընթացը: Կրթական բարեփոխումների շարքում կարևոր միջոցառումներից էր լատինական այբուբենին անցումը, որը կապված էր հայ մեծանուն լեզվաբան և թարգմանիչ, պատմաբան և գրականագետ, մանկավարժ և բարեփոխիչ Հակոբ Վահանի Մարթաբանի անվան հետ: Տե՛ս Ծատուր Աղայան, *Հայերը Թուրքիայում* (Երևան, Հայաստան, 1994), 52-64:

նոր կացությանը, չէին նշմարել օսմանցիության ավերակների վրա կանգնող թյուրքիությունը, չէին ըմբռնել ուժն ու ծավալը թուրք առաջավոր շարժումին: Միտհատյան Թանգիմաթի²⁴ և իթթիհատական Մեշրութիյեթի²⁵ օրինակները իրենց առջև ունեցող հույն քաղաքագետներ թերահավատ լինելուց ավելի մի բան էին Միլլի շարժման հանդեպ: Արհամարհում էին այդ նոր ծնունդը և շատերի կարգին, հունական պետական բերաններ «չեթեական» շարժում էին միայն կոչում, իսկ այդ շարժման գլուխ կեցող Բենաֆն էլ «չեթեապետ»:

Անգլիո, Ֆրանսիայի, Իտալիայի և Հունաստանի միջև ստորագրված համաձայնությունը՝ Թուրքիայի դեմ համատեղ գործելու մասին, այն դեպքում, երբ Թուրքիան հարձակողական դիրք էր բռնել այս չորս պետություններից որևէ մեկի դեմ, առաջին առթիվ [հերթին] չհարզվեց դաշնակից Ֆրանսիայի կողմից: Ֆրանկլին Բույոն²⁶ մինչև Անգարա գնաց և նորաստեղծ թուրք պետության հետ հաշտության և 26 փետրվար 1921-ին բարեկամության դաշինք ստորագրեց Կիլիկիո պար-

²⁴ *Միտհատյան Թանգիմաթ*, Միդիատ փաշան (1822-1884) առաջնորդել է թուրքական սահմանադրական շարժումը, 1876 թ. ընդունված առաջին սահմանադրության (Kanun-ı Esasi) հեղինակն է: Մասնակցել է թանգիմաթյան գործընթացներին:

²⁵ *Մեշրութիյեթ*, Օսմանյան պետության մեջ երկրորդ սահմանադրության հռչակումը, որին հաջորդած ընտրություններում հաղթել են իթթիհատականները:

²⁶ *Հենրի Ֆրանկլին Բույոն* (1870-1937), ֆրանսիացի քաղաքական գործիչ: 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում Ֆրանսիայի և Անկարայի ազգային մեծ ժողովի կառավարության միջև կնքվել է Ֆրանկլին Բույոնի կամ Անկարայի պայմանագիրը, համաձայն որի նախատեսվում էր պատերազմի դադարեցում և երկու ամսվա ընթացքում ֆրանսիական զորքերի դուրսերթում Կիլիկիայից, բացառությամբ Ալեքսանդրետի սանջակի. այն «հատուկ վարչակարգի» կարգավիճակով մնում էր Ֆրանսիայի կառավարման ներքո: Թուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարությունը երաշխավորում էր ազգային փոքրամասնությունների իրավունքները:

պումի հանձնառությամբ²⁷: Ա. համաշխարհային պատերազմի տարագրության, տեղահանության և ջարդերից վերապրող և վերադարձածների նոր հալածանք ու կոտորածը պատրաստեցին: Իրենց պոռնիկ քաղաքականությամբ առիթ տվեցին և քաջալերանք հանդիսացան Մարաշի ջարդին²⁸: Եվ այս անգամ օտար միջամտությունից վախեցող սուլթանական կառավարությունը չէր, այլ կապիտուլացիոնները²⁹ ջնջող, օսմանյան միապետության բոլոր հանձնառություններն ու պարտավորությունները չճանաչող, մերժող միլի կառավարությունն էր, որ վարում էր հայերի և հույների բնաջնջման ծրագիրը:

Պատերազմի ամբողջ տևողությանը մտերիմ դաշնակիցներ՝ Անգլիան և Ֆրանսիան, փոքրասիական հունական զինվորական ցամաքահանումից հետո, իրենց իմպերիալիստական ծրագրերի ուղուն, Ֆրանսիան Հունաստանը Անգլիայի գործակալն էր նկատում: Հետևաբար, Հունաստանին հասցվելիք որևէ վնաս, հավատացած էր, որ հասնելու էր Անգլիայի: Իսկ այս հակամարտությունից օգտվում էր քեմալական կառավարությունը: Ֆրանսիական նավեր շարունակ գենք ու ռազմամթերք էին փոխադրում թուրք կառավարության: Իտալացիներն էլ ետ չմնացին այդ ուղղությամբ, ոչ միայն նյութական օժանդակություն հասցնելով, այլև Իզմիրի նավահանգստին խարսխած իտալական գրահավորները, իրենց անթեֆներով, կապ ու հաղորդակցություն էին պահում Անգլիայի կառավարության, քեմալական զինյալ ուժերի և Իզմիրի

²⁷ Տե՛ս Ռուբեն Սահակյան, *Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ.* (Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1970):

²⁸ Մարաշի մասին մանրամասն տե՛ս Յովետի Տեր-Վարդանեան, *Մարաշի ջարդը 1920-ին և պատմական համառօտ ակնարկ մը իր անցեալին վրայ* (Հալեպ, Արևելք, 2010):

²⁹ *Կապիտուլացիոն.* պատերազմում հաղթող կողմի առաջադրած պայմաններով պարտվող պետության, ինչպես նաև նրա զինված ուժերի անձնատուր լինելը:

թուրք տարրի միլլի շարժման համակիրների, նրան կապվածների և ներկայացուցիչների հետ:

Իսկ իտալական գրավման գոտու մեջ ազատ ու համարձակ կազմակերպվում և զինվում էին միլլի ջոկատներ: Թիկոնքից ապահով գրավվում էին շրջաններ և երկաթուղագծեր Մեանդրոս գետի³⁰ երկայնքին:

Եթե Թալաթ, պատասխանելով իր օրվա ամերիկյան դեսպան Մորկլընթաուի դիտողություններին հայերի հանդեպ բռնահանության, թալանի ու ջարդի մասին, ասում էր՝ «Չանձրոյթ մի առնեք պատճառաբանելու, մենք արդեն լիկվիդացրել ենք հայերի երեք քառորդի կացությունը. այժմ ոչ մի հայ գոյություն չունի՝ Վան, Բիթլիս և ոչ էլ Էրզրում... Ես երեք ամսվա մեջ ավելին կատարեցի լուծելու համար «Հայկական հարցը», քան Աբդուլ Համիդը երեսուն տարվա ընթացքում»³¹: Պատահական չէր, որ «Մեմլեքեթ»³² թրքական թերթն էլ գրում է հեզմանքով քեմալական շարժման օրերին, թե ծրագրում են Հայաստան ստեղծել մեր արևելյան նահանգների մեջ, ուրեմն ցանկանում են կազմել «Մեռելների հանրապետություն»:

Մի ուրիշ առթիվ, Թալաթ հայկական կոտորածը արդարացնում էր, պատասխանելով Մորկլընթաուին. «Մեր դիրքը հայերի հանդեպ հիմնվել է երեք հիմունքների վրա, առաջին՝ հայերը հարստացել են ի վնաս թրքերի, երկրորդ՝ նրանք որոշել են չենթարկվել մեր իշխանությանը և ստեղծել մի անկախ պետություն, երրորդ՝ նրանք բացեիբաց օգնել են մեր թշնամիներին, միացել են Կովկասի ուներին և մեզ պարտություն

³⁰ *Մեանդրոս* (Մեծ Մեղեբեկ), գետ Թուրքիայի արևմուտքում: Սկիզբ է առնում Անատոլիական սարահարթից և թափվում Էգեյան ծով:

³¹ Հենրի Մորգենթաու, *Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի զտրտմանը* (Երևան, Լույս, 1990), 284:

³² *Մեմլեքեթ*, թերթ, որը լույս է տեսել 1919 թ. փետրվարի 10-ից մինչև օգոստոսի 15-ը, ընդամենը՝ 185 համար: Տպագրվում էր Կ. Պոլսում, գլխավոր խմբագիրն էր Իսմայիլ Համին (Դանիշմենո): Թերթը բազմիցս անդրադարձել է հայերի կոտորածներին:

պատճառեցին: Հետևաբար, անվերադառնալիորեն որոշել ենք նրանք դարձնել ոչ-վտանգավոր»³³:

Իթթիհատ և միլիտարություն, ոնց որ մի կաթիլ ջրի երկու կես էլ լինելուն փաստն է արդ, որ Բեմալականները ոչ մի ատեն և ոչ մի առթիվ չեն նշավակած 1915 թվին Իթթիհատի կատարած դահճությունները: Նույնիսկ Մուսթաֆա Բեմալ ինքը ոչ մի ատեն դատապարտության խոսք չէ ասած այդ ահավոր արարքների համար³⁴: Կիլիկիայի պարպումին, Ադանայի ժողովրդին ուղղված իր կոչին մեջ ի՞նչ է ասում, ուշադրությամբ կարդացեք. «Թուրքիայի զանազան տարրերը դարերից ի վեր ապրում էին այնպես, ինչպես վայել էր միևնույն հայրենիքի զավակներին: Կարելի չէ թաքցնել, որ վերջին տարիներում, թյուրիմացություններ և ցավալի դեպքեր պատահեցան, իսկ լիակատար և լրիվ մի ամնիստիա հայտարարվելու է սրբելու համար այդ անցողակի դեպքերն ու իրենց հետևանքները»:

Եվ ասել, թե մեկ ու կես միլիոն հայերի կոտորածը «անցողակի դեպք» էր..., իսկ կատարվածն էլ՝ «թյուրիմացություն»...:

Որի՞ համար է ամնիստիան, քանի որ ջարդարարները ազատ ու համարձակ պատում էին: Բանտերի մեջ գտնվող ոչ-թյուրքերի համար անշուշտ, որոնց հանցանքն էր... չջարդված լինելը, բայց դատապարտված էին իրր ջարդարարներ...: Ի՞նչ էր զեկուցեր Անգարայի դիվանագիտական միսիոնը Փարիզի թերթերին. «Լոյդ Ջորջ, իր Գանի ճառում, թուրք ազգային կառավարության վերագրում է հայերի կարծեցեալ ջարդ: Եթե ցավալի դեպքեր պատահեր են ընդհանուր պատերազմի ընթացքում, սրանց պատասխանատվությունը որևէ ձևով չի կա-

³³ Հենրի Մորգենթաու, *Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և հայկական եղևնի գաղտնիքները*, 280:

³⁴ Մուսթաֆա Բեմալի մասին տե՛ս Ռուբեն Սաֆրաստյան, *Մուսթաֆա Բեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921)* (Երևան, Տիր, 2019):

րող վերցնել Անգարայի ազգային կառավարությունը: Այս կառավարությունը իրականության մեջ գոյություն ունի Պոլսի՝ անգլիացիների կողմից գրավվելուց ասդին, իսկ այդ թվականից ասդին թուրք ժողովուրդը՝ ջարդված, իր երկիրը հույների դեմ պաշտպանելուց զատ ոչինչ չէ արել, անգլիական կառավարության թելադրություններին կայած»...:

Երևի Մարաշի ջարդը 1915-ին էր և կամ Թալաթի՝ իր գերեզմանից տված հրամանովն էր կատարված... և ոչ թե Քեմալականների Կիլիկիայի գրավումին:

Իսկ Քեմալական շարժումը, որ ինչպես հայտարարությունից կարելի է հետևցնել, եղել էր Պոլսի գրավումի հետևանքով, որ 1918-ի վերջերն էր եղել, մինչդեռ Իզմիրի հունական գրավումը՝ 1919 մայիսին, այսինքն մոտ վեց ամիս հետո, որով սխալ կլիներ Իզմիրի գրավման վերագրել քեմալական շարժման ծնունդը:

1908 թվին, տարրալուծվելու, կործանելու և տնտեսական սնանկության առաջ կանգնած սուլթան Համիդի Թուրքիան փրկելու համար, ժեռն թուրքերը հրապարակ եկել էին «ազատություն, արդարություն, հավասարություն» լոզունգով և տապալած էին Համիդը: Նոր Թուրքիա ստեղծելու դիմակով, փոշի փչեցին աշխարհի աչքին, առաջիկային սակայն, Համիդն իսկ նսեմացնելու աստիճան մեծ ջարդեր և բռնազաղթ կատարեցին: Այսպես էլ համաշխարհային պատերազմից հետո, միևնույն վիճակի հասած Թուրքիան կործանումից փրկելու համար, մի նոր աճաբարարություն էր հարկավոր: Եվ այդ հրապարակ եկավ հանձին Մուսթաֆա Քեմալի: Իթթիհատի երկրորդ տարագրությունը «Միլլիջիությունը» հրապարակ նետեցին: Բայց տեղին է թուրք բանաստեղծ Ջիա փաշայի խոսքերը կրկնել՝ «Պետ ասլե նե ֆայդե ունի ֆորմա, Ջերդուզ փալան վուրսան, էշեկ յինե էշեկ դիր»³⁵ (Վատածննդին ինչ

³⁵ Պետ ասլե նե ֆայդե ունի ֆորմա, Ջերդուզ փալան վուրսան, էշեկ յինե էշեկ դիր (թուրք.՝ Bed-asla necabet mi verir hiç üniforma, Zer-düz palan ursan eşek

օգուտ անի համազգեստը, ոսկեզօծ թամբ էլ դնես վրան, էշը դարձյալ էշ է):

Մուստաֆա Քեմալի հայտնությունը պատահականության արդյունք չէր, նա սերունդների տրամաբանական ծնունդ էր: Թուրք ազգայնականությունը ձև ու մարմին էր առել դեռևս 1912 թվից, «Թյուրք օջախը»³⁶-ի հիմնարկումով: Նա «աստի-ճանական զարգացումն էր «Թյուրք տերնեկի»³⁷-ի, «Թյուրք բիլկի տերնեկի»³⁸-ի, «Թյուրք յուրդուի»³⁹-ի: Եվ սրա համար էր 1927 թվի մարտի 25-ը հռչակվեց «Թուրք օջախը»-ի օր:

Բանն ինչո՞ւն է սակայն, ընկեր Ստալինը ասել է. «Շուկան առաջին դպրոցն է, որտեղ բուրժուազիան նացիոնալիզմ է սովորում»:

Դարերի ընթացքում Թուրքիայում ոչ միայն արտաքին առևտուրը, այլև ներքին հրապարակը գտնվել էր հույն. հայ և հրեա առևտրականների, կոմիսիոնների, ինչպես նաև կալվա-

յուս Էսեկտիր), վատ ծագում ունեցող մարդուն զգեստը երբևէ տվե՞լ է ազնվականություն, ոսկեզօծ թամբով ավանակը մնում է ավանակ:

³⁶ *Թյուրք օջախը* (թուրք.՝ Türk Ocakları), թուրքական օջախներ (1912-1931): Կազմակերպության նպատակը՝ ազգային դաստիարակությամբ, գիտական, կրթական, սոցիալական, տնտեսական առաջընթացով հասնել կատարելության:

³⁷ *Թյուրք տերնեկի* (թուրք.՝ Türk Derneği), թուրքական համայնք. ազգայնական կազմակերպություն (1908 թ. դեկտեմբեր), նպատակն էր պահպանել թուրքական ժողովուրդների անցյալը, ժառանգելով այն՝ սովորել և սովորեցնել սերունդներին: 1912 թ. ցրվել է. իսկ անդամներից շատերն անդամագրվել են Türk Yurdu -ին:

³⁸ *Թյուրք բիլկի տերնեկի* (թուրք.՝ Türk Bilgi Derneği), թուրքական գիտական համայնք: Türk Derneği-ի ցրվելուց հետո ստեղծված կազմակերպություն, որը երկար կյանք չի ունեցել: Նպատակը թուրքականությանն օգուտակար լինելն էր:

³⁹ *Թյուրք յուրդու* (թուրք.՝ Türk Yurdu), թուրքերի հայրենիք. տուն: Կազմակերպությունը ստեղծվել է 1911 թ., որի հիմնադիրներից էր թուրք պատմաբան, թուրք ազգայնականության և համաթյուրքականության գաղափարախոս Յուսուֆ Արչուրաօղլուն (1879-1935): Հրատարակվել է «Türk Yurdu» պարբերականը, որը հետո դարձել է «Türk Ocakları»-ի մարմինը:

ծատերերի ձեռքում: Թուրք բուրժուազիան տեսնում էր այս իրողությունը և ցանկանում էր գյուղացու արտադրությանը, ինչպես նաև առևտրական հրապարակին ինք տիրանա: Ինք լինելով տիրապետող ազգ, անհանդուրժելի էր գտնում օտար ազգերի գերադաս դիրքը շուկայում: Ուստի, «տիրապետող ազգի կիսաֆեոդալական-կիսաբուրժուական բյուրոկրատիան, իր «քարշ տուր դեպի դուրս և ներս մի թողնի» մեթոդներով ... անելու էր իր կոնկուրենտի դատաստանը»: «Շուկան առաջին դպրոցն է, որտեղ բուրժուազիան նացիոնալիզմ է սովորում»:

Այս առիթը ներկայացել էր երիտասարդ թուրքերի օրով և հրապարակված որոշ օրենքներ ամրապնդել էին թուրք բուրժուազիայի դիրքերը և նրան դարձրել էին լուրջ քաղաքական գործոն: Իսկ Ա. համաշխարհային պատերազմից հետո, Թուրքիայի ամենից վաճառաշահ շրջաններին օտար տերությունների կողմից գրավումը բնական էր, որ հաշտ աչքով դիտվելու չէր և դիմադրություն էր առաջացնելու՝ Անադոլուի թուրք բուրժուազիայի մեջ:

Ուստի թուրք բուրժուազիայի նացիոնալիզմի (միլիջիուրյան) անունի տակ հրապարակ եկավ իր «կոնկուրենտի դատաստանը» կատարելու և «քարշ տուր դեպի դուրս և ներս մի թողնի»⁴⁰ լուզունգով:

Եվ ուրքի հանեց գյուղացիությունը, որը պայքարում էր հողի համար, ֆեոդալական շահագործման կապանքներից, կալվածատերերի ճնշումից, առևտրականների կողոպուտից, վաշխառուներից և գյուղական «աղաններից» ազատագրելու համար: Այսպիսով՝ թուրք ազգային-ազատագրական շարժման իբր գլխավորող և «համազգային» շահերի ներկայացուցիչ հանդես եկավ Անադոլիական բուրժուազիան: Հովանավորեց, ուժ տվեց և դարձավ շարժման հեգեմոնը, իսկ այդ շարժման հաղորդիչը հանդիսանում էր երիտասարդ զինվոր-

⁴⁰ Պրոֆ. Ա. Ֆ. Միլլեր, *Նորագույն պատմություն*, 1948, 363 | իդումը հեղինակինն է՝ Մ. Բ., ամբողջական իդումը տե՛ս Ա. Ֆ. Միլլեր, *Ուրվագծեր Թուրքիայի նորագույն պատմության* (Երևան, Գիտությունների Ակադեմիա, 1948):

րական խավը, որ դաստիարակված էր աղանների⁴¹ շունչով: Նրանք ինտերվենտների և սուլթանի դեմ զինված պայքարի մեջ տեսնում էին երկրի փրկությունը. «... այն կողպուտը, որին ենթակա էր Թուրքիան: իմպերիալիստական պետությունների կողմից, առաջ բերեց հակահարված»⁴²:

«Քեմալական ռևոլյուցիան ազգային առևտրական բուրժուազիայի վերնախավային ռևոլյուցիան է... իր հետագա զարգացման մեջ ուղղված, ըստ էության, գյուղացիների և բանվորների դեմ, հենց ագրարային ռևոլյուցիայի հնարավորությունների դեմ»⁴³:

Քեմալական ռևոլյուցիան գյուղացիությանը, ըստ էության, ոչ մի իրական օգուտ չտվեց: Ողջ պետական ապստրատը անցավ անատոլիական բուրժուազիայի և գյուղի շահագործող վերնախավի ձեռքը: Շարունակվեցին հին ֆեոդալական հարկերը և պաշտոնների կապալային հին սիստեմը:

Եվ փաստորեն ինչ էր այս «արդիացած» Թուրքիայի տարբերությունը: «Հանրապետություն» էր, «դեմոկրատական», ուր մեծ կալվածատեր բուրժուաներ դարձել էին զինվորականների մի դաս, ավելանալով բուրժուա-կալվածատեր քաղաքացու վրա: Եվ երևակայել, որ երեկ հազիվ ապրելու չափ մի ամսականից ուրիշ չշինչ չունեցող Քեմալ, հարյուրավոր ազարակների, անսահման տարածությամբ հողերի և հարստության տեր եղած էր՝ սուլթան Համիդը հիշեցնող: Յուրաքան-

⁴¹ *Աղաններ*, առկա են նույն ազգանվամբ մի բանի անձինք (այդ թվում՝ Հասան բեկ և Ահմեդ բեկ): Սակայն հեղինակը, ամենայն հավանականությամբ, նկատի ունի Ահմեդ բեկ Աղանին (1869-1939), որը երիտթուրքական կուսակցության ակտիվ գաղափարախոսական գործիչներից էր. թյուրքիզմի ջատագործներից:

⁴² Լենին, *Երկեր*, հատոր XXVI, 177 լիդումը հեղինակինն և՛ Մ. Բ.: Տե՛ս Կ. Բ. Լենին, *Երկեր*, հ. 26 (Երևան, Հայպետհրատ, 1951):

⁴³ Ստալին, Օպոզիցիայի մասին, 573 լիդումը հեղինակինն է՝ Մ. Բ.: Տե՛ս Յու. Ստալին, *Ոպոզիցիայի և ներկուսակցական դրության մասին (Հասկումկուսի XV կոնֆերենցիայում արած զեկուցումը)* (Յերևան, Պետհրատ, 1926):

չոր սպա նույն ձևով տիրացել էր հայերի և հույների «լքյալ» գույքերին, և երբևիցե պիտի չուզենային, որ այդ ավարները իրենց ձեռքից ելնեին՝ եվրոպական միջամտությամբ կամ այդ հարստությունների տերերի վերադառնալովը:

[Բացակայում է ձեռագրի 16-րդ էջը՝ Թ.Մ.]:

ՄԵԾ ԱԽՈՐԺԱԿՈՎ ՓՈՔՐԸ ...

Առաջին համաշխարհային պատերազմի հաղթականները [հաղթող], երբ սկսել էին բաժանել ավարը, փոքրիկ Հունաստանը ևս ներկայացնում էր մի շարք «ազգային» և քաղաքական պահանջներ թրքական ժառանգության հաշվեհարդարի մեջ: Ոչ միայն Փոքր Ասիայի ավերը, մինչև Ադրամիտի ծովը⁴⁴, այլև Արևելյան Թրակիան... մինչև Կ.Պոլիս ներկայացնում էին հունական պահանջները: Արևմտյան պետություններ, այս առիթից օգտվելով, պահանջում էին Հունաստանից, որ ինքն էլ մի գումարտակ զորքով մասնակցի նորածին Սովետական Ռուսաստանի դեմ մղվող կապիտալիստական ինտերվենցիայի կռվին, երբ նորաստեղծ սովետական հանրապետությունը պաշարման էին ենթարկել և ինտերվենցիայի կառքին էին լծել մի շարք սպիտակ գվարդիական նախկին ռուսական բանակի զինվորականներ: Հունական պահանջները ներկայացնող Վենիզելուս⁴⁵, սակայն առաջարկել էր այդ ուժը ուղարկել նոր սկսած քեմալական շարժման ճնշումին հատկացվելու համար: Նեոյի⁴⁶ և Սևրի դաշնագիրները չէին

⁴⁴ *Ադրամիտ*, Արտամետ, Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Հայոց ձոր գավառում, Վանա լճի հարավ-արևելյան ափին, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 1, 490, այժմ Էդրեմիթ, Վանի նահանգ:

⁴⁵ *Էլնվթերիոս Կիրիակոս Վենիզելոս* (հուն.՝ Έλευθέριος Κυριαόξου Βενιζέλος, 1864-1936), հույն պետական և քաղաքական գործիչ, Հունաստանի վարչապետ (1910-15, 1917-20, 1924, 1926-32 և 1933-35):

⁴⁶ *Նեի պայմանագիր* (1919 թ. նոյեմբերի 27), Փարիզի խաղաղության վեհաժողովի նախապատրաստած պայմանագիրը Բուլղարիայի հետ:

բավարարում Վենիզելոսը, որ շարունակել էր տարածել Հունաստանը «Երկու երկրամասեր» – եվրոպական և ասիական – և «հինգ ծովերի» վրա: Համաձայնականների բանակների հետ հունական զորքն էլ մտել էր Կ.Պոլիս: Վենիզելոս ոչ միայն կոչվել էր «ցեղի հայրը», այլև մի շարք մոլեռանդներ նույնիսկ մոմ էին վառել, կանթեղ էին կախել Վենիզելոսի պատկերի առաջ...: Այսքան ծայրահեղության էր հասել Պոլսո հույն բնակչության խանդավառությունը: «Ազգային նրազն» էր իրականանում... Կոստանդնուպոլիս և Այա Սոֆիա հունական գրավման ներքև, որից մի բան էր պակաս, ուր էր որ առաջնորդեր հունական զորքը Կոնստանդինոս թագավորը...: Մի՞թե այսպես չէին գրել կրոնականները. «Եվ գալու է այն օրը, երբ մի թագավոր անունով Կոնստանդինոս, իր բանակի գլուխն անցած, վերագրավելու և հույն ժողովրդին դարձնելու էր Պոլիսն ու Այա Սոֆիան»...: Մի՞թե դարերով չէին երազել և այսօր չէին երգում. –

Սե տեսյո Կոստանդինո

Սե տեսյո վասիլյա

Թա պարումե տին Պոլի

Կե տին Այա Սոֆիա.

Թա դիոքսումե տուս տուրկուս

Ատի Կոկինի Միլյա

Օ՛, դենեյե Վասիլյա:

Այսպիսի Կոնստանդինով

Այսպիսի թագավորով

Առնենք պիտի Պոլիսը

Նաև Այա Սոֆիան.

Պիտ՝ քչենք թրքերը

Մինչև Կոկինի Միլյա⁴⁷

Ո՛վ քաջն թագավոր:

⁴⁷ *Կոկինի միլյա*. ըստ հունական ժողովրդական ավանդության՝ այն վայրն է, ուր պիտի վտարվին թուրքերը Պոլսից: Ըստ այս ավանդության, թուրքերը, երբ գրավեցին Պոլիսը (1453), բյուզանդական թագավորը, իր ձիան վրա նստած ջանում էր արգիլել, սուրը քաշած կռվում էր. ձին սպանվեց թուրքերի կողմից և ինքն էլ վար ընկավ, և երբ մի արաբ եկել էր սրահար անել, հանկարծ հրեշտակները հափշտակեցին, տարին Ոսկեդուր կոչված արքայական դռան մոտ մի քարայր: Այստեղ մարմարացած վիճակի մեջ սպասում է, երբ մի օր պիտի ողջնա. թուրքերը պիտի վտարե Պոլսից և գրավե Այա Սոֆիան [հղումը հեղինակինն է՝ Մ. Բ.]:

Իսկ թագավոր Կոնստանդին հրաժարեցված, մնում էր տարագիր, Հունաստանում թագավորասերների հոսանքն ավելի և ավելի էր ուժեղանում, պարզ փառասիրության և մոլեռանդ ազգայնական ցանկություններից մղված: Մինչև Պոլիս հասած և հետզհետե տարածվող, ասիական ափեր ոտք դրած հույն բանակի վերև ցանկանում էին տեսնել... մարգարեացված թագավորը, որին զուր տեղ չէր որ կոչել էին «Կոնստանդին ԺԲ» իբր Բյուզանդական կայսրների ժառանգական հաջորդը: Փոքր Հունաստան մեծ երազ էր տեսնում, Բյուզանդական կայսրությունը վերակենդանացնելու էր երազում, մոտ հինգ հարյուր տարի հետո...: Իրականացած էր տեսնում իր դարավոր երազը՝ «Մեղալի Էլլադա» (Մեծն Հունաստան):

Հոկտեմբեր 30, 1918 Մուղրոսի զինադադարի իբր հետևանք, Միջագետքն ու Պաղեստինը հանձնված էին անգլիական հոգատարության, Սիրիան՝ ֆրանսիացիներին, մեջը լինելով և Կիլիկիան, իսկ հույներին էլ թողնվել էր Փոքր Ասիայի հոգատարությունը: Թրակիա, երկուսասան կղզիներ և Իզմիրն էլ կցումով, Հունաստանն Արևելքում դառնալու էր մի «Մեծ պետություն», ինչպես էր հայտարարել Վենիզելոս, 24 հունվարի 1919-ի Փարիզի խորհրդածողովին: Եվ 2/15 մայիս 1919, Աթենքի կառավարությունը հեռագրել էր, որ զորքը պատրաստեն, անգլիական զրահավորների ընկերակցությամբ զրավելու համար Իզմիրը: Եվ իսկապես, նույն օրը, հեղին զորքը ցամաքահանում կատարեց Իզմիր:

ԻԶՄԻՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԳՐԱՎՈՒՄԸ

Հունական զորքը Համաձայնականների հավանությամբ և հանձնարարությամբ էր եկնում Իզմիր: Չէին նախատեսել սակայն, որ կարող էր որևէ դիմադրություն տեղի ունենար թուրք ժողովրդի կողմից:

Հելլեն բանակը կարծես Հունաստանի մի քաղաքից մյուսը գնացած լիներ, ապահով և որևէ անակնկալի դեմ անպատրաստից կատարում էր իր ցամաքահանումը:

Թուրք ժողովուրդը առհասարակ քաշվել էր հրապարակից, նախատեսելով անշուշտ, թե ցամաքահանման հույն ազգաբնակչության վրա կատարվելիք ազդեցությունը և ստեղծվելիք խանդավառությունը կարող էր գրգռություն առաջ բերել, ի վնաս իրենց: Փողոցների մեջ խոտներամ⁴⁸ հետաքրքիրներ դեպի քարափ էին շտապում առավոտ կանուխից: Գրեթե դատարկվել էին քրիստոնեական թաղամասերը: Իզմիրի ծովեզրը իր պատմությանը ընթացքում գուցե չէր տեսել այնքան բազմություն, մարդկային նման գեղյալ վիճակ:

Սուլթանական Թուրքիան պարտվել էր պատերազմում և առանց որևէ պայմանի ստորագրել էր զինադադարը: Ստորացել, խոնարհվել, ենթարկվել էր «մեծերին» (Համաձայնական տերություններ), սակայն հույների Իզմիր ոտք դնելը թրքերի համար գերագույն ստորացումն էր, նույնիսկ իրենց պարտությունից էլ ծանր: Թրքերը ասում էին, որ լինեին աշխարհի «մեծերի» կրնկների տակ, մի կերպ համակերպելու էին, սակայն փոքրերի, տկարների, դեռևս մինչև մոտ տարիներ թուրքի լծի տակ գտնված, նրա գերին ու ստրուկը, ռայան եղած հույնի իշխանությանը ենթարկվել, ամենամեծ անարգանքն ու անպատվությունն էր նկատում: Այս կետի շուրջ իսլամ օսմանցիների միջև – թուրք, արաբ, քուրդ, չերքեզ, ալբանացի ևլն. – չկար ոչ մի տարակարծություն, հետևաբար, մոռցած իրենց ներքին ցեղային տարակարծություններն ու ցեղամիջյան հակամարտությունները, հունական գրավման դեմ ներկայացնում էին միացյալ ճակատ:

Թուրքերի համար անփոխարինելի կորուստ էր մեծագույն հարված Իզմիրի՝ օտարի ձեռք անցնելը: Նրանով կորցնում էին մի շատ կարևոր ստրատեգիական կետ: Նրանով

⁴⁸ *խոտներամ*, բազմերամ:

գրկվում էին խոշորագույն առևտրական մի նավահանգստից, որտեղից լինում էին արտաքին ներմուծությունն ու արտածությունը: Իզմիրի նահանգը Թուրքիայի ամենահարուստ շրջաններից մին էր՝ արդյունաբերության, բնական հարստությունների և միջազգային առևտրի կենտրոն: Ուստի վրդովվել էին ամեն կարգի թյուրքեր, և մասնավորապես թուրք զինվորականությունն ու բուրժուազիան: Թուրք բուրժուազիայի առաջ փակվում էր արտաքին առևտրի և շուկաների կենտրոնական դուռը:

Բացի այդ բոլորից, հույն բուրժուազիան, որ գալիս էր գրավելու թուրք գյուղացու հողերը, խոստանում էր այդ հողերը տալ հույն գյուղացիներին: Ահա պատճառներ, որոնք վրդովմունքի էին մատնում թուրք ժողովուրդը:

Այս պայմանների տակ էր, որ հունական զորքը ցամաք էր ելել Իզմիր: Քրիստոնյա բնակչության, մասնավորաբար հույների անզուսպ և ուրախությամբ զինովցած աղաղակներն ու անընդհատ ծափահարությունները, ծաղկեփնջերի տեղատարափը, գիրկընդխառնումներն ու «Զիթո»⁴⁹ գոչումները, արձագանքներ էին տալիս հանդիպակաց բլուրներից, ուր գտնվում էին թրքաբնակ թաղերը:

Հունական զորքը շարք կազմեց և կանոնավոր քայլերով ընթացավ դեպի կառավարատունը, կատարելու համար առաջին պաշտոնական գրավումը: Ժամացույցի հրապարակից հազիվ դարձած, ուր աջ կողմը երկարում էր դեպի Գարաթաչ տանող փողոցը, որտեղից ընթանում էր տրամվայը, հունական զորամասն անակնկալ հրացանաձգության հանդիպեց շրջակա բարձունքներից կամ տներից: Հունական խանդավառության պատասխան էին տալիս թրքական զենքերը, որոնք առջի գիշեր կողոպտված էին Իզմիրի զորանոցից նախքան հույների մուտքը: Թուրք կուսակալը, որպեսզի առիթ չտրվի արյունահեղությունների, խնդրել էր անզլիական իշխանու-

⁴⁹ *Զիթո* (հուն.՝ Ξίτω), կեցցե՛:

թյունից, որ հունական գորքերին ընկերանան անգլիականներ, վատահ լինելով, որ սա կանխելու էր թուրք և հույն ընդհարումը: Անգլիական զինվորական իշխանությունը սակայն մերժել էր նման մի ձեռնարկ, պատճառաբանելով, թե չունի այդ անելու հրահանգ, ըստ անգլիական ավանդական՝ ազգազգի դեմ թշնամացնելու սովորությանը: Մինչ այս մինչ այն սակայն, մինչև որ հույն գորքը նահանջեր և դիրք բռներ, հույները բավական թվով սպանյալ և վիրավոր էին ունեցել:

Այս միջոցին քաղաքը մնացել էր անտեր, ո՛չ քաղաքային իշխանություն կար և ո՛չ էլ ոստիկանություն, իսկ թրքերի կեցվածքը գրավման բանակի դեմ առիթ ծառայեց, որ թաղերի մեջ բնակող թուրք ոստիկաններ, բուլղարներ հարձակման ենթարկվին, թալանվին հույների կողմից:

Մի շարք բախտահնդիրներ էլ առիթից օգտվելով՝ քանդեցին թրքական վաճառատների փեղկերն ու դռները և կողոպտեցին ներսի ապրանքը: Ուրիշներ, հույն զինվորների պաշտպանությանը տակ, իրենց բնակարաններից դուրս հանեցին չարագործ նկատված թուրք ոստիկաններ, մերկացրին և սպաննեցին:

Քարափի զուգահեռ փողոցի մեջ գտնվում էր թուրք ազգայնական թերթ «Քեոյլի»⁵⁰-ի տպարան-խմբագրատունը, որ գավառի գյուղացիության հետ ուներ և առևտրական կապեր, գյուղական արդյունաբերությունն ու հողերը շահագործելու ձեռնարկներ: Ցամաքահանման վերջավորությանը, երբ տուն էի դառնում, պատահմամբ ճամփասա այդ փողոցը առաջնոր-

⁵⁰ *Քեոյլ* (թուրք.՝ köylü), 1909 թ. Զմյուռնիայում լույս տեսնող օրաթերթ: Պետասխանատու սնօրենը Մեհմեթ Ռեֆեթն էր: Սկզբնական շրջանում իթթիհադական գաղափարների տարածողն էր Զմյուռնիայում: Մուղրոսի գլխաղաղարի կնքումից հետո խիստ գրաքննության պատճառով թերթը փակվել է: Թուրքական տեսակետներն եվրոպացիներին իրագեղկլու նպատակով լույս է տեսել անգլերեն ու ֆրանսերեն: 1919 թ. թերթը գնել են հույները, և Մեհմեթ Ռեֆեթը նախքան Զմյուռնիայի թուրքական գրավումը հունամետ գործունեություն է ծավալել. սպա՝ հեռացել: 1922-1923 թթ. օրաթերթը դադարել է լույս տեսնել:

դեց ինձ: Ուշադրությունս գրավեցին տպարանին կոտրած ապակիները և մտնող ելնողները: Հետաքրքրությունն ունեցա ես էլ մտնելու: Քար քարի վրա չէր մնացել. ջարդ ու փշուր էին արել մեքենաները, շրջեր թափեր էին տատերը և տարել էին ամենահետին առարկան իսկ և երևակայել, որ մին էլ զբաղվել էր, այդ պահուն գազի կապար խողովակները քակել փրցնելով: Գրասենյակների մեջ մնացել էին միայն հանքի նմուշներ և դրամարկղը, որ թվում է, թե չէին կարողացել բանալ:

«Քեոյլի» թերթի տեր ու տնօրենը իր անցյալովը ծանոթ օտարատյաց մեկն էր: 1915-ի տեղահանության ժամանակ, Իզմիրի կուսակալության մեջ ընդհանուր տեղահանություն չէր եղած: Ազգային Առաջնորդարանը պատրաստած էր «սև ցանկը», որով մի մաս հայեր տարագրված էին ներքին գավառներ կամ բանտարկված իրենց արքորավայրում: Իսկ սրանցից դուրս, մինչև պատերազմի վերջավորությունը, հայկական նահանգների կամ ներքին գավառների վիճակված տեղահանություն կամ կոտորածից ազատ մնաց Իզմիրի կուսակալության հայությունը: Սրա պատճառը, գուցե, Էնվեր և Թալաթի, Իզմիրի կուսակալ Րահմի⁵¹ հետ ունեցած մրցակցությունը և կամ չենթարկվողականությունն էր, մասամբ էլ հայ հարուստների առատ կաշառաստվությունը: Այսպես լինելով կացությունը՝ «Քեոյլի» սակայն իր էջերում բացե ի բաց հակահայ հարձակումներ էր անում և պահանջում, որ չինսայվեն հայերը:

Կարգն ու կանոնը սակայն շուտով վերահաստատվեցին: Գրավման բանակի պետ, գորավար Ջաֆիրիուն իսկույն պատերազմական վիճակ հայտարարեց և հաջորդ օրն էլ հունական ոստիկանությունը հասնելով, լուրջ միջադեպերի առաջ-

⁵¹ *Րահմի* (թուրք.՝ Evrenoszade Rahmi Bey, 1874-1947), Այդընի նահանգապետ (1913-1917): Ծնվել է Սալոնիկում. Էվրենոսների ընտանիքում: Ազգանունների օրենքի ընդունումից հետո կրել է Արսլան ազգանունը: Ընտրվել է պատգամավոր Սալոնիկից (1908, 1912): Անդամակցել է Միություն և առաջադիմություն կուսակցությանը:

քը առնվեցին: Եվ սակայն պետք է ընդունել, որ այդ երկու օրվա ընթացքում տեղի ունեցան բազմաթիվ սպանություններ, անկարգություններ, կողոպուտներ ու գողություններ: Ֆես կրող մի շարք քրիստոնյաներ էլ անգիտակցաբար ենթարկվեցին հարձակումի կամ անարգանքի, որոնց կարգին և դատախազ Գր. Բարադամյան:

Այս բաների հանդիսատես իտալական ոստիկանապետը հարմար առիթ նկատեցին միջամտելու և իսկույն իտալական զորքը ցամաք հանեցին, իբր թե կարգ ու կանոնը վերահաստատելու և կամ իրենց հայատակների շահերի և կյանքի պաշտպանությունը համար: Այս առիթ եղավ նաև, որ իտալական իշխանությունները չափազանցված ներկայացնեին եղելությունը և իբր այդպիսին գանգատեին Պոլսի Համաձայնական ուժերի խորհրդին: Ինչ որ իսկույն մի քննիչ հանձնախումբի առաքման որոշման հանգեց: Քննիչ հանձնախումբը պատասխանատու նկատեց հեյլեն զորքը, որ եկել էր ոչ թե իբրև Եվրոպայի հանձնակատարը, այլ իբր զավթիչ: Նույն ձևով Կլեմանսոն⁵², Փարիզից պատասխանատվությունը վերագրեց հույներին և հայտնեց, թե Իզմիրը դաշնագրով հույներին չի պատկանում, այլ միայն դը ֆակտո:

ԹՇՆԱՄԻ «ԲԱՐԵԿԱՄՆԵՐ»

Կլեմանսոյի հայտարարությունը եզակի չէր սակայն: Իրար մեջ անհաշտ Համաձայնական պետությունները սկսել էին զարտնի աշխատել, որ թրքական հողերից հեռանան իրենց երեկվա զինակիցները: Եվ սրա իրականացման համար օգ-

⁵² *ժողով Կլեմանսո* (1841-1929). Ֆրանսիացի պետական և քաղաքական գործիչ. Նախարարների խորհրդի նախագահ (1906-1909). Փարիզի հաշտության խորհրդածողովի նախագահ (1919-1920). Վերսալյան հաշտության պայմանագրի համահեղինակ: 1920 թ., պարտվելով նախագահական ընտրություններում, հեռացել է քաղաքական ասպարեզից:

նում էին միլլի շարժումին: Իտալիան՝ Ատալիայի ճամփով, Ֆրանսիան՝ Կիլիկիայի ճամփով, իսկ Անգլիան էլ զանազան ձևերով զինում էին Սուստաֆա Քեմալի նորակազմ բանակը:

Ավերորդ չենք նկատում լավատեղյակ մի բարեկամի գաղտնաբար ինձ հաղորդումները, որոնք չափազանց պարզ կերպով ներկայացնում են անգլիական նենգ քաղաքականությունը, որ վարում էին Իզմիրի նկատմամբ մասնավորաբար:

Պանդրմալի⁵³, Գրքաղաճի⁵⁴ և առհասարակ այդ շրջանում նոր սկսվել էր չեթեական շարժում: Իզմիրի հունական զինվորական ուժերը տեղեկացել էին, թե որոշ մի շրջան կենտրոնացել էին քեմալական այդ պարտիզանները: Հելլեն սպայակույտը որոշել էր և հրահանգ տվել թիկունքից պաշարել և ոչնչացնել այդ ուժերը: Իզմիրում գոյություն ուներ սակայն միջհամաձայնական սպայակույտ, որին պետք էր տեղյակ պահեր հունական իշխանությունը իր յուրաքանչյուր ձեռնարկը: Ուրեմն, անգլիական զինվորական իշխանությունը իմացել էր, որ հույն զորքը որտեղ գնալու էր, որ ճամփով և ինչ անելու էր գնում:

Հունական զորքը ճամփա ելնելով հասնում է այն լեռնային անցքին, այն կիրճին, որը միակ ճամփան էր քեմալական չեթեները թիկունքից պաշարելու: Զորքը հագիվ կիրճի կեսին որ հասնում են, տեսնում են, որ անգլիական զինվորական մի ջոկատ, դրոշակը պարզեր, ճամփան գրավեր էր և թույլ չէր տալիս, որ առաջ անցնեի հունական զորքը: Երկար բանակցություններից հետո, եղելությունը հաղորդելով, հարկադրյալ սպասում են Իզմիրի անգլիական զինվորական իշխանության հրահանգին: Մինչև պատասխան ստանալը սակայն, կանցնի 24 ժամ, մինչ այդ միլլի ուժեր տեղեկանալով

⁵³ Պանդրմա, Բանդրմա, Պանդերմա (թուրք.՝ Bandırma), քաղաք և շրջան Բալլքենսիրի մարզում (Մարմարածովյան տարածաշրջան):

⁵⁴ Գրքաղաճ, Բըրքաղաչ (թուրք.՝ Kirkağaç)՝ Մանիսայի շրջան, վարչական միավոր Թուրքիայի արևմուտքում:

անցուդարձին, քաշվում են ավելի ներսերը: Հույները չունեին գործելու ազատություն, իսկ ծովակալ Կալթորա, ոչ միայն չէր վավերացնում հունական զինվորական տակտիկան, այլև չէր արտոնում կտրուկ և խիստ գործողություն:



Առաջին Համաշխարհային պատերազմում Մակեդոնական ճակատի անգլիական ուժերի մոտ թարգման մի պաշտոնակից պատմում էր. Իզմիրի գրավումից հետո, երբ արձակվել էր, իր նախկին սպային նամակ գրելով, նրա կարծիքն էր հարցրել իր ծննդավայրը՝ Իզմիր գնալու մասին: Սպայի հայրը՝ այդ օրվա իշխանության զլուխ գտնվողներից մին էր: Իր հորից քաղած տեղեկությունները մտերմաբար հաղորդում է և զգուշացնում չգնալ Իզմիր, քանի որ... պարավելու էր: Եվ հանձնարարում էր նամակը կարդալուց հետո ոչնչացնել: Եվ սա լինում էր Իզմիրի հունական զորքերի գրավումից քիչ հետո: Որով պարզ է, թե երբ մի կողմից հունական ցանկություններին ընթացք էին տալիս, մյուս կողմից արդեն որոշվել էր դուրս հանել հույներին:

Անգլիական նենգամտության մասին մի ուրիշ դրվագ ևս. Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին Իզմիրի նեղուցն էլ փակվել էր: Սակայն մի օր լուր տարածվեց՝ Իզմիրի մի թրքական թորփիլանավ⁵⁵ ներս է մտել: Բավական հետաքրքրական և հանելուկային էր անշուշտ, որ երբ Էգեական և Հոնիական ծովերը պաշարվել էին Համաձայնական ռազմանավերով, ինչպե՞ս կարող էր թրքական մի թորփիլանավ անցներ նրանց միջից և ապահով հասներ Իզմիրի նավահանգիստը:

Հիշյալ թորփիլանավի անունն էր «Ջաֆերի ...» (չեմ հիշում անվան մնացած մասը) և մինչև պատերազմի վերջավորու-

⁵⁵ Թորփիլանավ (թուրք.՝ torpil), տորպեդանավ:

թյանը խարսխած և վրան ծածկված մնաց Կորդելիոյից ասդին Այա Տրիադայի նավահանգիստը: Իսկ եղելությունը հետևյալն էր. Մակեդոնական ճակատը բացվել էր, Սելանիկի ծոցը և նավահանգիստը եռուզեռի մեջ էր, Համաձայնական նավեր ամեն տեսակի մթերք էին փոխադրում այդտեղ, ռուսական մի հսկա նավ էլ ցորեն էր բերել: Դարդանելի նեղուցին մեջ գտնվող թրքական թորփիլանավի հրամանատարը, ծանոթը կլինի պահակ անգլիական նավատորմիոյի հրամանատարին, կհարաբերվին անթելով⁵⁶, թրքական թորփիլանավը դուրս կելնի նեղուցից, կմոտենա անգլիական զրահավորին, սրանից մի ստիմբոտ⁵⁷ ուղարկվում է թորփիլանավին, թուրք հրամանատարը գալիս է անգլիական զրահանավ, տեղի է ունենում տեսակցությունը, թուրք ծովայինը վերադառնում է իր թորփիլանավը և անմիջապես ուղղվում դեպի Սելանիկի նավահանգիստը, գնում թորփիլահարում է ռուսական նավը, վերադառնում և ապաստանում է Իզմիրի նավահանգիստը: Այդ երեկո պահակության կարգը անգլիական նավատորմիոյին լինելուն՝ թրքական թորփիլանավը աչքաթող էր արվել և ապահով հասել էր Իզմիր:



Ամբողջ հունական գրավման շրջանում իզմիրաբնակ լանտեն⁵⁸ անգլիացի Վետովան, հուլյներին իբր հունասեր, քեմալականներին իբր թրքասեր, շարունակ երթևեկ էր ունենում և անցնում էր միլլի ուժերի շրջանակը: Մնում էր մի ինչ ժամանակ, դարձյալ վերադառնում էր՝ ազատորեն կատարելով իր լրտեսի, լրատուի, և անվարան ասելով, իր քեմալական գոր-

⁵⁶ *Անթել*, ռադիոհեռագիր:

⁵⁷ *Ստիմբոտ* (անգլ.՝ steamboat), շոգենավ:

⁵⁸ *Լանտև*, Արևելք. Միջերկրականի արևելյան ափի երկրների ընդհանուր անվանումը:

ծակալի պաշտոնը, քանի որ Իզմիրի լանտենները երբևիցե չէին հոժարում և ատելությամբ էին դիտում հունական իշխանության գոյությունը Իզմիր և իր շրջանում: Իզմիրն այդ լանտենների համար եղել էր մի դրախտ, ուր ապրել էին ազատ, շահագործել էին ազատ, մոնոպոլիաներով իրենց վայելած անձեռնմխելիության և ամեն կարգի ազատության շնորհիվ անսահման հարստության էին տիրացել:

Համաձայնական պետությանց խարդախ քաղաքականության մի օրինակ՝ Իզմիրի գրավումին քաղաքի մեջ գտնված թրքական սպաներին հավաքել, նավ նստեցրել և Մուդանիայի ճամփով քեմալական Թուրքիա հանձնելն էր: Հարյուրավոր սպաներ գնում էին գորացնելու միլլի բանակը: Հունաստանին պարտավորվում էր ազատ թողնել այն ուժը, որ հառաջիկայում իր դեմ պիտի կռվեր:

Այդ ամեն ազգի և կարգի լանտենները, որոնք գիտակցում էին Համաձայնական պետությունների ներքին ընդդիմամարտ ձգտումները, որոնք թույլ չէին տալիս, որ մին կամ մյուսը տիրեր Իզմիրում, չէին մարսում հունական գրավմանը, սրանով տեսնելով իրենց «ավաղ փառացս անցավորին»⁵⁹: Ուստի, նախընտրում էին, որ Իզմիր վերադառնար թրքական տիրապետության ներքև, երբ անշուշտ հույսով էին շարունակել իրենց նախկին կյանքն ու առևտուրը, վայելել մոնոպոլիստների ապահոված առանձնաշնորհներն ու ազատությունը: Հետագա դեպքերը հակառակը դուրս բերին, սակայն ջնջվեցին կապիտուլացիոնները, հուսախաբ եղան բոլոր լանտենները և արմատախիլ արտաքսվեցին Իզմիրից...:

⁵⁹ *Ավաղ փառացս անցավորին*, ավաղ այս անցավոր փառքին: Այս խոսքերը մահանալուց առաջ արտասանել է հայոց արքա Արտաշես Ա Բարեպաշտը:

ՏԱՐՊԵՅԱՆ ԺԱՅՌԸ⁶⁰

Հունաստանը եղել է փոքր երկիր և շատ հնուց էլ վարել է գաղութային քաղաքականություն. իր կղզիները մի քանիսի բացառությամբ ժայռոտ են և անբերրի: Ընդհանուր առմամբ հացահատիկը չի բավարարել ժողովրդի պահանջը: Ահա այս տնտեսական նեղ պայմանները մղեցին Վենիզելոսին և կապիտալիստներին, որ ուժ տալին ծավալողական ծրագիրների և ձեռնարկների:

Վենիզելոս իրականացրել էր «Մեղալի Էլլադա»-ի երազը: Հունաստանի հողը ընդարձակվել էր Եվրոպական Թուրքիայի ի վնաս: Իմբրոս և Տենեդոս կղզիները, Լեմնոս, Սամոթրակի, Լեսբոս, Քիոս, Սամոս և Իկարիա կղզիները անցնում էին հունական իշխանության ներքև: Իզմիր քաղաքը, մինչև որոշ մի երկրամաս, մտնում էր հունական գերիշխանության տակ: Հույն ժողովուրդը գինովության մեջ էր: Բոլորի բերնումն էր Վենիզելոսի անունը, որ հեղին պատմության մեջ հազվադեպ խիզախություն, հանդգնություն ցուցաբերողներից էր եղել: Խիստ պատասխանատու և հույն ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող քայլեր էր արել, ձեռնարկներ էր արել:

Ուստի Վենիզելոս ուզեց ժողովրդի վավերացմանը ենթարկել իր անցյալ գործունեությունը և հավանությանը են-

⁶⁰ *Տարպեյան ժայռ*, վաղ հռոմեական պատմական աղբյուրների համաձայն, երբ սարինների առաջնորդ Տիտոս Տաջիուսը հարձակվում է Հռոմի վրա, Կապիտոլիում բլրի կառավարիչ Սպուրիոս Տարպեիոսի դուստրը՝ Տարպեյան, դավաճանելով հռոմեացիներին, բացում է քաղաքի դարպասները: Մարինները, մտնելով միջնաբերդ, սպանում են նրան՝ նետելով ժայռից: Մարինն ամփոփվում է այդ ժայռում: Բ. ա. 500 թ. Հռոմի թագավոր Լուկիոս Տարպլինիոս Գոռոզը հարթեցնում է ժայռի գագաթը՝ քանդելով սարինների արբավայրերը՝ բլրի երկու գագաթի միջև կառուցելով Կապիտոլիումի տաճարը: Բ. ա. I դարում Լուցիոս Կոռնելիոս Սուլլայի օրոք, ժայռը գործածվել է մահապատիժների համար: Տե՛ս Samuel Ball Platner, Tarpeius Mons, *A Topographical Dictionary of Ancient Rome* (London: Oxford University Press, 1929):

թարկել ապագա ձեռնարկները: Ուզեց դիմել ժողովրդի քվեին: Եվ երեսփոխանական ընտրության հրահանգ տրվեց. նոյեմբեր 14, 1920 թվի համար: Այսպես էին պահանջում համաձայնականները:

Տարպեյան ժայռը սակայն միայն կապիտոլի մեջ չէր գտնվում: Աթենքն էլ ունեցավ այդ, որի բարձունքից վար գլորվեց մարդը, որ «փրկիչ», «ազգի հայրը» կոչվել էր և դեռ երեկ հրապարակների և փողոցների մեջ, մասաների «զիտո» աղաղակը հետևում էր նրա քայլերին:

Վենիզելոս նույնիսկ իր ընտրական շրջանակից չէր ստացել քվեների մեծամասնություն: Անհավատալի էր արդյունքը և ապշեցուցիչ:

Այս պայմանների տակ, ոչ մի տարակույս, որ արտաքսված Կոնստանդինը վերադառնալու էր, քանի որ թագավորականները շահել էին քվեների մեծամասնությունը: Այս բանին ուժ էր տված արժանապատվությունը վիրավորված զգացած հելլեն ժողովուրդը: Թագավոր Կոնստանդինին համաձայնական պետությունների պահանջով հեռացնելը, ինչպես նաև Վենիզելոսի պարտիային պատկանողներին հալածողական քաղաքականությունը, ընդդիմադիր պարտիայի մարդկանց առիթ էր տվել այդ տարվա հուլիսի վերջին Լիոնի կայարանում Վենիզելոսի դեմ մահափորձը: Ձերբակալված հեղինակների թագավորականներ լինելու պարագան Վենիզելոսի կողմնակիցների մոտ առիթ եղած էր, որ անինա դատի ու դատապարտության տակ դնեին թագավորականները: Իսկ սա մեծապես և վճռական անդրադարձում էր ունեցել ընտրությունների վրա: Ժողովուրդը մոռացել էր «Մեծ իդեան» Վենիզելոսի ստեղծած «Մեծ Էլլադան», Փոքր Ասիայում թշնամի մի ուժի դեմ կռվի մեջ լինելու պարագան, և միասնական ճակատով ներկայանալու անհրաժեշտությունը մանավանդ աշխարհի ճակատագիրը իրենց ձեռքը առած պետությունների առաջ: Սակայն անհատական և նեղմիտ մտածումներ մի կողմից, բռնակալական կամ ինքնիշխան լի-

ներով հանդերձ, անարժան հետևորդների քմահաճ գործունեությունն ու վերաբերմունքը հակառակ հոսանքների պատկանող անձանց դեմ մյուս կողմից, անդրադարձում ունեցավ երկրի քաղաքական և արտաքին հարաբերությունների վրա: Չանձրացել էր և հույն զինվորը զենքի տակ մնալուց: Բալկանյան պատերազմից, այսինքն 1912-ից ի վեր զենքի տակ գտնվող զինվորներ, որոնք ցանկանում էին օր առաջ դառնալ իրենց ընտանիքին ու տներին: «Դեպի տուն» լոզունգը սավառնում էր զինվորների վերև:

Առաջադեմ տարրը չէր հաշտվում այդ քայլերի հետ և Իզմիրի ցամաքահանումը կամ զինվորական գրավումը զավթողական, իմպերիալիստական էր համարում, որտեղ հույն բուրժուազիան և թուրք բուրժուազիան իրար էին բախվելու: Հույն ժողովուրդը Թուրքիայում չէր կրել համեմատաբար որևէ հալածանքի ծանրությունը կամ ջարդի դառնությունը, որն որ եղել էր հայերի հանդեպ: Ազատ առևտուր էր ունեցել, հարստացել և ուռճացել էր: Ունեցել էր բացառիկ առանձնաշնորհումներ:

Բայց Հունաստանի կապիտալիստները նոր շուկաներ էին վնասում, հումքի նոր աղբյուրների տիրանալ էին ձգտում, Իզմիրի կուսակալության նման հարուստ մի շրջանը և նաև Թուրքիայի արտաձման և ներաձման կարևորագույն կենտրոնը ձեռք ձգելով՝ իրենց առևտրական նավատորմին էլ գործ հայթայթել էին ուզում:

Այս բոլորը պարզող և ժողովուրդը լուսաբանող «Ռիզոսպաստիս»⁶¹ թերթը գաղտնի շրջաբերում էր և դիմակագերծ էր անում դեռ 1919 թվին, հույն բանակի դեպի Աֆ. Գարահիսար առաջին արշավանքին իսկ ձայնը քարձրացնելով բանվորի և զինվորի, ցույց տալով բուրժուազիայի այդ զավթողական քայլը:

⁶¹ *Ռիզոսպաստիս* (հուն.՝ Ριζοσπάστις), Հունաստանի կոմունիստական կուսակցության պաշտոնաթերթ (իմ.՝ 1916 թ.):

ՄՊԱՐԱՊԵՏԻՆ ՕՐԱԿԱՐԳԸ

Թրքերի կողմից ատված, Համաձայնական պետություններից ոչ բարյացակամ կեցվածքի հանդիպած, իսկ բացի Փոքր Ասիայի տեղացի հույներից, ոչ մի ժողովրդից ընդունելության չարժանացած հունական բանակը, հարկադրաբար մտածում էր իր գրավման շրջանակը ընդարձակել: Այժմ թագավոր Կոնստանդինի համար էլ արժանապատվության հարց էր: Ինք և իր կոթնած կուսակցությունը Վենիզելոսից ավելի մի բան ցուցնելու և նրանից ավելի մեծ հաղթանակ պետք է ցուցադրեին, մանավանդ որ թագավոր-սպարապետ էլ էր Կոնստանդինը:

Հեղին բանակը գրավել էր ամբողջ Այդրնի նահանգը: Ամեն տեղ իր դեմ գտել էր անկանոն, չեթեական ուլժ միայն: Երևակայել, որ գյուղացին ցերեկը իր գյուղը, իր արսւղ և իր աշխատանքն էր լինում, գիշերն էլ գնում էր միանալու լեռը ծվարած չեթեախմբին: Ցերեկը գյուղը գտնվելով, դիտում էր և տեղեկանում հույն զինվորի բոլոր շարժումներն ու ծրագիրները, հետևաբար երբ գիշերն էր հասնում, իր քաղած տեղեկությունները հասցնում էր լեռը գտնվող միլլի ուժին:

Համաձայնական պետությունների՝ վերապահ լինելուց ավելի կրավորական կեցվածքը, միլլի ուժերի գորանալը և ներքին գավառների քրիստոնյա բնակչության թուրք տարրերի կողմից ենթարկված բնաջնջման քաղաքականությունը, մղում էին հույն կառավարությունն ու զորքը, կամա թե ակամա՝ ընդարձակելու զինվորական գործողությունները:

Անգլոֆիլ Վենիզելոսի միջոցով իր քաղաքականությունը հաջողեցնելու հույսը ունեցող Անգլիան, 1920 նոյեմբեր 1/14-ի ընտրությունների ձախողած Վենիզելոսի փոխարեն իշխանության գլուխ եկող գերմանասեր Կոնստանդին թագավորին և իր կառավարությանը դժվար թե վստահություն ունենար: Իսկ մյուս Համաձայնական պետությունները ոչ մի ջանք չէին խնայում, որ Անգլիան էլ դուրս գար Թուրքիայից, ուր իրեն

«փոխանորդում» էր Վենիզելոսի գլխավորությամբ հունական կառավարությունն ու բանակը: Բայց Կոնստանդինը տրամադիր լինելով էր պարպելու Փոքր Ասիան, երբ 1920-ի Սևրի դաշնագրով եղած խոստումները Հունաստանի հանդեպ, 1921 փետրվարին, գրչի մի հարվածով չեղյալ էին նկատվում Սևրի դաշնագրի վերաքննությունովը, որ ջնջելու հավասար էր:

Հետևանքն այն եղավ, որ հունական զորքերի ընդհանուր հրամանատար Պապուլասը տվեց հարձակման նշանը և հունական բանակը, որ Իզմիրի Գասապա երկաթուղագծի վրա հասել էր մինչև Ուշագ, սկսեց առաջանալ դեպի Աֆիոն-Գարահիսար, իսկ Պրուսայի զորամասն էլ սկսեց առաջանալ դեպի Էսքի Շեհիր:

Մայիս 29, 1921 թվին թագավոր Կոնստանդինոս Իզմիր հասավ, իբր սպարապետ անձամբ վարելու համար փոքրասիական բանակը: Իզմիրի արվարձաններից ծովեզերյա Կորդելիոյում մնաց: Դա պատճառ եղավ, որ Համաձայնական պետությունները, գլխավորությամբ անգլիական արտաքին գործերի նախարար Չեմբրլեյնի⁶², առաջարկ բերեն հեղին կառավարության բարեկամաբար հաշտեցնել պատերազմի կողմերը: Այս միջամտությունը սակայն, հունական շահերի դեմ վնասակար նկատեց հույն կառավարությունը:

Մուստաֆա Բենալ, անհանգստանալով թագավոր Կոնստանդինոսի ներկայությունից, Իզմիրում սրբազան պատերազմ (ջիհադ) հայտարարեց, սպառնալով և հարձակիլ Պոլսի և Թրակիայի վրա, երբ Պոլիս գտնվում էին Համաձայնական պետությունների ռազմական ուժերը: Մինչ այդ, հունիսի 27-ին, հունական բանակն էլ սկսեց իր գործողությունները՝ չորս ճյուղերից հարձակելով գրավել Քյոթահիան, Էսքի Շեհիրը և օգոստոսի 4-ին հասան Սազարիա գետի կամրջին: Օգոստոսի 23-ին սկսեց կատաղի կռիվ և 22 օր տևող այս ճա-

⁶² Չեմբրլեյն, Ջոզեֆ Օսթին Չեմբրեյն (1863-1937), Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար և քաղաքական գործիչ:

կատամարտից հույները դուրս եկան ջարդված ու քայքայված:

Հիշենք միջանկյալ, որ հունական բանակը, երբ տակավին Աֆիոն Գարահիսար չէր հասած, քեմալական ուժեր ամրություններ էին սարքում Սագարիա գետի երկայնքին:

Իսկ Անգլիան թելադրում էր հունական սպայակոյտին, որ քեմալական ուժերը ջախջախեն իր բույնին (Անգարայի մեջ...)

Փաստը այն է սակայն, որ Կոնստանդինոս թագավորի փառասիրությունը մի նոր Նապոլեոնի նման նրան մոլեց մինչև Սագարիա և Պոլատը, Անգարայի ճամփի վրա, ուր անվերականգնելիորեն խորտակվեց և տասնյակ հազար զինվորներ խեղդվեցին գետի ջրերի մեջ: Քիչ էր մնացել, որ իշխան Անդրեան էլ իր ինքնաշարժով գերի մնար քեմալականների ձեռքը, մոլորվելով Անգարայի հարավային շրջանի ավազուտ անապատին մեջ:

Այս մանրամասնությունները իմացող հույն կառավարությունը, հարկադրաբար իր հարձակողականը դադարեցրած հունական բանակին հարձակողական պատերազմ մղելը և մինչև Անգարա հառաջանալը աննպատակ գտավ և թագավորը վերադարձավ Աթենք նույն տարվա սեպտեմբերին:

Իշխանությունից ընկած Վենիզելոս, իր մի ֆրանսիացի բարեկամ գորավարի կարծիքը հաղորդել էր հունական կառավարության, թե հունական շահը պահանջում է, որ Իզմիրի կուսակալության մեջ, որոշ մի կետ պետք է ամրանա հունական բանակը և իր նավատորմիդի պաշտպանությանը տակ պահե գրաված վայրերը, մինչև որ քեմալական ուժերը սպառին կամ իրավախոհության հասնին: Սակայն թագավորական կուսակցությունը, բանակի և ժողովրդի բարոյականը բարձր պահելու հույսով, որոշել էր շարունակել պատերազմ և մղել Սագարիայի պատերազմը: Իսկ այս ճակատամարտը սկիզբն էր հաջորդական քաղաքական և զինվորական ձախորդությունների և պատմական հանգամանք ունեցող ողբերգությունների:

ՄԱՀԻԿՆ ՈՒ ԱՍՏՂԸ

1922 թվի մի օր, կեսօրվա ժամանակ, Իզմիրի Բաշ Օթուրաթ թաղամասի մոտերը ժողովուրդը խառնված, իրենց աչքերը երկինք հառած, մի բան էին դիտում: Խորհրդավոր լուսություն էր տիրում և իմաստալից ակնարկներ էին փոխանակվում: Ումանք իրենց մոտուքը բռնած գլուխ էին ջարդում, իսկ ուրիշների դեմքի վրա ուրախության զգուշավոր նշաններ էին նշմարվում: Կարելի չէր որոշել, թե աղե՞տ էր պատահել, թե ոչ բախտավոր մի դեպք, այնքան զուսպ էին արտահայտությունները:

Մինչ այդ աջից ձախից, երկու կողմի խանութներից նոր նոր մարդիկ գալիս էին կամ փողոցից անցնողներ կանգ առած հավաքվածների մոտ, զգալի մի խումբ էին կազմել: Աչքով հոնքով իրար նշան տալով, իրենց փաթթոցավոր ֆեսերը բռնած, որպեսզի վայր չընկնի, գլուխնին վեր դարձրած այս նորերն էլ սկսել էին դիտել երկինքը, հետևելով նախկինների օրինակին:

Ումանց բերնից հագիվ լսելի ձայնով դուրս էր գալիս՝ «Լա իլահի իշշելլահ, Մուհամեդեն րեսուլ ուլլահ»⁶³ բառերը, ուրիշներ ավելի շքմած ձևով փսփսում էին՝ «այուբհան Ալլահ, այուբհան Ալլահ»⁶⁴: Մի քիչ ավելի համարձակներ ասում էին՝ «էլ հա՛մո իրուլլահ»⁶⁵, ա՛յս օրն էլ տեսանք:

Երբ ֆեսավոր թրքերի արտահայտությունները այս ձևով էին ընթանում, բազմության մեջ գտնվող գլխարկավոր քրիստոնյաների դեմքի վրան էլ նշմարվում էր վշտի կամ սրտնեղության ակնհայտնի թթվածություն, դժգոհություն և մտմտուքի սառն, բայց անխոս մի մռայլություն: Երկու ժողովուրդներ՝ իսլամ և քրիստոնյա, երկու հակոտնյա արտահայտության պատկերներն էին ներկայացնում:

⁶³ *Լա իլահի իշշելլահ, Մուհամեդեն րեսուլ ուլլահ* (թուրք.՝ La ilahe illallah Muhammeden resullallah), չկա Աստված Ալլահից բացի և Մուհամեդն է՛նրա մարգարեն:

⁶⁴ *Այուբհան Ալլահ* (թուրք.՝ Subhanallah), Ալլահն անթերի է:

⁶⁵ *էլ հա՛մո իրուլլահ* (թուրք.՝ Elhamdülillah), փա՛նոք Ալլահին:

Արդեն ես էլ հասել էի այդ հավաքույթին և հետաքրքրված, հարցրեցի, թե ի՞նչ է պատահել, ի՞նչ կա, ինչո՞ւ նայում են երկինքը: Կարծես ուրիշներից գաղտնի պահելու կամ հետապնդողներից զգուշանալու ձևով ցուցամատը ուղղեց դեպի երկինքը, տեսողությանս ուղղությունը առաջնորդեց դեպի զենիթը և ասաց՝ «տե՛ս, այնտեղ, տեսնո՞ւմ ես լուսինն ու աստղը...»:

Իսկապես հետաքրքրական էր, օր ցերեկով երկնքի վրա երևա մահիկն ու աստղը, այնպես ինչպես է թրքական դրոշակի վրա, սովորական մի երևույթ չէր: Մարդիկ չէին կարողանում մեկնել կամ հասկանալ և որովհետև «Մարդկանց չհասկացած, ուստի և նրանց իշխանությանը չենթարկված բնության երևույթները առաջ են բերում մնոտիապաշտություններ» (Պլեխանով)⁶⁶, այդպես էլ դիտող թուրք ժողովուրդը այդ երևույթը մեկնում էր համաձայն իր ցանկությանը, թե Իզմիրը վերադառնալու է իր նախկին տիրոջը...: Իսկ այդ մեկնությունը չարագուշակ էր քրիստոնյաների համար: Իրենք էլ ակամա տպավորվելով, համակվում էին ներքին սարսուռով, որի ազդեցությունը կարելի էր նշմարել դեմքերի վրա:

Երկու պատկերներ... թրքերի դեմքերը քանի գնում պայծառանում, իսկ քրիստոնյաների դեմքերը քանի գնում մռայլվում էին:



Երկուշաբթի, 11 սեպտեմբերի ակամա գնացի պաշտոնատեղիս, անցնելով բոլորովին հունաբնակ թաղերից և միշտ էլ վախը ունենալով սակայն, թե կարող եմ ենթարկվել թուրք սիվիլ բախտախնդիրների կամ չեթենների հարձակմանը և սպանվել: Հազիվ մի քանի պաշտոնյաներ եկել էին գրասենյակ: Ամենն էլ պատմում էին հազար ու մի սարսափներ: Մինչ այդ մեր մեծա-

⁶⁶ Տե՛ս Գեորգի Պլեխանով, *Հողվածներ կրոնի մասին* (Երևան, Պետհրատ, 1929):

վորը զիս կանչեց իր մոտ և ակամայի և տխրած ձայնով ասաց՝ «Չափազանց ցավում եմ և սակայն պարտավորված եմ հաղորդելու թրքական իշխանության հրամանը, թե քսան և չորս ժամվա ընթացքում պետք է ընկերության սահմաններից հեռացվեն բոլոր հայ պաշտոնյաները»:

Այս հայտարարության «Շահ տ լավ» պատասխանելով, «Մնաք բարո՛վ» ասացի, որին իբր պատասխան մեծավորս հարեց՝ «մաղթում եմ, որ շուտով ամեն ինչ կմոնե իր կարգ ու կանոնին և կվերադառնաք ձեր պաշտոնին»:

Հիմնարկի դռան առաջ և զանազան մասերում արդեն գետնեղվել էին թուրք զինյալ ուժեր, իբր պահակ: Դուրս ելա գրեթե բնագործն, կացությունը ճնշում էր վրաս և չէի իմանում, թե որտեղ գնամ և կամ որտեղ դիմեմ վերահաս վտանգից ազատ մնալու և կամ քաղաքից հեռանալու համար: Զիս մտահոգողը սակայն, երկու տարուց ի վեր անկողին պառկած հիվանդ մայրս էր, որի համար էլ մնացել էի Իզմիր և չէի հեռացած:

Ճամփան հանդիպեց պաշտոնակից Հ. և խորհուրդ տվեց, որ գնանք ֆրանսիական հյուպատոսարան, իբր թե դիմողներին նավ էին նստեցնում: Այդքան էլ չհավատալով այդ տեղեկության, հարմար դատեցի նախ մեր հյուպատոսարանը հանդիպել: Հյուպատոսարանի դուռը գոց էր և վանդակից ներս կանգնել էր զինյալ բարապանը: Դիմումիս պատասխանելով եկավ և գոց դռան ետև կանգնեց հյուպատոսը, կարծես վախենալով դուռը բաց անել: Արեց մի շարք հավաստումներ և հայտնեց, թե բոլոր հյուպատոսներ դիմել են Նուրեդդին փաշային⁶⁷, որ հասել է կանոնավոր բանակը և շուտով կվերա-

⁶⁷ *Նուրեդդին փաշա*, թուրք ռազմական և քաղաքական գործիչ (1873-1932): Նուրեդդին փաշան 1919 թ. փետրվարի 2-ին Այդընի կառավարիչ և Այդըն շրջանի հրամանատար է նշանակվել: Մարտին Անտանտի երկրների ճնշմամբ հեռացվել է պաշտոնից: 1920 թ. Փոքր Ասիայում միացել է Քեմալի զլխավորած ազգայնական շարժմանը: Ղեկավարել է Ամասիայում ձևավորված Կենտրոնական բանակը: 1922 թ. նշանակվել է Առաջին բանակային կորպուսի հրամանատար: Մասնակցել է հույն-թուրքական պատերազմին:

հաստատվի կարգն ու կանոնը: Հայտնի էր և զգալի՝ իր արտահայտությանը ձևից, որ հյուպատոսը ինքն էլ տարակույս ունեւր և առանց որևէ գոհացուցիչ պատասխան ստացած լինելու, ճամփա ելա դեպի տուն:

Փողոցները ամեն կողմ, ամեն անկյուն խուռներամ բազմություն կար, կարծես ապահովություն կար Բունթայի շրջանակում Ֆասուլա, Րեժի և Ալլիանս ֆրանսեզի կողմերը: Անցա հունական աղջկանց դայրոցի առջևից, Րյու դե ռոզ⁶⁸-ի ծայրից և առանց ուղղվելու Չալըրճը բաշի, ետևի փողոցներից և Հաճի Աթամից անցնելով հասա տուն:

Բանի առաջանում էի Բունթայից դեպի տուն, ամայությունը այնքան զգալի էր լինում և տիրում էր խորհրդավոր մի լռություն և չարագուշակ մի երևույթ: Հաճի Աթամի կողմի տների գոց պատուհանների ծակերից փողոցը դիտողներ, մանավանդ ծանոթ մի քանի ընտանիքներ, փեղկերի արանքից զարմանք էին հայտնում, թե ինչ համարձակությունով դուրս եմ ելած: Այսուամենայնիվ, առանց որևէ վտանգի տուն հասա և սկսեցինք մի կերպ փոխադրվել ֆրանկաց թաղը, որը ավելի ապահով էր թվում:

ԳՅՈՒԶԵԼ ԻԶՄԻՐ⁶⁹

Թրքերի մեջ ներքին կազմակերպությունը արդեն զորացել էր, ոչ միայն կանոնավոր կապ էին պահում քեմալական իշխանության հետ, այլև կանոնավոր հաղորդկցություն

⁶⁸ *Րյու դը ռոզ* (ֆրանս.՝ Rue de Rose), վարդի փողոց:

⁶⁹ *Գյուզել Իզմիր*, Էդիրնեից ընտրված պատգամավոր Մեհմեթ Շերեֆ րեյր 1922 թ. սեպտեմբերի 13-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովին (ԹԱՄԺ) առաջարկ է ներկայացնում, որով նախատեսվում էր Իզմիրը վերանվանել «Գյուզել Իզմիր» (Գեղեցիկ Իզմիր)՝ ի հակադրություն շատ շրջանակներում տարածված «Գյավուր Իզմիր»-ի: Հարցը մտնում է օրակարգ, ապա՝ դուրս մղվում. http://www.kentvebellek.com/guzel-izmir_31.html, դիտվել է՝ 06.10.2022 :

ունեին Իզմիրի մոտ խարսխած իտալական ռազմանավերի անթելի միջոցով, որը անվերապահորեն տրամադրվել էր իրենց: Թրքերը, հույն մամուլից առաջ ստանում էին հեռագիրներ և ծանոթանում էին ճակատների շարժումներին: Եվ օրե օր հով էին առնում, քաջալերված միլլի բանակի հաջողություններից: Երբ առաջներ, գաղտնի և մտերմական սեղմ շրջանակի մեջ է միայն արտահայտվում, հուսադրվում և հուսադրում էին թուրք միլլի ուժերի մոտալուտ հաղթանակովը և Իզմիրի վերստին թրքերի ձեռք անցնելու լուրերովը, ավելի վերջ սկսեցին անվախ և անվերապահ ասել՝ «մո՛տ է, մո՛տ է, մի ամսից Քեմալ փաշան Իզմիր մտնելու է»: Երբ երիտասարդ թուրք տարրը այսպես էր ասում, կրոնասեր մահմեդական տարեց սերունդն էլ ասում էր՝ «կարելի՞ բան է, որ այսքան մինարեններով իսլամ քաղաքը ենթարկվի կեանքի իշխանությանը», մի ուրիշը հարում էր՝ «Աստծո մատը կա, անկարելի՛ է, մեր գրքերը գրել են, ուշ կամ կանուխ, ինչպես որ ներս էր մտել, այսպես էլ դուրս գալու է հույնը այս երկրից»:

Թրքերը հետզհետե դառնում էին ավելի խրոխտ, ավելի հանդուգն, ավելի համարձակ: Ծրագրում էին լռիկ մնջիկ, կատարյալ կարգապահությամբ չափում ու ձևում էին և հաղթանակի վստահությամբ նույնիսկ սկսել էին, ամենայն հավանականությամբ, ձգձգել իրենց պարտքերի վճարումը քրիստոնյաներին: Այն վստահությամբ, թե մոտ օրից հասնելու էր միլլի բանակը, գրավելու էր Իզմիրը և ո՞վ էր, որ համարձակվելու էր իր առնելիքը պահանջել թրքից, երբ դերերը փոխված, տիրացյալ թուրքը դառնալու էր տեր, պարտականն էլ՝ առնելիքվոր⁷⁰: Երբ թուրքը ոչ թե վճարելու էր, այլ տիրանալու՝ քրիստոնյաների հարստությանը:

⁷⁰ Առնելիքվոր, պարտատեր:



Իզմիրի Իբրանույան վաճառատան նախկին տնօրենը՝ Գևորգ Բոյաջյանը Բեյրութից վերադարձին, ճամփու վրա հանդիպել էր Հոռոս կղզին: Այդ կղզին իտալական գերիշխանության տակ գտնվելուն, Իզմիրի գրավումին փախած մի շարք թուրք երևելիներ ապաստանել էին այդտեղ: Սրանցից շատերը իբրև առևտրական հրապարակի նախկին ծանոթներ, եկել տեսնվել էին Բոյաջյանի հետ և ապահովցրել, թե շատ մոտ օրից վերադառնալու են Իզմիր: Բացի այդ, անվերապահորեն և հաստատապես հայտարարել էին, թե երբ Իզմիր վերադառնան, մի հատ հսյ ձգելու չէին:

Այս հայտարարության և վրեժխնդրական ելույթին տոն տվողը գուցե մասամբ Կիլիկիո ֆրանսիական գրավման շրջանի հայ և թուրք ընդհարումների, Հաճընի ինքնապաշտպանության և առհասարակ հայկական զինվորական թե կամավորական ուժերի պատճառած վնասն էր, այլապես Իզմիրի շրջանը չէին պատահած նման լրբենի և արյունածարավ մի արտահայտություն ունենալու չափ հայ և թուրք միջադեպեր: Սակայն հարցը ո՛չ որևէ բան կատարված լինելն էր և ո՛չ էլ մի որևէ ուրիշ բան: Միլլի Թուրքիան, իր Միսաքը միլլիովը (Ազգային ուխտ) և Էրզրումի կոնգրեսի պաշտոնական հայտարարությունով նպատակ և որոշում է ունեցել կռվելու հայերի և հույների դեմ, ուր որ լինեին՝ Իզմիր, Պոլիս, թե այլուր:

Համենայն դեպս, ամեն կողմ ու ամեն թրքի մեջ գոյացել էր այն հավատքն ու համոզումը, թե Իզմիր պարպվելու էր հույներից և թրքերը վերստին տիրանալու էին «Գյուզել Իզմիրին»:

ԲԵՐԴԸ՝ ՆԵՐՄԻՑ ...

Քենալական ուժերի՝ Իզմիր մուտքից (9 սեպտ. 1922) հազիվ մեկ երկու շաբաթ առաջ, մի օր առավոտ ընդհանուրի խոսակցության նյութն էր, թե այդ գիշեր թուրքերի ձերբակալություն է եղել քաղաքում: Զանազան մեկնություններ էին տրվում. ասում էին, թե Իզմիրի թրքերը Պոլիս ապապրել էին 500 սպաներ, նպաստակ ունենալով 15.000-նոց զինվորական ուժ պատրաստելու: Ծրագրել էին քերոյը ներսից էլ գրավելու նախապատրաստություն ունենալ, երբ արդեն դրսից կատարվելու էր պետք եղածը:

Իզմիրի թուրքերի համար ոչ մի դժվարություն ուներ այդ ծրագրի իրականացումը: Հողն ու պայմանները նպաստավոր էին, ռազմամթերք ունեին: Ո՛ւր էին գնացել Հելլեն գրավման նախօրյակին Իզմիրի զինվորական մթերանոցներից ավարի տրված զենքերն ու ռազմանյութը: Առանց սրան էլ թրքերի անձնական զենքերը բավական էին պատկառելի մի զինյալ ուժ մեջտեղ բերելու, քանի որ ոչ մի տնից պակաս էր Ա. համաշխարհային պատերազմից մնացած զենքերն ու բավակա-նաչափ ռազմանյութը, արագահարվածներն ու ռումբերը:

Հունական իշխանությունը, Իզմիրի իր գրավման հաջորդ օրն իսկ, ինչո՞ւ չէր ձեռնարկել զենքերի հավաքմանը: Համարձակությո՞ւնը չէր ունեցել, թե ոչ խոհեմություն էր նկատվել այդ զիջողությունն ու հանդուրժումը: Ինչո՞ւ Ստերիադիս (հունական ընդհանուր կառավարիչ)⁷¹ այնքան թույլատու և թրքապաշտպան մի ներքին քաղաքականություն էր որդեգրել: Եթե այդ վարվելակերպով հույն իշխանությունը հանդուրժելի

⁷¹ *Ստերիադիս*, Ջնյունիայի հույն ավագ կոմիսար: Արիստիդիս Ստերիադիսն իր կառավարման ողջ ընթացքում Ջնյունիայի բրիտանական համայնքում ժողովրդականություն չի վայելել: Երբ քենալական բանակը մտնում է Ջնյունիա Ստերիադիսը նավով փախուստի է դիմում, տե՛ս *Մեր Ջնյունիան*, *Մեր Իզմիրը և շրջակայ քաղաքները* (Նի Եորթ, Հրատարակութիւն Ջնյունահայ միության, 1960), 196:

դարձնելու ծրագրին ու նախատեսությունն էր թրքերի համար, թուրքերը սակայն ի կանխագոնե որոշել էին ձերբագատվել հունական գերիշխանությունից:

Ստերիադիսի թույլ վերաբերմունքը, սիրաշահելու համար թրքերի գաղութավարական այդ դիվանագիտությունը սակայն, որը նույնիսկ չի երկմտեց անմեղ հայեր բանտարկության և պատժի ենթարկելու, որպեսզի թրքերի քեֆը գա, ոչ մի կերպով չձառայեցին իրենց նպատակին: Թուրքը այդ բոլորը նկատեց տկարության նշան:

Օրից օր իր մեջ սաստկանում էր գիշատիչ ուժն ու ցանկությունը, մի օր դուրս թափելու իր գայրույթն ու փարատելու իր հակառակորդին: Դժբախտաբար հասավ այդ օրը, ներկայացավ այդ առիթը, երբ հարձակվեց մթագնած աչքերով, սպանեց, ջարդեց, քանդեց և ավարի տվեց անխնա:

ՃԱԿԱՏԸ՝ ՃԵՂՔՎԱԾ

Փոքրասիական գրավումը սրած էր Համաձայնական պետությունների փոխադարձ հարաբերությունները: Յուրաքանչյուրը հակամարտ շահեր էր հետապնդում, իսկ սրա հետևանքն այն էր, որ յուրաքանչյուրը ջանք չէր խնայում, որ պարպեր թրքական հողը: Սա Քեմալի հացին յուղ էր քսում: Հունական ուժերի հետ առանձին մնացած թրքական ուժերը օրե օր հող էին շահում: Իսկ բնական կերպով էլ դառնում էին անգիջող: Քեմալին զիջումներ հարկադրելու հույսով, մի պահ հունական կառավարությունը որոշել էր գրավել Պոլիսը և 1922 հուլիսին էլ իր այս որոշումը հաղորդել էր Համաձայնական պետություններին: Անկասկած այս որոշումի մեջ հունական «Մեծ իղեւս»-ի իրականացման ծրագիրը կար, ցանկանալով Բյուզանդիոնի վերջին կայսր Կոնստանդինոս Պալեոլոգոսի, իբր հաջորդ «Կոնստանդինոս ԺԲ»-ի, իր բանակովը Պոլիս

մուտք գործել տալու փառասիրությունը և սակայն առաջին դեմ արտահայտվողը եղավ Ֆրանսիան, իսկ զորավար Հարինկտոնն էլ մի ծանուցագրով հայտնեց, թե նման փորձ անխնայորեն կոխտուելու է:

Փոքրասիական հույն բանակից սակայն, մի մասը փոխադրվել էր Թրակիա վերոհիշյալ նպատակի համար, ինչ որ թեթևացրել, որոշ չափով տկարացրել էր փոքրասիական ճակատը: Սրան օժանդակել էր և կուսակցական նկատումներով բանակից հեռացնելը մի շարք վենիզելուսական սպաների և նրանց տեղը փոխարինելը տարիներով գինվորական կյանքից հեռու մնացած կոնստանդինուսական ծեր ու նորագույն ռազմական գիտության անձանոթ սպաներով: Մյուս կողմից երկու կուսակցություններն էլ իրենց ներքին քաղաքական ծրագիրներովն էին կլանված, մին մյուսը հրապարակից բշտելու և իշխանությունը իր ձեռքը առնելու համար: «Բյուզանդական» վիճաբանություններով անց էին կացնում իրենց ժամանակը, ինչպես էին Ֆաթիհի⁷² օրով Պոլսո վանականները, երբ իրար հետ վիճում էին, թե գնդաստեղի գլխին քանի հրեշտակ կարող է տեղավորվել..., իսկ մյուս կողմից քաղաքը գրավվում էր օսմանցիներից:

Եվ ահա՛, Տումլու Բունարի վրա (Աֆիոն Գարահիսարի ճակատ) մի փոքր նահանջ պատճառ եղավ, որ առիթ տա կենտրոնացած թվական և խտության առավելություն ունեցող թրքական բանակին, որ ճեղքե ճակատը:

Իզմիրի թուրքերը դարձյալ առաջինը եղած էին ճակատի շարժումների մասին լուր ստացողը:

Թուրքերը ուրախ ու հրճվալից ասում էին, թե «քենալական բանակի սպայակույտի պետ Ֆեզի վաշան»⁷³ հայտարարել

⁷² *Ֆաթիհ* (թուրք.՝ fatih), նվաճող՝ Մեհմեդ II-ի տիտղոսը (1432-1481) 1453 թ. Կոստանդնուպոլիսը նվաճելուց հետո:

⁷³ *Ֆեզի վաշա*, Մուստաֆա Ֆեզի Չարմար վաշա (1876-1950), թուրք քաղաքական և ռազմական գործիչ, Քենալ Աթաթուրքի մերձավոր զինակիցներից:

է, որ 15 օրից Իզմիր լինելու է»: Լուրը կայծակի արագությամբ տարածվել է քրիստոնյա ժողովրդի մեջ. դեմքերի վրա նշմարելի էին շվարանքն ու հնհնուրը⁷⁴: Չարագուշակ նախագագուսներ համակել էին բոլորը: Հոռետեսությունն ու հուսահատությունը տարածվել էր ոչ թուրք բնակչության վրա: Իսկ ոմանք, մոլեռանդության բերումով, ոչ միայն չէին ուզում հավատալ տարածված լուրերին, այլև իրենց առևտրական և անհատական շահերի պահանջից առաջնորդված, չէին հավատում դառն իրականության: Ոչ ոքի մտքից կարող էր անցնել, որ ռազմական առավելություններով օժտված հույն բանակը կարող էր հալածվել կամ պարտության մատնվել ամոթալի նահանջի ենթարկված միլլի ուժերի կողմից, որոնք անհամեմատորեն ցածր և թերի էին:

Օգոստոս 26, 1922-ի պատերազմական գործողությունների վերսկսումով ճեղքված էր Աֆրոն Գարահիսարի ճակատը: Այլևս իրականություն էր: Հունական ռազմական գեկույցները ամեն օր հաղորդում էին բանակի «ծալվելը»...:

Հունական բանակը նահանջում էր անկազմակերպ, որը վերածվել էր խուճապային փախուստի, այրելով ու քանդելով անցած գյուղերն ու քաղաքները: Նահանջի պահուն գերի մնացին մեծ զորամասեր և նույն ինքն Զորավար ... կուպիս⁷⁵ իր զորամասովը միասին պաշարվելով՝ գերեվարվեց թրքերի կողմից, և որի սուրն ու զինվորական համագգեստը հառաջիկայում զարդարելու էր Պոլսո պատերազմական թանգարանը:

Իզմիրի ժողովրդի մեջ սկսել էր վախը և շատեր սկսել էին հավաքվել քաղաքից հեռանալու համար: Վաճառականներից շատեր, իրենց խանութին ապրանքները հակերի էին վերածում և մաքսատուն էին հանձնում արտահանելու համար: Ուրիշներ, իրենց հարստությունը հետերնին առած, օտար հո-

⁷⁴ *Հնհնուր*, մտատանջություն, անձկություն:

⁷⁵ *Նիկոլասո Տրիչոսպիս* (հուն.՝ Νικόλαος Τριζούπης, 1868-1959). հույն զորավար և քաղաքական գործիչ:

ղեր և առավելապես Հունաստան մեկնող նավեր նստել կփութային:

Այս շարժումները սակայն մասնակի էին սկիզբները, քանի որ ընդհանուր կարծիքն ու հավատքն այն էր, թե հունական բանակը անցնելու էր հակահարձակումի և վերադառնալու էր իր նախկին դիրքերը: Կատարվածը նկատում էին սովորական պատերազմական տակտիկա կամ ստրատեգիա: Բայց, երբ հետզհետե գավառներից սկսան Իզմիր հասնել քեմալական ջարդից մազապործ փախստական քրիստոնյա բնակչություն, հազարավորներ սկսեցին լեցնել եկեղեցիներն ու հանրային հաստատությունները, լավատեսությունը տեղի տվեց հոռետեսության և սարսափը սկսեց մոտից զգացվել:

Հունական բանակի «նահանջը» կամ «ծալվելը» սովորական պատերազմական նահանջ չէր, այլ բարոյապես քայքայվածների անկանոն և առանց դիմադրության, հակահարձակումի, առանց որևէ փորձ կամ ճիզի փախուստի էր: Փախչո՞ւմ էր հույն զինվորը՝ անկազմակերպ, ցիր ու ցան, ամեն ոք իր զլխուն ճարը խորհած, իր անձը փրկելու և ժամ առաջ իր հայրենիքը՝ Հունաստան անցնելու մտահոգությամբ:

... Ժողովուրդն էլ հետևում էր փախչող զորքին, այնպես որ Աֆիոն Գարահիսարից սկսյալ, Իզմիր-Գասապա երկաթուղագծի երկայնքին ու շրջակա գյուղ կամ քաղաքների քրիստոնյա բնակչությունը, սարսափահար շտապում էր դեպի ծովեզրյա քաղաքներ և մասնավորաբար Իզմիր: Շատ հազարների հասնում էին թրքերի ձեռքը մնացողներ, որովհետև քեմալական հաջողությունների լուրը ստացող թրքական գյուղերի և քաղաքների բնակչությունը զինյալ իջնում էին նահանջող քրիստոնյաների ճամփան կտրելու, կողոպտելու և ջարդելու համար: Այս գործին կազմակերպությունն ու զլխավորումը հանձնված էր մի քանի չեթեսապետների, որոնք անսահման մեծ դեր խաղացին քեմալական հառաջխաղացման մեջ:

«ԼՔՈՒՄՆԵՐ»

1922 թ. սեպտեմբերի առաջին օրերը մղձավանջի օրեր էին Իզմիրի համար: Յուրաքանչյուրի դեմքի վրա կարդացվում էր հնհնուքի, մտահոգության ու սրտմաշուքի զգացումը: Հրապարակի վրա գրեթե կանգ էին առել վաճառականական գործառնություններն ու առևտուրը: Պղատոնական խոսքեր՝ պաշտոնական և օտար ներկայացուցիչներից: Պոռոտախոսություններ՝ կոպր հայրենասերներից, շվարածություն և շշմածություն՝ ռամիկ ժողովրդի վրա, ահա սրանք էին ստեղծված մթնոլորտի բնորոշիչ կողմերը:

Յուրաքանչյուր մարդ, բանը գործը թողած, քարավիի սրճարաններն էին թափառում, խրախուսիչ մի խոսք լսելու, հուսադրիչ մի լուր իմանալու ակնկալությամբ: Հոս-հոն համախմբումներ, անհատական կարծիքների հեղեղներ: Ժողովուրդը խուռներամ երթնեկում է քաղաքի բանուկ ճամփաներից ոչ թե գործի և աշխատանքի համար, այլ մի բարի լուր իմանալու համար...:

Սպառնացող վտանգին ահավորությունը և վերահաս աղետին անխուսափելիությունը պարզելու և ժողովրդի ապահովությանը համար միջոցներ ձեռք առնելու խնդրանք, հոգևոր պետերի կատարած դիմումը հեյլեն բարձր կոմիսար Ն. Ստերիադիսին չէր տրվել ոչ մի դրական, գոհացուցիչ կամ մխիթարական արդյունք:

Հարկադրված դիմել էին օտար հյուպատոսարաններ՝ պարզելու վտանգը և օգնություն խնդրելու, և սակայն բոլորն էլ քաղաքավարական դատարկ հավաստումներից անդին չէին անցնում, իսկ անզիական հյուպատոսը մի քիչ ավելի անվերապահ և հանդիմանական ձևով, խոսքը ուղղելով հանձնախումբը գլխավորող հունաց մետրոպոլիտ Խրիստոստոմոսին⁷⁶

⁷⁶ *Մնայրոպոլիտ Խրիստոստոմոս*, Զմյուռնիայի ուղղափառ հույների մետրոպոլիտ Խրիստոստոմոս Կալաֆատիսին (1867-1922) թուրքերը խոշտանգում

ասել էր. «Մինչև օրս ի՞նձ էիք դիմել օգնություն և պաշտպանություն խնդրելու համար, դիմեցե՛ք այնտեղ, որտեղ էիք դիմում: Հունական բանակը կարող էր տասն ամիս ևս դիմանալ ու դիմադրել, մինչդեռ այժմ լուծված ու քայքայված, խուճապային փախուստի է մատնված: Իր նահանջի ճամփի վրա այրում, մրդկում է գյուղերն ու ավանները և չէ՞ր մտածում, թե հալածող թուրքական բանակն էլ նույնը անելու է ձեզ, անցնելով փոխ-վրեժի: Մենք ներկայիս չունենք որևէ զինվորական ուժ քաղաքի պաշտպանության համար և նույնիսկ եթե այսօր հեռագրեն, հազիվ երկու շաբաթից կարող է հասնել, հետևաբար դիմեցեք հելլեն ուժերի հրամանատարությանը»:

Անգլիական դիվանագիտությունը իր դերի մեջն էր: Որպեսզի առաջիկային կարողանան թրքական վայրագություններն արդարացնել և նրա պատասխանատվությունն էլ թողնել հույների վրա և Պիղատոսի նման ձեռները լվանալով դուրս գալ, այժմից հող էին պատրաստում: Նույնը չէ՞ր արել Ֆրանսիան Կիլիկիայի դատարկմանը: Երբ վախ էին հայտնում, թե դատարկման ժամանակ կարող են տխուր դեպքեր և կոտորած պատահել, ֆրանսիական արտաքին գործերի մինիստրի ներկայացուցիչը հայտարարել էր, թե «ոչինչ պատահելու չէ, պայմանավ որ հայերը չսկսեն»: Սրանով քեմալական արյունահեղությունների պատասխանատվությունը կանուխից թողնելով հայերի վրա:

Իզմիրի անգլիական հյուպատոսի վերևի խոսքերը սակայն կայծակի արագությամբ տարածվել էին քաղաքի քրիստոնյա բնակչության մեջ նույն պահուն, անգլիական հյուպատոսարանի դռան ծանուցատախտակի վրա կպցվում էր մի ծանուցում, որով հրամայվում էր բոլոր անգլիահպատակներին քաղաքը թողնել ու հեռանալ 24 ժամվա ընթացքում, մտնելով իրենց տրամադրվելիք նավերի մեջ, որ այդ պայմա-

են կրոնական ծայրահեղ դաժան արարողակարգով քառատված դին քաղջ տալով մինչև թուրքական թաղամաս:

նաժամից հետո որևէ պատասխանատվություն չէր վերցնում հյուպատոսարանը:

Հասկացողին շա՛տ բարև...:

Այժմ իսկ բավ էր կռահել տալու, որ վտանգը սպառնում էր և քաղաքը գտնվում էր մի վերահաս աղետի նախօրյակում, որ անգլիական իշխանություններն իսկ ապահով չէին գտնում կացությունը և նախատեսում էին քաղաքի մեջ պատուհեղիք տխուր դեպքեր:

Նույնը և ֆրանսիական հյուպատոսը: Իզմիրի ծանոթ օրենսգետ Կ. Պապլոթ⁷⁷, ճակատի ճեղքվելուն հաջորդող արյունալի դեպքերի և զեյպեկների⁷⁸ հարձակումին առթիվ, դիմելով ֆրանսիական հյուպատոսարան և պարզելով եղեռնի ահավորությունը, օգնություն խնդրել է ֆրանսիական ռազմանսավերից: Ֆրանսիական հյուպատոսը պատասխանել էր՝ «Ի՞նչ եք ուզում դուք՝ հույներդ, և ի՞նչ եք պահանջում, Քեմալը գալու է Իզմիր, ինչպես որ դուք գնացել էիք Աֆիոն Գարահիսար և Էսքի Շեհիր, հետևաբար նրա հետ մտածեք ինչ պետք է և ինչպես պետք է անել Իզմիրի ժողովրդի համար»:

Հույների համար որքան որ ծանր էր կացությունը էլ ավելի դժուրակ էր հայերի համար, քանի որ չունեին և բաճախմաց մեծեր կամ պետեր. չկա՛ր Ազգային վարչություն, չկա՛ր որևէ ուղեցույց: Արդեն վարչության անդամները հետզհետե պակասել էին՝ քաղաքից մեկնելով: Ամեն մարդ իր գլխի ճարն էր մտածում, իսկ ժողովուրդը մնացել էր իր բախտին: Նույնիսկ վերջին օրերում հրաժարվել էին Առաջնորդարանում ժողով

⁷⁷ Պապլոթ, օրենսգետ Փապլոթ Ապոստոլոս (1862-1923):

⁷⁸ *Ջեյպեկ*, զեյբեք (թուրք.՝ zeybek), թուրք պարտիզան: Միջնադարում զեյբեկների ջոկատները կազմված են եղել իսլամացված հույներից: Մինչև Թուրքիայի Հանրապետության հիմնադրումը զեյբեկներ կային Ջմյուռնիայի մերձակայքում, որոնք կռվել են հունական բանակի դեմ 1919-1922 թթ.: Նրանց պարտիզանական գործողությունները հնարավորություն են տվել քեմալականներին ձևավորելու թուրքական կանոնավոր բանակը: Ջեյբեկների մեծ մասը ներգրավված է եղել Թուրքիայի ազգային բանակի կազմում:

գումարելուց և իրենց հավաքավայրն էին արել վաճառատներ, իրենց հետքը կորցնել ջանացողի ճարպիկությամբ: Սրա համար էլ կացության և անցուդարձի իսկությանը ծանոթանում կամ իրազեկ էր դառնում ազգայինների մի սեղմ շրջանակ միայն:

Ճակատի ճեղքվելուն հաջորդող օրերում կազմված «Միջկուսակցական ժողով»-ն էլ «Ժողովրդի տան» մեջ մի քանի ապարդյուն նիստեր միայն ունեցավ, որը նույնիսկ ժողովուրդը լուսաքանելու և վերահաս աղետը հաղորդելու իսկ չձառայեց: Պարզապես օրորում էին ժողովուրդը սին հույսերով, որ դիմել են հեյլեն իշխանության, հույն կառավարության պետերին, Մետրոպոլիտին, որ հունական «Ամինա»-ի (պաշտպանություն) զորքեր են հասնելու շուտով, երբ կացությունը բարելավվելու էր, ևլն, ևլն:

Բոլորը անհետևանք, ապարդյուն, սնամեջ խոսքեր էին: Իսկ անդին, վարչության անդամները, համայնքի երևելիները, միայն իրենց անձերը ազատելու մտահոգությամբ, ամեն ինչ երեսի վրա թողած, առանց լուրջ իսկ անդրադառնալու կամ զգալու իրենց ուսերին վրա ծանրացող պատասխանատվության ու պարտականության, նույնիսկ ժողովրդին ասելով՝ «ով որ կարող է թող փախչի...»: Զեմալականների Իզմիր մուտքից առաջ շոգենավ էին մտնում, մեկնելու համար արտասահման: Շոգենավ էր մտել և բուրժուանների մանկլավիկ խմբագիրը՝ Հրանտ Մամուրյան⁷⁹, որ նույնիսկ իր թերթում («Արևելյան մամուլ») չէր բարեհաճած ժողովրդին հաղորդելու կացության ծանրությունը, չէր պարզում իրականությունից: Եվ երևակայել, որ Իզմիրի ամենավերջին օրը, թերթը լույս էր տեսնում «Ոչի՛նչ կա մտահոգվելու» խորագրով մի առաջնորդողով, գրված «Սուլպասիե» նավի վրայից, ուր ապաստանել էր մեծ ու արժանավոր հոր՝ փոքր

⁷⁹ Հրանտ Մամուրյան, Զմյուռնիացում հրատարակվող «Արևելյան մամուլ» գրական-քաղաքական պարբերականի խմբագիր (1901-1909, 1919-1922):

ու անարժան որդին, թերթի վարչական հոգը թողած Հ. Տերենցին⁸⁰:



Ազգային վարչության կազմի առհասարակ բուրժուա անդամների մեջ կային սակայն զանազան նախասիրություններ կամ հոսանքներ, առհասարակ անգլիական օրիենտացիայի մարդիկ. կար սակայն մեկը, որ մինչև վերջ հավատարիմ և հետևողական եղավ իր թրքական օրիենտացիայի մեջ: Հավատացող չէր հունական գրավման կյանք ունենալուն և թրքերի չափ համոզված էր, որ Իզմիրը վերստին անցնելու էր թրքական իշխանության տակ: Փաստաբան Նազարեթ Ներսեսյանն (Հիլմի) էր նա, Պոլսո թրքական խորհրդարանի Իզմիրի երեսփոխանը: Ուրիշներ, երբ գլխարկ էին հագնում, սա երբեք չիրաժարվեց իր ֆեսից, կարծես իր թուրք բարեկամների մոտ ապացուցելու իր թրքասիրությունը: Սրա փաստը բազմաթիվ անգամներ տվել էր Հիլմի էֆենդին: Իզմիրի գրավումից ամիսներ առաջ, Կիլիկիա զանազան կողմերից քեմալականներից փախչելով, Այնթապ ապաստանած հայ թշվառներից հասնող օգնության դիմումները, երբ Ազգային Վարչության սեղանին եկած էր և առաջարկ էր լինում օգնել

⁸⁰ *Հակոբ Տերենց* (Տեր-Հակոբյան. 1871-1947). Զմյուժնիայում թուրքական իշխանությունների ոճրագործության վերաբերյալ Աթենքում 26 էջանոց տեղեկագիր է պատրաստել, որի օրինակները ներկայացվել են Հունաստանի կառավարությանը, Պողոս Նուբարի Ազգային պատվիրակությանը, Ալեքսանդր Խատիսյանին: 1924 թ. նոյեմբերին Հակոբ Տերենցը և այլ վերապրողներ վերոհիշյալ տեղեկագրով ներկայացել են Լոնդոնում կայացած դատավարությանը («Ամերիկյան ծխախոտի ընկերության» Զմյուժնիայի մասնաճյուղն ընդդեմ «Գարդիան» ապահովագրական ընկերության): Նրանք դատարանի առաջ հաստատել են, որ Զմյուժնիան հրկիզել են թուրքերը, մանրամասն տե՛ս Սեղա Բուջիկանեան, Յակոբ Տերենց, «*Իզմիրի սողաք և մեծ կորեկին մանրամասնությունները*», Ազգ օրաթերթ (Երևան), 8 դեկտեմբեր, 2007:

որոշ մի գումարով, Նազարեթ էֆենդին ելույթ էր ունենում, առարկելով և ասելով «Ես համամիտ չե՛մ, չե՛մ կարող գլխուս քելա»⁸¹ գտնել: Այսինքն էր թրքերը Իզմիր վերադառնալիս չամբաստանվին իբրև հակաքեմալական, Կիլիկիայի հայերին օգնած լինելու հանցանքով...:

Այդ բոլոր կանխագուշտությունները սակայն չտվին և չունեցան ակնկալված վարձատրությունը...: Չար բախտը հակառակ բերեց և քեմալականների՝ Իզմիրի մուտքի առաջին օրն իսկ սպանվեց Հիլմի էֆենդին՝ իր քնակարանումը, և ո՛չ իր ֆեսը, և ո՛չ էլ իր թուրք բարեկամները չկարողացան քեմալական պատվանշան ապահովել իրեն...:



Ազգային վարչությունը այնքան էր կորուսել իր հեղինակությունը և դադարել էր համայնքի պետը լինելուց, որ չկարողացավ նույնիսկ արգելել «Զորավար» Թորգոմի⁸² փանջունիությունները: Այս «Զորավար» Էրզրոմի մեջ «անկախության» դրոշ պարզելուց հետո, մի զույգ ռուսական սպիտակ արջեր էլ Անգլիո թագավորին նվեր տարած..., երբ վերադարձել էր, այս անգամ էլ Հունաստանի Կոնստանդին թագավորին հետ համաձայնել էր Իզմիրում կազմակերպելու «Հայկական լեգեոնը»⁸³: Եվ այս նպատակով մի բարի օր, Առաջնորդարանի ան-

⁸¹ *Բեյա*, աղետ, փորձանք, պատիժ:

⁸² 1922 թ. Զնյունիայի հերոսական ինքնապաշտպանության զորավար Թորգոմ (Արսեն-Արշակ-Խարիտոն) Նազգաշյան (1878-1953): Տե՛ս Սամվել Ռամազյան, *Հայ-հունական ռազմական սանջոթյունների և համագործակցության պատմություն* (Աթենք, 2010):

⁸³ 1916 թ. հոկտեմբերի 27-ին Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կառավարությունները, Փարիզի Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի մասնակցությամբ, Սալբու-Պիկոյի համաձայնագրի շրջանակում, որոշում են ստեղծել «օսմանյան իշխանությունների նկատմամբ չեզոք» զորամիավորում «Արևելյան լեգեոն» (*Légion d'Orient*) անվամբ: Իբրև

կյունը շրթա կապած, անցնող հայ երիտասարդները բռնի իր «բանակին» զինվոր արձանագրել փորձեց:

Բախտախնդիր, փառասեր ու փախստական մի շարք հայ զինվորականներից և Թորգոմի աստիճանավորած սպաներից բաղկացած այս «լեզեոնը» սակայն, Իզմիրի արվարձանը եղող Բալջովայից ուրիշ տեղ չկարողացավ ելնել, իսկ իր հրամանատարն էլ կենտրոնական պանդոկների մեջ անցկացրեց իր զեղխ ու անպատասխանատու կյանքը: Այնքան առաջ տարավ իր հիմարությունները, որ երբ հունական բանակը քայքայված, իրեն գցում էր Իզմիրի ծոցը խարսխած նավերում, քեմալականներ մտել էին Իզմիր և քաղաքում ծակամուտ⁸⁴ էին եղել հույն զինվոր, թե զինվորական, Թորգոմ իր «բանակին» գուլան անցած տողսնցք էր կատարում քարափից, կառավարական շենքի առաջից և Բահրի Բաբայից: Այստեղ նաև ենթարկվեց թրքերի հարձակմանը: Երկուստեք զինարձակություններից հետո, Թորգոմ Չեզոմեի ճամփով ազատեց

օժանդակ ուժ՝ պատերազմի տարիներին ֆրանսիական բանակի կազմում պետք է կռվեր բացառապես Ասիական Թուրքիայի մաս կազմող Սիրիայում և Կիլիկիայում: Թուրքերի դեմ հաղթանակից հետո պետք է ապահովեր Կիլիկիայի ինքնավարությունը՝ ֆրանսիական մանդատի ներքո: 1916 թ. նոյեմբերի 26-ին հիմնվում է օսմանյան հպատակներից կամավոր հիմունքներով հավաքագրված Արևելյան լեզեոնը, որը հետագայում վերանվանվում է «Հայկական լեզեոն»: Հայոց ցեղասպանության սկզբնավորումից ընդամենը երկու տարի անց ձևավորված առաջին՝ զուտ հայկական զորամիավորումն էր՝ աշխարհի տարբեր երկրներից (ԱՄՆ, Եվրոպա, Եգիպտոս, Հարավային Ամերիկա, Ավստրալիա նև) եկած 4.000-5.000 զաղթականների մասնակցությամբ: Լեզեոնն իր կազմությամբ՝ բարձրաստիճան հրամանատարական կազմով, աստիճանակարգված զինվորականներով, զենքով ու զինամթերքով, ռազմական այլ հատկանիշներով և կարգապահությամբ լիովին համապատասխանում էր ժամանակի առաջավոր բանակներին: Տե՛ս Քնարիկ Ավագյան, *ԱՄՆ-ի հայերի մասնակցությունն ու նպաստը կիլիկյան կամավորական շարժմանը (1916-1920 թթ.) (1918 թ. Արարայի ճակատամարտում «Հայկական լեզեոնի» տարած հաղթանակի 100-ամյակի առթիվ)*, Պատմաբանասիրական հանդես 2 (2018), 82-101:

⁸⁴ *Ծակամուտ լինել*, սարսափահար թաքստոց փնտրել, փախուստի դիմել, ճողոպրել:

իր մորթը, իր ետին թողնելով հակահայ կրքերով բորբոքված թրքեր և պատճառ դառնալով մի քանի հազար ավելի հայերի կոտորումին:



Ուրբաթ, 8 սեպտեմբեր 1922 թվի երեկոյան, պաշտոնատեղի-
 ես ելած, հակառակ սովորությանս, ուզեցի Պունթայի հրշեջ-
 ների կայանի առաջից ու քարափից շրջան անելով տուն գնալ:
 Այդընի երկաթուղու կայարանի մթերանոցի առաջ պարզվող
 տեսարանը առանց հուզվելու չէր կարող դիտել մարդկային
 զգացում ունեցող որևէ մարդ: Հիվանդանոցի կազմածներ –
 մահճակալ, անկողին, բարձ, ճերմակեղեն կն, կն. – խառ-
 նիխտուն և ցիր ու ցան բլուրներ էին կազմել: Ցանկապատից
 ներս զինվորական կահ ու կահույքն էլ ոչ տարբեր երևույթ էին
 պարզում: Փողոցի մի անկյունում նստած զինվորներ, աղեալ-
 ներ⁸⁵ էին ծախում ոչինչ գներով, ուրիշներ ծախում էին զենք
 կամ ներքին սպիտակեղեն, ավելի ուրիշներ կայարան մնա-
 ցած և չառաքված վագոնների մեջի վաճառական ապրանքնե-
 րը և կամ աննդամթերքներ էին ծախում: Կողոպուտ, անկար-
 գապահություն, անպատասխանատվություն հասել էին իրենց
 զազաթնակետին: Չկար հովիվ և մոլորած էին ոչխարները:

Ահա փախչող բանակի մի մասը: Կառք, սայլ, սայլակ, ինչ
 որ գտել են, գրավել են ու, բեռները վրան բարձած, քշում են:
 Ձի, ջորի, էշ, եզ, կով, ինչ անասուն որ գտել են, լծել են: Հե-
 ծեր են թամբված կամ մերկ, սանձով կամ առանց սանձի անա-
 սունների վրա և գնում են ոչխարային բնագոյով, առաջից
 գնացողի հետևից, առանց իմանալու, թե որտեղ է տանում այդ
 ճամփան՝ փրկությանն, թե՞ կործանումի:

Կառքերի վրա զկա զենք, կամ ռազմամթերք: Թնդանոթ-
 ներ և կամ զնդացիրներ չեն, որ քաշում տանում են անասուն-

⁸⁵ Աղեալ, հաստ ծածկոց, որ գործածվում է վերմակի փոխարեն:

ները, այլ անկարգ, անխորհուրդ և անխոհեմ փախչող զինվոր ու իր անձի համար պետք զգացած ու վերցրած անհատական իրերն ու ապրանքները: Զինվորը դադարել է զինվոր լինելուց. հայրենիք, ազգ նույնիսկ իր ընկերը մտածելու տրամադրություն չունի: Իր ամբողջ մտահոգությունը կայանում է իր անձը և իբր ավար հետը առած ապրանքները ազատել և ժամ առաջ նավ մտնելու մեջ, առանց իմանալու սակայն. թե որտեղ է այդ նավը և որ ճամփան ապահով կարող է իրեն տանել այդտեղ:



Հինգ օրից ի վեր դադարել էր գավառի հետ երկաթուղային հաղորդակցությունը: Բուջայի (Իզմիրի արվարձան, գնացքով 20 րոպե, ուր առավելապես անգլիացիներ են բնակվում) վերջին գնացքն էլ հինգշաբթի կես գիշերից մի ժամ հետո, մասնավոր պատրաստությամբ Իզմիր էր փոխադրել բոլոր անգլիացիները: Ուրբաթ առավոտից սկսյալ, երկաթուղիների բոլոր պաշտոնյաների հետ դադարել էր որևէ կապ կամ հաղորդակցություն:



Այդ օրը ո՛չ կառավարառան մեջ և ո՛չ էլ պահականոցներում մարդ չէր մնացել: Քաղաքում տիրում էր կատաղյալ անիշխանություն: Վախը երկուստեք էլ գոյություն ուներ: Թրքերը վախենում էին, որ գուցե նահանջող զինվորները և նրանց հետն էլ սիվիլ ոչ-թուրք բնակչությունը հարձակում գործեն թրքական թաղերի վրա: Միևնույն վախն անցնում էր և քրիստոնյա ժողովուրդը, թե թուրքերը, քաջալերված առաջացող քեմալական ուժերից և օգտվելով իշխանության չգոյությունից, հարձակվեն և ջարդեն, թալանեն: Մյուս կողմից, կային և միա՛միտ հավատացողներ, թե հաջորդ առավոտ իսկ... ցամաք են

եղևելու «Ամինա»-ի վենիզելոսական զինվորներ, երբ արդեն քաղաքն ազատվելու էր վտանգից, երբ հունական թաղերում հույն զինվորը արդեն իր զենքն ու համազգեստը նետած, սիվիլ զգեստ հագած ծակ էր որոնում իրեն թաքցնելու համար:



Այդրնի երկաթուղու պաշտոնեությունը շատ լավ գիտենալով, թե քեմալականների Իզմիթ մուտքին պատահելու էին տխուր դեպքեր, դիմել էին ընկերության դիրեկտոր Major General de Candolle⁸⁶-ին և խնդրել, որ նավամատուցի մեջ պաշտոնյաների հաշվույն մի նավ ապահովեն, որպեսզի վտանգի պահին իրենց ընտանիքներով ներս մտնեն, մինչև որ կացությունը պարզվի, անդորրությունը վերահաստատվի և հնարավորություն ստեղծվի աշխատանքի վերսկսմանը:

General de Candolle, առաջին ընդհանուր պատերազմին Ֆրանսիայում գերմանական ճակատի վրա զորաքանակի հրամանատար մի անգլիացի էր: Իբրև զինվորական մարդ

⁸⁶ *Ռայմոնդ Չարլզ Պիրամուս դը Կանդոլ* (Raymond Charles Pyramus de Candolle, 1864-1935), ինժեներ՝ մասնագիտացված երկաթուղային շինարարության մեջ: Զբաղեցրել է արգենտինական երկաթուղու գլխավոր տնօրենի պաշտոնը: 1902 թ. Հարավային Ամերիկայում իր կատարած սշխատանքի համար պարգևատրվել է «Կայսերական ծառայության» մեդալով: 1914 թ. ծառայության է անցել բրիտանական բանակում որպես բրիգադի գեներալ: Ինժեներական հմտությունները, ինչպես նաև ֆրանսերենի իմացությունն օգնել են նրան ֆրանսիացի գեներալ Բերտելոյի զորամասում կապիսպա դասնալու և Ռումինիայում ֆրանսիական բանակային կորպուսը ղեկավարելու հարցում: Սպայի առաջնահերթ առաքելությունը Ռումինիայի երկաթուղային ցանցի շահագործումն էր դաշնակից զորքերի տեղափոխումը երաշխավորելու համար: Նա որոշ ժամանակ եղել է Բալկաններում, այնուհետև դարձել Բրիտանիայի կուլպատուրը Դոնի Ռոստովում: 1920 թ. վերադարձել է երկաթուղու ինժեներական աշխատանքներին, գլխավորել Զմյուռնիա-Այդրն երկաթուղին: Տե՛ս Christophe Vuilleumier, La Lettre de Penthes, https://www.academia.edu/20274914/Raymond_Charles_Pyramus_de_Candolle_1864-1935_, դիտվել է՝ 22.07.2021:

կարևորություն իսկ չտվեց դիմումին և ընթացք չտվեց որևէ կանխագգուշական միջոցի: Ընդհակառակն, պահանջեց, որ ամեն մարդ իր պաշտոնի գլուխը գտնվի, քանակի զինվորի նման...: Ներքին գավառների կայարանապետներ, որոնք աղեխարշ հեռագիրներ էին ուղարկել և խնդրել, որ թույլ տրվի Իզմիր իջնել, քանի որ քեմալական ուժերը ժամից ժամ սպասվում էին և հասնելու դեպքում ոչ ոքի խնայելու չէին, մերժվել էին: Իսկ ուրիշներ, որոնք հազիվ իրենց կյանքը ազատած, փախած Իզմիր էին հասել, պաշտոնից վտարվել էին այն պատճառաբանությամբ, թե պետք էին մնալ իրենց պաշտոնի վրա... և անշուշտ կոտորվեին:



Կային սակայն ուրիշներ էլ, որոնք պարզապես թրքերի վերադարձն էին ցանկանում: Սա ոչ թե թրքասիրության հետևանք էր, այլ հույների և հունական իշխանության դեմ իրենց ունեցած ատելությունը: Սրանք առավելապես լևանտեմններն էին — Ֆրանսահպատակ, իտալահպատակ ևլն, որոնք քանի թրքերը մոտենում էին Իզմիր, այնքան ուրախանում էին և թրքի վերադարձովը հրճվում էին բացե ի բաց: Տարակույս չկա, որ այդ ցանկության շարժառիթն էր տնտեսական նոր հարաբերությունները, որ ստեղծվել էին և ստեղծվելու էին հունական իշխանության՝ Իզմիր և շրջանները վերջնականապես հաստատվելու դեպքում: Կապիտուլյացիաների վարժված այդ մարդիկը գիտակցում էին, որ հունական իշխանությունը ոչ մի կերպով թույլատրելու չէր այդ նախկին շահագործումները:

Այդընի երկաթուղու ընկերության կենտրոնի ընդհանուր հաշվապահը՝ Կապորալ՝ Ֆրանսիական հյուպատոսարանի դիվանապետի եղբայրը, թրքերի՝ Իզմիր մուտքի առաջին երեկոն, գրասենյակի մեջ շամպանիայի [շամպայն] շշեր բաց արած խմում էր ուրախությամբ, որ թրքերը գալիս էին: Երբ

իրեն դիտել տվեցի, որ անտեղի էր իր հրճվանքը, թե ո՛վ գիտի ինչ աղետ է պատահելու, պատասխանում էր. «Սխալ եք, թրքերը այս անգամ ներս մտնելու են ձեռնոցներով, իբրև քաղաքակիրթ ժողովուրդ, վախենալու ոչ մի պատճառ գոյություն չունի, ոչ ոքի քիթը արյունելու չէ»:

Հաջորդ օրն իսկ եկավ փաստելու հակառակը: Թրքասեր լինելուց ավելի թրքամոլ այս լւանտեններն իմացան իրենց և իրենց պետությունների վարած կապիտալիստական քաղաքականությանը ցնդած լինելը, սակայն շատ ուշ էր, գայլը մտել էր փարախից ներս...:

ԱՌԱՋԻՆ ԽՈՒՃԱՊԸ

Սեպտեմբերի 9, 1922 թ., առավոտյան ժամը 9 էր:

Պունթայի կայարանի փողոցը ամեն կողմ, պատերի տակ փախստական ընտանիքներ, ներքին գավառներից հազիվ իրենց կյանքը փրկած և Իզմիր ապաստանած բազմություններ, իրենք զիրենք ապահով էին ենթադրում անգլիական մի հաստատության մերձակայքը կանգնելով: Աչքերնին սևեռած շենքին վերև ծածանող դրոշակին հույսի ու փրկության նշանակ էին նկատում այդ ապագային անծանոթ, ապագային, որ գալու էր շուտով հիասթափելու, դիմակազերծ անելով Ալբիոնը, որ նույնիսկ քծնելու էր «չէթե» Քեմալին առաջ...:

Մի շարք շահադետներ և շահամոլներ, Պունթայի գինվորական մթերանոցը արշավանք էին կատարում: Կողոպտում էին և ինչ պաշար որ գտնում էին, փոխադրում էին իրենց տները: Փողոցներում անտեր ու անտիրական թափառում էին գինվորական ձիեր: Կողոպտիչներ ձեռք բերած այս թափառական ձիերից, լծեր էին լքյալ կառքի կամ սայլի և մթերանոցի այլուր և այլ սննդամթերքը, արժեք ներկայացնող իրերը բեռնուած, կարավաններ կազմած անցնում էին:

Հույն բնակչությունը ավարի էր տալիս հունական զինվորական մթերանոցը: Եվ ինչո՞ւ չէ: Պահեստապետը, տեսնելով կացության ծանրությունը և պահեստը Հունաստան փոխադրելու անհնարինությունը, քանի որ թրքերի՝ քաղաք մուտքը ժամերի հարց էր դարձել, ժողովրդին գոչել է. «Քրիստոնյաներ, արե՛ք, տարե՛ք, ինչ որ կցանկանաք, փոխանակ թուրքին մնալու, վերցրե՛ք, տարե՛ք, ձե՛րը լինի, ինչ որ կա»:

Եվ խուժել էր ժողովուրդը:

Այս միջոցին էր, որ լավեցին զենքի ձայներ և տիրեց խուճապ: Ի՞նչ էր պատահել, ոչ ոք իմանում էր: Ավարառուններն էլ, իրենց բեռցված սայլերը թողած, փախչում էին: Իսկ գավառներից Իզմիր ապաստանած և կայարանի շուրջը գտնվող փախստականներն էլ սկսեցին փախչել դեպի Պունթայի ներքին փողոցները: Ամեն մարդ, փողոցի մեջ թողած իր ունեցածն ու չունեցածը, ինչ որ հարկավոր էր նկատել հետն առած, շվարած, մեկ աջ, մեկ ձախ վազվզում էր:

Հույն զինվորներ իրենց զենքերը Պունթայի կայարանի ցանկապատից ներս գցած, փախչում էին արտորնոթ⁸⁷. վախենալով, որ զինյալ վիճակնին կարող էր առիթ դառնալ որևէ հանդիպող թրքի կողմից՝ կրակելու և սպանելու: Բարոյականը քայքայված զինվորի համար, զենքն անգամ բեռ և վախի պատճառ էր դարձել:

Տիրող մեռելային լուռության մեջ լավելիք որևէ ձայն իսկույն վերարտադրվում էր թրքերի մուտքին: Հայ ու հույն բնակչությունը այնքան նախապաշարված, թրքի սարսափը, նախքան թրքի մուտքը, այնքան էր համակեր ժողովրդի միտքն ու էությունը, որ լավող ձայներին չէր կարող տարբեր մեկնություն տալ, բայց միայն ջարդի ու կոտորածի սկզբնավորություն:

Խելակորույս փախչող ժողովրդից մի մասն էլ խուժեց երկաթուղու ընկերության գրասենյակները, ապաստանելու համար վտանգի դեմ: Պաշտոնետության դիմումը մերժող դիրեկ-

⁸⁷ Արտորնոթ, շտապելով, փութկոտությամբ:

ցիան, այժմ կացության լրջությունը տեսնելով, ելեր էր մասնավաճար անելու պաշտոնյաներին: Այժմ, ժողովրդի սարսափահար ներս խուժելը պատճառ եղավ, որ ընկերության արկղակալը կողպի դրամարկը և դադարեցնի վճարումները:

Երթևեկը բոլորովին դադարել էր դուրսը: Լոռություն էր տիրում ամեն կողմ: Ամայացել էին փողոցները, երբ հանկարծ վերսկսեց ավարառուների եռուզեռը: Նրանց կարավանը սկսել էր անցնել փողոցներից: Ինչ էին սակայն այդ կրակոցները և ստեղծված խուճապի պատճառը:

Քիչ հետո հասկացվեց, որ ավարառուների մի շահադետ խմբակ, ցանկանալով մենակ իրենք տիրանալ ամբողջ կողոպուտին, փորձել էր ժողովուրդը վախեցնել, խուճապի մատնել և ցրել, որպեսզի առանձին մնան ու տիրանան ամբողջ պահեստին:

ԲԱԽՏԻՆ ԱՆԻՎԸ ԴԱՐՉՎԵ՛Ղ Է ...

Սեպտեմբերի 9, 1922 թ., առավոտյան ժամը 10:15-ին, վեց թուրք ձիավորներ, գլխավորությամբ հարյուրապետ Շերեքեդդինի⁸⁸ և առաջնորդությամբ անգլիական զինվորական տարագով մեկի, եկան Հայգա Բունարի⁸⁹ կողմից և անցնելով Բունթայի կայարանին առջևից, ուղղվեցին դեպի կորդոնը (քարափ):

Քեմալականները մտե՛լ էին Իզմիր:

Ամայի էին փողոցները: Ամեն մարդ սարսափի մատնված, մի ծակ մտած, գլուխն իսկ դուրս հանել չէր համարձակվում:

⁸⁸ *Շերեքեդդին*, Շերաֆեթթին Իզմիր (Şerafettin İzmir, 1889-1951), ռազմական գործիչ: Մասնակցել է Բալկանյան պատերազմներին. Առաջին աշխարհամարտին, քեմալական սզգայնական շարժմանը, ինչպես նաև Զմյուռնիայի գրավմանը: Առաջինը հենց նա է թուրքական դրոշ բարձրացրել Զմյուռնիայում գտնվող նահանգապետի նստավայրը համարվող շինության գլխին:

⁸⁹ *Հայգա Բունար*, Հալքավիրնար (Halkapınar), Զմյուռնիայի թաղամաս:

Երկաթուղու կայարանը խուժած ժողովուրդն էլ է՛լ ավելի ահ ու դողի մատնված՝ չէին դուրս գալիս, ինչ որ պատճառ էր եղած ընկերության պաշտոնյաների վճարման դադարեցվելուն:

Սկսել էին լսվել գենքի ձայներ հեռու թաղերից, մանավանդ թրքաց թաղեր՝ Էշդեֆ փաշա, Իքի Չեշմեիք, Գարաթաղ, մանավանդ Բասմախանեի և Այ Վուզլայի կողմերից: Կարող է թե ուրախության մեջ էին թրքեր, իսկ քրիստոնեական թաղամասեր խոր լռության մեջ էին: Ամեն կողմ սարսափ: Քաղաքը դողում էր թրքական ձիերի ոտնադոփյունի ներքև: Ա՛հ ու դող: Հակապատկերը՝ 1919 մայիս 15-ի, երբ հունական բանակը ոտք էր դրել Իզմիրի քարափը: Այդ օր քրիստոնյաներն էին ուրախության մեջ, այսօր թրքերը: Այդ օր թուրք թաղերը լուռ ու տխուր դիտում էին, այսօր հակառակն է: Խայտում են թրքական թաղեր, արհավիրքի մեջ են քրիստոնեական թաղերը: Սևավո՛ր հակապատկեր...:

Բախտին անիվը դարձվել էր...:



Հեծելագործի հարյուրապետ Շերեքեդդինի ջոկատը քարափի վրա՝ Սպորտինգ կլուբի առաջ, հանդիպում է մի քանի հունական սպա և զինվորների, որոնց և կձերբակալե, իսկ քիչ անդին «Բոսիտոնի» սրճարանին առաջ պայթում է մի ռումբ, որը կարծում են ազդանշանը կլինի ջարդի և սպանությունների: Նավամատույց խարսխած իտալական «Բատիոն բար»-ի շոգենավի ծածկը, ուր խոնված էին հազարավոր օտարահպատակներ և ի մասնավորի թրքասեր բազմություն և թաշկինակի ծածանումներով բարի գալուստ էին մտաթում քեմալական գործերին, հանկարծ վերջ կգտնե ռումբի ձայնից և յուրաքանչյուրը կչվեն նավի խորքերը:

Քաղաքին այլ և այլ կողմերից սկսել էին թրքական հառաջապահ չեթեական ջոկատներ մտնել, որին հետևում էր կանոնավոր բանակը հրամանատարությամբ Նուրեդդին փաշայի:

Սա առաջին ընդհանուր պատերազմին Քութ իլ Ամարայի հաղթականն էր, հետո Այդըն կենտրոնացած 12-րդ Գոլթր-դուլի հրամանատարը, որ զինադադարին էլ Իզմիրի կուսակալն էր եղել:

Քեմալական գրավումին Իզմիրի կուսակալ նշանակված էր Հալեայի ծանոթ ջարդարար Մուսթաֆա Խալիդ⁹⁰, իսկ ոստիկանության պետ էր Սալահեդդին⁹¹: Ջինվորական գործողությունների հետևանք, բնական բերումով, քաղաքը ենթարկված էր զինվորական իշխանության հրամանին:

ԱՆԽՈՂԵՄ ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ

Շարքաթ կեսօրից հետո փորձեցի տնից դուրս գալ և գնալ Հայնոցի⁹² ծայրը՝ Սոուլդուք չեշմեի և Բասմախանեի կողմե: Թաքախանեի առջևից շարքով անցնում էին սիվիլ հագնված թուրք չեթեներ՝ թափօփիած, անճոռնի, բարձր՝ մուգ գույն ֆե-

⁹⁰ *Մուսթաֆա Խալիդ* (Mustafa Abdülhalik Renda, 1881-1957), թուրք քաղաքական և պետական գործիչ, Բիթլիսի (1914-1915), Հալեայի (1915-1917) կառավարիչ, Ջնյունիայի գրավումից հետո՝ առաջին նահանգապետը, հանրապետական Թուրքիայի ֆինանսների (1924-1934), ազգային պաշտպանության նախարար (1927-1930), Թուրքիայի ազգային մեծ ժողովի նախագահ (1935-1946): Աթաթուրքի մահից հետո մեկ օր կատարել է Թուրքիայի նախագահի պարտականությունները:

⁹¹ *Սալահեդդին* (Selahattin Adil, 1882-1961), ոստիկանության պետ:

⁹² *Հայնոց*, Ջնյունիայի հայկական թաղամասը: Այն բաժանված էր լայն, կանոնավոր ու մաքուր փողոցների (կարգ, որ բացակայում էր ամբողջ քաղաքում) և նման էր բառակուսու, որի արևմտյան ծայրում Սբ Ստեփանոս տաճարն էր (ճարտարապետ՝ Մելքոն Երսուկյան)՝ զեղեցիկ զմբեթով և զանգակատնով: Այնտեղ էին գտնվում Առաջնորդարանը, Մխիթարյան վարժարանը, Մեսրոպյան (արական), Հռիփսիմյանց (իգական) և այլ դպրոցներ, ազգային հիվանդանոցը, հայ ընթերցատունը ևն: Տե՛ս Ապա Գրիգորյան, Վաչիկ Բրուտյան, *Ջնյունահայ կրթական-մշակութային կյանքի պատմության որվագներ (19-րդ դարի սկզբից մինչև 1922 թ.)* (Երևան, Իրավունք, 2007), 10-11:

սով և թևերնին կապած կարմիր շորով, ուսերնին կամ ձեռքերնին բռնած մալգեր գենքով մարդիկ: Բոլորն էլ անխտիր նստել էին առանց թամբի մերկ ձիերի վրա և գոչում էին. «Յաշասըն Մուսթաֆա Բեմալ փաշա»⁹³: Հետաքրքիր ժողովրդին էլ ձայն էին տալիս. «Գորքմայըն պիր շեյ յոգ» (մի՛ վախենաք, ոչինչ չկա)⁹⁴, իրենց բորենու աչքերով սակայն կարծես արյուն էին փնտրում:

Չորոք Գափուի պահականոցին առաջ խոնված թուրք խուժանը աննկարագրելի էր: Նմանում էին արգելափակված գազանների, որոնք սպասում էին յուրաքանչյուր բռպե, իրենց ազատ արձակմանը, որպեսզի հարձակեն: Հայնոցը, որ կանգնել էր Բուլվարի մյուս կողմը, նմանում էր հեռվից ցուցված մի քաղցր պատառի: Այդ տեսարանը չափազանց խոսուն էր և իմաստություն հարկավոր չէր հետևանքը իմանալու համար: Ուստի անմիջապես տուն դարձա և այդտեղից աշխատեցի հետևել դեպքերին:

Զինարձակությունները դուր դադար չունեին. կարելի չէր սակայն գանազանել, թե եղածը ուրախությա՞ն արդյունքն էր, թե՞ ոչ, սկսե՞լ էին ջարդերը: Ամեն պարագայի տակ ասին ու սարսափը համակել էր բոլորին և հուսադրական կամ մխիթարական ոչ մի երևույթ կարելի չէր գտնել:

Մինչև լույս կիրակի շարունակեց նույն վիճակը: Առավոտուն բերնից բերան շրջում էին ահռելի դեպքերի պատմություններ, թե հալածանքը ուղղված է մասնավորաբար հայերի դեմ, թե գիշերանց խմբերով պահականոցներ առաջնորդվել են Հայնոցի և մերձակա թաղերի մարդիկը, որոնք չեն վերադարձել. ևլն, ևլն:

⁹³ *Յաշասըն Մուսթաֆա Բեմալ փաշա* (թուրք.՝ Yaşasın Mustafa Kemal Paşa), կեցցե՛ մուսթաֆա Բեմալ փաշան:

⁹⁴ *Գորքմայըն պիր շեյ յոգ* (թուրք.՝ Korkmayın birşey yok), մի՛ վախեցեք. ոչինչ չկա:



Այ Վուզլայի⁹⁵ կողմը ունեինք մի ազգական ընտանիք, հոգս էինք անում, որ մի գուցե նրանք էլ ենթարկված լինեն թրքերի հարձակումին, քանի որ մոտ էին թրքական թաղին: Իբրև օտարահպատակ, դրոշակ պարզած մի տան վերև, ավելի ապահով էինք և փողոցից անցնող-դարձող թրքերն էլ ոչ մի կերպով անհանգիստ էին արել մեզ: Ուստի խղճի պարտք էինք համարել այն մեր ազգականներն էլ փոխադրել մեր տունը:

Այսպես, հայրս կիրակի առավոտ տնից դուրս գալով, փորձել էր Բորթարեսից անցնելով Այ Վուզլա գնալ, անցնելով երկաթուղու վրայից: Այդտեղ կանգնած պահակը հարցնում է, թե որտե՞ղ է գնում: Հայրս պարզում է նպատակը, սակայն պահակը արգելում է: Հայրս երբ հայտնում է, թե ինք օտարահպատակ է, պահակը այնքան բարի կլինի, որ կասե. «Մինչև որ դու իմացնես, թե օտարահպատակ ես, բոսթը [պահակետ] ձեռքից կգնա...» :

Այսպես ձեռնունայն տուն դառնալուց հետո, ունենում ենք մի այլ մտահոգություն: Շաբթու մեջ մեր բարեկամ բժիշկ Կ. հանդիպել ու անցուդարձի շուրջ խոսակցելուց հետո, հարցրել էր, թե ի՞նչ անե: Իրեն խորհուրդ տվել էինք աշխատել գոնե առժամապես հեռանալ քաղաքից, մինչև որ կացությունը պարզվեր: Ուստի, չէինք իմանում, թե մեկնե՞ր էր, թե՞ ոչ: Հայրս երկրորդ անգամ ճամփա ելավ Էլմասյան փողոց, որ բնակում էր բժիշկը: Իմանալով մեկնած լինելը, հանդիպել էր նույն փողոց գտնվող «հայ գաղթականաց տուն»-ը և այդտեղից հետը առնելով, մեր տունն էր բերել հայրենակից մի այրի ընտանիք և զավակները:

[Բացակայում են ձեռագրի 57-58-րդ էջերը՝ Թ.Մ.]:

⁹⁵ Այ Վուզլա, Մբ Վուկլաս (հուն.՝ Ἄη Βούζλας)՝ հունական եկեղեցի Ջնյունիայում:

ԹՐՔԱԿԱՆ ԹԱԿԱՐԴԸ

Թրքերի Իզմիր մուտքի հաջորդ օրը, 10 սեպտեմբերին, կեսօրից հետո սկսեց ունիվերսալ իզմիր քաղաքի բանակի բլրի Գադիֆե գալեսին⁹⁶: Ռումբերը ընկնում էին բլրի՝ քաղաքին կողմի լանջերին, ուր բնակում էին թրքեր: Այդ թաղամասի վերևից անցնող պողոտայի վրայից, ռումբերի ընկած տեղերից բարձրանում էին հողու և փոշու ամպեր: Չէինք իմանում, թե ունիվերսալը որ կողմից էր լինում: Ծովի՞ց, թե՞ ցամաքից, նավամատույց խարսխած ռազմանավերի՞ց, թե՞ ոչ, ներսը մնացած հունական գորամասերի կողմից: Որովհետև, երբ փոշու ամպերը ցրվեցին, նշմարեցինք բլրից վար թուրք ձիավորների շտապումը, որոնք զինվորական ծրագրի համաձայն նախորդ օր դիրք էին բռնել քաղաքի այդ բարձրագույն մասում:

Բլրից վար իջնող ձիավորներ մի պահ ապաստանեցին արևելյան մասում գտնվող ծառերի ներքև, բայց այդտեղ էլ չմնացին երկար և աճապարանք ուղղվեցին դեպի վար: Այս միջոցում, Գադիֆե գալեսիի վրա բարձրացված թրքական դրոշն էլ վար առնվեց: Տարակույս չկար այլևս, որ ունիվերսալը հույների կողմից էր: Քաղաքում, ամեն տեղ տիրում էր լռություն: Դադարել էին թաղերից հասնող զինարձակության ձայները: Ոչ թուրք բնակչության վրա տարածվել էր հույսի նշույլ, թե քաղաքը վերագրավվում էր հունական զորքերի կողմից, երբ ժողովուրդը հնարավորությունը ունենալու էր անվտանգ հեռանալու քաղաքից:

Ի՞նչ էր իրականությունը սակայն:

Սեպտեմբերի 5-ին Օրթանճայից⁹⁷ նահանջում էր Զորավար Զենկինիսի հրամանին տակ գտնվող 18-րդ զորաբաժին:

⁹⁶ *Բադիֆե քալեսի* (թուրք.՝ Kadife kalesi), ամրոց Զմյուռնիայում:
⁹⁷ *Օրթանճա*, Օրթանջա (թուրք.՝ Ortanca), հավանաբար փողոց Զմյուռնիայում:

նը, որը պաշտոն ունեցել էր պահպանելու Մենդերեսի⁹⁸ գիծը: Նազիլուց⁹⁹ մինչև ճելլադ¹⁰⁰, կռվելով եկել հասել էր. ճելլադի կայարանն էլ պաշարվում էր Էոդեմիշից¹⁰¹ իջնող Յեոյուր Ալիի¹⁰² շեթեխմբի կողմից: Թորպալը¹⁰³ արդեն գրավել էր թրքերի կողմից, իսկ այս երկու կայարանների միջև գերի էին մնացել հինգ կարավանախմբեր՝ կին, աղջիկ, մանուկ և վիրավոր հույն զինվորներով լեցուն:

Նահանջող հունական զորաբաժինը ճելլադ երկու օր մնալուց հետո, ճախճախուտքի¹⁰⁴ արևմտյան եզերքից շրջան անելով հասնում է Թորպալը և գրավում: Բայց Ջումա Օվասրի¹⁰⁵ բարձունքները բռնվել էին թրքերի կողմից և Չաթլաքի կայարանից ծանր հրետանիով ոմբակոծում էին հույներին:

Ջորավար Զենկիսիս, անհույս գտնելով իր կացությունը, ուզում է հանձնվել՝ պարզելով սպիտակ դրոշակ: Գնդապետ Բամբաքաքիս սակայն, հակառակում է և առաջ անցնելով գրավում է Ջումա Օվասրի բարձունքները, ապահովում է անցքը և լռում են թրքական թնդանությունը:

Սեպտեմբերի 10-ին ճամփա ելնելով հասնում են Բազամիր¹⁰⁶, որին գտնում են պարպված: Ավելի առաջանալով, երբ

⁹⁸ *Մենդերես*, Մենդերես (թուրք.՝ Menderes/Cumaovasi)՝ բնակավայր Ջմյուռնիսում:

⁹⁹ *Նազիլի* (թուրք.՝ Nazilli), քաղաք Այդընի նահանգում: 1919-1922 թթ. եղել է հունական վերահսկողության ներքո:

¹⁰⁰ *Ճելլադ*, Զելլաթ (թուրք.՝ Cellât)՝ Այդըն-Ջմյուռնիս երկաթուղագիծը անցել է ճահճային այս լճի վրայով:

¹⁰¹ *Էոդեմիշ* (թուրք.՝ Ödemiş, հուն.՝ Οδεμύσιο), արվարձան Ջմյուռնիսում:

¹⁰² *Յոյուր Ալի Էֆե* (թուրք.՝ Yörük Ali Efe), քեմալական շարժման ակտիվ մասնակից:

¹⁰³ *Թորպալը* (թուրք.՝ Torbalı), բնակավայր Ջմյուռնիսի մերձակայքում:

¹⁰⁴ *Ճախճախուտք*, ճահճուտ, ճահճային:

¹⁰⁵ *Ջումա Օվասր* (թուրք.՝ Cumaovasi), Մենդերես (հողմ 97):

¹⁰⁶ *Բազամիր*, Գազիեմիր (թուրք.՝ Gaziemir)՝ բնակավայր Ջմյուռնիսի մերձակայքում:

հասնում են Պարադիսոյի¹⁰⁷ մոտերը, իրենց դեմ գտնում են թուրք զինվորը և սկսում է կռիվը: Չորքը երեքի բաժանելով, մի մասը դիրք է զբաղում Բուճայի¹⁰⁸ կողմը, մի մասը Սեյդիքեոյ¹⁰⁹, իսկ երրորդ մասն էլ սկսում է շարժվել ճակատից: Հունական հրետանին սկսում է ումբակոծել Գադիֆե գալեսին. երբ մի պահ վար է առնվում այդտեղ պարզված թրքական դրոշակը:

Թրքական ծանր հրետանին սակայն չի ուշանում ումբակոծել հույներին և Չորավար Զենկինիս և Բուճայի թևը հանձնվում է թրքական ուժերին: Իսկ Սեյդիքեոյ գնացող թևը քայլում է մինչև կես գիշեր և կանգ առնում որտեղ որ հասնում է, ցանկանալով հանգստանալ, նկատի առնելով, որ մի քանի օրից ի վեր անոթի և ծարավ մնացել էին:

Այս պահուն մի սուրհանդակ լուր է քերում և փոխգնդապետ Քաչիքաս բարձրանալով մի քարի վրա, կարդում է հասած լուրը. «Իզվիր գրավվել է Համաձայնական զորքերի կողմից, մասնավոր նավեր հասել են հունական զորքերի փոխադրելու համար Հունաստան, ով որ ցանկանում է հանձնվել, թող իջնե ցած»:

Եվ օրինակ լինելու համար, նախ ինքն է առաջ անցնում: Հոժարում են բոլորը և փոխանակ լեռ ու ձոր թափառելու և փափագելով Հունաստան փոխադրվել... վար են իջնում: Չորս հազարի մոտ զինվորներ և իրենց միացած սիվիլ երիտասարդություն փոխգնդապետ Քաչիքայի առաջնորդությամբ քայլում են, առանց հանդիպելու որևէ մարդու: Հետո իրենց դեմ գալիս է թրքական մի հեծելազորք: Պարզում են սպիտակ դրոշակ, առաջանում է թուրք ձիավորը, հասնում են ուրիշ երկու ձիավորներ, երկուք ևս, հետո իրենց քառասուն սայլերով միանում են Քաչիքասին և հայտնում, թե ոչինչ չկա

¹⁰⁷ Պարադիսո (թուրք.՝ Paradiso), թաղամաս Զմյուռնիայում:

¹⁰⁸ Բուջա (թուրք.՝ Buca), բնակավայր Զմյուռնիայի մերձակայքում:

¹⁰⁹ Սեյդիքեոյ (թուրք.՝ Seydiköy), Գազիեմիրի նախկին անվանումը:

վախենալու, թե Իզմիր անկախություն է հռչակել, խրախճանություններ են տեղի ունենում ևն, ևն:

Քաչիքաս և իր մարդիկը, զենքերը թողած, առաջնորդվում են քաղաք: Հազիվ քաղաքից ներս մտած՝ հարձակումն ու կողոպուտն սկսում է թրքերի կողմից: Ջոկում են սիվիլ ժողովուրդը զինվորներից և սպանում են: Մնացածները սեպտեմբերի 11-ին Իզմիրի Գըշլայից ներս են քշում, իսկ նրանց մեջ գտնվող հայերը ջոկելով, գիշերանց, ծովեզերքի վրա սպանում են բոլորն էլ: Թրքերը խաբել էին Քաչիքասին:

Ջենկինիսի ուժերի երրորդ թևը, գլխավորությամբ գնդապետ Բամբաքաքիսի, սակայն մերժում են հանձնվել: Կես գիշերից հետո առնում է իր զորքերը և շարունակելով իր ճամփան, հասնում է Ուրլա և նավ մտնելով ազատվում են:

ՀԱՅ ԵՄ...

Գաղիֆե գալեսիի ոմբակոծումին առթած¹¹⁰ ուրախությանը շուտով հաջորդեց սակայն հիասթափությունն ու հուսախաբությունը: Թրքական դրոշակը վերստին պարզվեց գազաթը և վերսկսվեցին զինարձակությունները և շարունակեցին նախկին սաստկությամբ: Կիրակին անցել էր այդ վիճակով: Երկուշաբթի լուսացող գիշերը սակայն, զինարձակությունները տարածվել էին նաև մեր շրջանակը: Մեր բնակարանին մոտակա Այ Նիկոլա եկեղեցին գավառներից ապաստանած հազարավոր փախստականների օգնության աղաղակները և արձակող զենքի ձայները բազմաթիվ անգամներ կրկնվել էին այդ գիշեր: Որոշ էր, թե թրքական կազմակերպված հարձակումները անցել էին թրքական և քրիստոնեական թաղերի բաժանման սահմանը նկատված Չայ փողոցից էլ ասդին:

¹¹⁰ Առթևել, առիթ տալ, պատճառել:



Թաղի բնակիչները քիչ քիչ դեպի ներսերը, դեպի քարափ և դեպի Բունթա փոխադրվում էին: Ոչ ոք կարող էր ճշգրիտ տեղեկություն տալ, թե ի՞նչ էր անցնում դառնում: Ո՞րն էր խելացությունը՝ տունը թողնել և փողոց հյնալ, դեպի քարափ գնալ, թե՞ ոչ, տան մեջ պահված մնալ: Ամեն պարագայի տակ, մեր տնեցիներն էլ սկսել էին վախենալ դրացիների խորհրդավոր երթևեկից և թաղի աստիճանական նոսրացումից:

Որոշեցինք, որ մենք էլ դեպի ներսերը, Բյու դը Ռոզից մի քիչ ավելի վար բնակող մեր մեկ բարեկամի տունը ապաստանենք: Սակայն չէինք իմանում թե տա՞նն էին, թե՞ ոչ, իրենք էլ մեկներ էին:

Երկուշաբթի առավոտ ժամը 10-ին հայրս ելավ տնից և գնաց իմանալու, թե կարելի լինելո՞ւ էր փոխադրվիլ մեր բարեկամի տանը: Անցել էր մի ժամ, ժամ ու կես և հայրիկը չէր վերադարձել: Գնալիք վայրը այդքան հեռու չէր, հետևաբար իր ուշանալը իրավամբ կասկածի էր ենթարկել մեզ բոլորս: Կարելի չէր բարի մեկնություն տալ այս ուշացումին: Ի՞նչ փորձանք էր պատահել, ինչպե՞ս իմանալ, ո՞րտեղից փնտրել:

Անցել էին երկու երկար ժամեր և չէր վերադարձել հայրիկը: Հանկարծ մեր հույն դրացուսին, մեր գոց փեղկերի տակից տարօրինակ մի հարցում էր անում.

– Տա՞նն է հայրիկը:

Ինչո՞ւ էր հարցնում: Եվ մեր հետաքրքրությունն ու կասկածը ավելի էր բազմապատկվում: Մեր պնդումների վրա, կնիկը ստիպված պատասխանում է և ասում, թե Էվանգելիստրա եկեղեցու ետին, Հաճի Ադամի վրա կուտ ծախող փռի անկյունը մեկին տեսել է, հայրիկիս նմանող և կասկածել է, թե միգուցե նա լինե՞ր:

Դռան արանքից այս լուրը ստացող քույրս, կրակի նման վազել հասել էր ասված վայրը և վերադարձել: Հազիվ տան

սանդղից վեր էր բարձրացել, ուժաթափ ընկել էր զգացած վախից, մորմոքից ու հուզմունքից:

Ավելորդ էր որևէ բացատրություն: Սպանվե՛լ էր հայրս:

Վտանգը իմաստ չունեի ինձ համար այլևս: Դուրս նետվեցի դռնից: Ես էլ պետք էի տեսնել հորս նշխարը¹¹¹: Տեսնելու, թե ո՞ր և ինչպե՞ս էր սպանված, հոգ չէ թե այդ ճամփու վրա ինձ էլ հասներ մահացու հարվածը:

Գնացի, տեսա, շոշափեցի իր անշնչացած մարմինը: Չախ կրծքի վրա հայտնի երևում էր փամփշտի բացած ծակը: Ընկած էր կռնակի վրա: Դեպքի վայրի աջ ու ձախ կողմի տնեցիները հետաքրքրությամբ և վախով դիտում էին հայրակորույս որդին, որ վտանգը արհամարհած եկել էր տեսնելու հայրը, վերջին անգամ լինելով, քանի որ ոչ կարելիություն և ոչ էլ հարմարություններ գոյություն ունեին վերցնելու դիակը, կամ տանել թաղելու:

Դրացիներին հարցրեցի, թե ինչպես էր պատահել սպանությունը: Պատասխանեցին, թե երեք զինյալ թրքեր դեմն էին ելեր և հարցրել էին.

– Դու ի՞նչ ես (այսինքն ի՞նչ ազգի ես պատկանում):

– Հայ եմ, եղած էր պատասխանը, որին հաջորդել էր թուրքի փամփուշտը:

Հայ լինելու վարձատրությունը փամփուշտն էր...:

ԴԵՊԻ ԶԱՐԱՓ

Չորեքշաբթի, 13 սեպտեմբերի, 1922 թ. կեսօրից հետո ժամը 1:30-ին սկսեցին ծովափ քուլաներ բարձրանալ Հայնոցի ծայրից: Մեր տան կտուրը ելած աչքով չափում էինք և ենթադրում էինք, թե Սողուք Չեշմեի¹¹² և Պրենտանի դիմացից է: Հազիվ մի ժամ էր անցել, հրդեհը արդեն ընդարձակ ծավալ էր ստացել

¹¹¹ *Նշխար*, անյուն, դիակ (փոխաբերական):

¹¹² *Սոսքեշմե* (թուրք.՝ Soğukçeşme), բնակավայր Ջմյունիայում:

և որոշ էր, թե մեկ տեղից միայն չէր: Թանձր մուխեր բարձրանում էին և էլմասայան փողոցի կողմից: Այդ բոլորի ընթացքին սակայն անվերջ ու անպակաս էին ուժանակի¹¹³ և ռումբի պայթյունների ձայները: Նույն պահուն, Քեմերի¹¹⁴ ճամփի վրայից էլ երևաց հրդեհի սկզբնավորություն, իսկ զենքի ձայները դուր ու դադար չունեին:

Տներում մնացած ժողովուրդը սարսափի մատնված. վախենալով ողջ ողջ այրելուց, սկսել էր մեկիկ մեկիկ հեռանալ դեպի Քարափ¹¹⁵, և թաղերը հետզհետե ամայանում էին: Այդ պայմանների տակ, որոշեցինք մենք էլ դուրս գալ և գնալ ուր որ առաջնորդեր մեզ կացությունը, քանի որ կրակը մեզ էլ հասնելու վախն ունեինք:

Մայրս երկու տարի է անկողինն էր. կարողություն չունեի քալելու: Սա պատճառ էր եղել, որ քաղաք մնայինք և չկարողանայինք հեռանալ թրքերի մուտքից առաջ: Սակայն ճար չկար, պետք էինք դուրս գալ տնից և գնալ այնքան տեղ, որքան որ կարող կլինեինք տանել մայրիկը:

Երեկոյան ժամը 6-ին, հագիվ մութը կոխած, տնից դուրս ելանք: Ոչինչ չէինք վերցրած մեզ հետ, բացի ուտելիքի և մանր մունր զգեստեղենի փոքր ծրարից, թողնելով ամեն ինչ:

Հազարավոր մարդիկ՝ ամեն սեռի և հասակի, շտապում էին դեպի Բունթայի կողմը: Այնքան մեծ էր սարսափը, որ ճամփան լեղապատառ մեռնողներ անպակաս էին: Իսկ ես և քույրս, մայրիկի երկու թևերը մտած. քայլում էինք, հոսանքից տարված, երբ տեսանք, որ հասել ենք Այա Տրիֆոնայի¹¹⁶ ճամփան, ուր հասել էր հրդեհի մի ծայրը: Չափազանց հոգնած էինք, մայրիկը կրելով մեր ուսերի վրա: Այդտեղ, մի անկյու-

¹¹³ *Ուժանակ*, նիտրոզլիցերինով պատրաստվող պայթուցիկ նյութ. դիմամիտ:

¹¹⁴ *Քեմեր* (թուրք.՝ Kemer/Kervan), կամուրջ Զմյուռնիայում:

¹¹⁵ *Քարափ*, թաղամաս Զմյուռնիայում:

¹¹⁶ *Այա Տրիֆոնա* (հուն.՝ Αγία Τριφώνας), հունական եկեղեցի Զմյուռնիայում:

Նում նստեցրեցի մայրս, քույրս, մեզ ընկերացող մի այրի կին և իր չորս երեխաները, իսկ ես փութացի իմանալու, թե մոտակա մի տուն բնակող մեր բարեկամը այդտե՞ղ է, կարո՞ղ ենք իրենց մոտ փոխադրվել: Պատահմամբ անցնող մի ինքնաշարժի ետևից կախված հասա մինչև հունաց աղջկանց վարժարանը: Հասնելով բարեկամիս տունը, երբ դուռն էի բախում, դրացիներ իմաց տվին, թե մեկներ են և ներսը մարդ չկա: Իսկույն վերադառնալով գտա մերոնց: Դարձյալ ճամփա ելանք և շարունակելով մեր մոլորումը, հասանք ֆրանսական հյուպատոսարանին առաջ: Խառնվեցինք բազմության մեջ և նստեցինք, միշտ զգուշանալով աչքի ընկնելուց:

Չափազանց ծարավել էինք, մանավանդ մայրս, մարելու աստիճանին էր հասել: Ո՛չ ջուր կար և ո՛չ էլ աման, որ կարողանայինք մի որևէ տեղից ջուր ճարել: Հանկարծ մեկի ձեռքը տեսա մի կուժ: Խնդրեցի, աղաչեցի, որ տանեմ կուժը ջուր բերեմ, կեսն էլ իրեն կտամ: Մոտը գտնվող մի ծանոթի տանը դուռը բախեցի: Բարեբախտաբար, ներսը մարդ կար, սակայն վախենում էին դուռը բանալ: Հայտնեցի ինքնությունս, մտա, լցրեցի կուժը, ես էլ խմեցի կուշտ ու կոտ և վերադարձա:

Ապաստանած փողոցնիս չափազանց նեղ էր և անհանգիստ էինք լինում, բայց մանավանդ անցնող դարձող թուրք սիվիլ կամ զինվորներից ձերբակալվելու վախը մեզ տանջում էր: Ուստի անցանք Քարափի կողմը և խառնվեցինք «Թեաթրը դը Սմիրնի»¹⁷ առաջ գյուղերից փախստական և իրենց սայլերովն ու կառքերովը հավաքված մարդկանց մեջ, ջանալով ինքզինքնիս թաքցնել նրանց սուվերի տակ: Ապահով չէր սակայն մեր տեղը: Հրդեհը քանի գնար մոտենում էր և ժողովուրդն էլ մեկ դեպի վեր, մեկ դեպի վար քշվում էր, ահաբեկված ոչխարի հոտի նման: Վախն ունեինք ձերբակալվելու վայրկենից վայրկյան, քանի որ քիչ անդին Բաքրջանենց բնակարանը թրքական զինվորական կենտրոն էր եղել, հետևա-

¹⁷ Թեաթրը դը Սմիրնի (ֆրանս.՝ Théâtre de Smyrne), Ջնյուտնիայի թատրոնը:

բար անպակաս էին երթնեկող գինվորականներ թե սիվիլ մարդիկ:

Ետննիս՝ կրակ, առջննիս՝ ծով, աջից ու ձախից՝ սուր և հրացան, իսկ ծարավն ու անոթությունը կարծես ավելի սպառնական էին դարձել: Ժողովուրդը քանի գնում խոնկում էր Բունթայի բաղնիքների կողմը և ճամփան անանցանելի էր դառնում: Այստեղ մեզ միացել էին երկու որբևայրիիներ ևս, դարձել էինք անօգնական կանանց և երեխաների մի խումբ, որի մեջ միակ տղամարդը ես էի: Աղետը դառնում էր սպառնական, իսկ մենք չունեինք ապաստանելու տեղ:

Այդ պահուն հիշեցի Սուր Թագվորյանի բնակարանը, Արամ Համբարձումյանի նախկին տունը: Մեզ բարեկամ Յուզուբճյան ընտանիքն էր բնակում այդտեղ: Ուստի, հետս գտնվող, այժմ տասը հոգինոց խումբը, իբր ապահով վայր, թողնելով սպանական հյուպատոսարանին առաջ, շրապեցի հիշյալ տունը, որպեսզի, եթե կարելի է, այդտեղ ապաստանենք: Երբ դուրը բախեցի, ներկայացավ օրիորդ Զապել Յուզուբճյան: Ինձ որ տեսավ, այլալվեց, ներս առավ, կոնյակ տվեց, որ խմեմ: Պատմեցի մեր գլխին եկածները և ներկայացրի մեր խնդրանքը: Սիրով ընդունեց, ուստի իսկույն դարձա, գտա մերոնցը ու 13 սեպտեմբերի չորեքշաբթի գիշեր, ժամը 9-ի մոտերքը ապաստանեցինք Սուր Թագվորյանի Քարափի վրայի բնակարանը:

ԿՐԱԿՆ ՈՒ ՔԱՆԴՈՒՄԸ

Իզմիրի, մասնավորաբար հայոց թաղի թալանումից հետո, չորեքշաբթի, 13 սեպտեմբերի, առավոտյան ժամը 9-ին թուրքերը դրել էին կրակը: Այդ առտու, Բասմախանեի ճամփու վրա, Պրենտանի սրճարանին մոտ Գասպարյանենց տան կողպուտից ելնող թուրքեր իրարու ասում էին. «Է՛լ պարպվեց տունը, քիչ հետո կգանք կտանք կրակի»: Տան մեջ, անգուտ-

նելի մի տեղ պահված տնեցիներ լսելով այս խոսակցությունը, առաջին առթիվ դուրս կգան: Եվ իրավ էլ, այդ օր կրակի կտան այդ տունը:

Կրակը միայն մի տեղից չէր ձգվել: Կրակ դրվել էր լուսանկարիչ Միհրանի տնից, Պրենտանի դիմացի փողոցը՝ բժիշկ Գալթաբճյանի տան կից շենքից և տակավին ուրիշ տեղերից: Թրքերը չափազանց վարպետ էին հրձգության մեջ: Այս մասին բավական է Իգմիրի հրշեջների խմբից հույն Զորբայի ասածները իմանալ, համոզվելու համար այդ մասին. «Երբ պատրաստվում էինք Էլմասյան փողոցի և այլ տեղերի հրդեհները մարելու, մեզ արգելում էին գնալով: Ջրի խողովակները հաճախ ջարդվում էին թրքերի կողմից, այնպես որ արգելքի էլ չի հանդիպեինք, անկարելի է լինում հանգցնել կրակը: Ջարմանում էինք, թե ինչպե՞ս մի վայրկենից մյուսը կրակը տարածվում էր, բոլորովին անջատ մի շենքին ամբողջ մասերի վրա: Մի թուրք գինվոր մտնում էր որևէ տուն, բաց էր անում մի փոքր տփի կափարիչը, տփի բովանդակած փոշի փչում էր տան մեջ, վառված մի մում էր թողնում և դուրս էր գալիս: Հազիվ մի բուպե հետո տան ամեն կողմերից հանկարծական ահագին ճայթյունով դուրս էին երկարում բոցի թևեր և զարմանում էինք, թե ինչպես կարող էր լինում, որ շենքը բռնկվում էր ամեն կողմից, միանգամից: Իսկ ուրիշ շատ տեղեր ձեռնաջրհաններով բենզին էին սրսկում և կրակ էին զցում»:

Շատ անգամներ կրակը զցում էին գիշերանց և ցերեկն էլ փորձ էին անում հանգցնելու: Փախստական ժողովուրդը բռնի տանում էին ջուր կրելու և ջրհաններ բանեցնելու, իբր թե կրակը հանգցնելու համար, իսկ հաջորդ գիշերը բենզին էին սրսկում և նորից հրդեհ էին ստեղծում: Զարափի վրա, օտար նավերի և օտարականների դիմաց, իբր թե հրդեհը մարելու աշխատող էին ներկայացնում ինքզինքնին, իսկ ներքին թաղերի մեջ անզուսպորեն կրակ էին առաջացնում, ջրհանների մեջ նավթ լցրած:

Սեպտեմբերի 25, երկուշաբթի գիշեր, ձերբակալված գտնվում էի Պասապորտի¹¹⁸ դիմաց գտնվող Լիման գարագուլը¹¹⁹ (նստիկանական պահականոց): Երեկոյան ժամը 9-ի ժամանակները լավեց ահավոր մի պայթյուն և զորավոր ցնցում: Պահակ ոստիկանը ներսից գոչեց, ակռաները կրճտելով. «Գիթտի՛ Այ ֆոթինինին գամփանասար...» (գնա՛ց Այ Ֆոթիննա գանգակատունը)¹²⁰: Քանդում էին Այ ֆոթինի եկեղեցու գանգակի աշտարակը: Որոշ է, որ կանուխից սեղանի էին, թե այդ գիշեր քանդվելու էր այդ գանգակատունը:

Չափազանց ակներև էր այն ծրագիրը, որի համաձայն այրում ու քանդում էին այն շենքերն ու տեղերը, որոնք որոշել էին, իսկ իրենց համար անհրաժեշտ կամ օգտակար դառնալիք շենքերը ողջ էին թողնում: Իսկ այրել որոշածներն էլ կրկին ... էին ենթարկվում, օրինակ Այ Քաթերինի եկեղեցուն միայն երեք անգամ կրակ էին դրել և նույն գործելակերպն էր ամեն տեղ.

Էլ երևակայել, որ Բուլլըվարից մինչև Բելլա Վհստա, Բասմախանեից մինչև Բունթայի ռեժի գործարանները ողջ տուն գրեթե չէր մնացել: Եվ այդ բոլորը հրո ճարակ էին դառնում երկու օրվա մեջ, այնպես որ կարելի էր հետևեցնել, թե ինչքա՛ն կազմակերպված աշխատանք էին տարել թրքերը այրելու և քանդելու համար: Հրդեհին առընթեր շարունակվում էր և քանդելու գործողությունը: Ռումբի, ուժանակի պայթյուններն անդադրում էին:

Իբրև գերիններ, 1923-ի հունիսին մեզ տարին Իզմիրի Չալկըճը պաշի¹²¹ փողոցը մաքրելու և մենք տեսանք, թե քանդված

¹¹⁸ Պասապորտ (թուրք.՝ pasaport). անցագրատուն:

¹¹⁹ Լիման գարագուլ (թուրք.՝ Liman karakol). նստիկանական բաժանմունք. գինված պահակախումբ:

¹²⁰ Գիթտի՛ Այ ֆոթինինին գամփանասար (թուրք.՝ Gitti Aya Fotininin kampanyasına). գնաց (պայթեց) Սր ֆոթինի գանգակատունը:

¹²¹ Չալկըճը պաշ (թուրք.՝ Çalgıcı başı): Այսպես էր կոչվում այն փողոցը, որտեղ հայտնի բժիշկ Կարապետ Խաչերյանի քնտանիքը բնակվում էր մինչև

շենքերի ամբողջը կրակի հետևանքով չէին, այլ ուժանակի: Այդտեղ – Չակլըճը բաշի – Ռեշիդքեյի¹²² մուտքի փուռի շրջանում, Ադթավուրյան փողոցի շրջակայքը մենք գտանք ուժանակի թիթեղյա տուփեր, նույնիսկ այնպիսիներ՝ որոնց մեջ տակավին մնում էր խմորը:

Կրակն ու քանդումը անհրաժեշտություններ էին թրքերի համար: Միայն այս միջոցով խորհում էին կորսնցնել հետքը՝ սպանվածների և կողոպտվածների, ավարի և թալանի: Նախքան կրակ դրվելը, կատարված էր ավարառությունը: Գոց ինքնաշարժերով, սեպտեմբերի 9-ից մինչև 13-ը, գիշեր ցերեկ փոխադրել էին Հայնոցի տների, Ֆրանկաց թաղի, Այ Յորկիի և ուրիշ շրջանների վաճառատների ապրանքները, նույնիսկ Գըլլա արգելավիակված քրիստոնյա գերիներ տարել գործածել էին բեռնավորման և փոխադրման աշխատանքների համար:

Թրքերը մի ուրիշ ակնկալություն ևս ունեին հրդեհից: Ձանազան տներ և հաստատություններ ապաստանած բազմահազարյա քրիստոնեությունը այդ կերպով ստիպված լինելու էին դուրս գալու, երբ թրքերի համար հեշտանալու էր անհատների կողոպուտը, ձերբակալությունն ու առևանգումը: Թրքերը վստահ էին, որ փախստական, տնից տեղից դուրս եկած քրիստոնյա ժողովուրդը իր հետ անպայման ունենալու էր հնչուն և շոշափելի հարստություն: Հետևաբար ամենապարզ միջոցն էր կրակը՝ այդ բոլորին կարենալ տիրանալու համար:

Հրդեհի հրամանը նույնիսկ ինքը՝ Նուրեդդին փաշան էր տվել, մասնավորաբար Հայնոցի համար: Սրանով չսահմանափակվեց սակայն: Կրակը տարածեց իր թևերը և հրո ճարակ դարձավ քաղաքին փառքն ու պարծանքը եղած մասը:

բնակական բանակի մուտքը Ջմյունիա: Այն գտնվում էր հայկական Հայնոցից հյուսիս-արևելք: Տե՛ս Դորա Սաբալյան, *Ջմյունիա 1922. բժիշկ Կարսական Խաչերյանի օրագիրը* (Երևան, Նահապետ, 2005), 135:

¹²² *Րեշիդքեյ* (թուրք.՝ Resid Köy), բնակավայր Ջմյունիայի մերձակայքում:

Թրքերը սակայն, պետք ունեին քավոյթյան նոխագի: Հարկավոր էր հանցանքը թողնել ուրիշի վրա: Եվ ո՞վ կարող էր լինել այդ, բացի հայից: Ուստի, թուրք թերթերը հրդեհի իբր դրդիչ ու կազմակերպիչ ներկայացնում էին Թովմաս Բոյաջյանն ու Հակոբ Տերենցը: Ձերբակալման հրամանը տրվել էր այս երկու ազգայինների համար: Սրա նպատակն էր նաև սրել թուրք ժողովրդի հակահայ և ջարդարարական ավտորիտետը, արթնցնելու վրեժխնդրական զգացումները: Ավելորդ է սակայն շեշտել, թե կրակը դրված էր թրքերի կողմից, վերևից տրված հրահանգի համաձայն, ինչ որ իրենք էլ խոստովանել էին: Այս կապակցությամբ մենք առիթը ունենալու ենք անդրադառնալու:

«Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ»

Նոր մտել էինք Սուր Թագվորյանի տունը, դրսից մեզնից ուրիշ մարդ չկար, մինչև հաջորդ առավոտ սակայն, արդեն հասել էինք հիսուն անձի: Ով որ բախել էր դուռը, չէր մերժվել և ներս էր առնվել: Բնակարանը դարձել էր ապաստանարան¹²³ և սրա համար էլ կոչվել էր «Ս. Կարապետի վանք»: Սուր Թագվորյանի Եվրոպա մեկնումովը, բնակարանը հանձնվել էր Յուզուբճյան ընտանիքին: Իսկ այժմ կառավարողն ու տնօրինողը օր. Զապել Յուզուբճյանն էր: Դժվար էր բառերով գովքը անել այս գթասիրտ ու գոհաբերվող աղջկան, որին իրավամբ էլ կոչել էին «վանամայր»:

Դուրսը, քարափի վրա խռնված հազարավոր ծարավի ժողովրդին անընդհատ ջուր էր հասցնում դուլլերով, իսկ բնակարանից ներս առանց ուտելիքի և առանց զգեստեղենի ապաստանածների՝ օժանդակում էր այն ամեն ինչով, որ կարելի էր լինում գտնել տան մեջ: Աներկյմտորեն տրամադրված

¹²³ *Ապաստանարան*, ապաստանելու՝ ամրանալու տեղ, ապաստան:

էր տան մառանը: Ամեն օր պատրաստվում էր կերակուր և բաժնվում էր հասարակաց, մասնավոր խնամք տանելով երախայով մայրերին:

Այսքան գթասրտություն և օգնություն սակայն չարաչար գործածվեց ոմանց կողմից: Այդ ամբողջ բարիքները վայելելուց և ապաստան գտնելուց հակառակ, գտնվեցին մարդիկ, որ սկսեցին կողոպտել տունը: Գողացան արծաթ կամ ոսկի իրեղեններ... հոգ չէ թե կարճ ժամանակից հետո իրենք էլ կողոպտվելու էին թրքերի կողմից, վրա տալով նաև իրենց ունեցածը:

Այժմ 150 հոգի եղել էինք տան մեջ: Շենքի բոլոր հարկերի սենյակները լեցվել էին ժողովրդով: Անհրաժեշտ էր հսկել կարգապահության, քանի որ հայու բնակարան էր և միշտ էլ հակամետ էր թրքերի հարձակման ենթարկվելու: Մեր մեջ գտնվում էին սկաուտ մեստրը Րաֆֆին և Նելշեհրյան եղբայրներ, որոնք պրոտեժի ֆրանսե (ֆրանսիական պաշտպանյալներ) էին, հետևաբար օտարահպատակի անձեռնմխելիության իրավունք ունեին: Այդ իսկ պատճառով հնարավոր եղավ տան վրա պարզել ֆրանսիական դրոշակ և խորհում եմ, որ ունեցած էր և բարեբար արդյունքները, քանի որ մինչև 19 սեպտեմբերի երեքշաբթի օր, մոտ մի շաբաթ ոչ մի հարձակումի չենթարկվեցինք և ոչ մի թուրք եկավ դուռը զարնելու:

Անելիք երկրորդ կարգադրությունը տան զանազան կողմերը հերթապահներ՝ պահակներ դնելու անհրաժեշտությունն էր: Առաջին առթիվ պահակ էր հարկավոր տան մուտքի դռան ետև, որպեսզի անխոհեմորեն մտնող ելնողներ արգիլեր մարդկանց, որոնք ազգական-պարագա փնտրելու համար հաճախակի էլք ու մուտք էին անում, վտանգելով ներսը ապաստանած բազմությունը: Մյուս կողմից հրդեհը քանի գնում մոտենում էր և վախենում էինք, մի գուցե մի քանի ժամ վերջ դուրս թափվել պարտավորվել կրակից ազատվելու համար, նույն ատեն... սրի սպառնալիքին ենթարկվելու անշուշտ:

Մի երկրորդ պահակ էլ հարկավոր էր դնել կտուրը, որ-պեսզի հետևեր հրդեհին, դիտեր հողմացույցը, չափեր հեռավորությունը, երբ վարը ժողովուրդը ժամից ժամ սրտատրոփ սպասում էր ահազանգի: Որովհետև քամու ուղղությունը մեծ նշանակություն ուներ:

Հրդեհը մի պահ սաստկանում էր, սրընթաց հառաջանում էր ահռելի ճարճատյուններով, երբ քամին փչում էր դեպի քարափ, մեր մեջ տկարացնելով փրկության հույսը: Իսկ երբ քիչ հետո սկսում էր փչել հակառակ ուղղությամբ և բոցերը հեռանում էին մեր շենքից, ուրախություն էր պատում սրտերին:

Պահակներ ունեինք նույնպես պատշգամբից Քարափ դիտելու և տան զանազան մասերը հսկելու համար: Լռության հոգ տանող շրջուն պահակների մեջ մեծ դեր ունեցան Սմբատ և Վահան Տերտեղյան եղբայրներ (առաջինը 14 ամիս գերի մնալուց հետո Մադնիսա, ողջամբ վերադարձած, իսկ երկրորդը գերության մեջ սպանված): Եվ խորհել, որ ի՞նչ անգնահատելի ծառայություն մատույց այս պահակային դրությունը, այդքան անակնկալների ընթացքում, որոնց ենթարկվել էինք այդ մի շաբաթվա մեջ: Կրակ առել էր տան կից դրացու ծխնելույզը, լուր էր տվել պահակը: Կարելի չէր եղած ճշտել, թե տեղակա՞ն հանգամանք ուներ, թե՞ ոչ, թրքերի կողմից էր դրվել կրակը:

Ի վերջո ստուգվեց, թե ուղղակի ճաշի պատրաստության ժամանակ էր պատահել, ինչ որ իսկույն հանգեցրին մեզանից դրկված 4-5 հոգին:

[Բացակայում է ձեռագրի 75-րդ էջը՝ Թ.Մ.]:

... Քարափ մոտեցել է ֆրանսիական շոգեմակույկը, միջից կանչում են. «նախ ֆրանսիացիներ, հետո պաշտպանյալներ»: Սրանք այն ֆրանսիացիներն են, որոնք ցանկանում էին թրքերի վերադարձը Միլլի բանակի հառաջխաղացումներովը ամենից ավելի ուրախացողները, տեսան, զգացին և ըմբռնեցին սակայն այդ լանտենները փորձեցին և ապահովվեցին, թե թուրքը ջարդել և քանդել գիտեր միայն: Ո՛ւշ էր սակայն:

Համեմատաբար ամերիկյան նավեր և ամերիկյան բարեգործական ընկերություններ օգնության էին հասել անշուշտ քաղաքական նպատակով և անպակաս եղան ժողովրդի տառապանքը շահագործողներ, խեղճություններով հրճվողներ, մահվան պայքարը մղող հալածականներին խնդացողներ և քեմալական գործիչներ:

Սրանցից մեկն էր Իզմիրի ամերիկյան Ե.Ք. ընկերության (Y.M.C.A.)¹²⁴ ընդհանուր քարտուղար ճեյքըպ¹²⁵: Ծննդով հրեա, Գերմանիա ծնած, Ամերիկա մեծացած, անունով քրիստոնյա և քրիստոնեական մի կազմակերպության պաշտոնյա: Թրքասեր էր սակայն: Օրինակ՝ իր վերջին դասախոսությունը Իզմիրում: Կարծես թուրք ազիտատոր լինելը, Իզմիրի՝ թրքերի կողմից գրավումից մոտ երեք ամիս առաջ, սարքեց մի շարք վիճաբանական ժողովներ, ուր ի միջի այլոց, խնդրո առարկա էր դարձել պատերազմը, որ պե՞տք են շարունակվել հեղեմա-թուրք կռիվները:

Ե.Ք. ընկերության անդամ էր և Իզմիրի թուրք բժիշկներից Նազըմի որդին, որ Պարադիսոյի (Իզմիր) ամերիկյան քոլեջից էր շրջանավարտ: Թունդ քեմալական այս երիտասարդը ճեյքըպի սիռականն էր, որովհետև իբրև անզերեն իմացող,

¹²⁴ YMCA (Young Men's Christian Association), Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցություն: Հիմնադրել է Ջորջ Ռիվյամսը 1844 թ. հունիսի 6-ին Լոնդոնում: Օսմանյան կայսրություն է ներթափանցել միսիոներական կառույցների, առաջին հերթին եվրոպացիների և ամերիկացիների հիմնած քրիստոնեական քոլեջների միջոցով, որտեղ սովորելու մեծ ձգտում ունեին հատկապես հայ երիտասարդները (Ռոբերտ քոլեջը՝ Կ.Պոլսում (1863), Անատոլիա քոլեջը՝ Մարզվանում (1886-1924), Սբ Պողոսի քոլեջը՝ Տարսուսում (1888, 1930-ից՝ Տարսուսի ամերիկյան քոլեջ), Միջագային քոլեջը՝ Զմյուռնիայում (1891-1922)): Բոլեջների շրջանավարտների միջոցով էլ գործունեության շրջանակն ընդլայնվում է՝ հասնելով Կիլիկիա և Արևմտյան Հայաստան: 1923 թվականից դադարելով շոշափելի առնչություն ունենալ հայերի հետ՝ Թուրքիայում կորցնում է իր անդամության հենքը: Տե՛ս <https://www.ymca.int/about-us/ymca-history/>, դիտվել է՝ 11.06.2022:

¹²⁵ *Ճեյքըպ* (Ernst Otto Jacob), Էռնսթ Օտտո Ջեյքըբ (1886-1966)՝ Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցության քարտուղար:

ամերիկացիների մեջ քեմալական պրոպագանդիստ էր դարձել: Նույնն էր և նրա քույրը, Իզմիրի ամերիկյան աղջկանց վարժարանից շրջանավարտ, մի աշխարհիկ աղջիկ, անդամ Y.M.C.A.-ի մեծ ծառայություն մատույց քեմալականներին, թրքասեր մի հոսանք ստեղծելով ամերիկուհիների մեջ: Քանի քանի անգամներ թեյասեղան էր սարքել իրենց տանը՝ ի պատիվ ամերիկուհիների:

Իզմիրի գրավման հաջորդ օրն իսկ դուկտ. Նազրմի որդին Իզմիրի ամերիկյան հյուպատոսարանի թարգման և գործակալ էր նշանակվել ճեյքրայի հանձնարարությամբ: Իսկ իրեն ենթակա հայ և հույն պաշտոնյաներ, որոնք դիմել և խնդրել էին ճեյքրայից, որ մի կերպ ազատե իրենց ամերիկյան նավեր փոխադրելով, պատասխաններ էր. «Դուք պատվավոր քաղաքացիներ չեք, ի՞նչ եք կեցեք, գնացեք հանձնվեցեք թուրք կառավարության»: Սրանից ավելի խոսուն փաստ հարկավոր է ամերիկացի անունին տակ գործող այս իսկական թրքի դեմքը պարզելու: Երկար են մարդ ազատելու համար իր կատարած սակարկություններն ու շահադիտությունները, հոգ չէ, թե ինքն էլ մի անձանոթ թրքի կողմից կողոպտվելու էր, մի առանձին անկյունում...

[Բացակայում են ձեռագրի 78-80-րդ էջերը՝ Թ.Մ.]:

«ՎԱՆՔ»-ԻՆ ԳՐԱՎՈՒՄԸ

Սեպտեմբերի 18 երկուշաբթի առավոտ «Վանք»-ին դուռը խփեցին: Բացվեց դուռը և ներս մտան երկու հոգի: Օտարերկրյա մի հյուպատոս և իր թարգմանն էին: Հետաքրքրական լինելով հանդերձ չէր դադարում կասկածելի լինելուց այս այցելությունը: Հյուպատոսի առաջին խոսքն էր եղել. «Այս սուրը հայու է պատկանում, ուստի գրավման է ենթարկվել. քան և չորս ժամվա ընթացքում ոչ ոք մնալու է ներսը և պետք է որ հանձնվի կատարյալ և անպակաս. կահ կարասիներից որևէ պակաս հատուցելու եք ձեր գլխովը»:

Եվ այս խոստով եվրոպական մի պետության՝ եվրոպացի, քրիստոնյա... հյուպատոսն էր:

Կողոպուտ, ավազակություն, օրը ցերեկով և առանց քաշվելու: Ահա քրիստոնեություն, ահա հառաջդիմություն, ահա և եվրոպական քաղաքակրթությունը: Զորությունն է արդարությունը, քրիստոնեությունը սիրամարզի փետուրներն են՝ տգեղություններ ու կեղտոտությունները, սադայելություններն¹²⁶ ու ճիվաղությունները ծածկելու համար: Իսկ հառաջդիմությունը՝ մարդասպանության մեջ, քաղաքակրթությունը՝ կեղծավորության և խաբեության մեջ է միայն:

Շենքին պարպվելու բոթը ահավոր ազդեցություն էր ունեցել մտքերի վրա: Ուր կարող էին ապաստանել միայն մոտ 100 տղամարդիկ:

Հազիվ դռնից դուրս եկած, ունեին ձերբակալվելու վախը: Սակայն չկար այլ միջոց: Կրիտիկական էր պահը: Տարբեր միջոց չկար. ամեն մարդ պարտավորված էր դուրս գալ և գնալ այն ճամփից, որին առաջնորդելու էր բախտը:

Երեքշաբթի, 19 սեպտեմբեր, երեկոյան արդեն պարպվել էր «վանք»-ը: Ամեն մարդ գնացել էր այնտեղ, որտեղ հարմար էր դատել և կամ այն ուղղությամբ, ուր նվազ վտանգ էր տեսել: Ումանք, ինչպես՝ Միքայել Ճևահիրյան, Արթաթի Աշճյան և մի շարք ուրիշներ, մի կերպ դրսից ձեռք էին ձգել ֆեսեր և հագնելով դուրս էին եկել, այս ձևով թաքցնելու համար ինքնություննին: Իսկ մենք էլ ապաստանել էինք Սուր Թագվորյանի տան կոնակի՝ Արամ Համբարձումյանի եղբորը տունը: Այս շենքը ամերիկացիների տրամադրությամբ ներքև էր գտնվում, ուր մեծ մասամբ կանայք և երեխաներ էին հավաքված շոգենավ փոխադրվելու նպատակով: Շենքի վարիչն էր ճենինգս¹²⁷

¹²⁶ *Սադայել*, սառամնապապետ, դիվապետ:

¹²⁷ *Ասա Բենթ Ջենինգս* (Asa Kent Jennings), Նյու Յորք նահանգի Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցության Զմյուռնիայի մասնաճյուղ ուղարկված հոգևորական: Նրա ջանքերի շնորհիվ հազարավոր

անուն ամերիկացին և նրա թույլտվությամբ մենք էլ կարողացանք ապաստանել այդտեղ:

Հազիվ անցել էր մի ժամ, հանկարծ մեր տան շուրջ բոլորը մինչև Քարապի և «վանքն» էլ միասին ենթարկվել էին պաշարումի: Էլ չունեինք ոչ մի հույս և յուրաքանչյուր ընկերս սպասում էինք ձերբակալման: Սակայն անհասկանալի մի պարագա եթե կար, այդ էլ «վանքի» պաշարումն էր, քանի որ գիտեինք, թե այդտեղ մարդ չէր մնացել, բոլորը դուրս էին եկել, բացի օրիորդ Զապել Յուզուբճյանից: Ասում էին, թե մի քանի թուրք խանումներ մտել էին «վանք»-ը և պտտել էին շենքին ամեն կողմը, տանիքն ու պատշգամբները: Կասկածում էինք, թե գուցե բարձրից դիտել էին ուզում մեր գտնված տեղը և ուտիկանության տեղեկացնելու:

Ամեն պարագայի տակ մեզ վտանգված էինք զգում:

Անցել էր մի ժամ, ժամ ու կես, բայց որևէ մեկը չէր եկել մեր գտնված բնակարանը խուզարկելու կամ որևէ մեկը ձերբակալելու և հետաքրքրականը՝ վերցրել էին զինվորական պաշարումը: Ի՞նչ էր եղելությունը սակայն: Իմացանք, որ հիշյալ ֆեասակիր ազգայինները «վանքից» դուրս էին եկել, վերադարձել և մի քիչ հետո էլ կրկին մեկնել: Սրանց հետապնդող թուրք գաղտնի ոստիկանը միայն «վանք»-ից ներս մտնելին էր տեսեր, իսկ դուրս գնալին՝ ոչ: Հետևաբար, տունը պաշարելով ձերբակալել է ուզեր: Խուզարկությունը ապարդյուն է դուրս եկել. նեղ դրության է մատնվել օրիորդ Զապել Յուզուբճյան: Ստիպել են, որ հանձնել այդ մարդիկը, որոնցից որևէ տեղեկություն չունեիր իրականության մեջ: Չափազանց դժվարությամբ կարելի կլինի համո-

ղնտանիքներ, որոնց մեջ էին նաև Խաչերյանները, շոգենավ են նստել ու փրկվել: Զենինգսը YMCA-ի վերջին ներկայացուցիչն է եղել, որը 1922 թ. սեպտեմբերի 24-ին Զմիտնիայից ամերիկյան ռազմաճակատի և պաշտպանության ներքո 20 հունական փոխադրանավով 15 000 կին, երեխա և տարեց է ապահով փոխադրել Միտլիինի: Տե՛ս Marjorie Housepian Dobkin, *Smyrna 1922, the Destruction of a City* (New York, Newmark, 1998), 190-197:

զել, թե տրված հրամանին համաձայն, տունը դատարկվել է և ոչ ոք կար ներսը:

Թուրքերը սակայն, մի այլ նպատակ են ունեցել այդ պաշարումով և խուզարկությունով: Ուզել էին շենքը գրավել և Կարմիր մահիկի հիվանդանոցի վերածել, երբ արդեն հիշյալ եվրոպական պետության հյուպատոսը գրավման էր ենթարկել, ավելի ճարպիկ գտնվելով: Երևի թրքերը խուզարկելու պատրվակին տակ ուզում էին ներս մտնել և գրավել շենքը:

Ամեն պարագայի տակ, այս երկու զավթիչներից ո՞ր մեկի ձեռքն անցավ շենքը, չգիտենք:

ՈՐԲԵՐՆ ՈՒ ՈՐԲՈՒՀԻՆԵՐԸ

Իզմիրի աղետին պատմությունը հայ իրականության մեջ միշտ զայրույթով ու զգվանքով հիշելու է աղջկանց և մանչերի որբանոցների պատասխանատու անձերի անունները: Հավատացած ենք, որ սպանված որբերի, առևանգված որբուհիների վերջին հառաչանքն ու ողբը ցմահ այդ անձերի ականջներում գուժկան ձայնով և գիշեր թե ցերեկ, հնչելու է և ցցվելու են իրենց անմեղ ու զլխիկոր պատկերները՝ արտասովոր աչքերով և աղաչողական շրթներով: Անսպասի և տարագրության գրկումներն ու արհավիրքն իրենց մորթին վրա կրած այդ ծնողագուրկներ, Տերզորի և Եփրատի սպանդանոցներից ողջ մնացած, այստեղ, ունենալով հանդերձ ազատվելու միջոցը, հանձնվեցին մահվան դաժան ժանիքներին, իրենց բարոյական հայրերի ձեռքովը:

Աղջկանց որբանոցի ո՛չ տեսչուհին և ո՛չ էլ շենք շնորհք որևէ հոգացող կար որբուհիների զլուխը: Սեպտեմբերի 14-ին Պասապորտի առջևից մակուկով նավ էին փոխադրվել տասնվեց հոգի, իսկ մնացածները երկու օր, քամուց տարուբեր շյուղերի նման քարափի վրա թափառելուց հետո, անոթի

ու ծարավ, ո՛վ է իմանում իրենց բուն թվից ինչքանը պակասած, ոչխարների նման իրար մոտ ծվարած, եկել ապաստանել էին Գույումճյան տան պատշգամբին տակ: Գիշակեր անասուններից պաշարված հոտի նման, կոնակնին դարձրած, իրենց պաշտպանել էին աշխատում թուրք առևանգիչների դեմ:

Գիշերվա մթի միջից, ափը ծեծող ալիքների շշուկոցին առընթեր բարձրանում էին օգնության աղաղակներն ու սարսափի պոռչույթները՝ այդ եղերաբախտ հայուհիների խմբին: Եվ... ծովը խարսխած եվրոպական պետությունների որևէ մարտանավի լուսարձակը գալիս էր ողողելու՝ լույսի հեղեղների տակ, որպեսզի... առևանգիչները ավելի լավ կարողանային ջոկել գեղադեմները, փոխանակ ցամաք ելնելու և թրքական հրեշտության ճիրաններից ազատելու նրանց: Սակայն այդ քամբախտ¹²⁸ հայուհիներն ոճրապատ լույսի ճառագայթներից իսկ մխիթարություն ու քաջալերանք էին զգում, սիրտ էին առնում և իրենց մեջ առկայծում էր փրկության հույսը, մոռացած՝ անոթությունն ու ծարավը, մինչև որ սեպտեմբերի 16-ին՝ նավ փոխադրեցին մնացածները:

Տիկին Փարիզ Մաղաքյան՝ աղջկանց որբանոցի տեսուհին, իր հոտից հեռացած, անտարբեր թափառում էր, նույնիսկ երբ որբուհիներ մակույկներ լեցված նավ էին փոխադրվում: Եվ շատերի դիտողության վրա էր, որ ի վերջո ստիպվեց միանալ խմբին և Պոլիս ելնել:

Գալով մանչերի Ազգ. կենտր. որբանոցի տեսուչ Օսնիկ Թադեոսյան չկար մեջտեղ, իսկ խնամատարությունը օր առաջ թողեր հեռացեր էր Իզմիրից: Իրենց բախտին էին թողվել որբերը: Մինչև հրդեհի օրը (13 սեպտեմբեր) որբերը մնացել էին որբանոցում: Իսկ երբ վտանգը դարձել էր սպառնական, Գարեգին անունով մի որբ, դրոշ պարզած հրավեր էր կարդում բոլորին, որ իրեն հետևին և Քարափ իջ-

¹²⁸ *Քամբախտ*, անբախտ, դժբախտ (զավառաբանություն):

նեն: Այսպես այն բոլոր որբերը, որոնք ողջ են մնացել, իրենց կյանքը կախարտին այս վճռական տղու: Նրա քաջությունն ու հանդգնությունը փրկել էր լքված որբերը: Եվ ոչ ոք զիտե, թե բուն թիվից որքանը պակասել էր կամ կորած: Իսկ մնացածներն էլ, անոթի ծարավ, Քարափին վրա բախտին էին թողնվել:

Քարափ որ հասել էին որբերը, այդ անհովիվ հոտին գլուխը որվեց Անդրանիկ Կարապետյանը՝ Մեսրոպյան վարժարանի,¹²⁹ տեսուչը: Ինք լինելով ամերիկյան քաղաքացի, հույս ունեին, որ որբերը մնալու էին անձեռնմխելի և ազատ՝ թրքական ձերբակալություններից:

Սեպտեմբերի 15-ն է: Գույումճյան տան առաջ, Քարափի վրա համախմբվել են որբերը: Չեռքերնին մի ամերիկյան դրոշակ, իրենց պլավուն աչքերը այդ լաթի կտորին վրայի աստղերին հառած, բոլոր հույսերը դրած՝ նրա կարմիր երիզների վրա, ամիսակնդվում էին: Ժամից ժամ սպասում էին, հեռուն ծովի վրա խարսխած ամերիկյան ռազմանավերից գալիք օգնությանը, որպեսզի փրկվեին, սակայն ուշանում էր այդ ցանկալի պահը:

Այս միջոցին Գույումճյան տան պարտեզի դուռն էր բախվում թրքերի կողմից: Պահանջում էին, որ ներսը ապաստանած ժողովուրդը (2000-ից ավելի) հանձնվեր: Սրտոտ մի երիտասարդ ներսից պատասխանում է հարձակողներին, թե տանտերը ֆրանսահպատակ է, մերժում է բանալ դուռը և հանձնարարում է դիմել ֆրանսիական հյուպատոսարան:

Թրքերը սկսում են խորհրդակցել իրենց մեջ և ցրվում են: Սակայն երևի դիմել էին ֆրանսիական հյուպատոսարան, ստուգել էին, թե տանտերը ֆրանսահպատակ չէր, որ կրկին եկել էին և սկսել էին ձերբակալությունները: Նախ բուն

¹²⁹ *Մեսրոպյան վարժարան* (1799-1922), Զմյուռնիայի հայկական առաջին դպրոցը, որտեղ ուսանում էին նաև արտասահմանցի հայ երեխաներ: 1870-1900-ականներին դպրոցն ունեցել է 300-400 աշակերտ. ընդհանուր առմամբ՝ 1500 շրջանավարտ:

Գույումճյան տան մեջ գտնվող 600-ի մոտ հայկական ընտրանին դուրս հանեցին Զարափի կողմի դռնից, իսկ երկրորդ խումբն էլ՝ 900-ից ավելի հայեր, որոնք ապաստանել էին պարտեզը, Գըշա¹³⁰ տարվեցին՝ պարտեզի դռնից դուրս հանվելով:

Այս խմբի ձերբակալության և կարավան կազմած, Զարափի վրայով Գըշա տարվելու ժամանակն էր, որ թրքերը փորձ արեցին և ձերբակալություններ անել համախմբված որբերից:

Վերջ ի վերջո, սակայն, Միլլի զինվորը, համոզված թե ոչինչ անելու չէին եվրոպացիները և ինչ որ անեն մնալու էր իրենց, կատարեցին աներկբա հարձակումը: Հազիվ 16 տարու, բայց մարմնեղ ու կայտառ որբերին իբրև զինվորական տարիքի տղամարդիկ, ձերբակալվեցին և թները կապած Գըշա առաջնորդվեցին: Իսկ ամերիկացիներ հանդիսատես էին միայն լինում, առանց որևէ արգելք հանդիսանալու, կատարված բարբարոսության: Մեկ քանի տասնյակ պատվական պատանիների ձերբակալությունից և բռնի Գըշա փոխադրվելուց հետո էր, որ մնացյալ որբերը շոգեմակույկով փոխադրվեցին Ամերիկյան Նո. 222 թորբիլահալածը¹³¹, սեպտեմբերի 16-ին կրկնապես որբացած, գնալու և նոր նոր ափեր թափառելու և բուրժուական երկիրների նորանոր դառնությունները ճաշակելու:

Գույումճյան պարտեզից ձերբակալվող 1700 հոգիանոց խմբի մեջ գտնվում էին Տրդատ եպիսկ. Պալյան¹³², և հայ երևելիներից Հակոբ Միքայելյան, Սեֆերյան հայր և որդի, Լուքա Պալյան և այն, որոնց խառնեցին և Կեդրոնական որբանոցի

¹³⁰ *Բըշա* (թուրք.՝ Kışla), թաղամաս / գորանոց Զմյուռնիայում:

¹³¹ *Թորբիլահալած* (թուրք.՝ torpil), տորպեղանալ:

¹³² *Տրդատ եպիսկ. Պալյան*, Կեսարիայի թեմի առաջնորդ, նշանավոր ձեռագրագետ, մատենագետ, հնագետ, բանագետ: Տե՛ս Կարինե Ավետյան, «Տրդատ եպիսկոպոս Պալյան (1850-1923. կենսագրության համառոտ ակնարկ)», *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ*, հ. 21 (Երևան, ՀՀ ԳԱԱ, 2002), 332-353:

չափահաս որբերը, Ազգային վարժարանի տեսուչ Անդրանիկ Կարապետյանը, Գուրգյանը, Տետեյանը և ուրիշները, որոնք գտնվում էին Զարափի վրա: Սրանք նախ առաջնորդեցին Բեյլա Վիստայի մի նրբանցքը, կողոպտեցին և հետո թևերը կապելով թելեֆոնի թելերով, առաջնորդեցին դեպի Գըշլա: ճամփան Լուքա Պալյանին հաջողվեց զինվորները կաշառել և ազատիլ, իսկ Անդրանիկ Կարապետյան չկարողանալ հանդուրժել կատարվող բարբարոսություններին, բռունցքը ցցելով ծովի վրա շարված օտար մարտանավերին, անիծում էր բոլորը: Երբ փորձեց դիմադրել հրացանի բնով իրեն հարվածող թուրք զինվորին, սայթաքեց, գլորվեց ծով ընկավ և խեղդվեց: Իսկ Տետեյան ծով զցեց իրեն, փորձեց փախչել, հաջողեց և կարավանին անցնելուց հետո ելավ ցամաք, սակայն երկրորդ անգամ ձերբակալվելով կորսվեց վերջնականապես: Կարավանը, որ Գըշլա հասավ, այդտեղ ջուրեցին և արձակեցին ձերերը, իսկ մնացածը հաջորդ օրն իսկ ուղարկվեցին արյան ճանապարհով:

Իսկ Ազգային որբանոցի տեսուչ Օննիկ Թադեոսյանը, իր հոտը քած շունչն էր արել Բրգերի երկիրը, «Արև» թերթի մեջ գովքը անելու Իզմիրի կաթոլիկ հայրերից Դոն Սկալիարնոյի¹³³, որ Ս. Ստեփաննոս եկեղեցի ապաստանած հայերի կյանքն էր ազատել: Առանց մի պահ անդրադառնալու այն բանին, որ երբ մի օտար փորձել էր ազատելու օտար մի ժողովրդի (հայերի) կյանք ինք ի պաշտոնն հովիվը լինելով Ազգ. կեղորոնական որբանոց կենտրոնացված հայ որբերի հոտին,

¹³³ Դոն Սկալիարնո (Դոն Պոլիկարպո Սկալիարինի), գյուղենիացի կաթոլիկ հոգևորական: Սկալիարինին կարողանում է օգնել քրիստոնյաներին դուրս գալ Սր Ստեփաննոս եկեղեցու դռնից. սակայն նրանց մի մասը կոտորվում է: Եկեղեցին մնում է թուրքերի ձեռքում. նրանց հաջողվում է գտնել ստորգետնյա զանձարանը և կողոպտել այն, ապա իրի մատնել: Տե՛ս Գոհար Խանումյան, Շուշան Խաչատրյան, «Իտալացի հոգևորականի սխրանքը Հայոց ցեղասպանության տարիներին. Պոլիկարպո Սկալիարինի, 1887-1955 թթ.», <http://www.genocide-museum.am/arm/scaliarini.php>, դիտվել է՝ 06.10.2022:

իր խնամքին հանձնված 360 հայորդիները քեր, անցել գնացել էր անձնասիրաբար:



Որքերը նաև փոխադրելու համար Ամերիկյան Բիլիֆը¹³⁴ կարգադրություններ էր արել: Բիլիֆի կողմից դուկտ. Պոստը ներկա էր Քարափը: Սա Թալասի (Թուրքիա) ամերիկյան աղջկանց վարժարանի կից հիվանդանոցին միսիոնար բժիշկն էր, որ հառաջիկայում Գոնիա փոխադրվել էր: Անձամբ ծանոթ լինելուս, առիթից օգտվելով դիմեցի, որպեսզի ինձ էլ թույլատրեն շոգեմակույկ մտնելու և ազատվելու: «Դժբախտաբար չեմ կարող, մենք խոսք ենք տվել Նուրեդդին փաշային, որ զինվորական տարիքի մարդեր տանելու չենք», – պատասխանեց դուկտ. Պոստը:

– Դուկտոր, ես թրքահպատակ չեմ, որով ոչ մի պատասխանատվության չեք հանդիպիր, թույլ տալով, որ ես էլ մտնեմ շոգեմակույկ:

– Դժբախտաբար, ես չեմ կարող, – պատասխանեց և ձեռքը գրպանը տարավ՝ փող տալու կայտորաստվեր, որևէ բանի պետք ունի՞ք, մի քիչ փող տամ ձեզ, – ասաց:

Վրդոված՝ իր վարմունքից:

– Ես փողի կարիք չունեմ, այդ ձե՛զ պահեցեք, – պատասխանեցի:

Միամիտ միսիոնարը «խո՛սք էր տվել»... Նուրեդդին փաշային:

Մի մարդ ավելի ազատելու նախանձախնդրությունից հրաժարվում էր... Քրիստոնեաբար, և թողնում էր որ ջարդեն թուրքերը:

¹³⁴ *Ամերիկյան Բիլիֆ* (Near East Relief, 1915-1930). Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատուց կոմիտե: Տե՛ս James L. Barton, *Story of Near East Relief (1915-1930), An Interpretation*, N.Y., the Macmillan Company, 1930.

Ամիսներ հետո խիղճը տանջել էր իրեն և Հունաստանի գաղթակայաններից ինձ էր փնտրել, ասելով. «Ես կարող էի ազատել նրան և չազատեցի»:

ԴԵՊԻ ՇՈԳԵՆԱՎ ...

Չորեքշաբթի, 20 սեպտեմբերին իմացանք, որ ամերիկացիների կռիվից տրամադրված մի նավ կա, որին կարելի էր մտնել տոմսակ գնելով: Քույրս անմիջապես գնաց և ամերիկյան Ե.Ք. ընկերության ընդհանուր քարտուղար ճեյքլայի ձեռքով գնեց չորս տոմսակ, յուրաքանչյուրը տասը թրքական պանքոդի:

Իսկույն գաղտագողի դուրս գալով մեր թաքստոցից ապաստանեցինք Վարդան Էլմասյանի բնակարանը, որ մի տեսակ սպասման կայան էր դարձել տոմսակավոր անձերի համար, թեպետ ներսի ժողովրդին կեսն իսկ տոմսակ չուներ, և ո՛վ էր փնտրողը: Որովհետև, վստահ ենք, որ այդ շոգենավը ձրի էր տրամադրվել և սակայն մի շաբթ չարաշահների ձեռքը միջոց էր եղել կողոպուտի մարդկանց, որոնք փախստական ժողովրդի դժնդակ կացությունը շահագործում էին անխղճորեն և ի շահ իրենց սեփական գրպանին: Անպաշտոն, առանց որևէ կնիքի, հազար ու մի տեսակ և զանազան չափի թղթերի վրա, առանց որևէ թվահամարի գրվել էր «Pass one» (տալ անցնելու մի հոգի): Այնքան ակներև էին հաճախ խարդախված «տոմսակները», որոնք վաճառքի էին հանված, տասնյակ հազարավոր ոսկիներ շորթելով՝ ամեն գնով ազատվելու համար ունեցածն ու չունեցածը տրամադրելու պատրաստ ժողովրդից: Զանազան և զարմանազան ստորագրություններով «տոմսակներ», որ մեկը կրելով «Պարադիսո»-ի ամերիկյան ուսուցիչ պրոֆ. Կոլվելի անվան սկզբնատառերը, մի ուրիշի վրա գրվել է Բրրճ, և ուրիշներ Զենինգզ, չես իմանում նույնիսկ կեղծ են, թե իսկական: Սակայն այդ անպետ թղթի կտորների վրա հույս դրած և փրկվելու միջոց նկատող շատ

շատեր հարյուրավոր ոսկիներ տրամադրեցին, մինչդեռ նավ մտավ ան, որ կարողացավ, հոգ չէ թե տոմսակ ուներ կամ ոչ:

Սեպտեմբերի 20-ին նախ Գույումճյան տան մեջ գտնվողներ փոխադրվեցին լաստերի վրայից դեպի ամերիկյան նավը, անցնելով երկու կողմից շրթա կապված թրքական զորքերի միջից: Երկու հարյուր հոգի էլ առնելու էին Էլմասյան տան մեջ գտնվողներից: Դռան առաջ իբր պահակ կանգնել էին ամերիկյան զինվորներ: Երբ դուռը բացվեց, խուժեց ժողովուրդը: Որին որ հաջողել էր առաջ անցնել, մտել էր նավը: Տկար, անկարող եղողներ ետ էին մնում, իսկ տոմսակ հարցնող չկար...:

Եվ դուռը փակվեց: Լրացել էր թիվը:



Շենքի մեջ բազմությունը օրից օր ավելանում էր: Ամերիկյան Րիլիֆն ու Կարմիր խաչը հաց, կաթ և այլնով աղեկ գեշ օգնում էին ներսի մարդկանց: Մինչև սեպտեմբերի 24, կիրակի, ոչ միայն շենքը լեցվել էր, այլ և փոքրիկ պարտեզն էլ, ինչպես ասում են «տեղ չէր մնացել ասեղ գցելու»: Մի օր առաջվա 800 թիվը անսպասման բարձրացել էր 1100-ի:

Այս առավոտ, պրոֆ. Կոլդվել դուռը կանգնած ասում էր. «Նախ տոմսակ ունեցողներ պիտի մեկնեն, իսկ նրանք որ չունեն, պետք է գնեն»:

Ժողովուրդը պատրաստված, խոնված էր դուռը: Նավեր հասել էին Պունտան: Եվ ասիա խուժումը: Մենք էլ ելանք մայրիկի թևերը մտած: Ինչպե՞ս տանելու էր մինչև այդ նավահանգիստը, որ երկու կիլոմետրից ավելի ճամփա էր, իսկ քալելու կարողություն չունեն, և գուցե ուշն էլ մնացինք... Նավ մտնելու: Հազիվ թե Քարափ ելեր էինք, անցնում էր մի մարդատատ կառք, որին վարձեցինք: Պունտա, որ հասանք, աննկարագրելի էր բազմությունը: Ծովի նման ալեկոծում էր բազմահագարյան ժողովուրդը: Երկաթուղու ցանկապատերի մուտ-

քին պահակ կանգնել էին ամերիկյան զինվորներ. կային նաև թրքեր, իսկ ժողովուրդը սպասում էր դռան բացվելուն, կայաբանի առջևից մինչև Տիսույի բաղնիսները խռնված, իրար վրա սեղմված:

[Բացակայում են ձեռագրի 91-102-րդ էջերը՝ Թ.Մ.]:

... Կարգը եկել էր մեր հագուստներին: Այս անգամ էլ ինչ որ ունեինք մեր կռնակը կամ վրան – վերարկու, բաճկոն, տաբատ ն՛ն հանել առնելուց հետո, մեզ ճամփա հանեցին և հասանք Մերսինի¹³⁵: Ուշացել էինք և այլևս պատրաստ նավ չկար այդ օր. ուստի հարկադրվեցինք երկու օր մնալ այդ տեղում:

Կողոպուտը տարբեր ձև ու կերպարանք ուներ այստեղ էլ: Ժողովուրդը անոթի էր, որևէ տեղից օժանդակություն չկար, ուստի, հարկադրաբար, պահակ զինվորների բացած կրպակից գնումներ էին անում շոգենավի սպասողները: Այս խանութը սակայն ունևորն ու չունևորը, փող ունեցողն ու չունեցողը իմանալու, ճանաչելու ծառայող մի կենտրոն էր դարձել: Ցերեկ ժամանակ ճանաչելով փող ունեցողները, գիշերանց գալիս, մեկիկ մեկիկ տանում էին Գարնիզոնից հեռու մի սենյակ և այդտեղ մերկացնելով կողոպտում էին մինչև վերջին կոպեկը:



Հոկտեմբերի 10-ի առավոտ ժամը 9-ին դուրս հանեցին բոլորին: Հազարավորներ – պատանի, օտարահպատակ և Նո. 5 «բեյաննամե»¹³⁶-ի համաձայն «արտաքսվելիքներ» – հասանք Պունյայի նավամատուցը: Վանդակապատից ներս նստեցրին մեզ. Շրջերնիս թափառում էին ուստիկաններ և մեր սրտերը սաստիկ բաբախում էին նրանց չարաբաստիկ երևույթից: Ծանոթ մարդիկ էին փնտրում ձերբակալելու համար: Շոգե-

¹³⁵ Մերսինի (թուրք.՝ Mersinli), թաղամաս Զևուռնիայում:

¹³⁶ Բեյաննամե (թուրք.՝ beyanname), հայտարարություն, հռչակագիր:

Նավը խարսխել էր մեր դեմը, իսկ ցանկապատից դուրսն էլ բազմաթիվ օտարահպատակներ – կին, աղջիկ – լեցվեր էին իրենց ընտանիքներովը:

Այս միջոցին հասավ անիծապարտ պոլիս-կոմիսեր Էշրեֆ և սկսեց խոսել մեր վրա դրված սպայի հետ: Պնդում էր, թե մեր մեջ գտնվում էին զինվորական տարիքի մարդիկ, ինչպես նաև թրքահպատակներ, հետևաբար հարկավոր էր քննության ենթարկել բոլորը...

[Բացակայում է ձեռագրի 104-րդ էջը՝ Թ.Մ]:

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ

Հելլեն բանակի տրոհման խուճապահար փախուստի հետևանքով, գավառից փախչող հայության մեծամասնությունը ապաստանել էր Իզմիր Ս. Ստեփանոս եկեղեցին: Այդրնի շրջանից – Էոդիմիշ, Բայրնդըր և ին – հազիվ կյանքը փրկելով կառախմբով Իզմիր իջնող ժողովրդի թիվը 7 Սեպտեմբերի երեկոյան արդեն հասել էր 36 հազարի, համաձայն Այդրնի անգլիական երկաթուղու դիրեկցիայի պաշտոնական տեղեկագրությանը: Տունը տեղը թողած, լոկ կյանքը փրկելու համար վազոններում նետված ժողովուրդը ձրիաբար փոխադրելու իսկ խիղճը չունեցավ ընկերությունը: Առանց բացառության տոմսակ պետք էին ապահովել: Ունեցողներ վճարեցին, իսկ չունեցողներ, հարկադրյալ հետիոտն ճամփա ընկան և գերի մնացին թուրքերի ձեռքը: Եվ երևակայել, որ միմիայն Էոդեմիշի կայարանի դրամարկղը, որ կողոպտեցին թուրքերը, պարունակում էր 17 000 բանկանոտ¹³⁷: Սա գուցե թուրքին օժանդակելու անգլիական մի ձև էլ կարելի էր լինել:

Սակայն դառնանք մեր նյութին: Թրքերի Իզմիր մուտքին իսկ, տեղացի հայերի մի մեծ մասն էլ, ինչպես նաև հույներ,

¹³⁷ *Բանկանոտ* (թուրք.՝ banknot), թղթադրամ:

իբր ամենաապահով վայր, ապաստանել էին Ս. Ստեփանոս եկեղեցին: Եվ երևակայել, որ քեմալականների Իզմիր մուտքի հաջորդ օրն իսկ, սեպտեմբերի 10, կիրակի օր, արդեն 10 000 հոգի լցվել էին այդտեղ:

Այդ օր մինչև երեկո հանգիստ ու հանդարտ անցել էր: Ժողովուրդը լցվել էր եկեղեցու ներսն ու դուրսը: Երեկոյան մթնելու մոտ, եկեղեցու բակի հարավային կողմից լինում է թրքական առաջին հարձակումը զենքով ու ձեռնառումներով, որպեսզի ներս խուժեն և ջարդեն ժողովուրդը: Երբ ապարդյուն էր մնացել այս հարձակումը, փորձել էին այս անգամ էլ արևելյան կողմից, երբ ռումբերը ընկնում էին ժողովրդի մոտերը: Ներսի դեկավարությունը մնացել էր իբրև թե Տեր Խորեն քահանա Պչաբջյանի¹³⁸ ձեռքը և տրված հրամանով, ամբողջ ժողովուրդը գետին էր պատկում զերծ մնալու համար ռումբերի վնասից և սակայն, հակառակ բոլոր զգուշությունների, բազմաթիվ վիրավորներ և երեք հոգի էլ մեռյալ ունեցել էին: Ներսի ժողովրդի բարոյականը չխախտելու մտահոգությունով, դիակները խկոյն վերցնում են քահանաների խուցը և քիչեր միայն տեղյակ են լինում դեպքին և տեղ չի տրվում ընդհանուր հուզմունքի: Վիրավորյալների կարգին էր և Տեր Սուրեն քահանան:

Այս դեպքերից հետո զգալով, թե թուրքերը որոշել էին ներսի ժողովուրդը ամբողջությամբ կոտորել, սկսում են զանգակահարություն, որպեսզի օտարներ իմանան և օգնության փութան: Նույն ատեն զիտակցելով կացության ծանրությունը, քանի որ կղզիացել էին, միջոցներ մտածում են օտար հյու-

¹³⁸ «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամիջին հունաստանաբնակ Սարգիս Քեշիշօղյուի նվիրաբերած իրերի մեջ է դանիացի միսիոներուհի Մերի Աննա Օստերգարդի (Mary Anna Østergaard) հավաքածուն (նա 1927 թ. գործունեություն է ծավալել Հունաստանում հայ տարագիրների շրջանում): Ընդգրկված է նաև Խորեն քին. Պչաբջյանի աղոթագիրքը (4. Պոլիս, 1934)՝ հետևյալ ընծայագրով՝ «Յիշատակ Ազնուփայլ օր. Մերի Օստրբարտի. Աղօթարար Խորեն Ա. քինյ. Պղչախնճևան, 1 Յունուար 940, Աթէնք»:

պատանների հետ հարաբերվելու համար: Տիկին Ջիվելեկյան և օրհորդ Շնորհիկ Բարսեղյան, իբրև անզերեն իմացողներ, Կարմիր խաչի զգեստներ հագած, սեպտեմբերի 11 երկուշաբթի առավոտ դուրս են դրկվում, որպեսզի գնան և կացությունը պարզեն: Նրանց մեկնումից մի քանի ժամ հետո, Առաջնորդարանի առաջից ինքնաշարժով անցնում էր լատին կղերական Դոն Սքալիարանոն: Պատուհանից ձայն են տալիս, կանգ է առնում ինքնաշարժը: Պարզվում է եկեղեցու ներսը տիրող կացությունը, բազմահազար ժողովրդին սպառնացող վտանգը և խնդրում են, որ օգնության հասնին և մի կերպ Զարափ իջեցվի ներսի բազմությունը: Դոն Սքալիարանոն խոստանում է անմիջապես գնալ Նուրեդդին փաշայի մոտ և կատարել հարկավոր միջնորդությունն ու բարեխոսությունը, ապահովելու համար նպաստավոր մի հրաման:

Այս դեպքից հազիվ մի ժամ հետո էր, որ եկեղեցու դուռն էր բախվում: Դռան աչքածակից դիտելով տեսնվեց, որ մի թուրք սպա էր, հետը մի տասնյակ զինվորներով: Պահանջում էր, որ դուռը բաց անեն և տեսակցի ներսի հրամանատարի կամ վարիչի հետ: Ոչ մի կերպով խելացի գործ կլիներ դուռը բաց անել, սակայն հարկավոր էր սպայի պահանջին էլ ընթացք տալ: Ուստի խոհեմություն են նկատում Առաջնորդարանի ետևի կողմի, Փեշթիմալջըլար¹³⁹ տանող փողոցում զանվող նոր խանութներից գորգի գործարանի կողմից ընդունել: Այս գործարանը եկեղեցու բակը առաջնորդող ներքին դուռ ու պատուհան ուներ, որով այդ ճամփով հարաբերվել ավելի ապահով են նկատում:

Սպան գնում է հանձնարարված կողմից: Եկեղեցի մտնելու անցքում կանգնել էին հայ պահակներ, կանխելու համար որևէ թաքուն չարամիտ քայլ: Սպային միայն մի զինվորով թույլատրվեց ներս մտնել: Հազիվ եկեղեցու բակը մտած, բա-

¹³⁹ Փեշթիմալջըլար (թուրք.՝ peştemalcılar), հավանաբար սպիտակեղենի վաճառատների:

րակի նման աչքն ու քիթը չորս դին էր: Ուսումնասիրում էր ներսի դրոպյունը: Ցանկանում է հարաբերվել ժողովրդի հրամանատարի կամ կառավարչի հետ: Պատասխանվում է, թե իր ըմբռնած ձևով ոչ հրամանատար և ոչ էլ վարիչ գոյություն ունի: Արդեն թեմի Առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս սեպտեմբերի 10-ի առավոտուն, Առաջնորդարանի գործակատարին, քարտուղարին և բարապանին հետ դուրս էր եկել և կաթոլիկ հասարակության ազգապետ Պիեր Սիզյանի բնակարանը ապաստանել էր: Հետո էլ սեպտեմբերի 13-ի երեկոյան, հրդեհի մոտենալուն, փոխադրվել էր Լազարիստների Սակրեթոր վարժարանը, այդտեղից էլ ֆրանսիական «Էդգար Բինե» մարտանավը և անցել Հունաստան:

Այս պայմանների տակ, Տեր Խորեն քահանան, հետը ունենալով և Տեր Ավագը, ինքզինքը ներկայացնում է իր ներսի ժողովրդին հոգացող հոգևորական: Տեր Խորեն սակայն հայտնում է, որ իրենց համար անհրաժեշտը կյանքի ապահովությունն է, հետևաբար չի կարող որևէ պատասխանատվություն ստանձնել, թե որ տրվի այդ ապահովությունը, ժողովուրդը ինքնաբերաբար դուրս կգա: Սպան հայտնում է, թե ինք շուտով հսկողության տակ կառնե եկեղեցին և ոչ մեկ սիվիլ մարդ չմոտենա, պայմանավ, որ եկեղեցու մեջ գտնվող մարդիկը հանձնվեն: Այս ասելուց հետո, սպան մեկնում է եկած ճամփովը, միշտ էլ ուշի ուշով դիտելով իրեն հետ խոսող երկու քահանաները:

Քիչ հետո եկեղեցու շուրջի թաղի գանազան կողմերը գետեղվել էին գնդացիորներ և դիրք էին բռնել զինվորներ:



Դոն Սքալիարինո, ըստ իր խոստմանը, վերադառնում է երկուշաբթի երեկոյան և հաղորդում, թե կոմանդան Բեյը հաճելու էր թողնել, որ անվտանգ դուրս գան եկեղեցու մեջ գտնվող ժողովուրդը, պայմանավ, որ տղամարդիկ առանձին, կա-

նայք էլ առանձին խմբերով դուրս գան: Լատին քահանան չէր ըմբռնում այդ պայմանի միտք բանին և սակայն հայերը շատ լավ ըմբռնում էին դրա թաքուն նպատակը, այնպես որ հազիվ թե լավել էր այս խոսքը, մթազնել էր ժողովրդի դեմքը, հուզվել էին սրտերը և տարածվել էր հոռետեսությունը: Որոշ էր, թե թուրքերը նպատակ ունեին ձերբակալելու տղամարդկանց և կոտորելու:

Այս բանը հասկացվեց Դոն Սքալիարիինոյին և խնդրվեց, որ անպայման միջոցը գտնվի ժողովուրդը խառն դուրս հանելու:

Հաջորդ առավոտուն, սեպտեմբերի 12-ին եկեղեցու վերև նշմարվում էին ծուխի ամպեր: Ժողովրդի մեջ սկսել էր տիրել հուզումն ու վախը, թե թրքեր կրակ են գցել: Իսկույն գանգակատուն բարձրանալով ստուգվում է, թե կրակը Հայնոցից տարբեր մի վայրից էր և եկեղեցուն չի սպառնում որևէ վտանգ:

Ժամը 9-ին վերադառնում է Դոն Սքալիարիինոն, հետը ունենալով մի թուրք և մի իտալացի սպա: Թույլ են տալիս, որ եկեղեցու մեջ գտնվող ժողովուրդը դուրս գա տղամարդ և կին խառն: Բացվում են Առաջնորդարանի դռները և բազմահազարյան ժողովուրդը դուրս կգա: Հակառակ այդ բոլորին սակայն, սկսում են խուզարկել դուրս եկողներին և կողոպտում, նույնիսկ ձերբակալություններ են լինում: Ձերբակալվում է Տեր Ավագ քահանան և փնտրվում է Տեր Խորենը: Չէ որ նախորդ օրը, եկեղեցում մտնող թուրք սպային իբր ժողովրդի առաջնորդներ ներկայացվել էին, այժմ առիթը ներկայացել էր Ս. Ստեփանոսի «ապստամբներ»-ի և ներսի ժողովրդի հանձնվելուն արգելք հանդիսացողները ձերբակալելու:

Վերջին խմբով մեկնում է Տեր Խորենը և սակայն չէին դադարել նրան հետապնդելուց, որ Քարափ հասնելուն ձերբակալվելով փոխադրվեց պասադորտի ոստիկանատունը, որտեղից հրաջքով ազատվելով ապաստանեց Գույումջյան տան պարտեզը և ավելի վերջ, սեպտեմբերի 24-ի կիրակի օրը մեկնող շոգենավերի մեկի մեջ մտած անցավ Հունաստան:

Ժողովուրդը եկեղեցու դռնից հագիվ դուրս եկած, սկսեց կոտորվել: Աջից ու ձախից տեղի էին ունենում ձերբակալություններ: Մոլորյալ ոչխարների նման, յուրաքանչյուրը փնտրում էր ապաստանելու մի վայր: Շատեր մտան Գույումջյան պարտեզը, ուրիշներ քարափի վրա թափառում էին, բախտի թողնված:

Եկեղեցին մնացել էր թուրքերի ձեռքումը: Հաջողվել էր նրանց գտնել եկեղեցու ստորերկրյա գանձարանը և դատարկել, որտեղ գետեղելով ուժանակը, պատրույզը քաշել էին մինչև Մեսրոպյան վարժարանը և այդտեղից կրակ տվել:

Եվ կործանվեց, հարևան բոլոր ժողովուրդների նախանձը գրգռելու աստիճան գեղեցիկ այդ եկեղեցին:

[Բացակայում է ձեռագրի 110-րդ էջը՝ Թ.Մ.]:

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՅԸ

Եկողները սիվիլ թրքեր էին և պահանջում էին դռների բացվելը: Ներսից պատասխանում էին, թե քիչ առաջ անցնող շրջուն պահակախումբը պատվիրել էր ոչ ոքի չքանալ դռները և նույնիսկ տվել էր գիշերվան կարգախոսը, որն էր «յըլտըզ»¹⁴⁰: Հարձակողները իմանալով այս, մեկնում են:

Առավոտուն, սեպտեմբերի 10, ժամը 10-ին տեղի է ունենում մի նոր հարձակում և պահանջում են անմիջական անձնատվություն, հակառակ դեպքում սպառնալով հրդեհել շենքը: Ներսից պատասխանում են, թե իրենք ապստամբներ չեն, որ հրավիրում են անձնատուր լինելու: Գոհացում չստացող հարձակողներ սակայն երկու ժամվա պայմանաժամ կտան հանձնվելու. հակառակ պարագային կրակ ձգելու միևնույն սպառնալիքը անելով:

¹⁴⁰ Յըլտըզ (թուրք.՝ yıldıız), աստղ:

Ներսի ժ:դովուրդը, մասնավորաբար մանուկները տանջվում էին անոթությունից: Հաստատությունը ոչինչ չէր տալիս մատանից և միայն կիրակի կեսօրին էր, որ ապուր բաժանվեց: Մինչ այդ աշխատում էին հարաբերվել ամերիկյան հյուպատոսարանի հետ, քանի որ կռահում էին վերահաս աղետը և նրա ահավորությունը: Սակայն ոչ ոք չէր համարձակում դուրս գալ, որի հետ կարելի լիներ մի կերպ լուր ուղարկել:

Սեպտեմբերի 10-ի գիշերը երկու նոր հարձակումներ ևս տեղի էին ունեցել, ինչպես նաև սեպտեմբերի 11-ին: Հիվանդանոցի երկու դռներից միանգամայն էին լինում հարձակումները: Այս պայմանների տակ անմիջական կարգադրություններ էին հարկավոր: Ուստի օրիորդ Քրիստինե Քյուրքջյանին հազցնելով Կարմիր խաչի զգեստներ, մի նամակով ուղարկում են ամերիկյան հյուպատոսին: Աղջիկը չի վերադառնում այդ օր: Կասկած է արթնանում, որ մի գուցե դժբախտություն է հանդիպել:

Հարձակումների կրկնությունը սակայն հարկադրում է, որ մի նոր մարդ ուղարկեն արտաքին աշխարհ՝ պարզելու հիվանդանոցի դժոխակ պայմանները: Մի փոքր մանչ հազցնում են թուրք լաճու զգեստով, մեջքին էլ կապում են մի չվան, գլխումը ֆես, բեռնակրի կերպարանքով դուրս է գալիս, անցնում է Ռեշիդիյե փողոցից և աներևոյթանում է, հետը տանելով մի նոր նամակ, ուղղված ամերիկյան հյուպատոսին:

Մի քանի ժամ վերջ վերադառնում է տղան և հայտնում, թե անձամբ ներկայացրել է հյուպատոսին: Երեքշաբթի կեսօրից հետո հասնում էր ամերիկյան դրոշ կրող մի ինքնաշարժ: Դուրս է գալիս ծանոթ դոկտոր Պոստ, մի հիվանդապահուհի, Ամերիկյան Րիլիֆի մի ներկայացուցիչ, ծովային երկու զինվորներ և... օրիորդ Քրիստինեն:

Դոկտ. Պոստ ուզում է տեսնել հիվանդները: Իրեն բացատրվում է, թե հիվանդանոցը ունի իր բժիշկները և անհրաժեշտ դեղն ու դարմանն էլ, ավելորդ է այդ մասին հետաքրքրությունը: Իրենց համար կարևորն ու անհրաժեշտը

կյանքի հարցն է, մի միջոց՝ ժողովուրդը ազատելու համար: Դոկտ. Պոստ պատասխանում է, թե անկարելի է որևէ օգնություն, և չպետք է ակնկալել ամերիկյան զինվորական ուժ: Հուսահատ, երբ ի վերջո հարցնում են.

– Ուրեմն ի՞նչ անենք, դատապարտվե՞լ ենք կոտորվելու...

– Ալլահա սուա՛ էդինիզ¹⁴¹... (աղոթեցե՛ք աստծուն) պատասխանում է, միսիոնար դոկտ. Պոստ:

Հուզումը սկսում է ժողովրդի մեջ, հուսալքված սկսում են լալ: Դոկտ. Պոստ սակայն, իր առաքելությունը ավարտած մարդու հանդարտությամբ, երբ պատրաստվում է մեկնելու, ավելորդ չի նկատում ավելացնելու, թե քիչ անդին, անկյունում տեսել է մի խումբ թուրք զինվորներ և հարցրել է, թե ինչո՞ւ են սպասում: Պատասխանել են, որ պաշտոն [հրաման] ունեն գրավելու հիվանդանոցը, այդ է Նուրեդդին փաշայի հրամանը: Եվ խորհուրդ է տալիս, հիվանդանոցի մարդկանց, որ չդիմադրեն ներսիները..., հանձնվեն:

Բժիշկ Մինասյան կրկին հարց կտա դոկտ. Պոստին, թե ուրեմն ի՞նչ է հանձնարարում: Դոկտ. Պոստ առաջարկում է, որ ինք զնա և խոսի անկյունը սպասող զինվորներին և ոստիկաններին գալու և առանց միջադեպի հիվանդանոց մտնելու, քանի որ գրավելու հրամանը վերևից է:

Եվ դոկտոր Պոստ գնում և հրավիրում է թուրք զինվորներին: Գալիս են թնդանոթաձիգների մի սպա, մի ոստիկան և իրենց ետևից էլ 8-10 զինվորներ, քաղաքային զգեստով: Սպան հաղորդում է Նուրեդդին փաշայի հրամանը և ավելացնում է, թե նկատի ունենալով, որ վիրավորներ և հիվանդներ ունեն, որոնց համար տեղ չունեն, հետևաբար այդ հիվանդանոցը իրենց համար հարկավոր է: Բացի այդ պահանջում է, որ հանձնեն նաև զենքերը: Պատասխանում են, որ զենք չունեն, գտնվողներն էլ որսի հրացաններ

¹⁴¹ Ալլահա սուա՛ էդինիզ (թուրք.՝ Allah'a dua ediniz), աղոթե՛ք Ալլահին:

և ատրճանակներ են, որոնք բերում հանձնում են: Սպային ընկերացող ոստիկանը սակայն, չքավականանալով հանձնվածներով, պահանջում է ռումբեր, մավզեր հրացաններ ևլն...: Երբ դարձյալ պատասխանում են, որ չունեն նման զենքեր, ոստիկանը ասում է.

– Ուրեմն գնանք ոստիկանապետի մոտ և այդտեղ կասեք, որ չունեք:

Բժիշկ Մինասյանը խնդրում է դուկա. Պոստից, որ չմեկնի մինչև իր վերադարձը, չլքե հիվանդանոցը: Ոստիկանի հետ ճամփա ելնելով, բժիշկ Մինասյան, Հայ ակումբի առջևից առաջնորդվում է դեպի Բուլըվար, ուր ականատես կլինի գինյալ թրքերի, որոնք սուրով, զենքով ահավոր սպանություններ էին կատարում: Ոստիկանին համոզելով փոխում է ճամփան, Առաջնորդարանի առաջից, Փեշթիմալճիներից, Յեմիշ չարշըսըլից¹⁴² անցնելով հասնում է կառավարատուն, ճամփան ենթարկվելով և հարձակումների:

Ոստիկանապետը իր պաշտոնատեղին չգտնվելով, բժիշկ Մինասյանը նստեցնում են Մուհասեբեճու¹⁴³ սենյակը: Ի վերջո գալիս է ոստիկանապետը և հաղորդում է հիվանդանոցի գրավվելու հրամանը և ներկայացնում է հաստատությունը հանձն առնելիք թուրք պաշտոնեությունը: Բժիշկ Մինասյան դիտել է տալիս, որ հիվանդանոցում մոտ 3000 հոգի կան ներկայիս: Ոստիկանապետը նրանք տեղավորել առաջարկում է Բաշ Օթուրաքի¹⁴⁴ խաներում:

Բժիշկը, անդրադառնալով, որ այդ կարգադրությունը 3000 հոգի մահվան դատապարտել է նշանակում, իր կողմից առաջարկում է Լուսավորիչ փողոցի դատարկ տներում տեղավորել: Ընդունվում է այս առաջարկը և հիվանդանոցի

¹⁴² *Յեմիշ չարշըսըլ* (թուրք.՝ yemiş çarşısı), միզի շուկա:

¹⁴³ *Մուհասեբեճի* (թուրք.՝ muhasebeci), հաշվապահ:

¹⁴⁴ *Բաշ Օթուրաք* (թուրք.՝ Baş Oturak), թաղամաս Զմյուռնիայում:

համար նշանակված «Ինզիբատ Ջաբիթի» -ի¹⁴⁵ ընկերակցությամբ ճամփա են ելնում դեպի Հայնոց:

Ճանապարհին ընկերացող Նուրեդդին անունով այս սպան հայտնում է, որ ինք հայկական դաստիարակություն ունի, որ ուսած է Էրզրումի Սանասարյան վարժարանը ևն: Իրականություն էր, սակայն, որ հիշյալ հարյուրապետը չսփազանց լավ վերաբերմունք էր ցույց տվել՝ լինի բժիշկ Մինասյանի, լինի և հիվանդանոց ապաստանած հազարավոր հայերի հանդեպ: Դուրս իր ընկերներովը սպասել էր երկու ժամ և բժիշկ Մինասյանի վերադառնալուն մեկնում են հիվանդանոցից:

Տեղի է ունենում հիվանդանոցի շենքերի համաձուլմբ: Պահանջվում է և խուզարկել ներսը գտնվողները և հետո դուրս հանվելով՝ զետեղվում են դրացի դատարկ տներում: Հարյուրապետ Նուրեդդինը այդ գիշեր մնում է հիվանդանոցում, գետեղում է մի խումբ զինվորներ Բեշիդյե փողոցի անկյունը, մի ուրիշ խումբ էլ Չալղըճի Բաշիի կողմը, պատվիրելով, որ ոչ ոքի թույլ չտալ՝ անցնելու թաղից ներս: Այդ գիշեր հյուրասիրում են սպան ու զինվորները: Առավոտյան սկսում են պարպել հիվանդանոցի զլխավոր շենքը, հիվանդները փոխադրում են նախկին ծերանոցը: Այդ օրերում հիվանդանոցում գտնվում էին 120 հիվանդ, ծեր և հիմար¹⁴⁶:

Չորեքշաբթի, 13 սեպտեմբերի առավոտյան գալիս են բժշկապետը, ատամնաբույժը և բժշկական կազմը: Քիչ հետո հասնում են անկողիններ և հիվանդանոցի հատուկ կազմածներ: Այդ միջոցին բժիշկ Մինասյան, մի պահ Տեսչատուն մտնելով փոքձ է անում բանալու դրամարկղը և իմանալու, թե ինչ գումար ունեն: Վրա է հասնում թուրք բժշկապետը: Հրամայում է առանձին չբանալ դրամարկղը և առանձին չմտնել սենյակը:

¹⁴⁵ *Ինզիբատ Ջաբիթի* (թուրք.՝ Inzibat zabti), ոստիկանության սպա:

¹⁴⁶ *Հիմար*, հոգեկան հիվանդ:

Կեսօրին թրքերը ճաշ են պատրաստում և հրավիրում են բժիշկ Մինասյանն էլ, որ ճաշե միասին: Ճաշի վրա հասնում է հրդեհի ահազանգը: Թուրք ատամնաբույժը վազնի վազ ներս գալով ասում է. «Սա ի՞նչ բան է հայերի արածը: Հարձակել են մեր զինվորների վրա, զենքով և ռումբերով և սպաննել են մի շատ մարդիկ: Նուրեդդին փաշան ինքնաշարժովը անցնելու պահումը տեսել է և զայրանալով հրամայել է, որ կրակի տան Հայնոցը»:

Հիվանդանոցում թուրք սպաների մեջ գտնվող մի նախկին հրշեջ հարյուրապետ անմիջապես դուրս է վազում, որպեսզի թելադրություններ անի հրդեհը հանգցնելու համար, սակայն վերադառնալով հայտնում է, թե ոչ ոք մտիկ չէ արել իր ասածներին, ինք հանձնարարել էր մի քանի ռումբով մոտակա շենքերը փլցնել և առաջքը առնել՝ հրդեհի ծավալումին:

Բժշկապետը դարձյալ ուղարկում է հարյուրապետը, նկատի առնելով հիվանդանոցին էլ սպառնացող վտանգը: Վերադարձին գաղտնի տեսակցում են իրար հետ և հրաման է տրվում թուրք պաշտոնեությանը՝ պատրաստվել մեկնելու: Երևի իմացել էին հրդեհի իսկական պատճառը և վերևից տրված հրամանը, որ պետք չէր հանգցնել կրակը, որ հավքտեցին ու մեկնեցան, քանի որ հիվանդանոցն էլ չէր խնայվելու:

Ճիշտ այդ պահուն հասնում է Դոն Սքալիարինոն, ներս մտնելով տեսակցում է բժշկապետի հետ, պարզում է սպառնացող վտանգը և առաջարկում է ժողովուրդը փոխադրել մի ուրիշ տեղ:

– Արա՛, ինչ որ ես ուզում, պատասխանում է թուրք բժշկապետը:

Այս որ լսում է Դոն Սքալիարինոն, անմիջապես դուրս գալով, դրացի տներում տեղավորված հայությունը առաջնորդում է Քարափ: Հիվանդանոց մնում են բժիշկ Մինասյան իր ընտանիքով և հիվանդապահուհի Նազիկը: Երբ խուճապը սկսում է տիրել և թուրք բժշկական մարմնի մեջ, պահանջում են բժիշկ Մինասյանից, որ հաստատության դրամարկդի պա-

րունակությունը հանձնե իրենց: Բաց են անում դրամարկըր. վերցնում են 109 պանկանոտ գումարը, որ գտնվում է մեջը, տալիս են ընկալագիր՝ ստորագրված «բիրինճի օրդու օնունջը սեյար խասթախաննե հեյեթի»¹⁴⁷: Այս գործողությունից հետո բժիշկ Մինասյանն էլ ընտանյոք դուրս է գալիս:

Հիվանդանոցի գրավման օրը թունավորվելով անձնապան են լինում դեղագործ Պետրոսն ու վիրաբույժ Հարությունը, հիմարանոցի¹⁴⁸ բաժնում մնում են երեք հոգի, նույնպես երկու երեխաներ, երեք կիներ և տասն անդամալույծներ, և բոլորն էլ հրո ճարակ են դառնում:

ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ...

Գերիներն յուրաքանչյուր քայլափոխին և այն ամեն տեղ, որ գտնվել են, ենթարկվել են կծու և անհանդուրժելի հայհոյությունների, խաբեության և անպարկեշտ վերաբերմունքի:

Սեպտեմբերի 17-ի գիշերը Գըշլայում լուր տարածեցին, թե ընդհանուր ներում է հայտարարվել և ամեն մարդ ազատ թողվելու է, որ գնա քաղաքը: Սկսեցին բաժանել տասնմեկ հողվածով հարցարաններ, պաշտոն տվեց գրագիրների, որպեսզի ցանկը պատրաստեն գերիների:

Խնդրական լինելով հանդերձ կասկածելի էր այդ «ներումը», սակայն մի ուրիշ վտանգ հարցարանների պատրաստությունն էր, ուր յուրաքանչյուրի ինքնությունը երևան ելնելու էր: Այդ թվականում Գըշլա կենտրոնացված գերիների մեծամասնությունը բաղկանում էր հայերից, խորհիլ թե միայն Գույումճյանի պարտեզից ձերբակալված էին 1700 հայեր:

¹⁴⁷ *Բիրինճի օրդու օնունջը սեյար խասթախաննե հեյեթի* (թուրք.՝ Birinci ordu onuncu seyyar hastahane heyeti), Առաջին բանակի տասներորդ դաշտային հոսպիտալի անձնակազմ:

¹⁴⁸ *Հիմարանոց*, հոգեբուժարան:

Մինչև առավոտ շարունակած էր արձանագրությունը: Շատերի մեջ ակամա հավատք էր արթնացել, թե արձակվելու էին: Դուրս հանվեցին բոլորը: Գըշլայի կառնիզոն գոմանտանին¹⁴⁹ և նույն ատեն 56-րդ զորաբաժնի հրամանատար հազարապետ Զեքին, անցնելով այդ հսկա ամբոխի առաջից, դուրս կանչեց ուրլացի մի ծերուկ հույն և մի զորավար ապտակ զարնելուց հետո ասաց. «Գնացեք ձեր Վենիզելուսին և Կոնստանդինին զիթոններ (ուռանե՛ր) կանչեցեք, իսլամուհիներ լվեցեք, գյուղերն այրեցեք, մարդիկը ջարդեցեք, հիմա առիթը մերն է սակայն, աստվածնիդ անգամ ձեզ չի կարող ազատել մեր ձեռքիցը: Պիտի փչացնենք և մեկ հոգի իսկ պիտի չթողնենք ձեզանից»:

Հետո կանչեց մի երիտասարդ, հարցրեց անունը և իմանալով թե հայ է, ասաց. «Ո՛վ դուք հայեր, դուք որ Ղարաքիլխեի և Սարիղամիշի մեջ խմեցիք իսլամների արյունը, այժմ հերթը մերն է՝ փոխադարձելու ձեր դավաճանությունը: Վստահ եղեք դուք, որ ձեր հույսը դրել էիք ամերիկացիների վրա, օգնություն էիք սպասում նրանցից, արդեն սկսել են երկնիլ մեզանից: Այս շաբաթն իսկ 650 պարկ այլուր են ուղարկված մեր քաջ զինվորներին հատկացվելու համար, որով կարող եք ըմբռնել, թե ոչ մի պաշտպան չունիք այլևս»:

Միևնույն հազարապետը, իր խոսքը ուղղելով տարբեր մի կարավանի, ասում էր. «գլավուրներ, էլ ազատ եք. Մուսթաֆա Զեմալ փաշան ձեզ զինելու է և դրկելու է ներքին գավառներ, որպեսզի գնաք ու ջարդեք իսլամները, կոտորեք երեխեքը, լվեք իսլամուհիները և բռնաբարեք: Է՛լ ժամանակն է, այժմ առիթը մեր ձեռքումն է և պիտի չորացնենք ձեր արմատը»:

Եվ հրամայում է պահակ զինվորներին՝ «դողուր վե գափա»¹⁵⁰ (լցրեք զենքերը): Անցկացնում են սվինները, երբ հա-

¹⁴⁹ *Գոմանտան* (ֆրանս.՝ commandant), հրամանատար, պարեն:

¹⁵⁰ *Դողուր վե գափա* (թուրք.՝ Doldur ve kapa), լիցքավորիր և պատրաստ (ռազմ. լիցքավորիր և ձգակը անվտանգության կեռիկին դիր, կրակ հրամանից առաջ տրված հրամանն է):

րում է Ջեքին. «Սպանեցե՛ք այն բոլորը, որոնք շեղելու են մի քայլ աջ կամ մի քայլ ձախ, ետ կամ առաջ: Ա՛րշ...»:



Գըշլայի դռնից ներս մտնողը անպայման կողոպտվելու էր, «ռումբ», «գնք» կլն փնտրելու պատրվակին տակ: Իսկ ամեն գիշեր առանց բացառության մեկ քանի անգամներ գալու ու կողոպտելու էին՝ ոչխարի հոտի նման իրար խցկված մրափող ժողովուրդը: Կողոպուտի այլ ձևեր էլ կային: Ջուր չկար Գըշլայում, և բոլորը մարում էին պապակից: Մի կուժ ջուր վաճառում էին հինգ բանկանոտի: Բաղցից երերտկացող¹⁵¹ մարդիկ մի քանի պանկանոտի գնում էին մի կտոր հաց, վաճառող զինվորները սակայն ուշադիր էին լինում իմանալու, թե ով է գնողը, որպեսզի գիշերանց հարձակեին և կողոպտեին, քանի որ փող կար վրան:

Կողոպուտն այն աստիճան էր հասել, որ մարդ իր բնական պետքը լրացնելու համար ծովափ ելած պահուն իսկ ենթակա էր պահակի հարձակումներին:

Սեպտեմբերի 26-27-ի գիշերն էր, որ իմացանք ծանոթ, գրագետ և բառարանագետ Մեսրոպ Նուպարն¹⁵² էլ բերել էին

¹⁵¹ *Երեքտկալ*, շարունակաբար երերալ:

¹⁵² *Մեսրոպ Նուպար*, Մեսրոպ Նուպարյանը (1842-1929) ծնվել է Զմյուռնիայում «իր ժամանակին համար լուսամիտ ու բարակցած մարդու»՝ Չովհաննես Նուպարյանի ընտանիքում: Աղաբեկյանի մասնավոր դպրոցում ուսանելուց հետո Նուպարյանը տասը տարեկանից աշակերտել է Անդրեաս Փափագյանին, ապա զբաղվել ինքնակրթությամբ: Պատանի հասակում Նուպարյանը տարվել է գրական-հրատարակչական գործունեությամբ: Մեսրոպյան վարժարանում սովորելու տարիներին հրատարակել է «Երկասեր» պարբերականը, իսկ ուսումնառությունն ավարտելուց անմիջապես հետո՝ «Ուսումնասեր» հանդեսը: Հրաշքով փրկվել և ապաստանել է Մարսելում շարունակելով իր գործունեությունը: Տե՛ս Մ. Ն. Հակոբյան, «*Զմյուռնասիայ մտավորականների Գրիգոր Մսերյանը և Մեսրոպ Նուպարյանը*», Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի տեղեկագիր, 1961, հ. 6, 30:

Գրչլա: Խնդացինք և զարմացանք, թե ինչո՞ւ էին բերել այդ ծերունին: Առավոտուն գնացինք գտանք իրեն: Սպիտակ քրուդա զգեստ սպիտակ կոշիկ հագել էր, կարծես որևէ պաշտոնական անձնավորության մոտ էր գնում, կամ որևէ շքերթի էր մասնակցում: Լամբակին¹⁵³ վրա մի մեղալցոն, ֆրանսիական ժապավենով, կրծքին թրքական լիազաթի շքանշանը, գլխին՝ կարմիր ֆես, նստեր խորհրդածում էր: Մեզ պատասխանեց, թե իրեն ամբաստանել են, իբր թե Գորդելիոյի չգիտեմ որ շենքին ոռամբ է դրել և սրա համար էլ պատերազմական ատյան են հանել իրեն: Այդտեղ ապացուցվելով, թե ինք թրքական լիազաթի շքանշանին արժանացած մի մարդ է և տարիքն էլ չի համապատասխանում նման արարքի համար, անպարտ էին արձակել և Գրչլա էին բերել:

Մեսրոպ Նուպար և ... ոռամբ:

Ջուր բերինք, որ ձեռքերն ու երեսը լվա և սակայն մերժեց, այնքան միամտորեն դիտել տալով, թե արդեն շուտով ազատ արձակվելու է, կգնա տանը կլվացվի: Բարեմիտ ծերունին հույսով էր վերադառնալ տուն: Բարեբախտաբար հոկտեմբերի 10-ին շոգենալ դրվեց և ճամփվեց ... 45-ից վեր տարիք ունեցողների հետ:



– Ո՞րտեղից ես:

Որտեղացի էլ որ լինելդ ասես, որևէ ամբաստանություն հասնելու է հասցեիդ:

– Իզմիրցի՞ եմ:

Իսկույն ամբաստանվում ես հույների օգնած լինելու «զի՞թոն Վենիզելոս» պոռագած լինելու հանցանքով...:

– Կեսարացի՞ եմ:

¹⁵³ *Լամբակ*, աիջակի կրծքածալի վրա կարված օղակ:

– Խընգըր գյավուր¹⁵⁴, մինչև Իզմիր հույնին կամավոր ես եկել, չէ՞:

– Մաղնիսացի՛ եմ:

– Արձակվել է վճիռդ, «հրձիգ...» :

Կիլիկիայի որևէ քաղաքից լինել, նշանակում է «չեթե»¹⁵⁵ լինել...

[Բացակայում են ձեռագրի 120-123-րդ էջերը՝ Թ.Մ.]:

Գըշլայի արտաքին դռան դուրսը սպասում էին առավոտ կանուխ շուկա իջնող, գործի գնացող, վերջապես Բահրի Բաբայից, Գարաթաշից, Գյոզ Թեփեից հասնող տրամվայների մեջ գտնվող թուրք ժողովուրդը: Կարավանի երկու կողմը իբրև «պահակ» ընկերացող զինվորները որ չլինեին, անկասկած ենթարկվելու էինք խուժանի հարձակման: Աջից ձախից նախատական խոսքեր, հայիոյանքներ անպակաս էին: Որ մեկի կռուսկից վերարկուն, որ մեկի ոտից կոշիկը, մի ուրիշի տաբատը բռնի հանել տալ և թալանել սովորական էր դարձել: Եվ երբ մի գերի, օձիքը ձեռք սված, բռնադատվում էր և զբաղված էր լինում հանելու իր վերարկուն կամ տաբատը, ետևից հասնում էին երկաթյա խարազանը և «յուրու»¹⁵⁶ (քայլի՛ր) սարսափազդու գոչը:

Ճանապարհի վրա այթոռներ, նավթի թիթեղներ գցում էին մեր ոտների առաջ, որպեսզի սայթաքինք, ընկնենք և կոխոտվենք մեր հետևից եկողների կողմից, քանի որ ընկնողը չէր կարողանում վեր կանգնելու և անմիջապես հասնում էր սվինը: Թրքերի վերաբերմունքը ինչքան էլ վատ էր ազդում մեզ, հրեաների կեցվածքը սակայն մեզ դառն ու կծու էր թվում: Մանավանդ Քեմերի պողոտայի վրա, Այ Վուզլայի շրջանում, մեզ դիտելու համար, իբր զվարճության առարկա,

¹⁵⁴ *Խընգըր գյավուր* (թուրք.՝ *hinzir gāvur*), անհավատ խոզ:

¹⁵⁵ *Չեթե* (թուրք.՝ *çete*), հրոսակախումբ:

¹⁵⁶ *Յուրու* (թուրք.՝ *yürü*), քայլի՛ր:

փողոց ելած հրեաները հեգնական խոսքեր էին ուղղում մեզ, մանավանդ հույների ուղղյալ ասում էին. «Պարումե տին Պոլի կե տին Այա Սոֆիա» հե՞, Թորա թապաթե ստին Պոլի, ստի Կոկինի Միլյա*»¹⁵⁷ («Առնեք պիտի Պոլիսն ու Այա Սոֆիան», հե՞, հիմա գնալու եք Պոլիս և Կոկինի Միլյան): Սադայեչական ծիծաղով դիտում էին մեզ և անարգում: Պատահեք, որ մեր միջից ճանաչեին որևէ մի հայ, մատնանիշ անելով թուրք պահակներին, ասում էին. «Չավո՛ւշ, էյի՛ ադամ, էրմենի՛, թավո՛ւկ, թավո՛ւկ»¹⁵⁸ («Չավո՛ւշ, բարի՛ մարդ է, հա՛յ է, հա՛վ է, հավ», այսինքն՝ զոհացու, մորթվելու արժանի...): Քովընտնի մի պատշգամբից մի հրեա կին, իրենց գիշերային պետքամանի բովանդակությունը շուռ էր տալիս ներքևից անցնող գերիների գլխին, գոչելով՝ «Յաշասը՛ն Մուրթաֆա Քեմալ փաշա, յելտի էսկի բարամիզ, Յաշասը՛ն էսկի բարամիզ, հո՛շ յելտինիզ...»¹⁵⁹ (կեցցե՛ Մուստաֆա Քեմալ փաշա, եկա՛վ մեր նախկին հայրը, կեցցե՛ մեր նախկին հայրը, բարո՛ւ վ եք եկել):

Մեր կարավանի մեջն էր նաև մի հույն հայր, իր չորս երեխաներովը՝ երկու աղջիկներ՝ 14 և 12 տարեկան, 9 տարեկան մի մանչ, իսկ գիրկն էր առած հագիվ տարի ու կեսվա մի աղջիկ: Մինչև Բաշ Օթուրաք հասնելնիս, արդեն կորսվել-առևանգվել էին երեքը, մնացել էր ամենափոքրը, որ հորը գրկումը գունվելու բարեբախտությունն էր ունեցել և հորը ողջ մնալուն բախտավորության էլ ինք էր պատճառ դարձել:

¹⁵⁷ * Տե՛ս բացատրությունը «Մեծ ախորժակով փոքրը» գլխին տակ |Մ. Բ.]: *Պարումե տին Պոլի կե տին Այա Սոֆիա, հե՞. Թորա թապաթե ստին Պոլի, ստի Կոկինի Միլյա* (հուն.՝ Πρέπει να πάρομε την Πολύ και την Αγία Σοφία. ε; Τώρα θα πάτε στην Πόλη και στην Κόκκινη μολιά). պետք է գրավենք Պոլիսն ու Սոֆիան, հե՞, հիմա գնալու եք Պոլիս և Կոկինի Միլյա:

¹⁵⁸ *Չավո՛ւշ, էյի՛ ադամ, էրմենի՛, թավո՛ւկ, թավո՛ւկ* (թուրք.՝ Çavuş, ey adam. Ermeni, tavuk. tavuk). սայա, հեն՛ջ մարդ, հայ է, հավ է, հավ:

¹⁵⁹ *Յաշասը՛ն Մուրթաֆա Քեմալ փաշա, յելտի էսկի բարամիզ, Յաշասը՛ն էսկի բարամիզ, հո՛շ յելտինիզ* (թուրք.՝ Yaşasın Mustafa Kemal Paşa, geldi eski babamız,yaşasın eski babamız hoş geldiniz), Կեցցե՛ Մուստաֆա Քեմալ փաշան, եկավ մեր նախկին հայրը, կեցցե՛ մեր նախկին հայրը, բարով եք եկել:

Շարունակում էին թրքական երեք արյունաբույր բառերը «յուրո՛ւ, յանա՛շ, չըգա՛ր»¹⁶⁰ (քայլի՛ր, մոտեցի՛ր (իրարու), հանի՛ր (փողը))։ Երե՛ք բառեր, երրորդությունը, գեհենի թագավորությանը, եռաստղը թրքական արյունոտ երկնքին, եռոտանին, ոսկրակերտ թրքական հաղթանակի... կոթողին։ Այնքա՛ն խոր էին ազդել այդ երեք բառերը գերիների մտքին ու էության վրա, սարսափի և եղեռնի ազդանշան և ահազանգ էին դարձել, որ տարիներ հետո, ազատ և ապահով հողի վրա, հանկարծ երբ արտասվեն, լսող յուրաքանչյուր նախկին գերիի մազերը փուշ էր լինում և սիրտն էր բաբախում գեշ նախագացումներով։

Կարավանի երկու կողմից մեզ հետասանդող թուրք խուժանը պահակ զինվորների ափը դրված մի քանի պանկանոտ նույնիսկ կես պանկանոտի փոխարեն քաշում տանում էին գերիներից՝ սպաննելու հաճույքը ունենալու համար։ Շատ շատեր մահառիթ զվարճության առարկա դարձան գազանաբարո թրքերի կողմից, դանդաղ և չարչարալից մահվան ենթարկվելով, կտրելով ականջը, քիթը, հանելով աչքը, վերջապես անլուր խոշտանգումների ենթարկելով իրենց զոհը...

[Բացակայում է ձեռագրի 126-րդ էջը՝ Թ.Մ.]։

... Բացի այդ, մեր մեջ կասկածն էր արթնացել, թե գուցե զանազան հիվանդությունների սերմն ու պատվաստն էլ դրած լինեն այդտեղ։ Մի՞թե անհավանական էր։ Ամեն ինչ կարելի էր սպասել։



Մեր կարավանին մեջ գտնվում էին 250 հայեր։ Սրանց կարգին նաև վաճառական Միքայել Զևահիրջյան, որը չափազանց ազդված էր թվում։ Աչքերի գույնը փոխված էր կարծես։

¹⁶⁰ Յուրո՛ւ, յանա՛շ, չըգա՛ր (թուրք.՝ Yürü, yanaş, çakar), քայլի՛ր, մոտեցի՛ր, հանի՛ր։

Գունատ և հուսահատ վիճակ ուներ: Մեր հուսադրելու կամ խրախուսելու բոլոր փորձերը ոչ մի ազդեցություն չէին անում իր վրա: Ինք որ տեղացի էր և իրեն ծանոթ էին ճամփան և հեռավորությունները, երևակայելով հաջորդ օր մեր քայլելիք ճամփան, թունդ էր եխում¹⁶¹ սիրտը: Շատ անհանգիստ էր գիշերը, երբ քնանալ կարելի չէր, ամեն կողմից մեզ շրջապատող վախ ու սարսափի ազդեցությանը տակ: Միշտ վախն ունեինք, թե ենթարկվելու էինք գիշերային հարձակումի, կողոպուտի կամ սպանության:

Մեր Բունարբաշը¹⁶² հասնելու օրը, մեզանից հետո հասավ 150 հոգիանոց մի ուրիշ կարավան: Մրանք Գըշլայից դուրս տարված արիեստավորներ էին՝ զանազան շենքերում աշխատացնելու համար, որոնց այժմ հավաքել և դեպի գավառ ճանապարհ էին դրել: Այնպես որ հոկտեմբեր 12-ի առավոտուն 840 հոգիանոց կարավան դարձած, մեզ ճանապարհ դրին Բունարբաշուց: Ետ դարձել էին Իզմիրից մեզ ընկերացող հեծյալ զինվորները և այժմ մեզ ընկերանում էին հետիոտն զինվորներ, իրենց սպայովը: Խեղճուկրակ, առանց համագգեստի, գյուղացիական վարտիքով ու գրակով մարդեր էին, ուսերնին մավզեր¹⁶³ կամ մարթինի առած:

Այս օրերս, պաշտոնական մի հրամանով, արգիլված էր ուղղակի ջարդը և սակայն չէր դադարել կողմնակին և կամ անպաշտոնը: Արտոնված էր և հրամայված կարավանից ետ մնացողները սպանել: Ուստի, որպեսզի չկարողանայինք առաջանալ խմբի հետ, մեզ վազեցնում էին, հոգնեցնում և սպանում, ինքզինքնին արդարացնելու պատճառ գտնելով, և կարելի էին դարձնում ընկածը կողոպտելը, տիրանալու նույնիսկ պատառոտած վերարկուին կամ ծակ կոշիկին: Ջարտուղի ճամփաներից, ձոր ու բլուրներից մազլցելով ստիպված

¹⁶¹ Թունդ էլնել, տակնուվրա լինել:

¹⁶² Բունարբաշը (թուրք.՝ Pınarbaşı), թաղամաս Զմյուռնիայում:

¹⁶³ Մավզեր, ավտոմատ ատրճանակի տեսակ, մաուզեր:

էինք վազել, խուսափելու համար մեզ հալածող սվիններից: Այս վիճակով հասել էինք մի տափաստան, սովորական պողոտայից կամ ընթացիկ ճանապարհից հեռու: Մեզ նստեցրին և սպան խոսք առնելով՝ ասաց. «Տեսաք, որ մինչև այստեղ հանգիստ եկաք, ձեր ոչ մի բանը ոչ որ չառավ, ես ոչ մի պատասխանատվություն չեմ ստանձնում, սակայն սրանից հետո, եթե երբևէ որևէ բան անեն զինվորները: Ուստի խորհուրդ եմ տալիս ձեզ ինձ հանձնել ինչ որ ունեք՝ դրամ, մատանի, ժամացույց ևն, արձանագրենք ձեր անունները և երբ Մադնիսս կհասնենք, ձեզ կվերադարձնենք»...: Ի՛նչ բարեխիղճ մարդ...: Իր հրամանի տակ գտնվող զինվորների ավազակությունը խոստովանող և նրանց հանդեպ ոչ մի պատասխանատվություն չստանձնող և սակայն ... գերիների համար մտահոգվող...: Ահա գառան մորթով գայլը: Մեզ համար չափազանց հասկանալի էին այդ բարեգութ... հորդորի միտք բանին, թե երկրորդ պաշտոնական կողոպուտը սկսելու էր:

Այս սպան էլ առավ իր բաժինը և դարձյալ ճանապարհ ընկանք:

Ջևահիրջյան ավելի ընկճված վիճակ ուներ: Փոխն ի փոխ թևը մտած օգնում և խրախուսում էինք, սակայն հուսահատ էր և մեր խոսքերը կարծես ոչ մի օգուտ չունեին: Ծարավն ու անոթությունն էլ թրքերի պակասն էին լրացնում: Ճանապարհի վրա չկար աղբյուր, որտեղից կարողանայինք խմել և մի քիչ զովանալ: Հեռի՛, ձորի հատակին երևում էին լճացած ջրեր, բայց ո՛վ էր համարձակողն իջնելու այդտեղ, ուղղակի դիմավորելով մահը: Գտնվեցին սակայն այդ մահը աչք առնողներ, իրենց պապակած բերանը թրջելու համար փորձեցին բաժանվել և հեռանալ խմբից, և դիտապաստ¹⁶⁴ ընկան գնդակների տակ, Սաբունջի Բելիի արհավիրակից¹⁶⁵ կիրճերի արձագանքների միջից, գլորվելով ձորի խորերը: Ճանապարհի երկու

¹⁶⁴ *Դիտապաստ*, դիակի պես գետնին փռված:

¹⁶⁵ *Արհավիրակից*, արհավիրքներով լի:

կողմերն էլ բազմաթիվ դիակներ կային, մեզ նախորդող կարավաններից ընկած:

Փոշու ամպերը մեզ պատել էին, շնչահեղձ անելու աստիճան: Այդ պայմանների տակ Ջևահիրջյան բավական ևս քայլեց, քաշկոտվելով իր ընկերների կողմից, սակայն Մադնիսայից ժամ ու կես այս դին, իսկ Բոզքոյից¹⁶⁶ հազիվ քսան թոպե հեռուն էլ անկարող լինելով շարունակել ճամփան կթոտում¹⁶⁷ և իրեն օգնող ընկերոջ թևը թողած ընկնում է, հազիվ լսելի ձայնով ասելով. «էլ չեմ կարող քայլել, գնացեք դուք, ես կմնամ այստեղ»: Կառաջանա կարավանը, մենակ ետ կմնա ինք և հետսապահ¹⁶⁸ զինվորի ավինի մի հարվածը և հաջորդող կրակոցը բավ կլինի, փետուրից ազդվելու աստիճան տկարացած ու երերկոտ¹⁶⁹ Միքայելին: Լսեցինք կրակոցը և վերջին օգնող ընկերն ասաց. «Ավաղ սպանեցին Միքայելը...»: Առաջին ծանոթն էր, որ թողնում էինք արյան ճամփի վրա: Մեր աչքերը արտասուքով լի, նույնիսկ ետ նայելու և մեր բարեկամի դիակը տեսնելու իսկ հնարավորությունը չունեինք, մեր սրտերը թունդ հանող «յուրո՛ւ, յանաշ»¹⁷⁰ վայնաստուների տակ, անտեղյակ յուրաքանչյուրիս վերապահված վախճանին:

Քսան թոպե քայլելուց հետո հասանք Բոզքոյ կոչված գյուղի առաջ: Առատահոս աղբյուր, սառը ջուր և ... նստել հանգստանալու հրաման: Ի՛նչ անակնկալ և անսպասելի հրաման: Ի՛նչ բախտավորություն, որից զրկվեց խեղճ Ջևահիրջյանը: Եվ այստեղ է, որ մեր սրտերը կրկնապատիկ ցավ զգացին, մտածելով, թե քսան թոպե ևս որ դիմանար, փրկվելու էր Միքայելը: Իր ծարավը փարատելու համար կար առատ ջուր, իսկ տրված հանգիստը կարող էր կազդուրել նրան և այդպիսով

¹⁶⁶ *Բոզքոյ* (թուրք.՝ Bozköy), թաղամաս Ջմյունսիայում:

¹⁶⁷ *Կթոտել*, տկարանալ, թուլանալ, ուժաթափվել:

¹⁶⁸ *Հետսապահ*, վերջապահ:

¹⁶⁹ *Երերկոտ*, երերուն, երերացող:

¹⁷⁰ *Յուրո՛ւ, յանաշ* (Yürü, yanaş!), քայլի՛ր, մոտեցի՛ր:

ազատվել մահից: Սակայն ո՛վ էր իմացողը, թե ինչեր կային մեր ճանապարհում և կամ ո՛ր ճանապարհից տանելու էին մեզ:

Այստեղ պահակ զինվորների մեջ սկսեց մի խորհրդավոր խոսակցություն: Ոմանք առաջարկում էին համոզել սպային, որ կարավանը գիշերե Բոզքյոյում և առավոտյան իջնեն Մադ-նիսա, ասելով, որ իրեն կապահովեն շնորհքով սենյակ և հանգիստ անկողին և որ հաջողին համոզել՝ գիշերն էլ իրենք կկողոպտեն գերիները: Ասում էին իրար՝ «Մենք ոչինչ չհասկացանք այս գործից»: «Ինք ճամփան հավաքեց գյավուրների փողերը, իսկ մենք ոչինչ չենք առած», — ասում էր մի ուրիշը: Եվ իսկապես էլ, հաջողվել էր նրանց համոզել սպան, որ թիչ հետո մեզ վերցնելով աղբյուրի առաջից, առաջնորդեցին գյուղը և մեզ լցրեցին մի չջանված պարտեզում:

Անցել էր հազիվ մի ժամ, սկսեց «չըքա՛ր, չըքա՛ր» (հանի՛ր, հանի՛ր)¹⁷¹ հանգերգը: Սպան մոտերնին չէր, հետևաբար ազատ ու համարձակ սկսել էին կողոպտել գերիներին: Արդեն մթնել էր: Մեզ իրենց մեջ բաժանել էին հեծյալ և հետի զինվորներ, և իբր ավար, սկսել էին կողոպտել: Հեծյալները ավելի կազմակերպված և հիմնական ծրագիր էին գործադրում կողոպուտի համար: Տանում էին տասնական հոգի և գնացողը չէր վերադառնում: Հեռուն, ձիթենիների տակ մի լույս էր պլպլում, սակայն չէինք իմանում, թե ինչ էր անցնում դառնում: Հասել էր կարգը նաև մեզ: Առաջնորդվեցինք ձիթենիների տակ: Եվ ի՞նչ տեսարան պարզվեց մեր աչքերի առաջ: Մեզանից առաջ գնացող տասնյակը, բոլորովին մերկ վիճակում, շարվել էր: Երկրորդ խմբին հրավեր էին կարդում և խորհուրդ էին տալիս անմիջապես հանձնել ինչ որ ունեին, հակառակ դեպքում նրանք էլ մերկացվելու էին, այդտեղ կանգնածների նման և վա՛յ էր եկել նրան, որի վրայից գտնվելու էր փող կամ որևէ արժեքավոր բան, ձիթենիների տակ սասուկեցվելու էր...:

Հերթը հասել էր ինձ: Գըշլան և ճանապարհում կատար-

¹⁷¹ Չըքա՛ր, չըքա՛ր (թուրք.՝ Çıkar çıkar), հանի՛ր, հանի՛ր:

ված կողոպուտ ու թալաններից, հաջողել էի մի մաս դրամ ազատել, սակայն այս մեկ տեղ անկարելի էր թաքցնել: Ուրիշ միջոց չկար, ուստի հարկադրյալ, ձեռքովս հանձնեցի ինչ գումար որ ունեի վրաս, որը այլևս թշնամի էր ինձի: Անցա «ազատվածների» կարգը: Վերջացավ գիշերային թալանը հազիվ կես գիշերում և մեզ վերադարձրեցին պարտեզը, մեր նախկին տեղը: Ահաբեկված ոչխարի հոտի նման, խոնված ու իրար կպած, մնացինք մինչև առավոտ: Երբ լուսացավ, սկսեց մի նոր տեսակի կողոպուտ ու թալան: Այժմ փող կամ նման արժեքավոր իրեր չէին փնտրում, վստահ լինելով, թե հավաքել պրծել էին և ոչ ոքի մոտ բան չէր մնացել: Կարգը հասել էր վերարկու, տաբատ, բաճկոն, կոշիկ, վերջապես հագուստեղենի վերաբերյալ բաներ պահանջելու և կողոպտելու և առանձին էլ քսան քայլ անդին գյուղացուն ծախելու: Արդեն նախատեսելով որ մեր զգեստեղենն էլ հանել կտային, ինքնաբերաբար և հուսալով թե այդպիսով անպետ նկատելու են, պատռել, ծակծկել փչացրել էինք մեր վրան գլուխը, սակայն ոչ մի օգուտ չարեց: Հանել տվեցին եղածն ու չեղածը, մեզ թողնելով մերկ ու բոքիկ:

Գըշլայից սկսյալ, քանի ներսերն էինք գնում, այնքան զարգանում էր ազահոթյունն ու աստիճանական փոքրոգությունը: Գըշլայից մինչև Բունարբաշի կողոպտիչները փնտրում էին մեծ գումարներ և թանկարժեք իրեր, մինչև Բոզքոյ գիջանում էին և ավելի փոքրերին, իսկ Բոզքոյից անդին, պատահական պատահոտած զգեստն ու ծակ կոշիկն էլ արժեք էր ներկայացնում:

Եվ այստեղ ոտներիցս հանել տվին և առան կոշիկներս: Մնացել էի բոքիկ: Ինչպես քայլելու էի քարքարուտ ու փշալից ճամփան: Աջից ձախից մի քանի կտոր քուրջ ճարեցի, փաթաթեցի ոտներիս և կարավանը ճամփա ելավ դեպի Մաղնիսա:

«ԲԱԽՏԱՎՈՐ» ՎԱԽՃԱՆԸ

Բողբյոյից ճամփա ելանք հոկտեմբեր 13-ին: Ժամ ու կեսից հասանք Մաղնիսա: Երթնեկը պակաս չէր ճամփի վրա: Թուրքեր կառքեր նստած, հետի կամ անասունների վրա, գնում էինք դեպի Իզմիր: Սաբունջիբեկի¹⁷² անցքը նեղ էր և կարավանը անցնելու ժամանակ, ստիպված պատի տակ էին կծկտվում, որպեսզի մեզի անցք տան: Մի անկյուն քաշված կառքի վրա բարձրացած մի թուրք, երբ մեր շարքն էր անցնում իր առաջից, հանկարծ ինձ մատնանշելով, սկսեց գոչել. «Չավո՛ւշ, չավո՛ւշ, տենո՞ւմ ես այս գլավուրին, հայ է, Մաղնիսայից է, ինչու եք բերել այստեղ, սասուկացրե՛ք պրծնի, գլորեցե՛ք սա ձորից վար»:

Կողքիս գնացող պահակ զինվորը, որի կռնակի պայուսակը կամովին վերցրել էի Բունարբաշուց և կրել էի մինչև Բողբյոյ, այն նախատեսությամբ, որ այդ պատճառ լինելու էր, որ զինվորը ինձ խնայեր և ավելին, ճամփան իր հետ ես էլ կկարողանայի մի պուտ ջուր խմել, չէի սխալված: Մինչև Բողբյոյ ոչ մի կերպով վնասված չէի: Բողբյոյի գիշերվան կողոպուտն էր, որ ինձ վնասեր էր: Այդ գյուղից ելնելու ժամանակ դարձյալ վերցրեցի այդ զինվորի պայուսակը, որպեսզի դեպի Մաղնիսա ճամփու վրա էլ գոնե մի կերպ ինձ խնայող գտնվեր, իր պայուսակին սիրույն...:

Որով, կառքի վրայից պռռացող թրքին ձայնը որ լսեց զինվորը, մի պահ ինձ նայեց, կարծես հաստատողական պատասխան կամ բացատրություն սպասողի ձևով: Իսկույն վրա բերի. «Ինչ էլ լավ ճանաչում է, ես որ առաջին անգամ է գնում եմ Մաղնիսա»: Բարեբախտաբար լրջության չտարվեց և շարունակեցինք մեր ճամփան: Տարակույս չկա, որ պայուսակը, որ կռնակս ունեի, փրկել էր ինձ: Երբ Մաղնի-

¹⁷² *Սաբունջիբեկի* (թուրք.՝ Sabuncubeli, Sabuncubeli Geçidi), Զվյունիսան Մանիսային կապող լեռնանցք:

սա հասանք և ամիսներ հետո քաղաքի միջից անցնելու ժամանակ, մի խումբ թրքեր դարձյալ կարծեցին, որ տեղացի մի հայ եմ, բայց հասկացվեց, որ իսկապես շատ էի նմանում Մադնիսացի մի հայու, որ արդեն հեռացել էր քաղաքից կամ սպանվել էր...

[Բացակայում է ձեռագրի 133-րդ էջը՝ Թ.Մ.]:

Ծարավից կարծես ուռել էին մեր լեզուները: Խոսք խոսելու անկարող էինք դարձել, իսկ ո՛վ էր մեզ մեղքցողն ու ջուր տվողը: Քաղաքացիներ եկել արտոռի պատուհաններից մեզ էին դիտում հրեշային քմծիծաղով: Ձմերուկի եղանակն էր և դուրսը կանգնած մարդիկը, միջուկը կերած, կեղևները մեզ էին գցում, մեզ անասունների տեղ դրած և վայելելու համար մեր անոթության և ծարավի հարձակումները: Կեղևի մի կտոր հագիվ թե ընկած էր մեր մեջ, ձեռքից ձեռք էր խլվում. ցեխ ու աղոտությունների մեջ թաթախված մի կտոր կեղև ծամում ծծում էին անհագաբար:

Երեկոյան դուրս հանեցին մեզ և սկսեցին ջոկել: Առանձնացրեցին հույն զինվորները, հույն ոստիկանները և բուլղարահպատակները: Մնացին քաղաքային (սիվիլ) մարդիկ միայն կամ իր զինվորությունը թաքցնող, զգեստը փոխած հույն զինվորներ: Այս վերջինները շարքի դնելով, սկսեցին տասնական հոգի տանիլ – բայց չէինք իմանում, թե որտեղ էին առաջնորդում: Ձիթենիների ներքև բազմաթիվ մեռյալներ կային և կասկածում էինք, որ այսպես տասը տասը տանել սպանելու էին: Թեպետ զենքի ձայն չէր լսվում և սակայն գնացողներն էլ չէին վերադառնում:

Կարգը հասել էր մեզ: Առաջնորդվեցինք արտոռի ետևի դռան: Այդտեղ կանգնել էր մի հաղթանդամ թուրք չավուշ: Մի ձեռքը ուներ սուլիչ, մյուսին էլ գավազան: Կարծես զինվորական մարզանքի հրամաններ էր տալիս, մեկ սուլում էր և սրան հաջորդում էր փայտի հարվածը մեր գլխին ու կռնակին: Այս ձևով մտանք արտոռից ներս:

Ահավոր էր ներսի տեսարանը: Առաստաղից կախել էին մի լամբար¹⁷³, որի տմույն¹⁷⁴ լույսին տակ, ձախակողմյան մսուրների առաջ սեղմված, խոնված էին մեզնից կանուխ առաջնորդվածները: Աջակողմի մսուրների առաջ շարքով կանգնած էին թուրք զինվորները, յուրաքանչյուրը մի մի գերի բռնած, զբաղվել էին կողոպտելով, սարսափելի ծեծի, տանջանքի և հայիոյությունների տակ: Ինձ էլ քշեցին նրանց կարգը: Հարվածների ազդեցությանը ներքև մի պահ կորցրեցի հավասարակշռությունս, երբ մի զինվոր, թևիցս բռնած սոսկալի ցնցումով ինձ խփեց մսուրին և սկսեց գոռալ՝ «չըքա՛ր, փարա՛ չըքար»¹⁷⁵: Արդեն Բոզքոյ հանձնել էի ունեցածս ու չունեցածս, որով այն բոլոր ջանքերս, որպեսզի համոզեմ, թե չունեմ, թե ամեն ինչ որ ունեի վերցրել էին, ոչ միայն անօգուտ էին, այլև երեսիս էին բղավում «ուլեն, ալդըլար դեմե՛, գալ մաղը դե»¹⁷⁶ (տո՛, մի՛ ասեր «առան», ասա, «չմնաց»), կարծում ես իմ այդ խոսքերիցս վիրավորվում էր իր արժանապատվությունը, այդպես զգալով և իրենց կողոպտելուն վատ բան լինելը: Մազերիցս կալանած, գետնից գետին էր դուպում. չհավատալով խոսքերիս: «Հանի՛ր, դեմքիցդ հայտնի է, որ ունևոր ես...» էր գոչում և կառքի անիվին երկաթ բանալիքովը խփում էր կոնակս ու մազերս էր քրքրում, միջից մի բան գտնելու հույսով: Անկարելի եղավ վստահեցնել, որ ոչինչ չունեի, և... մերկացրեցին ինձ: Երբ չգտան որևէ փող կամ արժեք ներկայացնելիք իր, վերցրեցին ամեն ինչ որ հանել էին վրայիցս, նույնիսկ թաշկինակ չթողնելու պայմանով: Մնացել էի մերկ: Զինվորը հետաքրքրված իսկ չուներ, թե մերկ էի: Հարկադրված ասացի. «Հապա ի՞նչ հագնելու եմ ես»: Կարծես խղճաց... և իմ

¹⁷³ *Լամբար*, ճրագ, ջահ, լապտեր:

¹⁷⁴ *Տմույն*, աղոտ:

¹⁷⁵ *Չըքա՛ր, փարա՛ չըքար* (թուրք.՝ Çıkar para çıkar), հանի՛ր, փող հանիր:

¹⁷⁶ *Ուլեն, ալդըլար դեմե՛, գալ մաղը դե* (թուրք.՝ Ulan, aldılar deme kalmadı de), տո. մի՛ ասա «առան», ասա՛ «չմնաց»:

մոտ կողոպտվող մի հույնի կոնակից հանված աղտոտ ու հին շապիկը շարտելով երեսիս՝ ա՛ն, հագի՛ր, – ասաց:

Հանդիսատեսի... շարքը անցանք մենք էլ: Իսկ կողոպուտը շարունակվեց մինչև վերջին գերին: Հանկարծ լուր տարածվեց, թե մեզ կերակուր տալու են: Երևի կանխիկ ստանալու էին փոխարժեքը..., որ մեզ բերել էին կողոպտելու: Երեք օր է, մնացել էինք անոթի և ինչքան էլ հաճելի էր այդ լուրը մեր ականջներին, անհավատալի էինք գտնում: Եվ սակայն, քիչ հետո իրականություն դարձավ: Դարձյալ հրամայեցին դուրս գալ տամսական հոգի, սակայն դարձյալ փայտի և խարազանի հարվածների տակ: Բացաստանում¹⁷⁷ մեզ նստեցրեցին տամսական հոգի: Մութ էր և հագիվ նշմարելի էին երթևեկողները, որոնք բերին մեր առաջը, երկաթ տախտակի վրա թափեցին ձավարի եղինձ¹⁷⁸: Սովալլուկ, մեր ափերով հարձակեցինք: Մի ափ վերցնել կարողացողը երջանիկ էր համարում իրեն:

Մաստիկ ծարավել էինք: Հինգ քայլ անդին կար կանոնավոր ջրհոր և սակայն չէին թույլատրում, որ մոտենայինք խմելու: Ծեծ, փայտ և խարազանի հարվածների տակ կարողացանք ջուր խմել և քիչ թե շատ բավարարված, վերադարձանք ախոռը, առանց գիտենալու, թե ինչ էր պատահելու մի ժամ վերջ: Մութ էր ախոռը և չէինք իմանում, թե որտեղ ենք կանգնել: Ընկող, ելնողների ոտքի տակ մնացողների գոռում գոչումը շարունակեց մինչև լույս: Առավոտ որ եղավ, հրամայվեց դուրս գալ: Չավուշը հայտնի դժգոհությամբ մեզ ասում էր. «Տո՛, գյավուրներ, բախտավո՛ր եք, էլ տեղ գնալու չեք, այստեղ Մադնիսայում մնալու եք և մի առանձին գունդ կազմելու եք»: Եվ կարգի դնելով մեզ, առաջնորդեցին Սալթա կոչված հայոց թաղը, վարժարանի շենքին ետևը գտնվող այգու տնակին առաջ: Այստեղ մի սպա մեզ անջատեց 20-ական հոգի-

¹⁷⁷ *Բացաստան*, արձակ, բաց տեղ:

¹⁷⁸ *Եղինձ*, ձավարով կամ բրնձով թանձր կերակուր:

նոց չորս խմբերի և ուղարկեց դպրոցի շենքը: Այստեղ, արդեն չորս խմբերի բաժանված հազարից ավելի գերիներ կային, որոնց վրա ավելացանք մենք: Հայկական դպրոցի այդ խեղճուկրակ շենքի մեջ, այդ գիշեր 1900 հոգու մոտ էին, մի շենք, ուր հազիվ 300 հոգի կարելի է տեղավորել:

Այսպես կազմվեց «14-ինջի ուսերա ինշաաթ թապուրը»¹⁷⁹ (գերիների շինարարության 14-րդ գունդը) և դրվեց Սուրեյա անուն ռումելիցի մի զինվորականի հրամանին տակ:

«Տասնչորսերորդ ուսերա ինշաաթ թապուրը» կոչվում էր մեր գունդը: Մեր մտքերը տարվում էին հազար ու մեկ ենթադրությունների: Անորոշությունն ու անստուգությունը մեր ամենամեծ տանջանքն էր: Չէինք իմանում, թե ինչ էր թաքնվել գնդի այդ անունին տակ: Ուրեմն մեզ բանեցնելու էին այրած քաղաքի վերաշինության համար: Ամեն ինչ հանձն առել էինք պայմանավ, որ կյանքի ապահովություն ունենայինք, ... չսպանվեինք:

Թային¹⁸⁰ հացը ստանում էինք ամեն օր, հաճախ ցեխի նման սև ու անմարսելի, իսկ կես ժամ հեռի «նոգթայի»¹⁸¹ խոհանոցից էր, որ ձողերի անցկացված խալկիններով բերում էին ճակատագրական սև բակլան, որդերի ու միջատների... սև սունիճով համեմված: Հոժարել էինք այդ բոլորին, բավ էր, որ ստամոքսնիս ստանար մի քանի գդալ տաք կերակուր: Եվ այդ մի քանի գդալ կերակուրի համար պատերա՛զմ էր լինում, խմելու համար իրարու ձեռից: Չկար ո՛չ գդալ, և ո՛չ էլ կերակուրը մեջը դնելու աման: Թիթեղի կտորներ քարով ձեծելով ու ձեռելով պատրաստում էինք ռոքինսոնյան գդալներ: Եվ այս կյանքը շարունակվեց ամիսներ:

¹⁷⁹ 14-ինջի ուսերա ինշաաթ թապուրը (թուրք.՝ Ondördüncü üsere inşaat taburu), գերիների 14-րդ շինարարական գունդը:

¹⁸⁰ Թային (թուրք.՝ tayın), չափաբաժին, օրապահիկ, կառավարության նպաստ (դրամ կամ ուտելիք):

¹⁸¹ Նոգթա (թուրք.՝ nokta), կետ:

Ջրի պակասը երկրորդ տառապանք էր, որ մեզ տանջում էր: Բակի հորի ջուրը ոչ մի կերպով բավարար չէր 2000-ի մոտ բազմության համար, իսկ դրսից ջուր բերել չէին արտոնում: Ժամերով հերթի կանգնած գավազանի հարվածների տակ սպասում էինք մի բաժակ պղտոր ջուր խմելու համար:

Այդ օրերին շարունակ անձրև էր գալիս, ուստի հարկադրված շենքից դուրս էինք մտնում, քանի որ մեր մերկությունը ծածկելու չափ իսկ զգեստ չունեինք մեր վրան: Իսկ ներսի կյանքը անտանելի և հեղձուցիչ էր: Եվ մի օր, իսկապես էլ, շնչահեղձ լինելու աստիճանին հասա և ինձ դուրս ձգեցի, հոգ չէ թե անձրևի տակ թրջվել էի մինչև լույս:

ԿԱՐՄԻՐ ԶԱՐԴԸ

Սեպտեմբերի 10, կիրակի, գրավման երկրորդ օրն իսկ Իզմիր էր հասել Մուսթաֆա Բենալ փաշան: Ըստ իր կանխօրոք հայտարարությանը, եկավ և ապաստանեց Կոնստանդին թագավորի իջևանած և բնակած շենքում: Իզմիրի ծովածոցի ջրերը ծածկված տեսնելուց հետո հայ ու հույն ժողովրդի գլխարկներով, արժանացել էր և իր ցանկությունը՝ հեռվից դիտելու բոցերի մեջ լափվող քաղաքը և փրկության համար ոգորոդ մարդկային զանգվածները՝ որպես մի նոր Ներոն:

Թուրք ժողովուրդը արդեն ստացել էր ջարդի հրամանը, և սակայն Մուսթաֆա Բենալ չէր գոհացել կատարվածով: Մինչև կառավարատուն իր երթ ու դարձից հետո, դժգոհ երևույթով ասել էր. «Ինքնաշարժս դիակների վրայից չանցավ տակավին»...: Այս մի խոսքն իսկ բավ էր հասկացնելու թուրքին, թե կարելի է անխնայորեն ջարդել քրիստոնյաները, մինչև որ անցք չի մնար ինքնաշարժերի և ... իրենք քայլեին դիակների վրայից:

Կորդելիո բնակող հայերից շատ քիչեր միայն ազատվեցին: Ձերբակալվեցին բոլորը, բոլորը տարվեցին Սո-

ղութ Գույու¹⁸², Փափագլար և ավելի հեռուներ ու ջարդվեցին, բժիշկներ, փաստաբաններ, վաճառականներ, իզմիրահայության ընտրանին:

Բայրաքլից¹⁸³ ձերբակալվեցին 40 հայ երիտասարդներ, տարվեցին գյուղի կոնակի ձորը և սվինահար եղան բոլորն էլ: Նրանցից երկու հոգի միայն, մին որդի Ներսիսյան, բարեբախտաբար թեթև վիրավորված, ո՛վ է իմանում քանի օր այդտեղ մնալուց հետո ուշաբերվում է, իջնում Կորդելիո և ապաստանում մի տուն, սակայն կրկին ձերբակալվելով՝ փոխադրվում է Գըշլա, որտեղից մեզ հետ առաջնորդվեց գերության:

Իզմիր և արվարձաններում կատարված ջարդը ահավոր էր և սակայն ավելի ներքին գավառներ – Մաղնիսա, Բալքեսիր և շրջաններում գործ դրվածը սահմոկեցուցիչ էր: Ուռլայի¹⁸⁴ բնակչությունը, որ բացարձակ մեծամասնությամբ հույներ էին, սրանք դիմադրած լինելով թրքերին, ենթարկվեցին զանգվածային կոտորումի: Ողջ մնացած կանայք բռնաբարվեցին, առևանգվեցին և մնացած ժողովուրդն էլ կենտրոնացրին Բալչոլայի¹⁸⁵ զինվորական տաղավարներում, իսկ ձերերին, որոնք չէին սպանված, կմախքացած, փոշեթաթախ, տանջանքներով, բերին դրին Գըշլայում: Մասնավոր հալածանքի էին ենթարկվում և մենք մեզ բախտավոր էինք նկատում, բաղդատելով մեր վիճակը նրանց հետ, մենք, որ ամեն բոլակ ապրում էինք մահվան սարսափը: Քաղցած էին, ով է իմանում քանի օրից: Չունեինք մենք էլ ուտելու բան և սակայն տալիս էինք ինչ որ ունեինք, որպեսզի ապրեն այդ 70-80 տարեկան ձերունիները: Ինչ դժվար բան էր տեսնել առամները

¹⁸² *Սողոր Գույու* (թուրք.՝ soğuk Kuyu), թաղամաս Զնյունիայում:

¹⁸³ Իզմիրի մարզի (11,973 կմ²) 31 շրջաններից մեկը [Մ. Բ.]:

¹⁸⁴ Իզմիրի մարզի 31 շրջաններից մեկը [Մ. Բ.]:

¹⁸⁵ Իզմիրի մարզի 31 շրջաններից մեկը [Մ. Բ.]:

թափած ծերունու բարսիմատ¹⁸⁶ ծամելը, իր լինդերովը: Համաձայն Նուրեդդինի փաշայի բեյաննամեին¹⁸⁷, փոխանակ ազատ թողնվելու այս խեղճերը, իբրև գերիներ, հաջորդ օրվա քարավանով քշվեցին ներս, որպեսզի մահանան ճանապարհում և կամ սպանվեն: Իրենց ազգային տարազը հեշտությամբ գանազանել էր տալիս, ուստի միշտ էլ թիրախ էին դարձել թրքական սրին ու հրացանին:

Իզմիրի Քեմերի կամուրջը մինչև իր կամարը լիքն էր դիակներով: Հայնոցի մեջ չկար տուն, որ չունենար առնվազն մի սպանյալ: Իսկ Այ Վուզլայի, Կարաքաշի, Սերսինլու, Թեփեջիկի կողմեր սպանվածների թիվը հազարների էր հասնում:

Թրքերի Իզմիր մուտքի օրը – 9 սեպտեմբերի – տեղացի իսլամ ժողովրդի միակ խոսքն էր. «Մեզ առայժմ հարկավորը սուրն ու հրացանն է, փողն ու հարստությունը մերն են, որ ժամանակ որ լինի»: Եվ ովքեր էին այդ ջարդարարները: Թեփեջիկի շրջանը Քարուգաջի Չաքըր, Մաղնիսա՝ փեյնիրջի¹⁸⁸ պեյնիվան¹⁸⁹ Ահմեդ: Սրա խոստովանությունն է, որ սպանել է 600 հոգի: Եվ ինչ ձևերով է սպանած: Մեղքցել է փամփուշտին և սպանել է իր զոհերը բռնած ոտերից և գլուխը խփելիս սալահատակին, ջախջախելով գանգը: Դարձյալ երկու սրունքները քաշել պոկելով, իր ոտը դրած մի ոտի վրա և մյուսը քաշելով վեր: Միայն իր 14 տարեկան տղան սպանել էր 50 հոգի:

Մաղնիսայի Քարաքյոյի շուկայի նպարավաճառ Թևֆիքն ու իր հրեշ եղբայրը, կացիններով սպանելուց հետո քրիստոնյաներին, դիակները գցել էին նույն շուկայում գտնվող բաղնիքի հնոցում, որպեսզի տաքացնի թուրք զինվորների լվացվելու համար անհրաժեշտ ջուրը: Մաղնիսայի սուլթան Հա-

¹⁸⁶ *Բարսիմատ* (հուն.՝ παρσιμάδια), պարսիմատ, չորահաց:

¹⁸⁷ *Բեյաննամե* (թուրք.՝ Beyanname), հռչակագիր:

¹⁸⁸ *Փեյնիրջի* (թուրք.՝ peynirci), պանրագործ:

¹⁸⁹ *Պեյնիվան* (թուրք.՝ pehlivan), լարախաղաց:

մամի հնոցում ես իմ աչքովն եմ տեսել մարդկային ոսկորներ, գանգեր և քրիստոնյայի զգեստի մնացորդներ:

Մաղնիսայի այգիներում, մի ժամ տարածության վրա դեպի Իզմիր և Կասաբա, չկա մի այգի, որի ջրհորը լցված չինի մարդկային դիակներով: Կարելի չի առնել մի քայլափոխ իսկ, առանց կոխելու որևէ հայի կամ հույնի ոսկորին կամ զգեստին:

Մաղնիսայից դեպի Կասաբա, կես ժամ հեռավորության վրա գտնվող Քրոթըք դերեսի¹⁹⁰ կոչված ձորում ջարդվել են 70-80 հազար քրիստոնյաներ: Սա թուրքերի կրկնակի խոստովանությունն է, և մենք ակնատես եմք եղել այդ վայրին, ուր գրկի երեխայից մինչև մեծերի գանգերը՝ ցանվել էին ձմերուկի արտի նման: Մարդկանց թևոսկորները կապված էին մնում հեռաձայնի և այլ լարերով: Կին ու աղջիկների մազերի հյուսկենները խուրձերով և ութ-տասը հատը իրար կապված մնում էին: Երևում է թե խումբ խումբ իրար էին կապել՝ իրենց մազերով և հետո սպանած: Քրոթըք դերեսիի կոտորածից հրաշքով մի ազատվողի ակնատեսի պատմությունից իմացել էինք, թե թրքերը ինչպես կանխօրոք գնդացիներ էին տեղադրել այդ ձորի կողերի վրա և ջարդել էին այդ հազարները, առանց աղիթ թողնելու աջ կամ ձախ փախչելու: Իսկ հաջորդական մասնակի խմբեր, որ առաջնորդվել էին այդ ձորը, կոտորվել էին երկաթներով, բահ ու բրիչով, կացիներով ու քարերով:

Մաղնիսայի ոչ-թուրք ժողովրդից ընդհանրապես և հայությունից մասնավորապես, շատ քիչեր են ողջ մնացել: Գերիների յուրաքանչյուր կարավան որ անցնում էր, դուրս էին գալիս թուրքերը, ջարդում և վար էին դնում շատերը: Եթե գտնվում էին ծանոթներ, հանձնում էին պատերազմական ասոյանը, իսկ շատերն էլ սպանում էին տեղն ու տեղը: Մաղնիսացի լինելը բավական էր որ հասներ մահացու հարվածը, սրի և հրացանի կամ կախաղանի քննության ոչ կարոտ

¹⁹⁰ Քրոթըք դերեսի (թուրք. kırtık deresi), փոքր ձոր:

վճիռը: Չէ որ նահանջող հույն բանակը կրակ էր տվել այդ քաղաքում:

Մեպտեմբերի 23-ի կարավանը, որ բաղկանում էր 3700 հոգուց, հագիվ մի քառորդը հասել էր Մաղնիսա: Իզմիր, անկետաների հիման վրա պատրաստված ցանկից երևան գալով, որ մեծամասնությունը հայեր էին, անխնա ջարդվեցին: Ողջ մնալով Մաղնիսա հասածներից այդտեղացի 40 հայերն էլ տեղվույն վրա «դատվելով» տարվեցին քաղաքապետական պարտեզից և չվերադարձան այլևս: Նրանց մեջ էր գտնվում և Պողոս Վանլյան իր երկու որդիներով, որոնցից միայն 10 տարեկան կրտսերը ողջ մնաց, իսկ մյուսները սպանվեցին:

Մաղնիսացի, արհեստով պայտահար մի հայու ներբաններից գամեցին ձիու պայտեր, մի քահանայի քթից օղակ անցկացրած և շղթայով կապած, պտտեցրին քաղաքի շուկան և անասելի լուտանքներով և խայտառակությամբ սպանեցին:

Ահմեդի կոչված գյուղում, 17 հոգի գլխիվայր և ողջ ողջ թաղվեցին արաբ Ազիզ Բեյի հրամանով: Սակայն գառնիզոնի ետևը մի խտալացու պատկանող այդ պարտեզում կատարվող այս հրեշտությունից ի վերջո խելագարել էր այս սադայել Ազիզը: Այնքան էր սարսափել իր կատարածներից, որ նույնիսկ գերիների մեջ գտնվող մի քահանայից խնդրել էր, որ աղոթի իր համար...:

Մաղնիսայում թուրք գաղթականների համար Հիլալը Ահմերի¹⁹¹ կառուցել տված տաղավարների շրջանակում գտնվող ահագին տարածության վրա չկա ոչ մի ջրհոր, որ մինչև բերանը լիքը չլինի մարդկային դիակներով:

Գերիների մեր 14-րդ գնդի մեջ ունեինք իսկական մի Ղազարոս, Պոլսում Ոսկյուղարի Իջադիյե պողոտայի վրա փռապանություն կատարած 24 տարեկան Ապոստոլ անուն մի երիտասարդ, որ ծանրապես վիրավորված գլխից ու մարմնի զանազան մասերից, զցվել էր այդ հորերից մեկի

¹⁹¹ *Հիլալը Ահմեր* (թուրք.՝ Hilâl-i Ahmer), Կարմիր մահիկ:

մեջ: Երեք օր հետո ուշքի գալով, հոգեվարքային ողորումներով, հորի պատերը ճանկրտելով իր եղունգներովը, հաջողել էր հորից դուրս գալ: Քայլելու անկարող, սողոսկելով հասել էր ճամփի եզրին: Այդտեղից անցնող մի ոստիկան զինվոր, մեղքնալով առել ու տարել էր մոտակա ոստիկանությունը: Մի պնակ ապուր էր սովել, որ խմե, հետո էլ փոխադրել էր գերիների մեր գունդը:

Գլխի ու մարմնի զանազան մասերի վերքերը որդնոտել էին ու նեխած, իսկ ինք շարժելու իսկ անկարող վիճակ ուներ: Ըստ սովորության ամեն առավոտ «բժիշկին տարվելու» համար դուրս էին կանչում հիվանդները: «Ղազարոս» սակայն միշտ էլ խուսափել էր թաքնվել այդ հրավերից, քաջ գիտենալով, թե երևան որ գար, իբր աշխատելու անկարող, տանելու և սպանելու էին: Գերիները մասնավոր գուրգուրանք և խնամք տարին, որպեսզի առանց «բժիշկի» և «դեղի» լավանար: Տասնհինգ օր միզով միայն դարմանվեց գաղտնի և երբ խժողությունների թափը մի քիչ անցել էր և կազմվել էին իսկապես հիվանդանոցներ, ոչ թե գերիների, այլ զինվորների համար, փոխադրվեց հիվանդանոց և առողջանալով՝ վերադարձավ մեր գունդը:

Քրիստոնյա զինվորականների համար տարբեր էր թրքական վարվելակերպը: Հույն սպայի ուննոցին վրա ինչքան ասողեր որ կային, այնքան թվով գամեր գամեցին նրանց ուսերին, իսկ կրծքի շքանշանների տեղերից շամփուրներ մխեցին:

Սեպտեմբերի 12-ի գիշերը, Գըշլա կենտրոնացած գերիներից 85 հայեր ջոկվում և առանձնանում են մի սպայի կողմից: Ջոկվածներից մին վիրավորված լինելով սրնքից, սպայից մի փաթաթ ինդրելու միամտությունն է ունենում: Սպան պատասխանում է. «Կես ժամից գալու եմ, այն ժամանակ բերելու եմ փաքաթ»¹⁹² և հաց...»: Այս իսկ բավ է իր թաքուն միտքը կռահելու համար: Ուստի, առաջին առթիվ այդ վիրավորը և ուրիշ

¹⁹² Փաքաթ, փաթեթ, կապոց:

մի պատանի, գատվելով խմբից, սողոսկելով փախչում են, և անցնելով մացառների միջից, հասնում են հույն զինվորների կենտրոնացված տաղավարները: Այստեղ փոխելով իրենց զգեստը, հագնում են զինվորական բիջակ¹⁹³ և հաջողում են թաքցնելու իրենց ինքնությունը: Իսկ մնացածները քիչ հետո, տասը տասը հոգի տարվում են ծովեզերք և մորթվում:

Այս խմբերից մեկի մեջ գտնվում էր և Կասաբայի երկաթուղու ընկերության արկղակալ Հեքիմյան, որը հուսահատած ծովն էր գցել իրեն: Զինվորներ կրակում են ետևից: Խփում է քամակից, կիսամեռ դուրս է հանվում և Գըլլա փոխադրվելով, այստեղ ստանում է վերջին մահացու հարվածը: Այս օրվա սպանվածների մեջ էր և Տեր Սուրեն քահանա Վահնունին:

Սեպտեմբերի 15-ին Իզմիրից ճամփա հանված կարավանը բաղկանում է 6 000 հոգուց: Մինչև Բունար Բաշի ունենում են 500 գոհ: Կարավանը երբ հասնում է Բոզքյոյ, լուր են ուղարկում Մաղնիսայի ժողովրդին, որ գերիների կարավան է գալիս: Տեղացիներ զինված ճանապարհ են ելնում, գալիս ջարդում են և գերիների հազիվ կեսն է մնում:

Հոկտեմբեր 6-ին Մաղնիսայից Թեմիրջի ուղարկված 2000 գերիներից երեք ամիս հետո միայն 400 հոգի ողջ էին դարձել Ուշաք: Մյանք էլ ուղարկվեցին Զյութահյա և Բիլեջիկ, որոնցից 130 հոգի միայն վերադարձան:

Նորեդդին փաշայի Նո. 5 Բեյրաննեմե-ի պայմանաժամում մեկնել չկարողացած հազարավորներ տարագրվեցին ներքին գավառներ մինչև Կեսարիա, դեկտեմբերի ցրտին, սառնամանիքին գրեթե բոլորն էլ բնաջնջվեցին:

Սեպտեմբերի 18-ին Իզմիրից մեկնող կարավանը բաղկանում էր 10 000 հոգուց: Առանց հիշատակելու ճանապարհի երկայնքում կատարված բազմաթիվ հարձակումներն ու մասնակի կոտորածները, միայն Բոզքյոյից մինչև Մաղնիսա տարածության վրա ջարդվեցին 6 000 հոգի, զանազան միջոց-

¹⁹³ Բիջակ, կիսարանկոն, պիջակ:

ներով: Ճանապարհի երկու կողմերը խարույկներ կազմած այրեցին հարյուրավորներ, իսկ վրան նավթ թափելով անհատ այրվածները բազմաթիվ են: Մնացած ենթադրական 4 000 հոգուց 500 վար դրվեցին Մաղնիսա, 3 500-ը ուղարկվեցին Ալաշեհիր, որոնց բոլորն էլ կորած են:

Իզմիրի հրդեհին հաջորդող օրերում Հալգա Բունար, Սալախանե և շրջանի դաշտերը գտնվող ժողովրդի այր մարդիկը ձերբակալելուց հետո առանձին կարավաններ կազմեցին և ներս ուղարկեցին սեպտեմբերի 20-ին, իսկ կանայքն էլ վագոնների մեջ լցնելով, կառախմբերով ուղարկեցին դեպի Աֆիոն Գարահիսար և այլ տեղեր, որոնցից ողջ մնացած 14 հոգի միայն տեսա:

Մաղնիսայի շրջանի այգիների տնակները մեծ մասամբ այրվել էին, սրանք ուղղակի շենքը այրելու համար եղած բաներ չէին, այլ մեջը լեցնելով հույն սպաներ, զինվորներ և սիվիլ ժողովուրդ, կրակի էին տրված:

Արհիսարի թուրք մեծավորները դուրանի և մարգարեի անունով երդում էին տվել քրիստոնյա բնակչության, թե ոչ մի մնաս հասնելու չէ իրենց, մինչդեռ առանց բացառության, բոլորն էլ առաջնորդել էին Մաղնիսայի Քըրթըք Դերեսին և անխնա ջարդել էին, գրկի երեխայից մինչև կորաքամակ ծերունին, մանկամարդ օրիորդներից մինչև պառավ կանանց:

Բալըքեսիր, Այվալըք և շրջանից հավաքված ավելի քան 80 000 հոգի նույնպես մի այլ ձորի մեջ բնաջնջվեցին: Եվ մտածել, թե այս երկու ձորերում միայն, ավելի քան 100 000 քրիստոնյա ժողովուրդ կոտորվել էին:

Մաղնիսայի Իդադիյե վարժարանի բակը կենտրոնացված գերիներին ներկայացնող 70-անց մի թրթուհի, ձեռքը մի ճոկան¹⁹⁴ բռնած, էգ վագրերի նման սպառնալից աչքերով փնտրում էր ուռջի¹⁹⁵ Բաղդասարը և գոռում էր. «Տվե՛ք, տվե՛ք

¹⁹⁴ *Եոկան*, կեռ գլխով գավազան:

¹⁹⁵ *Ուռջի* (թուրք.՝ սեֆ), ուղ նվագող:

ինձ այդ գյավուրը. արդեն քառասուն և ինն եղավ, սպանեմ նրան էլ և լինի հիսուն»:

Սեպտեմբերի 20-ին երեկոյան ժամը 5-ին Իզմիրի Գըշլան բերին 300 հոգուց ավելի մի բազմություն: Բոլորն էլ մաքուր հագնված տարեց մարդիկ էին, որոնց մեջ գտնվում էին և Այ Կատերինա եկեղեցու 15 քահանաները: Ուղղակի առաջնորդվեցին Էշրեֆ փաշայից և Պարադիսոյի ետևի ձորի միջով, Պրոֆիտ Իլիայի մոտերքը սպանվեցին:

Սեպտեմբերի 21, չորեքշաբթի օր ուղարկված գերինների կարավանը կոտորածի ենթարկվեց նախ Ըշքլարի առաջ, մնացորդ մասին միացավ Կորդելիոյից հասած 100 հոգին, որոնց մեջ գտնվում էին ժամագործ Մասիս և այն, հաջորդ օր Կոշնաք քյոյի առաջ ենթարկվեցին մի նոր կոտորածի և երեկոյան մութնուլուն հասան Մադնիսայի ծայրամասը: Այդտեղ սպասցրեցին կարավանը, մինչև որ կատարելապես մթնեց, երբ ճամփա հանեցին դեպի քաղաքի ներքնամասը: Տեղացիներ մի կառք բերեցին քշեցին կարավանի կողմից, կտրեցին մեջքից, վերածեցին երկու մասի: Առաջ անցնողներ ազատված լինելով դավադիր հարձակողներից, մնացողները պաշարվեցին տեղվույն թրքերի կողմից և կոտորվեցին անհնա:

Սեպտեմբերի 28-ին, Մադնիսայից Էոդեմիշի ճամփով Այդըն ուղարկեցին 1250 գերիններ, որոնք մեծ զոհ տվեցին Բայրնդրի առաջ: Մնացածը Այդըն հասնելով կազմեց Այդընի առաջին գառնիզոնը¹⁹⁶:

Իբր արհեստավորներ Թոփիսանե և Իմալաթիսանե տարվելով աշխատցվող 44 հոգի, հոկտեմբեր 4-ին ուղարկվեցին Մադնիսա: Բունար Բաշին տեղացի թուրքեր ճանաչելով Նիկոլա Վարկաս անուն մի հույնի, գալիս են և ստում սպային. «... Ազան բարև ունի, այդ գյավուրը ուղարկելու եք իրեն, երեկոյան ստանալու եք հինգ ոսկին»: Եվ հանձնվում է խեղճ մարդը, քվում է ծեծ ու հարվածների տակ, անշուշտ անվերադառնալիորեն...:

¹⁹⁶ *Գառնիզոն*, կայագոր:

Հոկտեմբերի սկիզբը, Մաղնիսա հասած գերիների միջից ջոկեցին բոլոր ծերերը, տկարները, հիվանդներն ու անկարողները, թվով մոտ 200 հոգի: Գիշերով, լապտերներով առաջնորդեցին Բալոգյանի գործարանը և այդտեղ բահով քրիչով սպանեցին... որպեսզի բեռ չլինեն միլլի կառավարության:

Նույն բանն ու գործելակերպը կրկնվեց հառաջիկայում: Արդեն հիվանդանոց տանել նշանակում էր մահվան առաջնորդել: Սակայն մի նոր կարգախոս և մի նոր վարպետություն էին ունեցել, խափելու համար գերիները: Իբր թե Ուշաք հիմնվել է անկելանոց և այդտեղ հավաքելու են անկարող գերիները: Հարյուրավորներ ջոկեցին գնդերից: Գտնվեցին և միամիտներ, որ հավատալով այդ հայտարարության, միացան ջոկվածներին: Լցրեցին վագոնների մեջ, ծածկեցին դռները, կողպեցին, ճամփա հանեցին ձյուն ձմեռին և ճանապարհում վերևից ջուր թափելով սառեցրեցին, իսկ պատահմամբ ողջ մնացողներն էլ սպանեցին: Այնպես որ «անկելանոց» գնացողներից մի հոգի իսկ չվերադարձավ:

1922-ի աշունից մինչև 1923-ի ամռան, Գետիգ գետը իր ծոցում փոխադրեց մարդկային մարմիններ, ոսկորներ և հագուստեղեն: Աննախընթաց ձևով առատացան ձկները, որոնք սնվել էին մարդկային դիակներով: Լեռներից իջնող հեղեղներ քշում բերում էին գանգեր և ոսկորներ, թափում տարածում էին դաշտերի վրա և գետերի մեջ:

Իզմիր, բանտը մնացողներից կախաղան բարձրացվելիքները գիշերանց էին տանում և գործադրում իրենց վճիռը: Ներքին գավառներից Իզմիր էին փութացել, Գըշլայում, բանտերում և գառնիզոններում փնտռելու իրենց համաքաղաքացի քրիստոնյաներին, որպեսզի մատնեն կառավարության: Սուտ ամբաստանություն հաջորդ օրն իսկ հասնում էր կախաղանը: Մանավանդ ցանկանում էին, որ իրենց գյուղերում կամ քաղաքներում կախվեին իրենց համազյուղացի կամ համաքաղաքացի քրիստոնյան: Այսպես, Մաղնիսա, Կասաբա,

Աքիսար, Ալաշեհիք և ուրիշ քաղաքներ տարվեցին Իզմիրից կամ կարավաններից խլված քրիստոնյաներ և կախվեցին, տեղացի թրքերին հաճույք պատճառելու համար: Այսպես, Մադնիսա կախաղան բարձրացվեցին Հովհ. Աբրահամյան, Հակոբ ճնկյան և որդին Ավետիսը, փեսան Հարություն Ունջյանը, իսկ սրա եղբայրը Սուրեն կախաղան բարձրացվեց Իզմիրում: Կախաղան բարձրացավ Սարգիս Գարաջյան, կեսարացի ապխտավաճառ Սեդրակ և շատ շատեր:

Մադնիսայի սուտ վկան և ամբաստանիչը փեյնիքջի փեյիվան Ահմեդն էր, որ մասնավոր հրավերով Իզմիր էր գալիս, պատերազմական ատյանի առաջ անելու իր զրպարտություններն ու ամբաստանությունները, թե այսինչ քրիստոնյան կրակ է ձգել, մի ուրիշի ձեռքում ռումբ է տեսել, մի ուրիշը վայրագություններ է արել իսլամների դեմ, բերնի ծամոց, հասարակ տեղիք, սովորական ամբաստանություններ, «հավատքիս հայիոյեց»-ի նման բաներ:

Իզմիրի գրավման առաջին ամսի ընթացքում և մասնավորապես երկու շաբաթներում, թրքերին տրվել էր ձրի երթուկություն երկաթուղիների վրա և հրավեր էր եղել, որ գավառացի թրքեր Իզմիր իջնեն և կարավանների միջից ջոկեն իրենց համաքաղաքացի քրիստոնյաները: Այսպես, յուրաքանչյուրը գալիս էր մի սուտ ամբաստանությունով, որի վրա հիմնված, պատերազմական ատյանը արձակում էր իր վճիռը:

Եվ ի՞նչ միջոցներով չսպանեցին: Զանազան տեղեր գերեզմաններ փորել տվեցին գերիներին և հրամայեցին, ստիպեցին, որ մտնեն իրենց իսկ ձեռքով փորած փոսերի մեջ: Եվ ողջ ողջ թաղվեցին հարյուրավորներ:

Կարանտինայի (Իզմիր) դիակոսին (քահանա) ականջները պայտեր կախած հարսանիքի խնջույքի մեջ պար բռնել տվին:

Ձերբակալությունները սկսեցին Իզմիրի թուրք գրավման առաջին րոպեից իսկ: Առաջին երկու օրերի ձերբակալվածներից ողջ մնացածներ գրեթե չկան: Հրդեհի տևողությանը ձեր-

բակավածներից եղան ցանցառաքիվ վերադարձողներ, իսկ սեպտեմբերի 20-30 ձերբակալվածներից ողջ մնացածներ համեմատաբար ավելի թիվ են կազմում:

Դեպի ներքին գավառներ արտաքսված գերիների կարավանների շարքն էլ նույնն են հաստատում: Առաջին օրերին նույնիսկ կարավան կազմել և առաքել իսկ գոյություն չուներ: Գըշլա իսկ չէին տանում, այլ ուղղակի քաղաքից դուրս էին հանում և սպանում: Սեպտեմբերի 12-ից հետո սկսեցին Գըշլա կենտրոնացնել և այդտեղից կատարել առաքումները: Մինչև սեպտեմբերի 25 առաքվածներից շատ քիչեր ողջ վերադարձան, իսկ նրանք որոնք վերադարձել են, առհասարակ հոկտեմբերի 1-10 ուղարկվածներից են:

Մինչև սեպտեմբերի 12, ուղղակի թաղերից, 10-ով, 20-ով, 30-ով անպաշտոն քշված և ամայի անկյուններ ջարդված են: Նույնիսկ ավելի մեծ խմբեր բնաջնջվեցին Փափագլար, Սենիմենի դաշտերի վրա ևլն: Որոնք ձերբակալվել էին Բայրագլից, Գարախանեից, Հալկա բունարի Տրիադայից և Կորդելիայից: Իսկ ուղղակի Գըշլայից առաքվածներից մեզ ծանոթ կարավանները հետևյալներն են, որ մոտավորապես 40 000 հոգի, որոնցից դուրս են մնում ճանապարհին միացված խմբերը:

Սեպտեմբեր	12-ին	3 000	հոգի
Սեպտեմբեր	15-ին	6 000	հոգի
Սեպտեմբեր	16-ին	2 000	հոգի
Սեպտեմբեր	17-ին	4 000	հոգի
Սեպտեմբեր	18-ին	10 000	հոգի
Սեպտեմբեր	20-ին	3 500	հոգի
Սեպտեմբեր	21-ին	3 800	հոգի
Սեպտեմբեր	23-ին	3 700	հոգի
Սեպտեմբեր	28-ին	650	հոգի
Հոկտեմբեր	1-ին	1 200	հոգի
Հոկտեմբեր	4-ին	44	հոգի
Հոկտեմբեր	11-ին	640	հոգի

Ինչպես թվում է թվականների հերթականությունից, ուտումներ կան, քանի որ չէ եղած երկու օր առանց առաքումի: Որով տարակույս չկա, թե եղել են և մեզի անծանոթ կարավաններ, որոնց թիվը հեշտությամբ կբարձրանա, միայն Գըշլայից ուղարկվածների թիվը հասցնելով առնվազն 60 000 սիվիլ ժողովրդի, քանի որ գերի մնացած հույն զինվորների թիվը դուրս է մնում այս հաշվից:

Եվ սակայն, քանի հոգի ողջ վերադարձան այս բազմահազարից: Հազիվ 1 000 հայ և 14 000 հույն: Մեր բոլոր մանրակրկիտ քննությունների արդյունքը այն է, որ մոտ 10 000 հայ սպանվեց Իզմիրի աղետին¹⁹⁷, իսկ հույներինը տասնապատիկ ավելի է:

Ուռլայի և շրջակա գյուղերի բնակչությունից մատի վրա համրելու չափ քիչեր են ազատվել: Այդրն և շրջանը, Ուշաք, Իալլքեսեր և շրջանների քրիստոնեությունից բավական մի մեծ մասը չէին կարողացել փախչել և ոչ էլ Իզմիր հասնել: Մնացել էին ներսում, որոնք տեղվույն վրա կամ գերեվարության ընթացքում մահացվեցին:

Իզմիրի գրավման առաջին օրերին, ժողովուրդը քշեցին դեպի Մերսինի, Թեփեջիկի զինվորական տաղավարները, Բալջուվա, ուր տղամարդիկ սպանվեցին կամ ձերբակալվելով Գըշլա փոխադրվեցին, իսկ կանայք ենթարկվեցին անլուր խոշտանգումների, առևանգվեցին հարյուրավորներ և շատերն էլ կոտորվեցին: Գիշերանց տարված և կիրքերնին գոհացնելուց հետո, իբր անտեր արարածներ և կամ քուրջի կտորներ վերադարձված, կույս գնացած և լվված եկածների թիվը ով կարող էր ճշտել:

¹⁹⁷ Իզմիրում 15 հազարից ավելի հայ բնակչություն կար. բացի Ադանայի պարպումով Փոքր Ասիա ապաստանած Կիլիկիայի գաղթականներից [ձանոթ. հեղինակինն է՝ Մ.Բ.]:



Ջարդի լուրն հասել էր արտասահման: Անունով ֆրանսիացի, իսկ հոգով թուրք Ֆրանկլին Բույոն չէր կարող հավատալ, թե իր թուրք բարեկամները կարող էին նման բարբարոսությունների կատարել: Անպայման գրպարտություններ էին: Ուստի եկել էր Իզմիր, որպեսզի իր ականատեսի վկայությունը տար արար աշխարհին և իր տեղեկտրով զար հաստատելու... թե թրքերը անմեղ են, որ հանցավորները քրիստոնյաներն են: Թուրքերը Բույոնն առաջնորդեցին Գըշլա, քաղաքի զանազան մասերը ցուցադրվելուց հետո բոլոր եղածները, ջարդ, թալան, հրդեհ, վերագրվեցին քրիստոնյաների և նահանջող հույն բանակին:

Իզմիրից հետո այցելելու էր Մաղնիսան հոկտեմբեր 1922-ին: Շատ հեռավոր ձորեր և աչքից հեռու վայրեր փոխադրեցին բոլոր գերիները: Եկավ ու անցավ Ֆրանկլին Բույոն և հաջորդ օրը գերիները վերադարձվեցին իրենց տեղերը: Մաղնիսայի Գըշլայի հրապարակի վրա կենտրոնացնելով այդ բազմահազար գերիների զանգվածը, կատարեցին բաժանումներ: Մի կարավան 2 000 հոգուց բաղկացած Նիֆ, Բայընդըր, Թիրեի ճամփով ուղարկեցին Ահմեդլը, իսկ 750 հոգինոց մի կարավան էլ ուղարկեցին Ալաշեհիր:

Ֆրանկլին Բույոնին ցույց տվեցին մեռելներով լի հորերը և ջանացին համոզել, թե սպանվածները թրքեր են, սակայն փոքր մի քննություն երևան հանեց իրականության հակառակ լինելը: Ֆրանսիացի թրքասերը երբ իմացավ, թե հունական բանակին և քրիստոնյա ժողովրդին վայրագությունները եղել էին թրքերի կողմից, էլ չչարունակեց իր ճամփան և քաջությունը չունեցավ շարունակելու իր նախկին թրքասիրությունը:

Թրքերը միշտ էլ ջանացին թաքցնել իրականությունը առաջին օրից մինչև վերջը: Վարպետորեն հաջողեցան ծածկել ճշմարտությունը: Գերիների թիվը, նրանց առողջական

վիճակը, վերջապես ընդհանուր կացությունը երբևիցե հայտնի չարեցին: Այս ուղղությամբ գործում էին կազմակերպյալ ծրագրյալ և վերևից տրված հրահանգների համաձայն:

Այսպես, 1923 հունիսին հասնում էր մի հեռագիր կենտրոնից. «Վաղը Կարմիր խաչից մի քննիչ համաձայնումը հասնելու է տեղը, պաշտոն ունենալով քննելու գերիների վիճակը: Բացարձակ կերպով ոչ մի գերի տանելու չեն: Գերիները սարքեք հեռու ձորեր: Ոչ ոք պետք չէ մնա երկայնուրու կայարանին շրջակայքը, այլապես պատասխանատու եք»:

Քաղաքներից ու ավաններից դուրս տեղեր ցրվեցին և աշխատանքի դրին հազարավորներ, կենտրոն տեղեր թողնելով հազիվ մի քանի հարյուր հոգի: Այսպես փոշի ցանեցին այցելուների աչքին և հավատացրին, թե գերիների ընդհանուր թիվը հազիվ մի քանի հազար միայն էր. թուրք մամուլն էլ կգար նույն ուղղությամբ, պնդելու, թե Աֆիոն Գարահիսարից մինչև Իզմիր, գերիների ընդհանուր թիվը 14 000 է միայն: Մինչդեռ գերիների գնդերի թիվը մի քանի տասնյակի էր հասել: Ա. և Բ. գնդերը գտնվում էին Իզմիր, Զ. գտնվում էր Ահմեդլի, Ը. և Թ. գտնվում էին Այդըն, Ժ. Մազիլի, ԺԱ. մի ժամանակ Մադնիսայում, հետո էլ Այնթապում, ԺԲ. նախապես Գումա, հետո Գոնիա, ԺԳ. Զյութահիա, ԺԴ. Մադնիսա, մեզ ծանոթ կար նաև ԻԻ. գունդերը՝ Անկարայում: Եվ ենթադրելով որ սիվիլ գերիները միայն այս գնդերն էին կազմել, արդեն սրանց թիվը կհասներ ավելի քան 20 000-ի, իսկ մենք հանդիպել ենք 135 000 համար ունեցող գերիների:

Այս բոլորից կարելի է հետևցնել, որ մինչև դեկտեմբեր 1922, ջարդ և մասնակի սպանություններից հետո, երբ սկսել էին կանոնավոր արձանագրություններ և գերիներին տրվել էր կարգաթիվ, թրքերի ներկայացրած թվից անհամեմատորեն ավելի թվով գերիներ գոյություն ունեին: Սակայն թրքերը գերիները քեցցին հաղորդակցությունից հեռու վայրեր,

լծեցին տարապարհակ¹⁹⁸ աշխատանքների և ոչ մի քննիչ հանձնախումբ չկարողացավ իմանալ գերիների իսկական թիվը ...

[Բացակայում են ձեռագրի 152-154 -րդ էջերը՝ Թ.Մ.]:

... Այստեղ միևնույն պահանջքը հայտնվեց անցագրի կամ տարբեր մի փաստաթղթի, որպեսզի հաստատվեր մեր օտարահայատակությունը:

— Էֆենդի, առին ինչ որ ունեինք, մարդ հազար հատ անցագիր չի կարող ունենալ. այստեղ կա հյուպատոսարան, դիմեցեք և ձեզ կայատասխանեն:

Մեզ տվին ընդարձակ հարցաթղթեր, պահանջելով լեցնել, պատասխանելով յուրաքանչյուր հարցումին: Եվ երևակայել, որ մինչև անգամ մորս մորը երբ ամուսնանալը և ... ամուսնական վկայականն էլ պահանջում էին ինձանից: Որով կարելի էր երևակայել, թե տակավին ինչեր կարող էին հարցնել կամ պահանջել: Լեցրեցինք և հանձնեցինք հարցարանները: Հետո յուրաքանչյուրս ուղարկեցին ոստիկանի ընկերակցությամբ այն շրջանի ոստիկանատուն, որ աշխատող եղել էինք, նախքան թրքական գրավումը, որպեսզի այդտեղ էլ կատարեն քննություններ:

Իր կարգին, ինձ էլ Ֆասուլա և այդտեղից էլ Պունտայի պահականոցը [ուղարկեցին]: Օրը տարածամած էր և հաջորդ օրը կարելի լինելու էր քննություն կատարել աշխատած վայրիցս, հետևաբար գիշերելու էի պահականոցում: Գրասենյակի մի անկյունում, ծվարած, քնելու էի ձևացնում, երբ կարելի չէր քուն մտնել, վախի ու կասկածի ազդեցության տակ: Քոմիսերն ու մի ոստիկան նստած խոսակցում էին, երբ մի նոր քոմիսեր էլ ներս մտավ: Իր արտահայտությունից, խոսակցության ձևից որոշ էր, որ վերջին քոմիսերը Կիլիկիայի շրջանից (գուցե Ադանայից) էր: Անկյունը տեսնելով մի մարդ

¹⁹⁸ *Տարապարհակ*, պարտադիր ձրի աշխատանք:

հարցրեց, թե ով է: «Պիր էրմենի կյավուր»¹⁹⁹, – պատասխանեց պահականոցի ոստիկանապետը: Ինձ քնած կարծելով, նորեկը սկսեց խոսել:

– Իսկապես սա հայերի նման խելացի ու ճարպիկ, վաճառականությունից և առևտրից հասկացող ազգ չկա մեր մեջ: Միակ թերություննին չափազանց շուտ խանդավառվելնին է: Նայում ես, կգա անգլիացին խոստանում է բաներ, վստահում են, իսկույն նետվում, միանում են նրանց և նրանց հետ կռվում են մեզի դեմ, մյուս օր, երբ գա ֆրանսիացին, միևնույնը նրանց հետ էլ և այսպես շարունակ:

Առավոտյան ժամը 10-ին արդեն ավարտել էր իմ մասին կատարվելիք քննությունը և ինձ տարին Ալիոսիների փողոցի դիմաց, նախկին Կոնստանդինիդի գարեջրի գործարանին կից տունը, որ ոստիկանատան էր վերածվել: Այդտեղից գնացին մեր հյուպատոսարանից ստուգելու, թե ոնի՞մ արձանագրությունն: Ստուգելու գնացող ոստիկանը որ վերադարձավ, ինձ վախեցնելու համար «ուլեն կյավուր օղլու»²⁰⁰ (չունես արձանագրություն), – ասաց և ինձ երկարեց մի նամակ. «Առ, քեզ համար է եղեր, հյուպատոսարանից տվին», – ասաց:

Շատ կարճ, ֆրանսերեն լեզվով գրված մի նամակ էր, որի ներքև տեսա քրոջս ստորագրությունը: Այնքան հուզվել էի, որ դժվարանում էի կարդալ: Ավելի քան ութն ամիս էր, որ որևէ տեղեկություն չունեի իրենից և այս առաջին նամակով իմանում էի, թե ողջ էին և որտեղ էին գտնվում: Եվ ի՞նչ զարմանալի դիպված, որ Աթենքի հյուպատոսարանի միջոցով երեք ամիս առաջ դրկված մի նամակ էի ստանում թրքական ոստիկանատան մեջ: Ի՞նչ ուրախություն: Մոռացել էի մի պահ անցած ութն ամսվա տառապանք ու մահվան սարսափը:

Այդտեղից գնացինք Ֆասուլայի ոստիկանությունը: Այստեղ մնացած հազիվ տասը լուպեին իսկ, քումիսերը չթերացավ

¹⁹⁹ Պիր էրմենի կյավուր (թուրք.՝ bir Ermeni gâvur), մի անհավաստ հայ:

²⁰⁰ Ուլեն կյավուր օղլու (Ulan gavur oğlu), տո՛, անհավաստի որդի:

իր խայթոցը գործածել և իր հեզնանքովը կճել. «Է՛, «Էրմենի օղլու»²⁰¹, ահա ազատվում ես: Երբ որ դուրս գաս Թուրքիայից, գնալ միանալո՞ւ ես Նուպար փաշային և Նորատունկյանին²⁰²: Ասա տեսնեմ, որ մի օր պատահի և դարձյալ գաս այս կողմեր, քանի՞ թուրք սպանելու ես»:

Վերջապես, պահականոցից պահականոց ման գալուց հետո վերստին հասանք Մութեֆերրըզա: Այստեղից էլ մեզ դրկեցին Ուսերա Թապուրլար կոմանդանության²⁰³: Զավեշտը վերսկսեց: Չեմ իմանում քանի հարյուրերորդ անգամ հարցրին մեր անունները և ... դարձյալ պահանջեցին պասպորտ²⁰⁴, փաստաթուղթ կամ որևէ վկայագիր, որ հաստատեր մեր օտարահպատակությունը: Եվ որովհետև չունեինք, քանի որ ամենահետին տեղեկանքն իսկ կորզել էին մեր ձեռքերից, մեզ... վերադարձրին մեր հին գնդին, հակառակ որ ստուգել էին հյուպատոսարանից: Իսկ հյուպատոսարանից եղած հետաքրքրության և հարցումին էլ պատասխանել էին, թե ազատ արձակել էին մեզ...:

Վերադարձ դեպի գերություն:

Միլի կառավարության հաշվին չէր գալիս մեզ արձակել, վախենալով, որ վնասից հատուցում կարող էինք պահանջել մեր ութն ամսվա գերության համար, քանի որ իրավունք չունեին գերեվարելու օտարահպատակներին:

Գնացինք ու մնացինք մեր նախկին գառնիզոնը, մինչև որ մեկ բարի օր, ընդհանուր հրաման էր եկել արձակելու... հայերին: Եվ այսպես, իբր հայեր գերեվարված, ազատվելու էինք և իբր հայեր...:

²⁰¹ *Էրմենի օղլու* (թուրք.՝ ermeni oğlu), հայի տղա:

²⁰² *Գարրիկ Գրիգորի Նորատունկյան* (1852-1936), քաղաքական գործիչ, դիվանագետ, իրավագետ-խորհրդական:

²⁰³ *Ուսերա Թապուրլար կոմանդանություն* (թուրք.՝ Üsera Taburlar Kumandanlığı), գերիների գումարտակների հրամանատարություն:

²⁰⁴ *Պասպորտ*, անձնագիր:

ԽՆԱՄՔ ... ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ

1923-ի սկիզբը ոջլոտությունը հասել էր իր ծայր աստիճանին: Հանկարծ գերիների մաքրության ու առողջապահության հոգ տանելու հով փչեց, անշուշտ դարձյալ արաթուրքա²⁰⁵ տեսակից և անալայման արտաքին ազդեցության ներքև: Միլի իշխանությունը սկսել էր գերիների զգեստները հաճախակի էթյուլ²⁰⁶-ի ենթարկել: Լոզանի հաշտության բանակցությունների առաջին օրերին էր, գուցե այդ էր պատճառը այս հոգաժության... առնված խիստ միջոցների: Բենզինի երկաթ տակառներից պատրաստվեցին ուղղակի ջրի շոգիով գործող այդ էթյուլները, որոնք պարզ խալկիններ²⁰⁷ էին և հաճախ... ջրի մեջ եռացված դուրս գալիս էին զգեստները: Հակառակ այդ բոլոր կիսամիջոցներին և կամ թերություններին, այս աշխատանքը որոշ չափով ունեցավ, սակայն, իր բարեբեր արդյունքը:

Շինեցին և «բաղնիքներ»: Բայոզյան գործարանի մի ամբարանոցը, որ հասարակ գոմ էր, զետեղվեցին մի քանի խալկիններ և տաքացրած ջուր հայթայթեցինք, որպեսզի գերիները լվացվեն, հոգ չէ թե ցուրտ էր «բաղնիքը» և ոչ մի կերպ տաքացրած: Այս բանը և այդ աշխատանքների կառավարիչ տասնապետներին ու չավուշների տմարդի վարվելակերպը պատճառ եղան, որ ոմանք էլ հիվանդանան, կողոպուտի ենթարկվեն և մեռնեն:

Բարեբախտաբար հատ ու կենտ և եզակի անձնավորություններ էլ գտնվեցին, որոնք ճիշտ է, թե կատարում էին վերևից տրված հրամանները և սակայն իրենց մարդավարի գործելակերպով փոխանակ գավազան ու մտրակի լեզու և խոսքով գործելով բարեբար դեր ունեցան գերիների վրա: Այդ հազվագյուտ անձերից էր հարյուրապետ Հյուսեյն Ավնի բեյը:

²⁰⁵ Ալաթուրքա (թուրք.՝ alaturka), թուրքական:

²⁰⁶ Էթյուլ (թուրք.՝ etiv), ակտահանիչ:

²⁰⁷ Խալկին, լախաբերան պղնձե կաթսա:

Մինչև փետրվարի 8, 1923 թվին գնդի հրամանատարն էր Սյուրեյա կոչված մի հրեշ, որ պաշտոնագրկվեց գերիների շնորհիվ՝ իր կատարած ահագին շահագործումներին երևան եկնելուն պատճառով: Հաջորդեց իրենից ավելի վատ Բուհի կոչված ռումելիցի մի հազարապետ: Սա մի օր իսկ ձեռքից չթողուց ճականը²⁰⁸, կարծես քիչ էր եկել իր նախորդի խարազանն ու կրնկի հարվածները:

Բուհու օրով գերիների զգեստ բաժանելու մի խնդիր երևան եկավ: Երկրագործական տնօրենությունը արտեր, դաշտեր և զանազան երկրագործական աշխատանքներում ունեցած գերիների հաշվույն, հողատիրոջից գանձում էր որոշ գումար: Ուստի, նկատի առնելով գերիների մերկ կամ կիսամերկ վիճակը, խորհել էին կամ իրենց շահից մղված, կարգադրել էին հազվեցնել գերիներին: Այս բանը իմանալով հազարապետ Բուհին առիթից օգտվել ուզելով զգեստեղենի պատրաստության հոգը ինք ուզում է հանձն առնել և գանձում է 800 բանկանոտ: Սակայն, փոխանակ պայմանավորված կերպասից պատրաստել տալու, հասարակ պատտառը ներկել տալով, որը իրեն արժեց գումարի հազիվ մեկ քառորդը, կարել տվեց հազուստ կամ ներսի զգեստներ և գրպանեց տարբերությունը:

Այս օրերում, զանազան օտար Կարմիր խաչի կազմակերպություններից և բարեգործական հաստատություններից զգեստեղեններ ուղարկվել էին գերիների համար և սակայն մենք մերկ ու բոքիկ անցկացրինք ամբողջ ձմեռը: Աշխատցվելու համար մեր գնացած տներից մուրալով որ հաջողեինք մի պարկ ձեռք ձգել, ամենաերջանիկ մարդն էինք համարում մենք մեզ, այնքան հարգի էր: Այդ պարկի հատակի անկյունները ծակած հազնում էին պարեգոտի նման: Սակայն գտնվեցին թրքեր էլ, որ այդ ծակ պարկին իսկ պետք ունեցած լինելով..., հանեցին առին մեր կոնակից:

²⁰⁸ *Ճական*, զենքն իր պարազաներով:

Ամիսներ հետո միայն, Հիլալը Ահմեթի կողմից բաժանվեցին մի քանի հակ զգեստեղեն – րեդինկոտ²⁰⁹, բոնժուռ, տաբատ, վերարկու, զանազան ձևի գլխակներ – որոնց վրա նշմարելի էին արյան բիծեր, իսկ տաբատներն ու վերարկուները կրում էին, անխտիր, սվինի ծակեր կամ պատռվածք: Որով կարելի է եզրակացնել, թե որ տեղերից հավաքված բերված էին և ովքեր եղել էին այդ զգեստների նախկին տերերը: Այսպես լինելով թրքական խնամքը..., գերեվարության յոթներորդ ամսում, այսինքն 1923 թվի ապրիլին, «Ղարբ Ջեբհեսի ուսերա Թապուրլար գոմանտանությունից»²¹⁰ (Արևմտյան ճակատի գերիների գնդերի հրամանատարություն) հասնում էր հետևյալ հեռագիրը. «Բացարձակապես արգիլված է, որ որևէ գերի ավելի լավ հագնի, քան թուրք զինվորը: Ուղարկված հագուստները բաժանեցեք զինվորներին և սրանց հիներն էլ բաժանեցեք գերիներին:

Քերամեդդին»:

Էթյուպի և բաղնիսի առընթեր էին և տիֆլի, ծաղկի, քուլերայի պատվաստումներ: Ջոկեցին և անկարներն ու ծերերը, որոնք աշխատանքից գերծ մնում էին գնդի մեջ, հազարապետ Բուսին սակայն չափազանց դժգոհ էր մոտ 100 հոգի գերիներ այսպես անգործ ու ձրիակեր վիճակում պահելուց: Առիթը ներկայացավ: Տասնամեկերորդ գնդից մարդ էին ուզում, աշխատելու ընդունակ գերիներ էին պետք: Ուստի Բուսին այս ծերերն ու անկարողները ուղարկեց: Գնացին այդ խեղճերը Այնթապի շրջանի ճանապարհների շինության մեջ աշխատելու համար:

Այս շրջանում հալածանքը մի քիչ մեղմացել էր, ինչպես հիշել եմ, անապաման Լոզանի դաշնագրի և հաշտության բա-

²⁰⁹ *Րեդինկոտ*, տղամարդու երկար ու լայն վերնազգեստ:

²¹⁰ *Ղարբ Ջեբհեսի ուսերա Թապուրլար գոմանտանություն* (թուրք.՝ *Garp Cephesi Üsera Taburlar Kumandanlığı*) արևմտյան ճակատի գերիների գումարտակների հրամանատարություն:

նակցությունների ազդեցության տակ: Աշխատանքը սակայն վերջ չուներ: Դաշտերի մեջ, այգիներում, շինությունների մեջ, վերջապես ամեն տեղ էին տանում գերիները: Գյուղացիներ, մշակներ, բանվորների պետք ունեցողներ գալիս և յուրաքանչյուր գերի օրական տասը մեթալիկի փոխարեն գնում էին քաղաքապետությունից: Գերի տանող մարդուն ստորագրել էին տալիս պայմանագրություն, թե հոգ տանելու է գերիներին, տալու է նրանց կերակուր և պառկելու տեղ և հրամանատարության կողմից պահանջվելու դեպքում, իսկույն բերել հանձնվելու է:

Գնդի մեջ, Մաղնիսայում մնացողներն էլ ամեն առավոտ առաջնորդվում էին քաղաքի կենտրոնական հրապարակը և վաճառվում էին տասը մեթալիկի: Գալիս էին առանձին անհատներ, իրենց փլած տների նորոգության, ուրիշներ իրենց պարտեզների կամ այգիների մշակման համար տանում էին, ինչքան որ մարդու պետք էին ունենում: Երեկոյան որոշալ ժամում բերում հանձնում էին դարձյալ նույն հրապարակը սպասող զինվորներին, որպեսզի գառնիզոն փոխադրեն գերիները: Սրա համար էլ ամեն առավոտ, որ հրապարակ էին հասնում գերիներ, դասավորում էին վարպետների և բանվորների խմբերին, որտեղից տրվում էին, համաձայն պահանջի:

Չի կարելի երևակայել մի աշխատություն, մի որևէ գործ, արհեստ, որ գործած չլինեն գերիները: Թրքի ձեռքին տակ գերին արեց ամեն աշխատանք — կոյուղի մաքրել, ավելածություն, գերեզմանափորություն, որմնադրություն, և նույնիսկ գեղարվեստ-նկարչություն, արձանագրություն: Թրքերը շահագործեցին ամեն ինչ որ ունեին գերիներ, բարոյական թե նյութական բոլոր կարողություններ, արհեստ, արվեստ թե գեղարվեստ:

Գերիների համար առաջին և անվերջ աշխատանքն էր բեռնակրությունն ու փլատակների մաքրությունը: Երկրորդ աստիճանի վրա գալիս էր արհեստը: Ձեռքից ձեռք էին խլվում հյուաները, աստաղձագործները, երկաթագործները, մեքե-

նագործները, որմնադիրները, ձեփողները, քարկոփները, բրուտները, դերձակները, հովիվները, մշակները, ածխավառները, կոշկակարները ևլն, ևլն:

Իզմիրի գրավման առաջին օրին իսկ Գըշլայում գտնվող գերիների միջից ջոկեցին արիեստավոդները և տարին «Մեքթեպը Սենային»²¹¹ (Արիեստագործական դպրոց) աշխատացնելու: Հունական գրավման շրջանին, թրքերի՝ դեպի ներքին գավառներ քաշվելուց առաջ գետնի տակ թողել էին թնդանոթներն ու փոխադրությանը դժվար գենքերը: Երբ վերադարձել էին, հանել էին թաղած տեղերից և այժմ տալիս էին գերիներին, որ մաքրեն, նորոգեն:

[Բացակայում են ձեռագրի 162-164 -րդ էջերը՝ Թ.Մ.]:

... մթերանոցներ, մինչև բակերը լցվեցին ռումբի սնդուկներով: Ձեռնառումբերի հազարավոր սնդուկներ, գնդացիի միլիոնավոր փամփուշտներ, ամեն կարգի և տեսակի գենքեր գրաստների նման կրեցինք: Բոնցքի և գավազանի հարվածների տակ, 90-100 օխանոց²¹² սնդուկներ պարտավորվում էին վերցնել, իսկ վայ եկել էր նրան, որ առարկեր, թե իր կարողությունից վեր էր այդքան ծանրություն տանել:



Թվում է, թե անուն էի հանել իբր վարպետ աստղձագործ, որ մի օր գնդի մեջ ինձ էին փնտրում – «ինչե մարանջող»²¹³: Գնացինք սպայի մոտ: Հաղորդվեց, թե երկրագործական տնօրենությունից են պահանջում ինձ: Հանձնարարվեց գնալ և տեսնել տնօրենը: Դա գյուղատնտեսության վարչությունն էր, որ միլլի ուժերի երկիրը վերականգնվելուվը, ջանք էին

²¹¹ *Մեքթեպը Սենային* (թուրք.՝ Mekteb-i Sanayii). արիեստագործական դպրոց:

²¹² *Օխ*, ծանրության միավոր (1282 գ):

²¹³ *Ինջե մարանջող* (Ince marangoz), նիհար հյուան, աստղձագործ:

տանում կազմակերպելու և զարգացնելու գյուղատնտեսությունը:

Տնօրենին որ ներկայացա, վերից վար չափեց ինձ, մի քանի հարցումներ տվեց, աթոռ տվեց, որ նստեմ: Իր գրասեղանի կոնակը գտնվող գրադարանից հանեց մի գիրք, ետ առաջ թերթեց և սկսեց կարդալ. «Այսքան սանտիմետր երկայնությամբ, այսքան լայնությամբ, այսքան հաստությամբ...»: Երևի ինքն էլ չէր հասկանում, երբեմն մտմտալով, երբեմն կանգ առնելով կարդաց, սակայն ես էլ ոչ մի բան չհասկացա:

– Խնդրեմ, գիրքը կտա՞ք ինձ, ես ինքս կարդամ տեսնեմ, – ասացի:

– Դու կարդալ կարո՞ղ ես, – պատասխանեց զարմացած: Մի՞թե կարելի էր, որ ոչ-թուրքը, է՛ն էլ գերին, իմանար թրքերեն:

– Ո՛չինչ, կարդում եմ, – պատասխանեցի և առնելով գիրքը սկսեցի կարդալ:

Գրքի մեջ բացատրվում էր եվրոպական ձևի փեթակների կազմը և ծավալը, գործածության ձևը ևլն: «Նոր Թուրքիո» հին գլուխները ցանկանում էին գյուղատնտեսությունն էլ եվրոպականացնել և նոր ձևի փեթակներով մեղվաբուծություն սովորեցնել:

– Շա՛տ լավ, իմացա, ի՞նչ եք ուզում այժմ, – հարց տվի:

– Ուզում ենք, որ այդ փեթակներից նմուշներ պատրաստես, որոնք դրկելու ենք գյուղերը, որպեսզի տեսնեն և իրենք էլ այդ ձևի փեթակներ գործածեն, – պատասխանեց տնօրենը: Մենք քեզ տրամադրելու ենք առանձին գործատեղի: Ինչքան ատաղձ որ հարկավոր է, այդ էլ կունենա: Մի օգնական էլ առ հետոյ և անմիջապես սկսեցեք աշխատանքը. ձեզ կտանք և 50 դրուշ օրական...:

– Շա՛տ բարի, – պատասխանեցի, մանավանդ վերջին խոսքը ամենից շահագրգռականն էր մեզ համար: Հիսո՛ւն դրուշ օրական...:

Եվ մենք, համաձայն մեր ձեռքը գտնվող գրքերի բացատրությանը, պատրաստեցինք երեք տեսակի մոդել փեթակներ: Այդ օրերում Իզմիր, Բուրնավայում բացվել էր երկրագործական (իմա գյուղատնտեսական) ցուցահանդես: Մեր պատրաստած փեթակները, իբր «մամուլաթը տախիլիյե»²¹⁴ (ներքին արդյունաբերություն), դրվել էին այդ ցուցահանդեսում և ... մրցանակ էլ շահել:

Այսպես աշխատեցինք մենք մի այրած բաղնիսի նախապահում: Մի օր էլ գնացի ներկայացա երկրագործական տնօրենին, շնորհավորեցի: Առիթից օգտվելով իր ուշադրությանը հանձնեցի մեր բոքիկ ոտները... կռահեց, ինչ եմ ուզում ասել և երկու օր հետո ունեցանք մի գույգ «յեմենի»²¹⁵ (չուսդ)....:

Այս աշխատանքը սակայն, բարերախտություն եղավ մեզ համար, որ գոնե զգեստավորվեցինք մեր ստացած փողով, գնեցինք վրանիս ծածկվելիք, վրան պառկելիք մի երկու կտոր ծածկոց:



Մենեմեն և այլուր կանգնված հաղթանակի կոթողները շինեցին հայ արձանագործներ:

Սեպտեմբերի 7, 1923 թվին Մաղնիսայում կատարվեց նահատակ ընկած մի զինվորի ի հիշատակ, երկաթուղու կայարանից դեպի Կասաբա, տասը լոպե հեռավորության վրա կանգնված կոթողին բացումը՝ որի աստաղձն էր եղել տեղվույն հունաց հիվանդանոցի բակումը, հաստատության բարերարի մարմարյա արձանը:

[Բացակայում են ձեռագրի 167-174 -րդ էջերը՝ Թ.Մ.]:

²¹⁴ *Մամուլաթը տախիլիյե* (թուրք.՝ Mamulat-ı dahiliye), ներքին արտադրություն, արդյունաբերություն:

²¹⁵ *Յեմենի* (թուրք.՝ yemeni), առանց կրունկի սրաքիթ կոշիկ:

ՄԻՎՐԻՍԱՐՅԱՆ ԵՂԲԱՅՐՔ

Սեպտեմբերի 11 երկուշաբթի օր, «Մերքեզ կոմանտարության»²¹⁶ բերել էին՝ անգլիահայատակ Սիվրիսարյան եղբայրներ, իզմիրահայության ընտրանի մեծահարուստներից: Ջանազան կենտրոններ պտտեցնելուց հետո բերել էին վերջապես Գըշլա, որտեղ ևս մնացել էին ինն օր: Սրանցից Պերճի կինը անգլուհի էր և զանազան տեղեր իր կատարած դիմումի իբր արդյունք, երկու եղբայրները փոխադրել էին մի մասնավոր սենյակ: Իրենք բացարձակ հուզումն ունեին, թե Իզմիրի մեծահարուստ թրքերից Ալայալը զաղե Մահմուդը փրկելու էր նրանց: Սպասում էին ազատ արձակման և սակայն համենում էր այդ օրը:

Երբ իրենց ազատման էին սպասում, հանկարծ սեպտեմբերի 28 հինգշաբթի առավոտ ուղարկվող 640 գերիների կարավանին միացվեցին և Պերճ և Հրանդ Սիվրիսարյան եղբայրները: Սակայն տակավին լավատես էին, չէին հուսահատած և հավատացնում էին, թե հոգ չէ, ավելի ներսեր – Բունար բաշի կամ Մաղնիսա – հասնելու էր փրկարար հեռագիրը, որը անպայման ապահովելու էր Մահմուդը: Անգլիա մեծացած, անգլիական կրթություն ստացած, ծանոթ չէին թրքական վարվելակերպին, հոգեբանության և նկարագրին: Հավատում էին կեղծ խոստումների, պլատոնական և շնական հուսադրությունների, որոնք շարված թույն էին:

Մինչև Բունար բաշի արդեն թալանվել մերկացվել էին: Հրանդի կոշիկներն էլ կողոպավել էին և չէր կարողանում քայլել: Սպանված մի քահանայի վրայի վերարկուն պատռելով փաթաթել էր մերկ ոտներին, որպեսզի կարողանար պահպանել ճամփու սուր քարերից և արտերի փշերից:

²¹⁶ *Մերքեզ կոմանտարության* (թուրք.՝ Merkez komandanlığı), կենտրոնական հրամանատարություն:

Երկու եղբայրներից իր կորովը կորցնողը ավելի Հրանդն էր: Երբեք չէր խոսում, կարծես լեզուն բռնված լիներ: Ընկճված, սիրտը մորմոքով, մռայլ դեմք էր ստացել: Երբեք չէր փոխվում որևէ մխիթարական խոսքից և սպարդյուն էին մնում եղած հորդորները: Միակ հույսերնին Ալայալը Մահմուդից հասնելիք հեռագիրն էր, որին սպասում էին ժամից ժամ, կարծես մի սուրհանդակ բերելու էր փրկարար լուրը: Անկարելի եղած էր համոզել, թե իմաստ չունի այդ հուսալը, որ չխաբեն ինքն իրենց և փոխանակ սին ակնկալություններ ունենալու, ավելի լավ է ջանսան թաքցնել իրենց ինքնությունը:

Սեպտեմբերի 28-ին Կորդելիոյից էլ ճամփա էին հանել 550 հոգինոց մի կարավան հասել միացել էր և իրենց թիվը հասել էր 1200-ի: Հաջորդ առավոտ ճամփա հանվելով դեպի Մաղնիսա, զարտուղի վայրերից, լեռ ու ձորերից հարձակումների ենթարկվելով կոտորվելով, վերջապես հասել էին Մաղնիսա և դրվել էին Նոթթայի գործարանը, ուր արդեն գտնվում էին 2000-ից ավելի գերիներ:

Եվ Սիվրիսարյան եղբայրներ տակավին սպասում էին Ալայալը գառնի հեռագրին...:

Հրանդը շատ ծեծվել էր այստեղ, վիրավորվել էր գլխից, երեք օրից ի վեր ծարավի, ինքն իրեն բակի ավազանին էր զցում, ջուր խմելու համար: Իզմիրի իրենց «բարեկամից» երևի մի քիչ հուսահատած, այս անգամ էլ աշխատում էին Մաղնիսայի իրենց թուրք նախկին հաճախորդներին լուր դրկելու, որ գան և աշխատեն փրկել իրենց: Լավատես էին այդ մասին, որովհետև անցյալում մեծ օժանդակություններ էին արել, ապառիկ ապրանք էին տվել և այդ բոլորում էլ մեծ գումարներ ունեին ստանալիք: Հետևաբար հույսով էին, թե գեթ բարոյական պարտականություն զգալու էին մի կերպ օգնելու: Այս մասին էլ, իրենց անփորձությունը վնասակար լինելու էր, սակայն ականջ չէին դնում եղած հորդորներին և

հաջողել էին մի թուրք լաճի հետ գողտուկ լուր դրկել իրենց մի թուրք հաճախորդին:

Չափազանց նեղվում էին, որովհետև բացարձակապես առանց փողի էին մնացել: Հանկարծ մի ձայն է լսվում դրսից. —

— Սիրվիսարը զադելե՞ր²¹⁷...:

Կրկնվում է կանչը և չափազանց ուրախանում են երկու եղբայրներ, որովհետև քաղաք իրենց դրկած տոմասկին մեջ անուննին նշանակել էին «սիրվիսարը զադելեր», ինչ որ համոզել կտար, թե իր տեղն էր հասել իրենց գրությունը և մեծապես հույս ունեին, որ ազատ արձակման լուրն էր հաղորդվելու:

Այս կոչին իմաստը իմացող թուրք զինվորներ, առաջելական մի քմծիծաղով ասում էին «հայդե, գուրթուլտընը»²¹⁸ (արի՛, ազատվեցիք), իսկ ուրիշներ՝ էլ մնացած գերիներին «մաղթում» էին «տարոսը սիզե, տարոսը սիզե...»²¹⁹:

Արդեն սովորական երևույթ էր դարձել ամեն գիշեր 50-60 հոգի դուրս հանել գերիների կենտրոնացման վայրից և սպանել, իսկ ծանոթներ գալիս, առնում էին իրենց ճանաչած քրիստոնյաներին և սպանում էին: Սիվիսարյան եղբայրների համար եղածն էլ սրանից տարբեր բան չէր: Մի թուրք մոտեցել էր պահակ զինվորին, հինգ բանկանոտ էր գետեղել ձեռքը և ասի գնում էին երկու եղբայրներ, ընկերացած կանչող թրքին:

Գնացին «սիրվիսարը զադելեր» և չվերադարձան: Գնացին այն ճամվից, որը չուներ վերադարձ: Հակառակ որ Իզմիրի ծովածոցում, իրենց բնակարանին կապված մնում էր իրենց սեփական շոգեմակույկը, չփորձեցին փախչել, հավատալով միջազգային օրենքների և մարդկային նկարագրի ու բարոյականի, որոնց բոլորն էլ իր չարուխի ներքանին էր գրել թուրքը...:

²¹⁷ *Սիրվիսարը զադելե ՚ր* (թուրք.՝ Sivrihisarlı zadelər), սիվրիհիսարցիներ:

²¹⁸ *Հայդե, գուրթուլտընը* (թուրք.՝ Hadi kurtuldunuz), դե՛, ազատվեցիք:

²¹⁹ *Տարոսը սիզե, տարոսը սիզե* (թուրք.՝ Darısı size, darısı size), տարոսը ձեզ, տարոսը ձեզ:

ԴԵՊԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

1923 թվի սկզբին է՛լ կարելի էր թրքերեն թերթ կարդալ: Անկարայի գնացողներից 5-10 դրուշ ունեցողներ երբեմն երբեմն գառնիզոն վերադառնալու ժամանակ գնում և հետերնին բերում էին Իզմիր հրատարակվող թրքական թերթերից: Գերիների մեջ թրքերեն կարդալ իմացողներ շատ քիչ էին: Ամբողջ գնդի համար մի թերթ էր և երևակայել, որ ի՞նչ մեծ հանդիսավորությամբ կատարվում էր նրա ընթերցումը: Հարյուրավոր գերիներ ծալապատիկ, ծնկաչոք կամ ոտի վրա, համակականջ դարձած մոռիկ էին անում: Բոլորի համար ամենից շահագրգռական և հետաքրքրական մասը այդ օրում շարունակվող Լոզանի հաշտության ժողովի բանակցությունների և հույն և թուրք փոխանակության լուրերն էին: Յուրաքանչյուր հեռագիր կամ լուրի ընթերցումից հետո սկսում էին մեկնաբանություններն ու մեկնությունները:

– Ինչպես երևի, այս շաբաթ վերջանալու են խորհրդակցությունները, ենթադրելով, որ մի շաբաթ էլ ստորագրության ձևակերպությունները տևեն, կարելի է ակնկալել, որ առավել 15 օրից սկսին գերիների փոխանակությունը, կարծիք էր հայտնում ունկնդիրներից մեկը:

– «Ֆեղումե²²⁰» (մեկնում ենք), – գոչում է մի ուրիշը:

– Որ փոխանակությունը սկսի, տարակույս չկա, որ նախ սիվիլներից սկսելու է, հետևաբար, եթե նախ Իզմիր գտնվողներն ազատ արձակեն, երկրորդ հերթին էլ մենք գնալու ենք, – տրամաբանում էր մի երրորդը:

– «Ֆեղումե», – գոչում են ամեն կողմերից:

Եվ երկարում են, քաղաքական տեսություններն ու հետևությունները: Այս կարգի հուսադրություններով արդեն հասել էինք 1923 թվի փետրվարի 12-ին, երբ իսկապես հունահպատակներ ջոկվեցին գնդից և 252 հոգի Իզմիր ուղարկ-

²²⁰ Ֆեղումե (հուն.՝ φερόμε), մեկնում ենք:

վեցին, փոխանակության համար: Իսկ գինվորների պաշտոնական փոխանակումը սկսեց մարտին: Որևէ մեկի ինքնությունը հաստատելու հարկավոր որևէ փաստաթուղթ ոչ մեկ գերի չունեի, իսկ փոխանակության հանձնախումբը եկել էր ցանկերով և փնտռում էին Հունաստանի իրենց պարագաներից տրված անուններով անձերը: Ողջ մնացածներ գտնվեցին, սակայն գտնվեցին և այնպիսիներ, որոնք ծանոթ էին անունի տիրոջ սպանված լինելուն և իրենց իբր այդ ներկայացնելով, ենթարկվեցին փոխանակության և անցան Հունաստան:

Այդքան էլ հուսադրված չէինք հունահպատակների այս փոխանակությունից, քանի որ մեզ չէր վերաբերել: Սակայն մայիսի վերջավորության Իզմիրի Պարադիսոյի ամերիկյան վարժարանի աշակերտներից 20 գերիների արձակումը մեզ հուսադրում էր: Որովհետև սրանք թրքահպատակներ էին: Չէինք իմանում, թե ինչ ձևով ազատվում էին, և սակայն պատճառ ունեինք ակնկալելու մեր էլ արձակումը:

Անցան երկուք ամիսներ ևս և ոչ մի հետաքրքրություն չկար մեր մասին: Հուլիսի կիսուն հասած մի հեռագիր գնդի հրամանատարությունից հարցնում էր հայ գերիների ընդհանուր թիվը: Գնդի քարտուղար եղած գերի Արիս Ավագյան իսկույն մեզ հաղորդել էր այս լուրը և սկսեցինք խորհրդակցել: Յուրաքանչյուրս տալիս էինք զանազան մեկնություններ: Ոմանք չափազանց հոռետես էին և ոչ մի բարի հետևություն կամ նպատակ չէին վերագրում այդ հեռագրին: Ուրիշներ ավելի տարբեր կարծիք էին հայտնում: Իսկ վերջնական հետևությունը եղել էր այն, որ ոչ մեկ կերպով չէինք գտնվում մի նոր վտանգի կամ աղետի առաջ իբր հայեր, ընդհակառակը, պետք է նկատել ազատության մի նշույլ: Նախ որ թուրք իշխանության համար ոչ մեկ ժամանակ դժվար չէր երևան հանել հայերը և նրանց իսկական թիվը, եթե երբևէ ծրագրել էին շարունակել իրենց հայահալած քաղաքականությունը և նպատակ ունեին մեզ կոտորել: Ուստի իմաստությունը պահանջում էր, որ հեռագրին պատասխանվի այնպիսի մի առաձգա-

կան ձևով, որ նպաստավոր հավանական մի երկրորդ հեռագրի դեպքում, օգտվին առիթից ու ազատվին, ոչ միայն իրենց իսկական անուններովը արձանագրված հայերը, այլև այն մի շարք հայ գերիներ, որոնք արձանագրվել էին հուլյնի, սուրիացիի, ֆրանսիացիի կամ ուրիշ անուններով, թաքցնելու համար իրենց հայությունը: Եվ այդպես էլ պատասխանվեց հեռագրին, թե «ըստ տոմարների արձանագրված հայ գերիների թիվն է... իսկ զանազան տարբեր անուններով արձանագրված հայեր էլ գտնվում են գնդի մեջ»:

Մոտավորապես մի երկու ամիս հետո, մի երկրորդ հեռագիր հրամայում էր գնդի մեջ գտնվող հայերի մանրամասն ցանկը պատրաստելով, Իզմիր 10-րդ գնդի կենտրոնը ուղարկել, ազատ արձակելու համար: Ուրախությունն ու հրճվանքը չունեի չափ ու սահման: Ոչ ոք չէր կարողանում հավատալ, թե ազատ արձակելու էինք:

Ուղղակի հայու անունով արձանագրվածների թիվը շատ քիչ էր, բաղդատմամբ ոչ-հայու անունով եղածների: Սակայն, բանի որ հրամանը հայերի համար էր, առանց պայմանի բռնություն էլ իրավունք ունենում էին մեկնելու: Ուստի, ամեն կողմից դուրս եկան մինչև այդ օր իսկությունը որևէ ձևով թաքցնել հաջողած մարդիկ և պատրաստվեց ցանկը: Սրանց կարգին երեք հույներ էլ փորձ էին արել իբր հայ ազատվել: Ի՞նչ ունեինք կորցնելու, թող երեք հոգի էլ հույն ազատվեր: Ուստի, հետերնիս տարինք Իզմիր: Սակայն գնդի մեջ գտնվող հույների նախանձն էր արթնացրել այս բանը: Գնացել մատնել էին հրամանատարության: Հազիվ 53 հայ Մաղնիսայից Իզմիր էինք հասել, հասել էր և մի հեռագիր մեր ետևից, որ մեր մեջ գտնվում էին նաև հույներ, որոնք իբր հայ արձանագրվել էին և պահանջվում էր մանրակարկիտ քննություն կատարել:

Իզմիր 10-րդ գնդումն էինք: Այստեղ էր Սըրուգի էֆենդի անուն իսլամացած մի հայ, նախքան թրքական գրավումը. Թորպալլի թաղապետական դեղագործն էր եղել: Այս մարդը քննիչ նշանակվեց, ստուգելու և երևան հանելու կեղծ հայերը:

Սկսեց քննության ենթարկել յուրաքանչյուր գերին: Որ մեկին խաչ հանել տալիս էր իմանալու, թե ձախից աջ, թե ոչ աջից ձախ հանելու էր, որ իմանար հայ կամ հույն լինելը: Որ մեկին «Հայր մեր» ասել տալիս էր, մի ուրիշից պահանջում էր որ շուտ ասելուկի նման կրկներ՝ «Չարշրդան պեշ շիշե շարաք պտրմ»²²¹, որովհետև հույները չեն կարող հնչել «շ» և «չ» ձայները, այդպիսով հույս ուներ գտնել փախստական հույները: Համենայն դեպս շիաջողվեց գտնել անուն ու մականունով հայացած հույները: Նրանց ազատելն էլ մեզի համար արժանապատվության հարց էինք դարձրել և ամեն կերպ թելադրություններ էինք արել, մի շարք հայերեն բառեր էինք սովորեցրել և մեզ հաջողվեց այդ երեք հույները մեզ հետ Հունաստան տանել:



Ճիշտ այդ օրերումն էր, որ հրաման հասել էր առհասարակ գերիները ծովեզրյա քաղաքներից ներքին գավառներ փոխադրել: Որովհետև փոխանակության ենթակա հույների և հույն զինվորների Հունաստան փոխադրման համար Պոնտայի նավահանգիստը խարսխված նավերի մեջ հաջողել էին դրսից սպրդել և երկու գերիներ: Այդ բանը իմացվել էր և նավը «Յենի քալեի»²²² (Իզմիրի ծոցի մուտք) առաջ վար դրվել, ետ դարձվել էր և նավապետին հետ էլ երկար խնդիրների առիթ էր տվել: Երկրորդ կարևոր պարագան այն էր, որ գերիներն առիթն էին ունենում մերձենալու և շփում ունենալու օտար հյուպատոսների և ուղղակի փոխանակության հանձնախմբի օրագրող անդամների հետ, մի բան որ երբեք էլ ախորժելի չէր թրքերի համար: Ուստի, հրամայել էին բոլոր գերիները հեռացնել ծովեզրքից և մոտակա շրջաններից:

²²¹ *Չարշրդան պեշ շիշե շարաք պտրմ* (թուրք.՝ Çarşıdan beş şişe şarap aldım), շուկայից հինգ շիշ գինի եմ գնել:

²²² *Յենի քալե* (թուրք.՝ Yeni-Kale), նոր ամրոց:

[Բացակայում է ձեռագրի 182-րդ էջը՝ Թ.Մ.]:

... մեզ քննությունից անցկացրեց, խոսել տվեց, գրել տվեց ով գիտե ինչեր էր փնտրում և նույնիսկ հարցրեց, թե մեր մեջ կա՞ն դաշնակցականներ, որովհետև ինք համակիր... է եղել այդ կազմակերպության և նույնիսկ նրանց մեջ ապրել էր:

Հաջորդ օրն իսկ պատրաստ էին մեր թղթերը, կնքված՝ ոստիկանապետության և կուսակալության կողմից և մասնավոր մի անկյուն էլ մակագրված. «Մեկնում է իր հոժար կամքով և չվերադառնալու պայմանով»:



Իզմիր վերադարձիս, քրիստոնյա բնակչություն գրեթե չէր մնացեր և ոչ-թուրք ժողովուրդ միայն հրեաներն էին, այս անգամ հրեաները դարձել էին թրքերի հալածանքին թիրախ: Հրապարակի վրա գործ չէին տալիս, տուրքերով ծանրաբեռնված էին, ոչ մի կերպով ապահովություն չունեին, ոչ ինչքի և ոչ պատվի, և երևակայել, որ օրը ցերեկով Բասմախանեի երկաթուղու կայարանի շենքին մեջ հրեա աղջիկներ գրկվում և համբուրվում էին թրքերի կողմից:

Հրեաները եկել էին իրենց դարդը մեզ պատմելու, իբր բախտակից, մոռացած էին այն օրերը, երբ քեմալականները Իզմիր մուտքին կը պոռային՝ «խոշ գելդինիզ, էսքի պապամիզ²²³»: Մեզ տանում էին իրենց տները, հյուրասիրում և այդ ձևով մխիթարվում: Շատեր դիմել էին Պաղեստին մեկնելու համար, ծախել էին տուն ու տեղ և սակայն զանազան ձևի տուրքերը, որ պահանջվում էին թրքական իշխանությունների կողմից, այնքան մեծ էին, որ ոչինչ էին թողնում իրենց հարստությունից:

²²³ *խոշ գելդինիզ, էսքի պապամիզ* (թուրք.՝ Hoş geldiniz, eski babamız), բարով եք եկել, մեր նախնին հայր:

ԴԵՊԻ ՆԱՎ

Զինվորական իշխանությունից կտրվեր էր մեր կապը և ոստիկանապետության կողմից էլ «ազատ արձակվել» էինք և սակայն մեզ զգուշացրել էին նույն ատեն, «դուրս չելնել», գառնիզոն մնալ, քանի որ կարող է մի թուրք խփեր և սպաններ: Բայց որտեղից ճարելու էինք մեզի հարկավոր ուտելիքը: Ո՞վ պիտի ապահովեր մեզ արտասահման հանելի նավը: Միակ հույսերնիս մնում էր դիմել Պարադիսոյի ամերիկյան վարժարանի տնօրենության, որ մի ճար խորհեր:

Ամերիկյան Բիլիֆի ներկայացուցիչի հանգամանքով Իգմիր մնացեր էր Լորենց: Դիմեցինք իրեն, որ մի ճար գտնեին այս գերիները Թուրքիայից դուրս հանելու համար, քանի որ ամեն ժամ վտանգ կար նոր նոր ձերբակալությունների: Հակառակ, որ հրաման եղած էր հետասանդումները դադարեցնելու համար, մեր աչքերի առաջ արդեն իսկ ձերբակալվեր էր ատափագարցի մի հայ տղա, իբր թե այդ քաղաքի հրձիգներից մին եղած է և չէին արտոնում, որ մեկներ: Դրել էին մի թուրքի մոտ, ուր աշխատում էր իբր ծառա:

Լորենց հայտնեց թե Բիլիֆը արդեն լիքիդե արել է իր գործը և չկան տրամադրելի գումարներ, վճարելու համար նավու փոխադրող չեքը: Հայտնեց, թե տոմսակի գինը թեպետ ավելի է, բայց պետք է որ որևէ կերպով յուրաքանչյուր անձի համար երեքական պանքանոթ հանձնվի, իսկ պակասը իրենք կաշխատեն մի կերպ լրացնել: Թե անմիջապես, որ ապահովվի գումարը, իրենք հեռագրելու են Միտիլի և մի նավ գալով փոխադրելու է մեզ:

Երբեք չխորհեցավ, թե գերությունից վերադարձող, կողոպտված և մերկացած մարդիկ կարո՞ղ էին անձ գլուխ երեք պանքանոթ տալ տոմսակի համար: Մեր բոլոր դիտողությունները, թե անհնարին է, պատասխանվեց՝ «այլապես չենք կարող»: «Պակասը լրացնել» հանձն առնող Բիլիֆի պարոն ներկայացուցիչը մի՞թե չէր կարող ամբողջ գումարը հայթայթել

փրկելու համար հրաշքով ազատված և արյան ճամփից ողջ վերադարձած մի խումբ մարդկանց:

Քավական դժվարին հարց էր: Որտեղից ճարվելու էր այդքան գումար: Սակայն ուրիշ միջոց չկար: Խորհեցինք, խորհրդակցեցինք, կացության լրջությունը պարզեցինք մեր ընկերներին, կոչ արեցինք, որ ունեցողը տա չունեցողի համար, որպեսզի օր առաջ հեռանանք մշտական և առկա վտանգից: Հաջողեցանք հավաքել մոտ 300 պանքանոթ և հանձնեցինք Լորենցին:

Ճիշտ այդ օրերին Այդրնի գնդերից էլ հասան 111 հայ գերիներ, սույն կարգադրությունը եղավ նաև նրանց համար: Մինչև այդ Միտիլի հեռագրված և հասած էր Իզմիրի պատերազմների «Թալիա» անուն գրոսանավը: Մեր խմբի պաշտոնական ձևակերպությունները կատարված լինելուն, անմիջապես նավ ուղարկեցինք Մադնիսայի շրջանից եկածները: Հաջորդ օրը ուրբաթ լինելուն, պաշտոնատեղիներ փակ էին, ուստի երկրորդ օրը լրացավ և Այդրնից եկածների գործողությունը և նրանք ևս փոխադրվեցին նավ:

Այս վերջին խմբով եկել էր մի հայ, որին քանի քանի անգամներ փնտրել էին բոլոր գնդերից: Հրահանգ կար իսկույն կախաղան բարձրացնելու: Հաջողել էր թաքցնել իր ինքնությունը և հասել էր Իզմիր, ուր իրեն ճանաչող թրքեր չէին պակասում: Ուստի այստեղ էլ պետք եղած ծայրագույն զգուշությունը ձեռք առնված և կառքով փոխադրված էր նավ, որպեսզի ճամփան աչքի չընկնին: Հաջողված էր ծպտված հոն անվտանգ անցնել:

Մեր նավը ճամփա ելավ 18 նոյեմբերի 1923, կիրակի կեսօրից ետք ժամը 2.30-ին: Անցանք նեղուցից – Յենի Քաչե – մինչև ուր տակավին չէինք հավատում, թե ազատվել էինք, որովհետև կարող էր պատահել, որ մի չարագուշակ որոշումով հրաման տրվեր՝ նավը ետ դարձնելու և կամ տարբեր մի դժբախտություն պատահեր: Սակայն, մեր առջևից սուրացող «Պիեր-Լոտի» և այլ հսկա նավերի ետևից մենք էլ, համրնթաց

դուրս ելանք նեղուցից, հեռանալով արյան ու ավերի, սրի ու հուրի երկրից:

Միտքս տանջում էր ժողեֆ Նահապետյան անուն մի երիտասարդ, որ մեզ հետ Մաղնիսայից Իզմիր էր եկել և մեզ պես ազատ էր արձակվել:

Անխոհեմություն էր ունեցել նա՛վ մտած օրերնիս, մի բուպե շուկա գնալ անցնելով կառավարատան առջևից: Հանկարծ իրեն տեսել է այդ օրվա կուսակալ Ազիզ բեյ, Գասաբայի նախկին Մութասարըֆը²²⁴: Երևի ճանաչում էր այդ քաղաքից: Հրամայում է ձերբակալել: Այդ միջոցին էր, որ անցնում էի ես: Ձայն տվեց, պատմեց եղածը և խնդրեց, որ իմաց տամ ֆրանսիական հյուպատոսարան, քանի որ իրեն դրկելու էին Գասաբա... կախաղան բարձրացնելու համար:

Ֆրանսիահպատակ էր ժողեֆ, ուստի անմիջապես հյուպատոսարան գնացի, աչք առնելով գաղտնի ոստիկանների և սիվիլ թոթերի կողմից լինելիք հավանական ձերբակալություն կամ հարձակում: Պատմեցի եղելությունը և տղի չափազանց վտանգալի կացությունը պարզելով, իմ կողմից էլ խնդրեցի, որ առանց հապաղումի դիմեն ամեն միջոցի և ազատեն նրան:

Անցել էր վեց ամիս, և մի օր Աթենքում ինձ էր փնտրում ժողեֆ: Փնտրում էր իր երախտագիտությունը հայտնելու, որ իրեն փրկությանը պատճառ եղել էի: Պատմեց, թե ինչպես իրեն տարել էին Գասաբա և Սալիհը, կողոպտվել և գանակոծվել էր և մազ էր մնացել, որ կախաղան բարձրացվեր, երբ ֆրանսական հյուպատոսարանի դիմումին իբր արդյունք հասած մի հեռագիր մահից ազատել էր նրան: Սակայն չէին էլ արձակել: Վեց ամիս քաղաքից քաղաք, բանտից բանտ պտտեցնելուց հետո, քրիստոնյաների համար հրատարակված ընդհանուր ներումի օրենքից օգտվելով ազատ էր թողվել և ուրիշ երեք հայերի հետ անցել էր Հունաստան:

²²⁴ *Մութասարըֆ* (թուրք.՝ Mutasarrıf), վարչական տարածքի կառավարիչ պաշտոնյա, գավառապետ:

ՎԵՐՋԱՊԵ՛Ս ԱԶԱՏ...

Վերջապես դուրս էինք եկել թրքական ջրերից: Մահից կյանք էինք փոխադրվել, նավի վրա բոլոր գինուվցել էին ազատության ըմպելիովը, որին հաջորդել էր իսկական ըմպելին: Խրախճանությունն ու ուրախությունը հորդել էին: Խենթացել էին բոլորը...: Եվ հանկարծ կես գիշերին, խշշացող ալիքների զուգընթաց, նավի միջից ականջս էր հասնում կախաղանից ազատված, մարած ու խռպոտ ձայնը. «Վար առնենք դիմակը, ռամկավարներին...»:



Նոյեմբերի 19 լուսնավիք գիշերվա ժամը 1.30-ին մեր նավը հասել էր Միտիլի: Հաջորդ օր կիրակի էր և երբ լուսացավ, եկեղեցի գնացող ժողովուրդը հետաքրքրությամբ դիտում էր նավահանգիստ խարսխած մեր նավը: Քաղաքի մեջ կայծակի արագությամբ տարածվել էր գերիների ժամանման լուրը և ամեն կողմից մակույկներ նստած մարդիկ շրջապատել էին մեր նավը և հազար ու մի հարցումներ էին անում, հազար ու մի անուններով մարդ էին փնտրում: Որդեկորույս ծնողներ, այրակորույս կիներ, հայրակորույս զավակներ, պարագա և ազգական փնտրողներ՝ մի որևէ բարի լուր իմանալու հեքովը աչքերնին դուրս ցցված, իրենց սիրելիներն էին փնտրում մեր միջից: Փնտրվածներից ոմանք ծանոթներ էին մեզի, գիտեինք, որ ինչ վախճան էին ունեցել, սակայն ինչպես պատմել, ինչպես խոսել, ինչպես իմացնել դառն իրականությունը: Եվ հուսադրում էինք, ասելով, թե տակավին շատեր կան վերադառնալիք: Այնքան հուզիչ ու սրտաճմլիկ էր տեսարանը, որ մոռացել էինք, թե մենք էլ գերի եղել էինք մի ժամանակ:

Ահա երկու քույրեր մի մակույկի մեջ: Մին ամուսնացյալ, իսկ մյուսը ամուրի: Կորցրել էին իրենց հայրը և մեկն էլ նաև իր ամուսինը: Հարցնում և փնտրում են արտասովորից աչքերով:

Ողջ է մեծ քրոջ ամուսինը: Ուրախ է մեծ քույրը, մոռացել է իր հայրը: Փոքրը սակայն հարցնում է. «Իսկ հա՞յրս...»:

Լռություն էր պատասխանը: Կրտսեր քրոջ հեկեկանքն ու ադրասուրքը խեղդում էր իրեն, որովհետև մնացել էր անմխիթար:

Եվ հարյուրավոր նման պատկերներ:



Կիրակի կեսօրից ետք ժամը 1.30-ին դուրս ելանք: Բաղնիս, հականեխում և բժշկական քննությունից հետո էլ ազատ թողել էին մեզ: Ազատ հողի վրա էին 245 հայ նախկին գերիներ: Պատմական մի օր էր: Բաղաքի փողոցները թնդում էին ազատագրված հայերի ուրախության աղաղակներից: Հեռուն, հորիզոնի վրա, ծովից անդին նշմարել էին թրքական ավիերը, որի յուրաքանչյուր բլուրը մի մի ոսկրակույտի երևույթն ուներ, արյան ճապաղիքով²²⁵ շրջապատված:

Արդեն ամեն ոք որոշել էր իր հետևելիք ճանապարհը: Յուրաքանչյուրը խորհում էր գլխի ճարը, ապահովելով Սելանիկ կամ Պիրե գնալիք շոգենավեր մտնելով, քանի որ ոմանք մոտավոր տեղեկություններ քաղել էին իրենց պարագաների մասին, իսկ Միտիլլիի հայ գաղթականաց հանձնախումբը տալիս էր որոշ օգնություն, նյութական թե բարոյական:

Ինձ համար ծանոթ էր մորս և քրոջս գտնված տեղը: Վերջին ամիսներ հաջողել էին Կարմիր խաչի խողովակով թղթակցել, նույնիսկ մեկ երկու անգամներ էր փոքրիկ գումարներ կարողացել էր քույրս ինձ ուղարկել: Գիտեի, որ գտնվում էին Սիրա կղզում, բայց Միտիլլուց Սիրա գնացող նավ չկար: Հարկավոր էր նախ Պիրե գնալ և այդտեղից նորից նավ առնել: Անմիջապես հեռագրեցի ազատվելս և Սիրա գալու համար Պիրե մեկնելս:

²²⁵ *Ճապաղիք*, հորդում, հեղում:

Մեր նավը առավոտյան հասավ Պիրե: Այդ օրը անցկացրի Աթենքում մի պանդոկի մեջ: Առավոտյան կանուխ Պիրե իջա իմանալու, թե երբ և որ ժամին նավ կարելի է առնել Սիրայի համար: Այդ պահուն հասել էր մի նավ. չէի իմանում, թե որտեղից, իսկ ես դեպի ծովեզր էի գնում, հանկարծ իմ դեմն ելավ քույրս: Այդ անակնկալ հանդիպումը ուրախության արցունքներով և զրկախառնումով դիմավորեցինք և ձեռք ձեռքի ելանք Աթենք և երեկոյան Սիրա գնացող նավ նստանք: Արշալույսին արդեն հասել էինք կղզին, ուր սրտատրոփի և անհամբեր սպասում էր իր ամուսինը կորուսած, տարի ու կես մահվան սարսափին տակ ապրած և ողջամբ վերադարձած որդին դիմավորող մայրս:

Ազատվել էինք, իբրև հայեր, չէինք իմանում ինչպե՞ս և ո՞ր հրաշքով, միայն ասում էին, թե «այդ ուղղությամբ համաձայնություն է կնքվել Սովետ պետության հետ»:

Առեղծված էր մեզ համար:

Թուրքիայից դուրս գալուց հետ միայն իմացանք, որ այդ ՄՍՀՄ-ի և Թուրքիայի միջև ստորագրված բարեկամության դաշինքի արդյունքն էր:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ԲՈԼՈՐԻ՝Ց ՇԱՀԱԳՈՐԾՎԱԾ, ԲՈԼՈՐԻ՝Ց ԽԱԲՎԱԾ

1922-23 թվականներին Հունաստան էին ապաստանել մոտ 120 հազար հայություն: Ապաստանել էին զանազան տեղերից: Իզմիրի՝ քեմալականների գրավումով, Պոլիսն էլ վտանգավոր էր դարձել, քանի քեմալականների հաջորդ ձեռնարկը լինելու էր Պոլսո գրավումը, որով Պոլսի հայ և հույն բնակչությունն էլ փախուստի ճամփան բռնել էր: Իբր մոտակա երկրներ՝ Բուլղարիա, Ռումինիա ևն, գաղթելուց հետո, բավականին մեծ թվով մըն էլ Հունաստան գաղթել էին: Բազմաթիվ որբանոցների մեջ գտնվող որբ և որբուհիներ և նաև ժողովուրդ: Ողջ մնացածները համարձակություն ունեցել էին իրենց նախկին բույնը վերադառնալ: Քեմալական հառաջխաղացումով և հունական ուժերի այդ շրջանից հեռանալուն պատճառով, հայերն էլ շտապել էին հեռանալ և մեծ մասամբ ապաստանել էին Թրակիա և Մակեդոնիա: Պրուսա, Նիկոմեդիա, Ատաբազար և շրջանի այդ ժողովուրդը, ծխախոտի, շերամի և զանազան այլ բաների մշակության ծանոթ, իսկույն աշխատանքի լծվեցին և հազիվ մի տարվա մեջ շենցուցին բոլորովին անմշակ հողեր և արտադրողներ դարձան:

Մակայն թուրք կառավարության սովերը այստեղ էլ էր հասել, այստեղ, սահմանից էլ անդին փնտրում էր հայի հետքը: Աչքի փուշ էր եղել սահմանակից հողերի վրա համախմբված հայությունը և ամեն կերպ աշխատում էր անհանգիստ անել, սահմանից հեռացնել:

Հույն և թուրք ժողովրդի փոխանակության համաձայնագրի ստորագրության օրերն էին, հույն պետական մարդիկը տկարությունը ունեին թուրք կառավարության հանդեպ, իսկ թուրքն էլ գիտակից՝ այս բանին, ուզեց օգտագործել առիթը: Եվ պահանջեց, որ հայերը հեռացվին իր արևմտյան սահմանից:

Եվ հանկարծ 1924 թվի գարնան, իրենց տներից ու տեղերից հավաքելով, նաև նստեցրին ու Պելոպոնեսի զանազան մասերը փոխադրեցին Թրակիո հայերը: Այդ օրերին արտաքին գործոց մինիստր Էմանուիլիդիսի հրամանն էր, որ գործադրվում էր: Էմանուիլիդիս գաղթական հույներից էր, տեսած էր 1915-ի հայկական տեղահանությունը և թրքավայել ձևով կատարեց հայերի մի նոր տեղահանություն Հունաստանի մեջ: Նույնիսկ թույլ չտալով, որ մարդիկ իրենց ունեցած չունեցածը հետերնին վերցնեն, ամենալիքնին կարգադրեն (հույներից): Կարծես ոճրագործներ լինեին այդ հայերը, նույնիսկ հարաբերությունից գրկեցին: Երբ նավը հասել էր Պիրեայի նավահանգիստը, ոչ ոքի չարտոնեցին տեղահանվածների հետ հարաբերվել:

Թրակիո և Մակեդոնիո շրջանի հայերին երկրագործության, արհեստի, ծխախոտի և զանազան տեսակի մշակության մեջ հայտնաբերած հմտությունը, չարքաշ կյանքը, աշխատասիրությունը և ձեռք ձգած հաջողությունները՝ նախանձը գրգռել էին Թուրքիայից գաղթած մի շարք նախկին կալվածատեր բուրժուաներին: Եվ երբ մի օր առիթը ներկայացավ և իշխանության գլուխ անցան, իրենց դասակարգային շահի պահանջից, այդ հայերը իրենց նախանձը գրգռեցին: Այս կարգի մի մարդ է պոնտոսցի Պաքալբաշիս, որ 1925-ին երկրագործության մինիստր լինելով, մի երկրորդ Էմանուիլիդիս դառավ Թրակիո հայության գլխին:

Եվ սկսվեց մի նոր արտագաղթ: Կարծես Հունաստանը բնահան և բռնահան հայության համար մի առժամանակյա օթևան էր, և առիթը ներկայանալուն, հավաքվելով գաղթում էին մի այլ երկիր, հոգ չէ թե որտեղ, աշխարհի որ անկյունը: Առիթից օգտվել էին Ֆրանսիայի և Արժենթինի գործարանատերերը, Բրազիլիո ֆերմերները: Ժողովուրդի թշվառությունը շահագործող շոգենավային գործակալների համար փառավոր մի առիթ էր ներկայացել: Ֆրանսիայից եկել էին մի շարք ներկայացուցիչներ, որոնք գործավար ու գործավարուհի էին

ուզում: Եվ այսպես, կարավաննե՛ր փոխադրվեցին Մարսիլիա, բազմաթիվ գորգագործներ, մետաքսի մասնագետներ և ամեն տեսակի արհեստագետներ տանելով իրենց հետ: Հազարավորներ գնացին Բրազիլիա և Արժենթինի անմշակ հողերը մշակելու: Մեկնում էին տասնեակներով և հարյուրյակներով, կապիտալիստների և կալվածատերերի ճորտ դառնալու:

Բարեբախտաբար այդ տարիներին որոշ չափով հակազդեց ներգաղթը, որը կազմակերպել էր Սովետական Հայաստանը: Իր դռները բաց էր արել մայր հայրենիքը՝ ընդունելու համար իր հալածված ու կեղեքված զավակները: Տարապարհակ թափառումից ազատվում էին նրանք՝ իրենց վերջին հանգրվանը հասնելով: Բայց կարիքին՝ մեծությամբ բաղդատմամբ, այդ մի քանի հաջորդական տարիների ներգաղթը անբավարար էր: Հայրենակարոտ բազմություններ մեծ ու զանգվածային հայրենադարձություն էին սպասում:

Ոչ մի երկիր պայծառ հեռանկար չուներ հայության համար: Հայը գիտակցում էր, թե բոլորն էլ սահմանված էին իր ամեն կարգի ուժերը շահագործելու:



1936 օգոստոսի 4-ին Հիտլեր և Մուսոլինի կապկող կոպիտ Մետաքսաս²²⁶ դիկտատուրա հռչակեց Հունաստանում: Ֆաշիստ Իտալիո այս աշակերտի գործն էր եղած՝ դեմոկրատ տարրը հալածել և վերացնել հրապարակից: Հարյուրավորներ սառույցի կույտերի վրա նստեցրին, չարչարեցին, հավատաբննության դարը նսեմացնելու աստիճան՝ Մետաքսասի որդեգրած միջոցների առաջ, և բազմաթիվ երիտասարդներ ծեծի և չարչարանքի տակ մահացան: Հազարավորներ արտաքսվեցին ամալի կղզիներ: «Ամալիա» պողոտային վրա,

²²⁶ *Իոաննիս Մետաքսաս* (հուն.՝ *Ιωάννης Μεταξάς*, 1871-1941, հունյն ռազմական և քաղաքական գործիչ, Հունաստանի վարչապետ (1936-1941):

Բայրոնի արձանին առաջ դեմոկրատական գրքերի և հրատարակչությունների հսկա շեղջեր խարույկի վերածվեցին՝ Հիտլերի Ռայխստագի առաջ բարձրացրած խարույկների նմանությամբ ետ չմնալով այս կապկությունից էլ:

Այսքան ռեակցիոն ֆաշիստ ռեժիմի տակ, մի խումբ մարդկանց սակայն օրը ծագեր էր: Այդ դաշնակներն էին: Ամեն հովի հարմարող իրենց հողմադացը սկսեց դառնալ: Սենգուրայի հայկական բաժինը գլխավորում էր մի դաշնակցական: Իրենց համար առիթը ներկայացել էր՝ դեմոկրատական և առաջադեմ թերթերը շղթայելու: Այս ուղղությամբ և մանավանդ նամակների գրաքննության իրենց պաշտոնում սուլյան Համիդի բռնակալության խաֆիեներն²²⁷ ու սանսյունոն²²⁸ պաշտոնյաները, մի բանով էլ վար էին մնում, սրանց հետ համեմատած: Ընտանեկան նամակներ, որոնք պարունակում էին ընտանեկան գաղտնիքներ, դաշնակ գրաքննչի ձեռքումը դարձան սպառնալիքի միջոցներ: Նույնիսկ գտնվեցին նամակներ, որոնք լուսանկարվեցին դաշնակ կենտրոնում. հառաջիկայում օգտագործելու նպատակով: Դաշնակ զրպարտության ու վատաբանության լորձունքոտ բերանը բացվել էր:

1941 թվի մայիսի 6-ին սկսվեց գերմանական հարձակումը Հունաստանի վրա: Սելանիկից մինչև Աթենք քսան օրվա մեջ հասել էր գերման բանակը: Հունաստանին օգնելու համար եկած անգլիական բանակը, կազմված նյու գելանդացիներից ու ավստրալիացիներից փախուստի էր մատնվել, առանց ժամանակավոր դիմադրություն իսկ չցուցադրելով: Ամեն ինչ թողեց ու փախուստի ճամփան բռնեց:

Նախապես անգլիասեր դաշնակները, այժմ քամելեոնի նման փոխելով իրենց գույնը, գերմանասերներ և իտալասերներ դարձան և լծվեցին ֆաշիստների կառքին: Իտալական գաղտնի ոստիկանությունը, գերմանական գեստապոն

²²⁷ *խաֆիե* (թուրք.՝ hafıye), լրտես, գործակալ:

²²⁸ *Սանսյունո*, գրաքննություն:

և Էսէւ²²⁹-ը, իրենց տրամադրության տակ ունեին ամբողջ դաշնակցական կազմը: Յուրաքանչյուրը իր գրպանում ուներ իտալական և գերմանական իշխանությունների կողմից տրված անցագիր: Վիեննա և Բեռլին այգու ճամփա էր դարձել Կառավարենցների, Փափագյանների և շատ շատերին, երբ Աթենքում, քաղաքից դուրս մի ժամ հեռու գտնվող մի տեղ գնալու համար պրոպոսիտ²³⁰ էր հարկավոր: Գերմանիա բռնի աշխատավոր տանելու համար ստեղծվել էր նաև հայկական գործակալություն, որի գլուխ կանգնել էր դաշնակ Ենուվյան Արշակը: Հայությունը տառապում էր քաղցից և պատերազմի չարիքներից, իսկ դաշնակները կերպը պահել էին գերմանական և իտալական պահեստներից օգտվելու: Հայ ազատասեր և դեմոկրատական բազմաթիվ երիտասարդներ, որոնք հույների հետ կողք կողքի հերոսաբար կռվում էին պարտիզանական ջոկատներում, դաշնակների կողմից մատնվեցին և իրենց ընտանիքները հալածանքի ենթարկվեցին օկուպացիոն իշխանությունների կողմից: Հայանուն ֆաշիստների գոհերը եղան ազնիվ կոմունիստ Արամ Կյոքջյանը²³¹ և իր նման բազմաթիվ երիտասարդներ: Լծվելով ֆաշիստ օկուպանտների կառքին մի առժամանակ Աթենքում պարաշյուտով իջնելու փորձեր կատարելով, դաշնակ Մարգարյանի գլխավորությամբ մի խումբ ագիտատորներ ուղարկվեցին Սիրա:

Գերմանների՝ Հունաստան ներկայության ժամանակաշրջանում գործած վայրագություններն ու բարբարոսական ընթացքը բացատրելու համար առանձին հատորներ են հար-

²²⁹ *Էսէւ* (գերմ.՝ SS, Schutzstaffeln-ի պահնորդական ջոկատներ), ռազմականացված արտոնյալ կազմակերպություն ֆաշիստական Գերմանիայում:

²³⁰ *Պրոպոսիտ*, անցագիր:

²³¹ *Արամ Գյոկճյան*, հնչակյան կուսակցության անդամ: Հունաստանի գերմանական զրավումից հետո Արամը մատնությամբ ձերբակալվում է որպես խորհրդային երկրի հանդեպ չեզոք գործիչ գնդակահարվում է: Տե՛ս Ստեփի Գյոկճյան ընտանիքի պատմությունը <http://www.genocide-museum.am/arm/12.08.21.php?fbclid=>, դիտվել է՝ 07.12.2022:

կավոր: Մի սարտածի արարքի համար հարյուրավոր պատահական մարդկանց բռնում ու հրացանազարկ էին անում, լավագույն դեպքում Գերմանիա էին տանում, տարապարհակ²³² աշխատանքի համար: Ամբողջական թաղեր՝ բլոկադայի²³³ ենթարկված, ամիսներով արգելափակում և առանց քննելու պատժի էին ենթարկում: Դաշնակները այստեղ էլ գտել էին ոսկու ճամփան: Դաշնակ զինվորական բժիշկ ժերմոնյան բարեխոսելու և ազատ արձակել տալու պաշտոնն էր վարում ձերբակալվածների համար: Հավասարապես օգտվում էին ինք և գերման սպաները: Իսկ անոնց, որոնք կերպը չէին գտել կամ փող չէին ունեցել, մուխերնին մարած էր: Նման մի բլոկադայումն էր, որ Թելլայան հայր և որդի միասին մի ծառից կախաղան հանվեցին:

Ստալինգրադի գերմանական վերջալույսը արշալույսն էր Հունաստանի դեմոկրատական բանակի հաղթանակին: Սովետական հաղթական բանակի՝ դեպի Բալկաններ առաջանալը անհանգստացրել էր ֆաշիստ զավթիչներին: Եվ մի օր տանտիրոջից հալածվող գողի նման անփառունակ փախուստ ունեցան գերման զինվորները: Աթենքի Ակրոպոլիսին վրա գոռոզորեն ծածանող կեռ խաչ դրոշակը հագիվ վար առել և իր թևին տակ ամուր բռնած փախել էր վերջին գերման զինվորը՝ իրեն հալածող հույն հասարակ ժողովրդի առջևից:



Հունաստանի օկուպացիայից քիչ ժամանակ հետո գերմանական ֆաշիստական պարտիան փորձում էր ստեղծել Աթենքում էլ իր հունական ֆիլիալը՝ ԷՍՊՕ²³⁴-ն: Պատիսիոն կոչված

²³² *Տարապարհակ*, կոթի տեսակ, պարտադիր, անվճար աշխատանք:

²³³ *Բլոկադա*, պաշարում:

²³⁴ ԷՍՊՕ (հուն.՝ ΕΣΠΟ – Εθνική σοσιαλιστική πατριωτική οργάνωση), Ազգային սոցիալիստական հայրենասիրական կազմակերպություն:

պողոտայի վրա մի բազմահարկ շենք էին գրավել, իբրև կենտրոն: Բացման հանդեսին ներկա եղել էին գերմանացի բարձրաստիճան սպաներ, անձնավորություններ և նրանց հույն համակիրները:

Կիրակի էր: Առավոտյան ժամը 11-ի մոտերում ահռելի մի պայթյուն լավեց, և ուժեղ ցնցվեց Օմոնիա հրապարակի շրջակայքը: Հետևեց մուխի հսկա ամպ էՄՊՕ-ի կենտրոնական շենքից վեր: Յուրաքանչյուրը սարսափահար հեռանում էր, քաջ գիտենալով նման պարագայում գերմանական իշխանության անելիքը:

Սա երկրորդ հայրենասիրական, հակաֆաշիստական ցույցն էր զավթիչների դեմ: Ուժանակով պայթեցրել էին այդ դավաճանական սև որջը՝ իր փլատակների տակ թաղելով գերմանացի ֆաշիստներին և իրենց հույն համակիրներին:

Առաջին հակաֆաշիստական ցույցը բռնակալների դեմ տեղի էր ունեցել Հունաստանի օկուպացիայի առաջին գիշերն իսկ: Հույն հայրենասեր և ազատասեր որդին չէր հանդուրժած հունական արվեստի կոթող Ակրոպոլսի վրա պարզված տեսնելու գերմանական բռնակալության սիմվոլ, ժողովուրդների արյունի մեջ թաթախված կեռ խաչ դրոշը ցած էր առել ու պատառոտել գրավման առաջին գիշերն իսկ Ղլեզոս անունով մի երիտասարդ, որին այսօր մահվան են դատապարտել Ամերիկայի մանկլավիկները՝ հունական ֆաշիստական կառավարությունը:

Եվ հետզհետե կազմակերպվեց օպոզիցիան, պարտիզանական ջոկատները: 1941 թվի սեպտեմբերի 27-ին կազմակերպվում է Հունաստանի կոմպարտիայի անմիջական նախաձեռնությամբ ԼԱՄ-ը (Ազգային ազատագրական ճակատը)²³⁵ ժողովրդի առողջ ու առաջադեմ տարրից: Հետագայում սա էլ իր հերթին նույնպես կոմպարտիայի նախաձեռ-

²³⁵ ԼԱՄ (հուն.՝ ΛΑΜ- Λαϊκό απελευθερωτικό μέτωπο), Ազգային ազատագրական ճակատ:

նությամբ ստեղծում է իր զինյալ զնդերը՝ ԷԼԱՍ-ը (Հունական ժողովրդական ազատագրական բանակը)²³⁶ և ԷԼԱՆ-ը (Հունական ժողովրդական ազատագրական նավատորմը)²³⁷, ապա ԷՊՈՆ-ը (Միացյալ համահունական երիտասարդների կազմակերպությունը)²³⁸, որը ընդգրկեց հույն երիտասարդության դեմոկրատիկ, առաջադեմ տարրը: Լեռ բարձրացան հազարավոր երիտասարդներ, նույնիսկ հազարավոր մայրեր՝ կռվելու համար իրենց որդիների և դուստրերի կողքին, օտար զավթիչների դեմ:

Գործի էր լծվել ԷԼԱՆ-ը: Ոչ միայն լեռ բարձրացողների անմիջական օգնության հարցն էր հրատապ, նրանց սննդամթերք, հագուստ, զենք ու ռազմամթերք էր հարկավոր, այլ քաղաքների դեմոկրատական մասսաների կազմակերպումը:

Օկուպանտները Հունաստանում իրենց օգնական և օժանդակ ուժ գտան հանձին թագավորականների: Կազմվեցին առանձին ջոկատներ լավ ռոճիկով և ամեն տեսակի մթերային և այլ առարկաների ապահովմամբ: Սրանք կոչվում էին խիթեսներ (թագավորի գերիների վրա կա «X» տառը, և դա էլ իրենց նշան էին արել և դրա համար էլ կոչվել էին X-եր=խիթես)²³⁹: Կազմվել էին նաև «Բուրադա» կոչված ոստիկանական խմբեր: Այս երկու տեսակի ֆաշիստական սևհարյու-

²³⁶ ԷԼԱՍ (հուն.՝ ΕΛΑΣ – Ελληνικός απελευθερωτικός στρατός), Հունական ժողովրդական ազատագրական բանակը:

²³⁷ ԷԼԱՆ (հուն.՝ ΕΛΑΝ – Ελληνικό απελευθερωτικό ναυτικό), Հունական ժողովրդական ազատագրական նավատորմ:

²³⁸ ԷՊՈՆ (հուն.՝ ΕΠΟΝ – Ενιαία πανελλαδική οργάνωση νέων), Միացյալ համահունական երիտասարդական կազմակերպություն:

²³⁹ *Χιθես* (հուն.՝ Χιτες), զինված կազմակերպություն, հիմնադիր և առաջնորդ՝ Գեորգիոս Գրիվաս: Անդամները հայտնի էին «խիտես» անվամբ: Փաղափարախոտությունը՝ միապետություն, հակակոմունիզմ և հունական ազգայնականություն: Կոմունիստների և հակամիապետականների դեմ «Սպիտակ սևարեկչություն» են իրականացրել, որից հետո մասնակցել են 1946 և 1950 թթ. ընտրություններին:

րակային խմբավորումները ազատ գործում էին և զերծ որևէ պատասխանատվությունից, որով կարող էին սպանել յուրաքանչյուրին՝ դեմոկրատական լինելու ամբաստանությամբ: Թաղերի մեջ հալածում էին դեմոկրատներին, տներ էին պաշարում, ձերբակալություններ էին անում: ԼԱՄ-ի գործունեությունը և պարտիզանների օժանդակությունը չեզոքացնել, լեռան և բողոքի կայք խզել էին ջանում: Սակայն հայրենասեր, ազատասեր երիտասարդությունը դիմադրում էր, պայքարում էր և հաճախ զինյալ ուժով կռվում էր խեղճ ու կրակ զենքերով, որոնք լավագույն դեպքում մի քանի հին սիստեմի ատրճանակներ կամ որսի հրացաններ, կամ մի քանի զինվորական զենք էին սկզբնական շրջանում: Կատարյալ նվիրվածությամբ ու անձնագոհությամբ դիմադրում էին թվական անհամեմատ մեծ և լավ զինված խիթեններին և կամ բուրադանների խմբերին: Նման մի ընդհանուր դեպքում Իմիտտո թաղամասում էամական երիտասարդներ պաշարվել էին մի տան մեջ, որտեղ պահվում էին այդ թաղամասի կազմակերպության զենքն ու ռազմամթերքը: Դիմադրել էին հակառակորդի անհավասար ուժի դեմ և մեծ կորուստներ էին պատճառել նրան: Սակայն, երբ տունը սկսվել էր այրվել, նրանք նախընտրեցին ներսի վառողի առաջացած պայթյունից մահանալ, քան թե հակառակորդին հանձնվել:

Այս օպոզիցիոն ազատագրական-դեմոկրատական կազմակերպության բջիջները առհասարակ 1922 թվի Թուրքիայից գաղթած հույների համար ստեղծված նոր թաղամասերի բնակչության մեջն էին, ինչպես Կեսարիանի, Վիրոնոս, Կոկինիա, Գուրգուլի, Պողարադես, Նեսա Զմիրսի, ևլն ևլն: Սրա համար էլ այս վայրերը մշտական հալածանքի և հարձակման թիրախն էին դարձրել խիթենների, բուրադանների, զերմանացիների կողմից:

Կոմպարտիայի ուղղակի հսկողության տակ ինչ նվիրվածությամբ ազատագրական պայքարի էին լծվել պատանի, երիտասարդ, նույնիսկ 7-10 տարեկան երեխաներ, որոնք իրենց

հերթին կազմել էին իրենց կազմակերպությունը՝ «Աետոպուլա»²⁴⁰ (արծվիկներ): Յուրաքանչյուրը ուրախությամբ, հպարտությամբ և գոհաբերությամբ կատարում էր զանազան պարտականություններ – զենքի փոխադրություն, թռուցիկների, լոզունգների փակցնելը անկյուններում, սուրհանդակություն, հակառակորդի շարժումների հետապնդում ևլն: ԼՊՕՆ երիտասարդական կազմակերպությունը, հերոսության, հայրենասիրության և ինքնազոհության աննման օրինակներ տվեց:



Թագավորականների և գերմանական ԷսԷս-ի խստություններն ու հալածանքը այն աստիճանի սաստկացած էր, որ յուրաքանչյուր ժամ, օրվա որևէ մի պահին պաշարվելու վտանգը առկա էր ազատության համար պայքարող թաղամասերի համար: Օկուպացիայի ժամանակաշրջանում աչքի ընկան Կեսարիանի և Վիրոնոս կոչված թաղամասերը, որոնցից առաջինը 48 անգամ դիմադրեց գերմանացիների, խիթեանների, բուրադանների և այլոց գրոհները, իսկ վերջինս՝ 45 անգամ:

1943 թվի իտալական սեպարատ զինադադարի կնքումը մեծ աղմուկ բարձրացրեց: Իտալացի բանակայիններ այնպես կարգադրեցին, որ իրենց զենքի պահեստը դեմոկրատական մարտիկների, պարտիզանների ձեռքն անցնի՝ լինելով ավելի կամ պակաս ռեժիմի թշնամիներ:

Իտալացի դեմոկրատական բանակայիններ, չցանկանալով լծված մնալ գերմանական կառքին, իրենց զենքերով անցան հույն պարտիզանների կողմը և նրանց հետ կռվեցին ֆաշիստների դեմ ազատության համար, հոգ չէ թե օտար հողի վրա:

Իտալացի ազատասեր երիտասարդության, եղբայր հույն ժողովրդի ազատագրության համար բերած մասնակցություն-

²⁴⁰ *Աետոպուլա* (հուն.՝ αετόπουλα), արծվիկներ:

նը, նրանց անձնվեր պայքարը և ինքնագոհությունը ավելի մեծ գրգիռ հանդիսացան, որ հույն մարտիկները ավելի ևս պրկեն իրենց մկանները: Անվախ ու հերոսաբար հարվածների հասցրին հակառակորդին, առանց հուսահատելու շարունակեցին պայքարը: «Հուսահատությունը յուրահատուկ է նրանց, որոնք չեն հասկանում չարիքի պատճառները, չեն տեսնում նրա ելքը և ընդունակ չեն կռվելու», – ասել է ընկ. Լենինը: Իսկ հույն ազատասեր բազմությունները գիտակցում էին չարի արմատը, տեսնում էին նրա ելքը և ընդունակ էին կռվելու: Նրանք պայքարեցին անհավասար կռվում, չարը արմատախիլ անելու համար ոչ մի դժվարություն չընկճեց և չհուսահատեցրեց նրանց՝ նույնիսկ արհամարհելով մահը:



Օկուպանտների կողմից պաշտոնապես հայտարարված էր, որ յուրաքանչյուր տեռորի ենթարկվող սպայի փոխարեն գնդակահարվելու էին 200 հույն կոմունիստներ, իսկ հասարակ բանակայինի համար՝ 50 հոգի: Յուրաքանչյուր վիրավորվողի համար՝ 10 կոմունիստ: Եվ հրեշտրեն կատարում էին այս հրամանը: 1944 թվի մայիսի 1-ին, երբ ողջ աշխատավոր աշխարհը տոնում էր իր մարտական ուժերի ստուգատեսի օրը, գերմանացի ֆաշիստները Աթենքում սև ավտոներով 200 հույն կոմունիստ երիտասարդներ և երիտասարդուհիներ տարան Սկոպլոսիթոյում²⁴¹ (գինվորական նշանառության փորձի դաշտը) և համազարկով գնդակահարեցին այս բազմությունը:

Գիտակից մահը դիմագրավող երիտասարդությունը սակայն, երբ վայրկյանից վայրկյան «կրակ» հրամանն էր սպասում, իրար ձեռք բռնած երգեցին.

²⁴¹ Սկոպլոսիթոն (հուն.՝ σκολοπειριο), հրաձգարան:

Է՛խն յա կայմենն կոզմն,	Մնա՛ս բարով, այ՛ աշխարհ,
Է՛խն յա դիկյա գոհ,	Մնա՛ս բարով, քա՛ղոց կյանք.
Քե սի՛ ամիրի պաղրիդա	Դու էլ անբախտ հայրենիք.
Է՛խն յա պանտոտինի	Մնա՛ս բարով հավիտյան:

Ստի ստերյա դե՛ն զի տո փսարի,	Ցամաքում չապրի՛ր ձուկը,
Ուտ՛ անթոս ստին ամուդիա,	Ոչ էլ ծաղիկն անապատում,
Քի սուվոտիսես դե՛ն գունն	Սուվոտուհիներն էլ չե՛ն ապրի.
Դիխոս տին էլեֆթերիա ²⁴² :	Առանց ազատության:

Այս երգը երգած էին հույն ազատագրական պայքարում ընդդեմ սուլթանական լծի, Ալի փաշայի հորդաններից պաշարված Սուլի գյուղի բնակչությունը Ջալոնգո լեռան վրա: Տղամարդիկ կռվել էին մինչև իրենց վերջին փամփուշտը և բոլորն էլ սպանվել: Մնացել էին կանայք և երեխաները: Եվ նրանք որպեսզի չընկնեն դահիճների ձեռքը, նախ մայրերը իրենց երեխաներին գցեցին սարից վար՝ անդունդը, իսկ հետո իրենք ձեռք ձեռքի բռնած պարեցին մահվան շուրջպարը և յուրաքանչյուր դարձին մին իրեն գցեց գահավիժից վար և մինչև վերջինը²⁴³:

²⁴² Έχε για καημένε κόσμε.
Έχε για γλυκιά ζωή.
Και εσυ άμοιρη πατρίδα.
Έχε για παντοτινή
Στη στεριά δεν ζει το ψάρι,
Ούτε άνθος στην αμμουδιά
Και σουλιοτισες δεν ζούνε
Δίχως την ελευθερία.

²⁴³ Ջալոնգո լեռան վրա Սուլի գյուղի հույն կանանց «մահվան շուրջպարի» մասին մանրամասն տե՛ս *History of Suli and Parga*, containing their chronology and their wars, particularly those with Ali Pasha, Prince of Greece (Edinburgh, Archibald Constable and co., 1823): Տե՛ս նաև *Philip Chrysopoulos*, The Dance of Zalongo and the Self-Sacrifice of Greek Women, <https://greekreporter.com/2021/03/24/dance-zalongo-self-sacrifice-greek-women/>, դիտվել է՝ 03.06.2021:

Հույն ժողովուրդը մի նոր ազատագրական պայքար էր մղում քսաներորդ դարում: Մի նոր դաժան բռնակալ ուզում էր խլել իր ազատությունը և մահվամբ էր պատժում յուրաքանչյուր ելույթ: Եվ այս ազատատենչ երիտասարդությունը արհամարհում էր մահը իր պապերի օրինակով՝ մի նոր 1821 կերտելու համար:

Նույն օրում մայիսի 1-ին, տարբեր տեղեր, նմանօրինակ մասսայական գնդակահարություններ կատարեցին, ուզելով Մայիսի 1-ի գաղափարն էլ սպանել աշխատավորության մեջ:

Քանի գնում գազազում էին գերմանացիներն ու իրենց հույն լսկեյները՝ թագավորականները, խիթենները, բուրադաները ևն: 1944 թվի օգոստոսին կատարվեցին աննախընթաց ծավալով ու ուժգնությամբ բլոկադաներ գաղթականական յուրաքանչյուր թաղամասում: Հարյուրավորներին տեղում սպանեցին, հազարավորներն էլ բռնի աշխատանքի համար ուղարկեցին Գերմանիա: Կիսատ պռատ միջոցներով ուզում էին պատերազմը շահել: Գերմանիան ջուրն էր ընկել, փրփուրից փրկություն էր սպասում:

«ԷԱՄ»-ի և «ԷԼԱՍ»-ի կազմակերպության հակադիր, անգլիական նենգամտության իբր մի օրինակ, անգլիացիներ կազմակերպեցին «ԷԴԵՍ» «պարտիզանական» խումբը, Ջերվաս կոչված մի հավակնոտ ամբարտաւան և շորշորթի գլխավորությամբ: Երբ «ԷԼԱՍ»-ի քաջարիները մինչև ատամները զինված թշնամու դեմ կռվում էին հին սիստեմի զենքերով, սոված ու անոթի, այս նորելուկ կազմակերպության անդամները ամսական երկուական ստերլինգ էին ստանում, նորագույն զենքերով էին մատակարարվում, աննդամթերքի ամեն տեսակով, մինչև իսկ շոկոլադն ու շամպայնան, որպեսզի կռիվ մղեն կոմունիստական կազմակերպությունների դեմ և անգլիապիրության կոչ անեն հույն ժողովրդի մեջ: «ԷԼԱՍ»-ը չեզոքացնելու, արժեքազրկելու և ժողովրդական ուժի դեմ բուրժուական մի ուժ հակադրելու փորձ էր սա: Իրենց լեռը գտնված միջոցին ոչինչ չեն արել

գերմանացիների դեմ, հակառակ իրենց «պարտիզանական» կազմակերպություն անվանելուն: Հակառակը, միշտ էլ աշխատել են դժվարացնել, խանգարել «ԷԱՄ»-ի և «ԷԼԱՍ»-ի հակաֆաշիստական պայքարը: 1944 թվի ամառը, երբ գերմանական բանակը փախչում էր Հունաստանից, վախենալով որ իր ճանապարհը կփակվի հյուսիսից Կարմիր բանակի կողմից և մուկի նման դարանի մեջ կընկնի, և քայլ առ քայլ հալածվում և կողմնակի հարվածներ էր ստանում «ԷԼԱՍ»-ի կողմից, Ջերվան իր կազմակերպությամբ, որոնք մի ձորի մեջ դիրք էին բռնել, թող տվեցին որ անցնի գերման փախչող բանակը:

Եվ հետևողականորեն, հազիվ անգլիացիներ Աթենք որ հասան իր միսիան կատարածի ձևով լեռից վար իջավ Ջերվան, որպեսզի այժմ էլ մայրաքաղաքում կատարել իր էֆենդիների հրահանգները: Եվ առիթը չփախցրեց իր հակասովետական շողոքորթությունները, մեծադողորդ հայտարարությունները անելու: 1946 թվի մարտի 31 ընտրությունների նախօրյակին Աթենքի փողոցներում կարելի էր տեսնել հսկայական պլակատներ հետևյալ մակագրությամբ. «Տվե՛ք ձեր քվեն Ջերվային, որպեսզի արմատախիլ անի կոմունիզմը»: Նրանց կազմակերպության երգերում լսվում էին. «Սոֆիա, Մոսխա ինե տոնիրո՛ մաս»²⁴⁴ (Սոֆիա, Մոսկվան է մեր երազը) հիմար բառերը: Այն աստիճան ամբարտավան, որ ծիծաղելի դարձավ, երբ հայտարարեց, որ «Հունաստանի սահմանները երկարում են մինչև Կարս...»: Եվ հաճույքով պատերազմելու էր թրքական բանակում որպես պարզ տասնապետի աստիճանով... սովետական ուժերի դեմ»: Եվ նման շատ զավիրտուքներ: Երևի իր անունն էր (կոչվում էր Նապոլեոն), որ մղում էր նրան կատարել իր նույնանուն նախորդին չկարողացածը...:

²⁴⁴ *Սոֆիա, Մոսխա ինե տոնիրո՛ մաս* (հուն.՝ Σοφία, Μόσχα, είναι το όνειρο μας), Սոֆիա՛, Մոսկվան մեր երազանքն է:



Վերջապե՛ս գնացին գերմանացիները: Ժողովուրդը լիաթոք շնչեց: «Հաղթական» մուտք գործեցին անգլիական զորքերը... հունական զինվորների առաջապահությամբ: Յուրաքանչյուրը քայլ էին առնում, երբ վստահ էին, թե գնալիք տեղերնին գերմանացի չկա: Աթենքից 40 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Մեգարա²⁴⁵ քաղաքին էին մոտեցել անգլիացիներ, կանգ են առնում, ուղարկում են հույն զինվորների մի մի առաջընթաց ջոկատ, որպեսզի իմանան, թե գերմանացի կա՞, թե՞ ոչ: Մի լրաբեր է վերադառնում և ասում, թե գերմանացիները գնացել են: Անգլիացի հրամանատարը հարց է տալիս. «Մի հոգի՞ էլ չկա...»: Եվ երբ վստահ է լինում, թե հետին գերմանացին էլ մեկնել է, ճամփա է ելնում... ազատագրելու համար Մեգարան գերմանացիներից: Նույն ձևով էլ մնացած Հունաստանը: Բայց ամենահասարակ հույնը որ հարցնես, նա քեզ կպատասխանե, որ Հունաստանը չի ազատագրել ո՛չ անգլիացին, ո՛չ ամերիկացին, ո՛չ Զերվան, ո՛չ էլ թագավորականները, այլ կար մեր բանակի առաջխաղացումը՝ դեպի արևմուտք, որի հետևանքով վախեցած գերմանացիները, որ մուկի նման կրոնվեն Բալկաններում, ստիպված եղան փախուստի դիմելու: Քեզ կպատասխանի, որ Հունաստանը ազատագրվեց Հունական կոմպարտիայի²⁴⁶ կողմից ղեկավարվող «ԷԱՄ»-ը, «ԷԼԱՍ»-ը, որ 3 ու կես տարի դաժան մարտեր էր մղում ֆաշիստների դեմ:

Եվ այսպիսով անգլիացիները մտան Աթենք և իշխանությունը իրենց ձեռքը վերցրին: Երբ վերջնականապես իրենց դիրքը ամուր համարեցին, դրժեցին իրենց պարտավորությունները դեպի դեմոկրատական բանակը, որ այդքան ծա-

²⁴⁵ *Մեգարա* (հուն.՝ Μέγαρα), քաղաք Հունաստանի արևելյան մասում Ատտիկե նահանգում:

²⁴⁶ *Կոմպարտիա*, կոմունիստական կուսակցություն:

ռայություն էր մատուցել, հասարակաց դատին: Անգլիացի գեներալ Սկոթին և իր տերը Չորչիլ, հետզհետե ռեակցիոն տարրերը իշխանության գլուխ էին բերում: Արդարադատության մինիստր դարձավ թագավորական Ավիլյուամ անունով մեկը: Դատի տրված հայրենիքի դավաճանները, գերմանացու հետ գործակցած ու հույն ժողովրդի արյունը ծծած գազանները անմեղ արձակվեցին այն պատճառաբանությամբ, որ այս թեպետ գործակցել են թշնամու հետ, բայց դա դավաճանություն չէ հայրենիքի հանդեպ, քանի որ նրանք գործակցել էին՝ ունենալով ավելի «բարձր» նկատառումներ: Նրանք գործակցել են, որպեսզի հույն ազգը փրկեն կոմունիստների վտանգից: Հունաստանի Կոլիալինո օկուպացիայի ժամանակաշրջանում պրեմիեր մինիստր Բալլիսը «արգելափակվեց» Ջեյհոտի կոչված Աթենքի կենտրոնում գտնվող, ամեն կոմֆորտը ունեցող բազմահարկ շենքում, ոչ թե որպես պատիժ՝ իր վարած վտի քաղաքականության օկուպացիայի ժամանակաշրջանում, այլ որպեսզի հույն ժողովրդի արդար գայրույթի զոհ չգնա: Հույն ժողովուրդը այլևս համոզվեց, որ այո, գերմանացին գնացել է, բայց նրա տեղը արդեն գրավել է նույնպիսի անգլիացին: Իշխանության գլուխ են անցել նույն անձինք, ինչ օկուպացիայի շրջանում: Հայրենիքի դավաճանները կրկին ազատ ման են գալիս, իսկ այն հերոսները, որոնք ազնվորեն կռվել են ֆաշիզմի դեմ, էլի բանտերում են, էլի արքորավայրերում, էլի հալածվում են: Եվ երբ 1944 թվի դեկտեմբերի 3-ին կիրակի օր համահունաստանյան դեմոնստրացիայում դեմոկրատական հոսանքը ուզեց երկիրը ազատել անգլիական կապիտալիզմի գերությունից, ռեակցիայի քրմապետ Չորչիլը հրամայեց զենքի ուժով ճնշել շարժումը: Դեկտեմբերի 3-ին անգեն ժողովրդի վրա կրակ բաց արեցին՝ տասնյակներ սպանելով և հարյուրավորներ էլ վիրավորելով: Հետևյալ օրը, սպանվածների թաղման օրը, հարյուրհազարավորներ գնալով նրանց դագաղների հետևից, գայրույթով բարձրացնելով բռունցքները, «վրեժ» էին աղաղակում:

Եվ այսպիսով, սկսվեց դեկտեմբերյան ապստամբությունը Աթենքում ընդդեմ անգլիացիների և նրանց հույն լակեյների: Բոլոր դեմոկրատական հույն ժողովուրդը մոբիլիզացվեց: Աթենքի բոլոր թաղամասերը փակվեցին բարիկադներով, որոնց յուրաքանչյուրը կրում էր գերմանացիների դեմ մղված պայքարում ընկած հերոսներից մեկի անունը: Դեկտեմբերի 5-ին Աթենքի կայազորի մի մասը անցնում է ապստամբների կողմը:

Ապստամբության առաջին իսկ օրից անգլիացիների և հույն ֆաշիստների թիրախը դարձել էր Կեսարիանի կոչված գաղթակայանը: Այստեղ ապրում էին մոտ 30 000 1922 թվին Թուրքիայից գաղթածներ, որոնց թվում և բազմաթիվ հայեր (Աթենքի հայ բնակչության գրեթե կեսը): Կեսարիանին գտնվում էր Աթենքի արևելյան մասում, որտեղից միայն կարելի էր շրջանցել Աթենքի մյուս ռայոնները²⁴⁷: Այս գաղթակայանը 3 ու կես տարվա գերմանական և իտալական օկուպացիայի ժամանակաշրջանում դափնիներ էր քաղել: Եղել էր հակաֆաշիստական մի անառիկ բերդ, որի գլուխ կանգնած էր Ժիրայր անունով մի հայ, որի սխրագործությունների համար լեգենդներ էին հյուսվել: 48 անգամ հերոսաբար դիմադրել էին գերմանացիների, իտալացիների և հույն ֆաշիստների զրոհներին 3 ու կես տարվա օկուպացիայի ժամանակաշրջանում: Բազմաթիվ երգեր են հյուսել Կեսարիանին, նրա հերոս ԷԼԱՍ-ի մարտիկներին:

Նրան նվիրված մի երգ սկսում էր հետևյալ տողերով.

Կեսարիանի կե Վիրոնաս, վաթյա տիմի մենա,
Սոկակիա կե դրոմի, պու վաֆտիկան մ' էմա,
Սոո կոկկինո լավորո պանդա պիստի²⁴⁸,

²⁴⁷ *Ռայոն*, շրջան:

²⁴⁸ Καισαριανη και Βυρωνας, βαθιά τιμημένα , σοκάκια και δρόμοι που βόφτηχαν με αίμα , στο κόκκινο ? πάντα πιστοί.

Կեսարիանին և Վերոնասը պարտված են խորապես.
Փողոցներն ու ճամփաներն արյունով ներկված են:
Կարմիր դրոշին մի՛շտ հավատարիմ:

Այժմ գերմանացիների գործի շարունակողները՝ անգլիացիները, ավիացիայով ու ծանր հրետանիով սկսեցին ոմբակոծել ցերեկ ու գիշեր Կեսարիանին: Քաղթակայանի պարտիական կազմակերպությունը որոշեց անգնն ժողովուրդը, ծերերը, կանանց և երեխաներին տեղափոխել հարևան գաղթակայանում Վիրոնայում:

Տեղափոխվածներին, որոնց թվում և հայերին բնակեցրին դպրոցներում և հարմարություն ունեցող տներում: Եվ հունական ժողովրդի պատմության մեջ, դարավոր հունահայկական հարաբերությունների մեջ մի նոր երևույթ հանդես եկավ: Մի բան, որ չէր եղել դարերի ընթացքում: Հույնը հայուն տվեց ապաստարան, հաց, ճաշ: Հալ երեխային, պատավին, ծերունուն հույնի հետ համահավասար տվեց կաթ: Հույնը, որ միշտ էլ թշնամի էր եղել հայուն, որին մի բաժակ ջուր իսկ չէր տվել, որ մինչև իսկ թուրքերը առած էին սարքել, թե «Իթ դերի սինդեն փոստ օլմազ, ուրում էրմենի դոստ օլմազ» (շան մորթից բազմոց չի լինի, հույնը հայի բարեկամ չի լինի)²⁴⁹, այժմ այդ նույն հույնը հայուն նայում էր որպես եղբոր: Ինչո՞վ բացատրել այս փոփոխությունը: Պարզ է:

1944 թվի դեկտեմբերին հույն ժողովուրդը այլևս անցյալի հույնը չէր, որի երակների մեջ տիրել էր դասակարգը, ֆեոդալները նախ, ապա կապիտալիստները, Մետաբուսան, Ցալդարիսը, Կոնդիլիսը, Դոնատասը և այլ ամեն գույնի տակամքների սրսկած նացիոնալիզմի, շովինիզմի թույնը: 1944 թվի դեկտեմբերի հույն ժողովուրդը, այն ժողովուրդն էր, որ դաստիարակվել էր հունական կոմպարտիայի կողմից, ինտերնացիո-

²⁴⁹ *Իթ դերի սինդեն փոստ օլմազ, ուրում էրմենի դոստ օլմազ* (թուրք.՝ *İt derisinden post olmaz, Rum Ermeniye dost olmaz*), շան կաշվից մորթի չի լինի, հույնը հային ընկեր չի լինի:

նալիզմի բարձր ու վեհ գաղափարներով: Հույնին այլևս չէին բաժանում ազգային միջնորմերը: Հույնը 3 ու կես տարվա ընթացքում տեսավ գերմանական ճնշման տակ իր հետ համահավասար շինող հայուն: Տեսավ հայուն, որ նույնպես մասնակցում էր իր կողքին ֆաշիստների դեմ մղվող պայքարին, իր հայրենիքի ազատագրման համար: Հայուն, որի արյունը խառնվեց հույնի արյունի հետ ազատության զոհասեղանի վրա: Այս էր պատճառը:



Զրահավորները ծովից, զանազան ազգի և գույնի զորքերով և տանկերով ցամաքից, ավիացիայով, գոռոզ Ալքիոնը տարրական ամոթանքն իսկ չունեցավ պաշարելու, ռմբակոծելու և մահ սփռելու, ազատասեր և օտարի դեմ ընդվզող հույն ժողովուրդը: Աթենքի թաղամասերի պաշտպանությունը ճնշելու համար անգլիացիներ կտրեցին մատակարարվող ջուրը: Բայց ժողովուրդը չընկճվեց: Խմում էր հորերի ու անձրևի ջուրը, բայց չէր հանձնվում: Միջազգային օրենքով թույլատրված Կարմիր խաչի զործունեությունը արգելվեց պայքարող թաղամասերում: Զանազան հունական բարեսիրական հաստատություններ, որոնք պատերազմի տարիներին ստանձնել էին ժողովրդի սննդամթերքի մատակարարումը, արգելվեցին հիշյալ թաղամասերում որևէ մթերք ուղարկելուց:

Սակայն պայքարի ելած ժողովուրդը չհուսահատվեց: Լարեց իր ուժերը, արկեց իր ջղերը: Ստեղծվեցին տեղական կոմիտեներ ռազմական, սննդի մատակարարման, առողջապահական, ապահովության, տրանսպորտի և այն բոլորի, որոնց կարիք էր զգացվում: Երիտասարդությունը դիրքեր բռնած կռվում էր, ավելի տարեցները խրամատներ էին փորում, պատանիներ զենք ու ռազմամթերք էին փոխադրում, աղջիկներ վիրավորներին էին դարմանում և հիվանդանոց փոխադրում:

Կանայք ճաշ էին պատրաստում և կովոդներին հասցնում: Ուտքի են կանգնած ամբողջ թաղամասեր: Եռուզեռ ու բարձր տրամադրություն: Միայն կենտրոնական Աթենքն էր Կոլոնակիով (բուրժուաների, կապիտալիստների, բանկիրների և ն թաղամասը) այս կովից անմասն մնաց: Այլասերված և դրամապաշտ բուրժուաների մի խումբ, որոնք իրենց կապիտալի պահանջով եղել են թագավորականներ ու անգլիասերներ:

Այնքան հերոսական դրվագներ, անձնագոհության դեպքեր ցուցադրվեցին, որ մարդ հիացմունքով ու հուզմունքով էր դիտում: Համապատասխան զենքերի բացակայության՝ տանկերի դեմ կովում էին բենզինով լցված սրվակներով, որոնք գցում էին տանկերի տակը ու պայթեցնում:

Խիզախության աննման օրինակներ տվեցին հույն ազատասեր կովոդները: Աթենքի արվարձան Կիֆիսիայում գտնվող անգլիացի օդայինների շտաբը 1944 թվի դեկտեմբերին պաշարվեց և 500 սպա և օդաչուներ գերի վերցվեցին. մի դեպք, որ սենսացիա առաջացրեց անգլիացիների մեջ:

Ապստամբության եռուն շրջանում անգլիացիները ասիստալով անգլիացի զինվորների վրա, սևամորթներ բերեցին կովելու համար հույների դեմ: Թասանի օդանավակայանում ժամանեց զորավար Ալեքսանդր 48 ինքնաթիռներով, որոնք բերել էին սևամորթներ: Հույների կողմից գերի վերցված սևամորթներ ասում էին, թե նրանց մղել էին կովելու, ասելով, թե նրանց դիմացը գերմանացիներ են: Այսպիսի պրիումներով²⁵⁰ էին ուզում շահել անգլիացիները անարդարացի պատերազմը:

Եվ մի ամբողջ ամիս դիմադրելուց, կովելուց և հաճախ պարտության մատնելուց հետո անգլիական ուժերին, չհանձնվեցին ազգային ազատագրական ճակատի մարտիկները և իրենց զենքերով բարձրացան լեռ շարունակելու համար արդար պայքարը, որ ժողովրդին էր:

²⁵⁰ Պրիում, հնարք:

Անգլիական ուժերը, ուժեղացած հնդիկներով և սևամորթներով, հուր ու սուր ծավալեցին Աթենքում: Աթենքը նույնիսկ ֆաշիստների օրով չէր վնասվել, բայց անգլիացիները չինայեցին դարավոր քաղաքը: Ցամաքից, ծովից ու օդից ռմբակոծեցին, քանդեցին անթիվ շենքեր ու հաստատություններ՝ նրանց ավերակների տակ թաղելով անմեղ մայրերի, երեխաների, ծերերի: Ով որ նրանց ձեռքը ընկավ նավ նստեցրին և աքսորեցին Աֆրիկայի Էլ Դաբա քաղաքը, որոնց թվում և բազմաթիվ հայերի՝ Շերամ Մարտիկյանի նման 15 տարեկան պատանուց, մինչև Պ. Սրապյանի նման 70 տարեկան ծերունուն: Անգլիական բարբարոսության զոհերը թիվ չունեն: «Բաց քաղաք» հայտարարված Աթենքում անգլիական թնդանոթներ գոռացին: Նույնիսկ թնդանոթները զետեղեցին դարերի հրաշակերտ Ակրոպոլսի վրա և ռմբակոծեցին դեմոկրատական ուժերին, քաջ գիտենալով, որ հույները խնայելու էին և մի փամփուշտ իսկ չէին արձակելու իրենց նախնիների արվեստի այդ կոթողների վրա: ԺԹ. դարի սկզբում Ակրոպոլիսը կողոպտող անգլիացի էլ գիտի այս արժանավոր հաջորդները, միջոցի մեջ խտրություն չէին դնում իրենց իմպերիալիստական ծրագրերի հաջողության համար:

ՄԻԱԿ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ – ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Հայը Թուրքիայից դուրս էլ հանգիստ չէր: Հազարապատիկ ու բյուրապատիկ անգամներ ճաշակել էր աղին ու լեղին: Խաղալիք էր դարձել ամեն տեսակ քամո: Աշխարհի մեծ ու փոքր ազգերի արհամարհանքին էր ենթարկվել: Ռատայական աստվածություններ, ծուռ նայվածք ու ծաղրանք, մի տեղ «սալ չտրանժե»²⁵¹, մի ուրիշ տեղ (լավագույն դեպքում) «պալիո՛ր արմենիս»²⁵²

²⁵¹ *Սալ չտրանժե* (ֆր.՝ *sale étranger*), կեղտոտ օտար:

²⁵² *Պալիո՛ր արմենիս* (հուն.՝ *παλιό αρμενης*), չար, վատ հայ:

բացականչությունը իր հասցեին, բուրժուական երկրների ամեն մի անարգանքին էր ենթարկվել: Նույնիսկ արդարադատության օրգանները կողմնակցություն էին անում, երբ իմանում էին, թե հայ է: Դատարանում հայու իրավունքը չէր պաշտպանվում: Ոստիկանատնում իրավունքը հանցանքի էր վերածվում: Աշխատանքի, բնակության, երթևեկի, կրթական և ամեն տեսակի ուրիշ հարցերում դժվարության էր հանդիպում հայը: Սեղմումներ, արժեքներ և իրավունքի զրկումներ գործադրվում էին հայերի համար: Միայն մեծ խոսքեր լսվում էին չորս կողմից: Մեծաշոինդ խոստումներ, իր զգացմունքները շոյող խոսքեր, բայց դրական ոչինչ: Յուրաքանչյուրը, իր կարգին կամ միասնաբար, շահագործել էին ու շահագործում իր արյունը: Հավիտենական խաբեբաներն էին ու նենգամիտներ: Թողենք ավելի հներին Առաջին իմպերիալիստական պատերազմի ընթացքին, այդ «իմպերիալիստական դիպլոմատիայի հին գայլերը» ինչե՛ր չէին ասել, չէին խոստացել: Հիշենք մի քանիսին:

Դե Շանել²⁵³, ֆրանսիական խորհրդարանի նախագահը, 1917 թվի դեկտեմբեր 19-ին Փարիզում հայ մտավորականների միության նախագահին գրել էր. ի միջի այլոց. «Թող վստահություն ունենան հայերը, թեպետ չի վերացել իրենց տառապանքը, սակայն մի նոր օրվա արշալույսը արդեն ծագել է, գրավվել է Երուսաղեմը, վաղը Հայաստանը, թրքական կեղեքման արյունոտ գոհը – իր կարգին տոնելու իր ազատությունը»:

²⁵³ Պոլ Դեշանել (1856-1922), ֆրանսիացի քաղաքական գործիչ Էմիլ Դեշանելի որդին, պետական գործիչ, լրագրող և գրող: Պոլ Դեշանելը երկու անգամ եղել է Ֆրանսիայի խորհրդարանի (1898-1902 և 1912-1920), սպա՝ հանրապետության նախագահ (1920 թ. փետրվարի 18 – սեպտեմբերի 21), Ըր-է-Լուարի սենատոր (1921-1922): 1899 թ. Դեշանելը ընտրվել է Ֆրանսիական ակադեմիայի անդամ: Գրել է բազմաթիվ քաղաքական, սոցիալական, պատմական աշխատություններ, https://www.assemblee-nationale.fr/histoire/tables_archives/paul-deschanel.asp. դիտվել է՝ 07.12.2022:

Ստեֆեն Պիշոն²⁵⁴, Ֆրանսիայի արտաքին գործոց մինիստր, խորհրդարանի 27 դեկտեմբեր 1917-ի նիստին հայտարարում էր. «ճնշված ազգերի դեմ սերտ իրավունքներ ունինք մենք. սա մեր ավանդությունների և մեր պատմությանը պատիվն է, մեր կարծիքով այդ կվերաբերի այնպիսի ժողովուրդների ինչպես հայկականը, սիրիականը, լիբանանականը՝ որոնք հակառակ իրենց կամքին ենթարկվել են ճնշողի լծին. բոլոր այդ ժողովուրդները իրավունք ունեն մեր համակրանքին, մեր օժանդակությանը. բոլորն էլ պետք է կարելիությունը ունենան իրենց ճակատագիրը իրենք որոշելու»:

Կլեմանտ, մինիստրների խորհրդի նախագահը 14 հուլիսի 1918-ին գրում էր. «Ֆրանսիան, որ ամենից անարդար ազրեսիայի զոհն էր դարձել, իր պահանջների կարգին գրել է և ճնշված ժողովուրդների ազատագրումը... Հանրապետության (Ֆրանսիայի) կառավարությունը և Միացյալ թագավորության կառավարությունը՝ չէ դադարել հայ ազգը հաշվելուց այն ազգերի թվումը, որոնց բախտը տնօրինելու են դաշնակիցները, համաձայն մարդկության և արդարության գերագույն օրենքների»:

Նույն Ս. Պիշոն 1919, նոյեմբեր 21-ին գրում էր. «Հանրապետության կառավարությունը խորապես զգացված հայ ժողովրդի կրած տառապանքից, ոչինչ չմոռանալու է՝ պատրաստելու համար նրան իր քաղաքակրթության համապատասխան մի ապագա»:

²⁵⁴ Սթեֆեն Պիշոն (1857-1933), ֆրանսիացի քաղաքական գործիչ, լրագրող և դիվանագետ, Արմատական սոցիալիստական կուսակցության անդամ, պատգամավոր (1885-1893), սենատոր (1894-1906), Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար (1906-1911, 1913, 1917-1920): 1880 թ. Ժորժ Կլեմանտյի հետ հիմնել է «La Justice» թերթը, համագործակցել «Petit Journal»-ի հետ, ապա դարձել նրա տնօրենը (1915): Արժանացել է «Պատվո լեգեոնի» և բազմաթիվ արտասահմանյան շքանշանների, https://www.senat.fr/senateur-3eme-republique/pichon_stephen0429r3.html, դիտվել է՝ 07.12.2022:

Ահա և Լյոյդ Ջորջ²⁵⁵, որ գրում էր 1917 դեկտեմբերի 21-ին. «Հայաստանը ոչ մի ատեն դրվելու է թրքերի չարադետ իշխանության տակ»: Իսկ 1918 հունվարի 5-ին իր ճառի մեջ ասում էր. «Արաքիան, Հայաստանը, Միջագետքը, Սիրիան և Պաղեստինը իրավունք ունեն իրենց անջատ ազգային գոյությունը ճանչնալու: Բավարարվինք ասելով, որ անկարելի է այդ երկիրների վերադարձը՝ իրենց նախկին տերերին»:

Լորդ Ռոբերտ Սեսիլ²⁵⁶ 1918 նոյեմբերի 18-ին՝ ասում էր. «... ես խորապես խաբված պիտի լինեմ, թե որ թուրք կառավարության մի սովերը կամ մի հյուլեն մնա Հայաստանի վրա»:

Ահա և իտալացի Լուցցատին, որ խորհրդարանում 1918 նոյեմբերի 26-ին հայտարարում էր. «Վերահաս է (հայերի) ազատագրության օրը: Իմ իտալացու հոգին հրճվեց, երբ մինիստրների խորհրդի նախագահին ներկայացրի իտալական «Պրո Արմենիա» ընկերության ցանկությունը, երբ նա պատասխանեց. «Ասա՛ հայերին, որ ի՛մն է իրենց դատը»: Իտալիան Հայաստանի ազատարարը, այս պատվո նշանը կմաղթեի իմ հայրենիքին»:



Սակայն այդ բոլորը իրականացան բոլորովին տարբեր անձերի ու տարբեր ուժերի ձեռքով:

Այո՛, Հայաստանը տոնեց իր ազատությունը, ծագեց մի նոր օրվա արշալույսը, «տանջված ու բազմաչարչար, Անտանտի ու դաշնակների ողորմածությամբ սովի, քայքայման ու գաղթի մատնված Հայաստանը, բոլոր «բարեկամների» կողմից խաբված այդ Հայաստանն, այժմ իր փրկությունը գտավ այն բանի մեջ, որ իրեն հայտարարեց սովետական երկիր»:

²⁵⁵ *Ղեկվիդ Լյոյդ Ջորջ* (1863-1945). անգլիացի քաղաքական գործիչ:

²⁵⁶ *Ռոբերտ Սեսիլ* (1864-1958), լորդ Չելվուդ, անգլիացի քաղաքական գործիչ:

«Ո՛չ Անգլիային, հայկական շահերի այդ «դարավոր պաշտպանի» կեղծ հավաստիացումները, ո՛չ Վիլսոնի տխրահռչակ տասնչորս կետերը, ո՛չ էլ Ազգերի Լիգայի մեծադորդ խոստումները՝ Հայաստանի կառավարման նրա «մանդատով» հանդերձ՝ չկարողացան (և չէին կարող) Հայաստանը փրկել կոտորածից ու ֆիզիկական բնաջնջումից: Միայն սովետական իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղության և ազգային վերածննդի հնարավորություն:

Հայ ժողովուրդը կարելիությունը ունեցած էր իր ճակատագիրը ինք որոշելու, հայ ժողովրդի քաղաքակրթության համապատասխան մի ապագա պատրաստված էր, բայց նրանց մեջ ո՛չ պիշոնները, ո՛չ կլեմանսոնները, ո՛չ Ֆրանսիայի հանրապետական կառավարությունը, ո՛չ լոյդ ջորջերը և ո՛չ էլ Լուցցատիի հայրենիքը չէին ունեցած ոչ մի դեր կամ օժանդակություն:

«Հայաստանը ձեռք էր բերել խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն միայն սովետական իշխանության օրով»: Այդ պատիվը վերաբերում էր Լենինի-Ստալինի պարտիային, սովետական կառավարության, կարմիր բանակին, Հայաստանի իմաստուն վարիչներին և ռուս մեծ ժողովրդին:

ԴԵՊԻ ԱՐԵՎԱՇՈՂ ԵՐԵՎԱՆ

1946 թվի գարնանը, ծիծեռնակների հետ բերեց և հայրենիք ներգաղթի խաբրիկը: Սովետական իշխանությունը թուլատրում էր վտարանդի հայության վերադարձը իրենց օջախում՝ Սովետական Հայաստանում: Ոտքի էր կանգնել գաղթաշխարհը. ցմծություն, արձանագրություն և պատրաստություն:

Միայն դաշնակներն են, որ կատաղել ու գազազել են: Փրփուրը բերնում հարձակվում են աջ ու ձախ: Վայնասուն են բարձրացնում և նույնիսկ ներգաղթի ցանկերում արձա-

նագրվողներին սաառնում: Շատերին փորձում են կաշառել իրենց անունը ցանկերից ջնջելու համար: Չեն կարող հանդուրժել այն փաստին, որ մասսան դուրս է եկել իրենց ափից: Իսկ իրենք մասսաների կարիքն ունեն, ապահովելու համար մի փոր հաց: Թերթ, դայրոց, զանազան ազգային կազմակերպություններ ինչպե՛ս պահելու են, որպեսզի ապրվեն մի շարք ձրիակերներ: Պետք էր մարդկանց համար գործ ճարել, գործ ստեղծել, իսկ դա կարելի էր մասսայով: Չեն ուզում, որ ներգաղթ լինի, չեն ուզում, որ տառապյալ ժողովուրդը վերադառնա իր ազատ հայրենիքը: Հայությունից հեռացած, հայության հետ որևէ օրգանական կապ չունեցող, սակայն այդ հայության անունով կուրծք ծեծող այդ վիժվածքները թե որ հայ լինեին, չէին թողնի, որ հայը օտարության մեջ ձուլվի անհայտանա:

Մի փոր հացն է իրենց մտահոգողը. թող լինի Թուրքիայում, թե Չին ու Մաջինում: Խղճի ամենայն հանդարտությամբ քաջալերում են հայերի գաղթը: Եվ մի՞թե դաշնակները չէին նրանք, ովքեր ներգաղթի օրերին կոչ էին անում հայերին՝ գաղթել (ոչ թե իրենց հարազատ հայրենիք՝ Սովետական Հայաստան), այլ Մադագասկար²⁵⁷: Նրանք ստեղծելու էին նոր հայրենիք և շահագործվելու էին ֆրանսիացի կոլոնիստներից:

Սակայն հակառակ իրենց ճիգերին, ժողովուրդը արհամարհեց նրանց դավաճանական «խրատները»: Ներգաղթողների ցանկերը գնալով մեծացան: Հայրենակարոտ բազմություններ ամեն օր Առաջնորդարանի առաջ էին խոնվում՝ շոգենավերի ժամանման լուրը ստանալու համար: Անհամբեր էր դարձել ժողովուրդը: Նավի հապաղումը ջղային էր դարձրել մարդկանց:

Եվ մի բարի օր լուրը տարածվեց:

²⁵⁷ «Մադագասկարյան նախագծի» մասին մանրամասն տե՛ս Էդիտա Գ. Գոզյան, «Մադագասկարում հայկական գաղութ ստեղծելու 1925-1926 թթ. ծրագիրը և հրեական հարցի լուծման 1940-ական թթ. «մադագասկարյան նախագիծը». համեմատական քննություն», *Վկա համահայկական հանդես*, ԺԱ (ԺԷ) տարի, թիվ 2 (66) (2019), 214-231:

Օգոստոսի 15-ին Աթենքի նավահանգիստ Պիրեայում ժամանել էր «Տրանսիլվանիա» նավը, որը հայրենիք էր փոխադրելու բազմաչարչար հայությանը: Մեկնողների դեմքի վրա արտահայտվում է հրճվանքի ծիծաղ, իսկ մնացողների վրա տխրությունը: Մին ուրախությունից արտասվում է, իսկ մյուսը քարավանին մաս կազմած չլինելու տխրությունից:

Ահա մի հայրենադարձ կին: Ձեռքին մի ծրար, որ գուրգուրանքով և ամուր կայքած իր կրծքին:

– Ի՞նչ է այդ, ի՞նչ ես տանում հայրենիք այդ ծրարի մեջ, – հարցնում ենք:

Վշտի և ուրախության խառն մի նայվածքով պատասխանում է. «Ամուսինս մեռնելու ժամանակ ինձ կտակեց, որ հայրենիք գնալու դեպքում, իր աճյունը չթողնեմ այստեղ: Չէի կարող ոսկորները վերցնել, ուստի նրա գերեզմանից հող վերցրի և տանում եմ հայրենիք»:

Նավի մի անկյունը նստած հայրենադարձ մի ծերունի ուրախ ուրախ խոսում, պատմում է: Իր հասուն տարիքին, վերջին ժամանակին արժանացած հայրենիք գնալու բախտավորությունը չափազանց հուզել էր իրեն:

Նույն գիշեր գզացած երանությունը հուզմունքից մահացել էր այդ ծերունին, երջանիկ ժպիտը դեմքին:

ճանապարհին մեր նավը, մի մաս ներգաղթողներ էլ առնելով Սելանիկից, հաջորդ առավոտ արշալույսին, որ կիրակի էր, անցնում էինք Պոլսի առաջից: Օսմանյան կայսրության և իթթիհատական Թուրքիայի մայրաքաղաքը, բնությանը գեղեցիկ, սակայն մտքով ոճրածին, արյունոտ ոստան: Համիդի պալատները՝ «Յըլտըզ»²⁵⁸, «Չրաղան»²⁵⁹,

²⁵⁸ *Յըլտըզ* (թուրք.՝ Yıldız Sarayı), Աստղային պալատ, սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի նստավայրը Ստամբուլում (1876-1909). կառուցել են Բալյանները:

²⁵⁹ *Չրաղան* (թուրք.՝ Çırağan Sarayı), Չրաղանի պալատ, սուլթան Աբդուլպահիզի նստավայրը (1876 թվականից). կառուցել են Բալյանները:

«Տոլմա բաղչե»²⁶⁰, շարքով մեր տեսողության առաջ են՝ ուր հղացվել էին հին ու նոր Թուրքիայի հայահալած ծրագիրները: Անցնում էինք երբեմնի հայ կուլտուրայի և գրականության բոցավառ օջախից, որի քրմերը անխնայորեն հռչակուցին իթթիհատական սև ձեռքերից: Պոլի՛ս, հայկական կյանք ու կենդանության երբեմնի կենտրոն, որ այժմ լռել, մեռելական երևույթ է ստացել:

«Տրանսիլվանիա»-ով գնացող յուրաքանչյուր հայ իր առանձին պատմությունը ուներ արյունով գրված: Նրանք Տերզորի անապատների, Եփրատի ջրերի և Իզմիրի քեմալական նախճիրի՝ միլիոնավոր զոհերի հրաշքով ազատվածներն էին, ճռաբաղը²⁶¹՝ հայկական երբեմնի հուռթի այգուց: Դիտում էին՝ ցատումով, հիշելով իրենց զոհերը՝ թրքական բարբարոսության: Դիտում էին՝ գլուխնին բարձր բռնած, արհամարհանքով, որ այժմ իրենք չեն այն հայերը, որոնք անհովիվ ոչխարի հոտի նման թրքական սպանդանոցն էին տարվել: Անտեր չէր հայը այլևս, տեր ու պաշտպան ուներ այժմ՛նա:

Վուսիորի երկու ավերիկն ժողովուրդը հազիվ էր արթնցել: Հետաքրքրությամբ դիտում էին մեր անցքը: Գուցե և թուրք թերթեր գրել էին ներգաղթի մասին, և Պոլսոյ հայ բնակչությունը առավոտ կանուխ պատշգամբ էր ելեր՝ մեր նավը տեսնելու համար, ավսոսանքով, որ իրենք չեն կարողանում մաս կազմել այդ ներգաղթին:

Ահա մի մակույկ, մեջն առած մի քանի երիտասարդներ, որոնք արագորեն կթիավարեն, կարծես ուզում են մեզի հասնել: Վերջապես հասան և «Տրանսիլվանիա»-ի կողմն ի վեր, մի բուպե ընկերացան, ակնարկնին վեր առած, վանդակված թռչունների նման, կարծես ցանկանում էին թռչել և հասնել

²⁶⁰ *Տոլմա բաղչե* (թուրք.՝ Dolmabahçe Sarayı), Դոլմաբահչեի պալատ, օսմանյան սուլթանների կեցավայր (1856 թվականից). կառուցել են Բալյանները:

²⁶¹ *ճռաբաղ*, այգեկութից հետո մնացած ճիւղերը քաղել-ժողովկլը, բերքի վերջին մնացորդները հավաքելը:

մեր նավը: Ու կարոտի և հայրենաքաղձության իբր արտահայտություն թևերնին տարածած, գոչեցին՝ «երթաք բարով», «երթաք բարով»...

Սև ծովը չէր այն ծովը, որ իր ավելոծությունովն ու սև, մութ ամպերովը, բուք ու մրրիկովը իրեն ապահովել էր այդ անունը: Կարծես խաղաղ մի լիճ լիներ, հանդարտ ու կապույտ: Վոսփորից մինչև Բաթում սպիտակ հագած հարսի նման, ընթացավ սպիտակ «Տրանսիլվանիան», իր մեջն առած՝ հարսնուորները:

Օգոստոս 20-ի կես գիշերին հանկարծ սույեց մեր նավը: Ներգաղթողներ դուրս թափեցան կամարաներից: Հեռվից տեսնվում էին լույսեր: «Բաթո՛ւմն է, Բաթո՛ւմն է» ձայն էին տալիս ամեն կողմից: Հետզհետե մոտենում է նավը և խարսխում: Ուրախության, հրճվանքի ձայնարկությունները թնդացնում էին միջոցը: Վերացած է յուրաքանչյուրի վրա տիրող ստրկության և բուրժուա երկրների՝ հոգիների վրա ճնշող ծանրությունը: Թեթևացած են սրտերը:

Ազատություն: Ի՛նչ խորհրդավոր բառ: Ազատ լինել մարդու շահագործումից, ազատ լինել ռասսայական հալածանքից, հեռու լինել սուրից և հուրից, որ կարող է գալ՝ Համիդից թե Թալեաթից, Էնվերից թե Քեմալից, իթթիհատական թե միլլի Թուրքիայից և հեռու լինել «քաղաքակիրթ» կոչված, բայց շողոքորթ, նենգամիտ ու շահագործող երկրներից:

Հազիվ լուսացած էր, նավուն սանդուղները վար առնվեցին: Անհամբեր ժողովուրդը խուժեց դեպի քարափ. վերջապես ազատվել էինք: Այս երկրորդ ազատումն էր՝ սուլեական իշխանության կողմից: Սովետական իշխանության շնորհիվ քեմալական գերությունից ազատվել էին Իզմիրից մասնավորաբար գերեվարվածները, նրա շնորհիվն էր, որ այժմ էլ կազատվեինք դրամատիրական աշխարհի գերությունից:



Մի քանի օր հանգստանալուց հետո, հայրենադարձները գնացքով մեկնեցան դեպի Սովետական Հայաստան և արևաշող Երևան: Դարավոր և ալեհեր Արարատը դիտում էր և հրճվում: Ինք, որ վկան էր եղել իր զավակների անհամար գաղթերին ու նախնիներին, ողբերին ու արցունքներին, այս անգամ վկա էր լինում նրանց հայրենադարձությանը, ներգաղթին, ուրախության արտասուքին ու երանությանը զեղումներին:

ՕՂԱՆԷՍ (ՕՆՆԻԿ) ՂԱԶԵՐԵԱՆ
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ



Օհանես (Օննիկ) Ղազարյանը
Ղազարյան ընտանիքի սրբիկով



Օմիկ Ղազարյանը կնոջ՝ Մելիսե Բիլեգիկյանի հետ
Ղազարյան ընտանիքի արխիվ



Ընտանեկան լուսանկար
Ղազարյան ընտանիքի արխիվ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	218
Երկու խօսք	227
Մանկություն	228
Էօտէմիշէն Իզմիր փոխադրությունը	233
Սահմանադրություն	235
Պայքանեան պատերազմը	241
1914-ի համաշխարհային պատերազմը	249
Զինուորական ծառայությունս թրքական բանակին մէջ	252
Իմ արքայի մեկնումը	255
Գեղամ եղբորս հանդիպումը հիւանդանոցի մէջ	269
Եղբորս ծանր հիւանդությունը	286
Մեր վերադարձը դէպի Իզմիր	289
Հայաստանի Հանրապետության առաջին տարեդարձը	293
Իզմիրի գրաւումը յունական զօրքերով	295
Աֆիոնի մէջ խանութ բանալս	299
Աֆիոն Բարահիսարի ճակատին փլուզումը եւ խուճապարար մեր փախուստը 1922 օգոստոսին	301
Թրքական հողերէն մեր ի սպառ հեռացումը	306
Միտիլի կղզին հասնիլս	307
Տէտ Ադաճ մեր ժամանումը	310
Աթէնք ժամանումս	311
Փաթրաս հասնիլս ու մերիններուն հանդիպումս Մարանիօ Փուլոյի հսկայ հանկարներուն տակ	311
Իմ Ֆրանսա մուտքս	318

ԱՌԱՋԱԲԱՆ

Օննիկ Ղազերյանը ծնվել է 1897 թ. Զվյունիայի Էոդեմիշ արվարձանում (Թուրքիա): Նրա պատմությունն առաջին հերթին իր մանկությունն է, ընտանեկան կյանքը հայկական միջավայրում՝ ուրախություններով ու դժվարություններով, կրթությունը, 1915-1919 թթ. հարկադիր ծառայությունը թուրքական բանակում: Այդտեղ էլ ապրել է կյանքի ողջ ողբերգությունը, անցել փորձություններով, առերեսվել հայ ժողովրդի եղերական ճակատագրին: 1922 թ. հեռացել է Թուրքիայից, նավով հասել Հունաստան և գտել մորը, եղբայրներին ու քույրերին: 1923 թ. ժամանել է նախ՝ Մարսել, ապա՝ Փարիզ, աշխատել տաքսու վարորդ: Ընտանիքին նվիրված լինելուց զատ՝ շատ է կարևորել Հայկական հարցն ու ակտիվ մասնակցել տարբեր միջոցառումների: Փարիզում ամուսնացել է Մելինե Բիլեզիկջյանի հետ (1903-1982): Այդ միությունից ծնվել են Ալիսը (1928), Էդմոն-Հակոբը (1930-2021), Արմանը (1933-2021) և Լյուսին (1939): Փարիզում անդամակցել է հայկական ամենատարբեր կազմակերպությունների: Օննիկ Ղազերյանը և Մելինե Բիլեզիկջյանը զավակներին մեծացրել են՝ նրանց մեջ արմատավորելով հայկական մշակույթն ու գրականությունը, սովորույթները: 1948 թ. Ղազերյանները Հայաստան հայրենադարձվելու և ապրելու ցանկություն ու պատրաստակամություն են հայտնել, սակայն Մելինեի առողջական վիճակը թույլ չի տվել: Օննիկ Ղազերյանը մահացել է 1969 թ. դեկտեմբերի 28-ին¹:

¹ Օննիկ Ղազերյանի կենսագրական տվյալները (Ֆրանսերեն) տրամադրվել են զավակները (Ալիս, Էդմոն, Արման, Լյուսի):



Օհանես (Օննիկ) Ղազերյանը «Կենսագրական նօթեր»² հուշագրությունը գրի է առել պատկառելի տարիքում. այդ մասին տեղեկանում ենք հուշագրության ներածականում (էջ 227): Վավերագրությունը շարադրված է պատմական ակնարկի տեսքով՝ Օսմանյան պետության քաղաքական իրավիճակից մինչև տարագրություն՝ շուրջ 16 տարվա պատմություն (1907-1923)՝ ժամանակագրական հաջորդականության պահպանմամբ: Հուշագրության մեջ անդրադարձ կա օսմանյան սահմանադրությանը, Բալկանյան պատերազմներին, Առաջին աշխարհամարտին, Հալեպում ապրած տարիներին և այլ իրադարձությունների:

Վավերագրողի հաղորդած տեղեկությունները վերաբերում են ինչպես նախացեղասպանական, բուն ցեղասպանական, այնպես էլ՝ հետցեղասպանական շրջանին: Հուշապատումը սկզբնաղբյուրային կարևոր տեղեկություններ է հաղորդում Զմյուռնիայի հայերի և հույների խաղաղ կյանքի. նրանց դեմ թշնամանքի արմատավորման, բռնության, տարագրության մասին: Հուշագրողի միկրոպատմությունը, միա-հյուսվելով Հայոց ցեղասպանության մակրոպատմությանը, ընթերցողին նոր մանրամասներ է հաղորդում պատմական իրողությունների վերաբերյալ. Ղազերյանը ներընտանեկան ցավը զուգորդում է ազգի բնաջնջման և հարության պատմությանը, ընթերցողին ներկայանում իր փորձառությամբ, ծանոթացնում ավանդական հայ ընտանիքի բարեվարքությանը:

Շարադրանքում իրողությունները զարգանում են զուգահեռաբար՝ ընտանեկան նիստուկացի և Օսմանյան պետու-

² 2008 թ. հոկտեմբերի 1-ին Օննիկ Ղազերյանի ավագ որդին՝ Էդմոն-Հակոբ Ղազերյանը, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին 1, հանձնել հուշագրությունը, որն այժմ պահվում է ՀՅԹԻ գիտական ֆոնդերում (բաժին 8. ֆ. հ. 128): Այն բաղկացած է ներածական հատվածից և 20 մասից (84 ձեռագիր էջ):

թյան ներքաղաքական անցուղարձի ներկայացմամբ ու վերլուծությամբ: Օրինակ՝ Էդդեմիշից Զմյուռնիա տեղափոխված իր ընտանիքի պատմությունն ուղեկցվում է 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման և սահմանադրության վերաբերյալ տեղեկությունների հաղորդմամբ. «... բոլոր ժողովուրդները ազատած էին բռնակալ ու անարդար ռեժիմէ. դպրոցին մէջ սկսանք ազգային երգեր սորվիլ, ազատութիւն էր ամեն կողմ, հայերը նաեւ ուրիշ ազգեր կանոնաւոր գինուորական ծառայութեան կանչուեցան» (էջ 236):

Հուշագրության «1914-ի Համաշխարհային պատերազմը» խորագրով բաժնում Ղազերյանը, անդրադառնալով ընտանեկան դրությանը, այն զնահատում է «մասամբ բարելաւուած» ու անցում կատարում քաղաքական մթնոլորտին՝ հավելելով. «Ահա՛ այս ահ ու դողին մէջ թուրք կառավարութիւնը՝ ղեկավարութեամբ հրէշածին թալէաթներու, էնուէրներու եւ բազմաթիւ ժէօն թիւրք ղեկավարներու, ժամանակը շատ յարմար գտնելով՝ որոշեցին Հայկական հարցը միայնգամ մէջ տեղէն վերցնել» (էջ 249):

Ղազերյանը՝ որպէս շարադրված իրողությունների ժամանակակից, թուրք հասարակության ազգային կերպարում կտրուկ փոփոխությունների ակնկալումն առնվազն միամտություն է համարում: Հիշատակելի է վավերագրողի հետևյալ գրառում-ուղերձը. «Դարեր պէտք էին, որ թուրքի երակներէն յաւէտ հեռանար մոնկոլեան ջարդարար արիւնը, ու մենք եղբայրացանք կուրօրէն թուրքերու սահմանադրութեան օրերուն, որոնք մենէ արթուն ու մենէ ճկուն իմացան ու լսեցին մեր ապագայ երազները, մեր քաղաքական ըմբռնումները...» (էջ 251):

Հետաքրքրական են հատկապէս թուրքական բանակում Ղազերյանի զինվորական ծառայության տարիները, Հալեպում ապրած օրերը, երբ նկարագրում է, թե ինչպէս «տասնեակ հազարաւոր հայեր, կոտորածներէ եւ տանջանքներէ

մագապուրծ ազառած, գաղտնի մտած են Հալէլա ու գանազան թաղերու մէջ ամենավատ պայմաններու տակ քարշ կու տային կեանքերնին» (էջ 271):

Զմյուռնիայի հունական գրավման մասին հուշագրության մէջ կարդում ենք. «... յոյները քանի մը ամիսներու մէջ բազմաթիւ քաղաքներ գրաւեցին ու հասան Ուշաք: Թուրքերը, ամեն տեղ դիմադրելով, կը յանձնէին իրենց դիրքերը, ամեն տեղ արին կը հոսէր: Քիչ վերջը Էօտէմիշն ալ գրաւուեցաւ: Ամեն տեղ հայերը սիրով կը դիմաւորէին յունական զօրքերը՝ ի բնէ թուրքին դէմ վրէժով լեցուած...» (էջ 297):

Ղազերյանի հիշողության մէջ դրոշմված քրիստոնյաների խուճապային իրավիճակի մասին է հետևյալ հիշատակությունը. «Ժամանակ չկար կորսնցունելու: Խանութները իրար ետեւէ կը զոցուէին: Բոլորին դէմքերուն վրայ սարսափի եւ անորոշութեան տպաւորութիւն կար... մայրեր, փոքրերուն ձեռքէն բռնած, ուժասպառ, դժուարաւ կը յառաջանային, մէկ խօսքով՝ ահաւոր խուճապ մը, որ կը փախչէր իսկական ջարդէ մը ազատելու նպատակաւ» (էջ 303):

Ականատես-վերապրողը ցավով է բնութագրում ծառերի տակ բացօթյա գիշերներ անցկացնող, չվերադառնալու պայմանով արքորի ճանապարհը բռնած հայրենակիցների մտատանջությունները: Սակայն, իրեն բնորոշ լավատեսությամբ, կյանքի դժվարին իրավիճակներում արժևորում է «հավաքական գաղափարն» ու միասնական ուժի զորությունը. «... Քանի հեռացանք, տրամադրութիւնները փոխուեցան, ազգային երգերը սկսան լսուիլ բոլոր վակոններէն: Եղբայրական մթնոլորտ մը սկսաւ տիրել վակոններուն մէջ, հաւաքական գաղափար մը ստեղծուեցաւ մեր մէջ. ունեցողը չունեցողին պաշտպան եղաւ...» (էջ 257):

Ղազերյանը, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ և փորձություններ, վերապրել է, իր բնորոշմամբ, «դեռևս մանկուց ունեցած լավատեսության և ուժեղ կամքի» շնորհիվ:

Հուշագրությունը հրատարակության պատրաստելու աշխատանքներին զուգընթաց՝ կապ հաստատեցինք Ղազերյանների հետ: Այդ հարցում մեզ օժանդակեց ՀՅԹԻ նախկին աշխատակցուհի Հայկուհի Գևորգյանը. նա 2021 թ. ամռանը կապ էր հաստատել Ղազերյանի ավագ որդու՝ Էդմոն-Հակոբի կնոջ՝ Մարգարիտ Զևահիրջյան-Ղազերյանի հետ, որը լրացուցիչ փաստաթղթեր ու լուսանկարներ է տրամադրել թանգարանին:



Ականատես-վերապրողների հուշագրություններն առանձնակի հետաքրքրությամբ են ընթերցվում: Հուշագրությունները հաճախ թեն վերաբերում են անհատի կյանքի դրվագին, սակայն դրանք նրա կյանքի պատմականորեն վճռորոշ հատվածներն են: Վավերագրողը գիտակցում է իր աչքով տեսածի ու իր գլխով անցածի պատմությունն արձանագրելու անհրաժեշտությունը՝ մտավախություն ունենալով, որ այն հավանական կորստի վտանգի ներքո կհայտնվի: Ուսումնասիրողն իր հերթին ճանապարհ է հարթում հուշագրության՝ մարդկանց լայն շրջանակի հասու դառնալուն: Մինևույն ժամանակ սեփական կյանքի պատմության շարադրումն անշուշտ նպաստում է անցյալի բացասական հույզերից և զգացումներից ազատագրմանը: Հուշագրությունները, հատկապես ինքնակենսագրական, վավերագրեր են, և հաճախ լրացուցիչ լույս են սփռում ժամանակի իրականության վրա:

Զմյուռնիայի հայերի և հույների բնաջնջման ու քրիստոնեաբնակ թաղամասերի հրկիզման խնդրի լուսաբանումը. ամենատարբեր հանգամանքներով պայմանավորված, տասնամյակներ շարունակ լռության է մատնված եղել: Թեմային նվիրված սկզբնաղբյուրային նշանակության հուշագրություններից հարկ է առանձնացնել լեզվաբան, հայագետ Դո-

րա Սաքայանի մեծ հոր՝ բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը³: Փաստագրական կարևոր տեղեկություններ են հաղորդում Զմյուռնիայում հավատարմագրված ԱՄՆ հյուպատոս Զորջ Հորթոնի աշխատասիրությունները⁴, Կ.Պոլսում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի⁵, Լոնդոնի համալսարանի հետազոտող Լիսիմախոս Օեկոնոմոսի և Մերձավոր Արևելքի փախստականների հարցերով գործադիր քարտուղար Էդվարդ Հելլ Բիերսթադթի մեծածեք աշխատությունները⁶: Վերը հիշատակված ուսումնասիրությունները նպաստել են պատմագիտական համադրությամբ և վերլուծությամբ խմբագրելու և ծանոթագրելու Ղազերյանի ինքնակենսագրական նոթերը:

Տողատակերում անհրաժեշտ ենք համարել բացատրել օտար բառերը, ծանոթագրել կարևորագույն իրադարձությունները, պատմական, աշխարհագրական անուններ, տեղանունները⁷. հավատարիմ մնալով բնագրային տեքստին՝

³ Դորա Սաքայան, *Զմյուռնիա 1922. բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը* (Երևան, Նահապետ, 2005):

⁴ George Horton, *The Blight of Asia, An Account of the Systematic Extermination of Christian Populations by Mohammedans and of the Culpability of Certain Great Powers, with the True Story of the Burning of Smyrna*. (Indianapolis, The Bobbs-Merrill Company, 1926); George Horton, *Report on Turkey, USA Consular Documents* (Athens: Journalists' Union of the Athens Daily Newspaper, 1985).

⁵ Henry Morgenthau, *I Was Sent to Athens* (New York, Doubleday, Doran & Company, 1929).

⁶ Lysimachos Oeconomos, *The Tragedy of the Christian Near East*, Charles Dobson, *The Smyrna Holocaust* (London, The Anglo-Hellenic League, 1923); Lysimachos Oeconomos, *The Martyrdom of Smyrna and Eastern Christendom* (London, George Allen and Unwin, 1922); Edward Hale Bierstadt, *The Great Betrayal, A Survey of the Near East Problem* (N.Y., R. M. McBride & Company, 1924).

⁷ Տեղանունները ծանոթագրելիս օգտվել ենք հետևյալ բառարանից՝ Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, *Հայաստանի և*

տվել ենք նաև բառեզրային և ուղղագրական գուգաձևությունների ժամանակակից տարբերակները, վերականգնել բառերը կամ արտահայտությունները: Որոշ բառեր բացատրել ենք բուն տեքստում օգտագործելով ուղղանկյուն փակագծեր, օրինակ՝ վիզա [այցագիր], թռն [շոգեկառք], ֆոնտ [հիմնադրամ], լօքոմոթիս [ինքնավար շոգեկառք] ևն:



Խորին շնորհակալություն եմ հայտնում Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ավագ էքսկուրսավար Անժելա Թևեթեյանին հուշագրության համակարգչային մուտքագրման, ՀՅԹԻ Արտաքին կապերի՝ և լրատվության բաժնի հասարակայնության հետ կապերի պատասխանատու, թուրքագետ Սերինե Մուրադյանին հայատառ թուրքերեն բառերը, արտահայտությունները և նախադասությունները սիրահոժար թարգմանելու, Հայկուհի Գևորգյանին ֆրանսերեն հատվածների թարգմանության համար: Շնորհակալ եմ «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի տնօրեն Հարություն Մարությանին, ՀՅԹԻ գիտքարտուղար, Աղբյուրագիտական ուսումնասիրությունների բաժնի վարիչ Նարինե Մարգարյանին խորհրդատվության և ուղղորդման համար:

Առանձնահատուկ շնորհակալ եմ Լյուսի Ղազերյանին հուշագրությունը հրատարակության պատրաստելու ընթացքում ձեռագրում անհասկանալի բառերի և արտահայտությունների վերծանման, ինչպես նաև ընտանեկան լուսանկարների տրամադրման համար: Երախտագիտություն եմ հայտնում Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի խմբագիր-սրբագրիչ Աշոտ Մկրյանին, արևմտահայերեն-

հարակից շրջանների տեղանունների բառարան, 5 հատոր (Երևան, ԵՊՀ, 1986-2001):

նի խմբագիրներ Ալեո Ափոշյանին և Վազգեն Հախոյանին
բարեխղճության և անհրաժեշտ խորհրդատվության համար:



Օննիկ Ղազերյանի «Կենսագրական նոթեր» հուշագրության
հրատարակությունը հարգանքի տուրք է Ջմյունիայի անմեղ
նահատակների սուրբ հիշատակին:

Թեհմինե Մարտոյան

*Պատմական գիտությունների թեկնածու
«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի
Հայոց ցեղասպանության զոհերի ու վերապրողների փաստագրման և
ուսումնասիրության բաժնի սպագ գիտական աշխատող*

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Երկար ժամանակ էլ Վեր կը փափաքէի յուշերս գրի առնել ու մանկութենէս մինչեւ այս օր ունեցած կեանքի բոլոր պայքարներս, փոթորիկներս, տառապանքներս ու աննշան ուրախութիւններս ու մանաւանդ տեսած երեք պատերազմներու ընթացքին քաշած գրկանքներս գրելով՝ կ'ուզէի իբր յիշատակ 4 զաւակներուս թողուլ, որպէսզի զայն կարդալով իմ կեանքի փորձարութիւններէս օգտուին: Սակայն իմ կեանքս այնքան ծանրաբեռնուած էր պարտականութիւններով հանդէպ իմ ծնողքիս, եղբայրներուս ու քոյրերուս ու մանաւանդ կնոջս ու 4 զաւակներուս, որ ո՛չ ժամանակ ունեցայ խաղաղ մտքով նստիլ գրելու, ո՛չ տրամադրութիւն, ո՛չ ալ հնարաւորութիւն կարողացայ ստեղծել. յիշողութիւնս շատ զօրաւոր ըլլալով՝ կեանքիս բոլոր դրուագները ամեն բոլակ սինեմայի պէս աչքիս առջեւէն կ'անցնէին ու մեծ ցաւ կը զգայի, որ այսքան բազմաթիւ ու շահեկան դէպքեր յաւէտ պիտի կորսուին մահէս ետք:

Ուրախ եմ, որ այդ հնարաւորութիւնը ինձ ներկայացաւ շնորհիւ իմ ուժեղ կամքիս: 1953-ի օգոստոս ամսուն Ֆրանսայի «Mamers» կոչուած փոքրիկ քաղաքին մէջ, ուր եկած էի ընտանեօք՝ ամուսայ մը օդավիոխութեան, ուրեմն 57 տարեկանիս միայն բնութիւնը ինձ առիթ ու հնարաւորութիւն պարգեւեց, որպէսզի խաղաղ մտքով նստիմ ու յուշերս գրեմ: Պիտի ջանամ շահեկան դարձնել յուշերուս ընթերցումը՝ տալով մանրամասն նկարագրութիւններ ու զանազան դրուագներ իմ կեանքէս:

Վստահ եմ, որ զաւակներս մեծ հաճոյքով պիտի կարդան յուշերս, որ ամբողջութեամբ տառապանք, զրկանք, յուզում ու պայքար է:

Օնսիկ Ղազերեան

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Ծնած եմ 12 մարտ 1897-ին Թուրքիոյ Իզմիրի⁸ նաւահանգստի մօտ Էօտէմիշ⁹ հայաշատ քաղաքին մէջ բարեկեցիկ ընտանիքէ մը: Հայրս՝ Յակոբ Ղազերեան, Ղազեր օղլու¹⁰ շատ պատուական ու բարեպաշտ մարդ մ'էր, ոնէր հինգ քոյրեր, որոնք բոլորն ալ ամուսնացած, բազմամոլամ ընտանիքներ կազմած էին, մայրս՝ Հռիփսիմէ Մարտումեան, Մարտում օղլու ընտանիքէն, շատ բարի ու գեղեցիկ կին մ'էր, թէւ ուսում չէր ստացած, սակայն ամեն ջանք ի գործ դրած էր իր զաւակներուն կրթութիւն տալու համար: Ոնէր 6 զաւակներ՝ 4 մանչ եւ 2 աղջիկ՝ Ղազարոս, Աղանի, Օննիկ, Գեղամ, Թագունի, Վարդան: Մեզմէ շատ մեծցուցած ու կաթ տուած է նաեւ իր եղբորը՝ Գէորգին աղջկան՝ Նուարդին, որուն հայրն ու մայրը վաղաժամ մեռած ըլլալով ստիպուած իր քով առած է զայն, որով մենք 7 զաւակներ էինք տան մէջ ու երբեք չէինք գիտեր, թէ Նուարդը ուրիշ մօրմէ է: Հայրս մեր ամենքէն աւելի Նուարդին կը սիրեր. կը զարմանայինք: Երբ մեծցանք, այն ատեն հասկցանք, որ որք մնացած ըլլալուն՝ հօրս մասնաւոր գուրգուրանքին առարկան էր. ինչ բարձր հոգի մարդ էր հայրս: Դպրոցին մէջ շատ ուշիմ եւ արթուն էի, չափազանց կը սիրէի ուսումը, դասարանին առաջիններէն էի, ուսուցիչներ ունէի՝ Համբարձում Երամեան¹¹, Սարգիս Ամաստեան¹², դասընկերներ ունէի՝

⁸ *Իզմիր* անվանումը հարմարեցված է թուրքերենի հնչյունական օրէնքերին (թուրք.՝ İzmir, օսմ.՝ ازمير, հուն.՝ Σμύρνη, հայերէն՝ Զմյուռնիա):

⁹ *Էօտէմիշ* (թուրք.՝ Odemiş, հուն.՝ Οδεμῆσιο), բնակավայր Զմյուռնիայի մերձակայքում:

¹⁰ *Ղազեր օղլու* (Kazeroğlu), Ղազերի տղա, օգտագործված է որպէս ազգանուն:

¹¹ *Համբարձում Երամեան*, վաստակավոր ուսուցչապետ և պատմաբան:

¹² *Սարգիս Ամաստեան*, Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանի հայերենի, պատմության և գրականության ուսուցիչ:

գոհանամ, Տիգրան Վսեմ Շահինեան, Յարութին Կարապետեան, Օննիկ Մաճառեան, Չուֆայեան, Էդուարդ Կուզէլ եւ ուրիշներ:

Մանկական շրջանիս լեզուի թերութիւն մը ունէի, որմէ շատ տառապեցայ, չէի կրնար հնչել ո՛չ Գ, ո՛չ Ռ գիրերը, ու յաճախ վարժուհիս զիս մառանը կը խոթէր իբր պատիժ: Կուլայի, կը վահնայի, կը պոռայի: Օգուտ չունէր. պէտք էր լաւ հնչել:

Վառվառէ հորաքոյրս չափազանց կը սիրէր զիս ու շարունակ փորձեր կ'ընէր լեզուի թերութիւնս ուղղելու համար: Բարձրաձայն թերթ կարդալ կու տար, ի՞նչ բարի ու ազնիւ կիներ, ափսոս, որ միշտ զինքը անկողնոյ մէջ կը տեսնէի. հիւանդ էր: Շարունակ ջուր կ'առնէին կոնակէն: Վերջապէս, քանի մեծցայ, սկսայ շտկել սխալ հնչումներս:

Հայրս մեծ սրճարան մը ունէր, ուր քանի մը անձեր կ'աշխատէին. կը յիշեմ՝ շատ լաւ կ'ընթանար գործը: Սրճարանին մէջ ունէր մի քանի վանդակներ, ուր դեղնագոյն երգող թռչուններ ամբողջ օրը կը դայլալէին՝ հաճոյք պատճառելով յաճախորդներուն, հայրս բաւական դեղին ոսկի խնայած էր, ափսոս, որ տարի մը խափուելով իր բարեկամներու խորհուրդէն՝ ծխախոտ տնկելու փորձ մը ըրաւ: Իր մասնագիտութիւնը չըլլալով ու մանաւանդ սոյն տարին անձրեւի չգոյութեան պատճառաւ ծխախոտները այրեցան, ու հայրս մեծ վնասով դուրս ելաւ սոյն գործէն, եւ ահա սոյն տարիէն սկսաւ հօրս անյաջողութեան ու անկումի շրջանը. պարտքեր ունէր ու չէր կրնար վճարել, ահագին առնելիքներ ունէր. մարդ չէր վճարեր: Ժամանակ եկաւ, որ սրճարանին վարձքը անգամ անկարող եղաւ տալու, ստիպուած եղաւ կարսոն¹³ մը հեռացնել ու, զիս դպրոցէն քաշելով, քովը առաւ: Մայրս միշտ կը վիճէր հօրս հետ ինձ համար: Ես յաճախ կու լայի, որ ուսումը կը գրկուիմ:

¹³ *Կարսոն* (ֆրանս.՝ *garson*), տղա, մատուցող:

Բայց ստիպուած էի հօրս հնազանդիլ. շատ արթուն տղայ մ'էի, փոքր էի, հագիւ 11 տարեկան, գոնօթուարին¹⁴ մէջ սնտուկ մը դնելով՝ սկսայ ես բաժնել խմիչքները, այնքան արագ, որ յաճախորդները կը զարմանային, ափսոս, որ երկար չտեսցայս յիճակը. սրճարանը, որ կը պատկանէր Հայոց եկեղեցիին, թաղականներու որոշումով դուրս կ'ընեն հօրս եւ անկիւնի փոքրիկ սրճարանը կու տան ատելի աժան գնով:

Այս փոքրիկ սրճարանը չէր կրնար ընտանիք մը ապրեցնել: Հայրս սկսաւ ճաշարանի վերածել՝ կարծելով, որ ատելի լաւ կը շահի, ու սկսաւ իմ Գողգոթաս: Առաւօտուն մութով զիս կ'արթնցնէր ու կը դրկէր քաղաքին սպանդանոցը (abatoir), ուրկէ երկու հատ կովու ստամաք¹⁵ առած, գետինները քսելով՝ մօտակայ արջիւրը կը տանէի ու, լաւ մը՝ մաքրելով ներքին մասը կը քերթէի ու մաս-մաքուր ըրած կը վերադառնայի խանութ: Հայրս, կրկին մաքրելով կը պատրաստէր փաչայ¹⁶ ըստած համեղ ապուրը, եւ, յոգնած այդ մատաղ տարիքիս մէջ, անկիւն մը նստած կը քնանայի, ու այսպէս ամեն օր նոյն ձեւով իմ Գողգոթան կը շարունակուէր, մինչեւ որ սոյն գործն ալ չաջողելով՝ հայրս վերջ տուաւ ու փակեց խանութը: Ահա այս պայմաններուն տակ հայրս ժամանակ մը անգործ մնաց, զայրացած թաղականներու անազնիւ ու անբարեացակամ վարմունքէն՝ որոշեց հեռանալ իր սիրելի ծննդավայրէն ու հաստատուիլ Իզմիր հայաշատ քաղաքը. ես չափազանց ուրախ էի հօրս տուած որոշումէն, որովհետեւ վստահ էի, որ Իզմիրի մէջ հնարատրութիւն պիտի ունենայի ուսումն շարունակել ու գոհացում տալ իմ զարգանալու անհուն պապակիս: Չմոռնամ ըսելու, որ հօրս Էօտէմիշէն հեռանալու որոշման մէջ մեծ դեր խաղաց Նուարդ քրոջս մեր տունէն հեռանալու պարագան: Ինչպէս որ վերը յիշեցի, Նուարդը որք մնացած էր, բայց մենք չէինք գիտեր այս

¹⁴ *Գոնօթուար* (ֆրանս.՝ *comptoire garson*), վաճառատեղան, հաշվետեղան:

¹⁵ *Ստամաք* (անգլ.՝ *stomach*), ստամոքս:

¹⁶ *Փաչայ* (թուրք.՝ *paça*), խաշ, անասունի ոտքերից, գլխից ու փորոտիքից պատրաստվող կերակուր:

պարագան եւ իբր մեր քոյրը կը ճանչնայինք: Օր մը, կարծեմ շաբաթ կէս օրէն ետք էր, մայրս մեր դրացի Խաչատուր Դաւիթեանի տան բաղնիքը մեզ բոլորս կը լուար, կարգը Նուարդին էր եկած, բայց Նուարդը մէջտեղ չկար, ի գուր փնտռեցինք՝ չորս կողմ, վեր վար. կարելի չեղաւ գտնել: Երբ իրիկուն եղաւ, ու հայրս տուն եկաւ, իմանալով եղելութիւնը՝ շափագանց նեղացաւ. կատողած էր բարկութենէն: Մութ էր, շատ լաւ կը յիշեմ ձեռքս լապտեր մը տուին, ու Գեղամ եղբօրս հետ գացինք մեր բոլոր ազգականներուն տուները գտնելու համար Նուարդը. կարելի չեղաւ գտնել: Այն օրը մեր տունը սուգի օր էր. չէինք կրնար քնանալ: Յաջորդ օրը միայն իմացանք, որ Նուարդին մօրեղբայրները համոզած էին զինքը թողուլ հեռանալ մեր տունը: Նուարդը այն ժամանակ հազիւ 15-16 տարեկան անփորձառու աղջիկ մը, խափուած էր իր մօրը կողմի ազգականներէն ու գործած էր այս աններելի մեղքը: Հայրս այս տխուր դէպքէն ետք բարոյական մեծ յուզումներու ենթարկուեցաւ. սկսաւ ամեն օր զինովնալ, հօրաքոյրերուս խորհուրդներուն եւ ճնշումներուն տակ անմիջապէս ծախեց մեր սիրելի տունը մօտ 150 դեղին ոսկիի, ու փոխադրուեցանք Իզմիր: Մեր մեկնումի օրը Նուարդը կայարան եկած էր՝ իր զոջումը յայտնելու, բայց ուշ էր արդէն: Հօրս հոգին քանդուած էր ու, արցունքը աչքերուն, հայրս հրաժեշտ առաւ բոլորէն, ու հեռացանք մեր սիրելի ծննդավայրէն: Միայն Իզմիր հասնելուս գտանք նամակ մը, որ Նուարդը գաղտնի Էօտէմիշի կայարանը հօրս գրպանը սահեցուցած էր, որուն մէջ կը գրջար իր քրածին՝ գոհ երթալով ուրիշներու խորհուրդներուն, ու ինքզինքը կը նամանցներ հօտէն բաժնուած գառնուկի մը: Այսպէս ուրեմն, Նուարդը ժամանակ մը մնացած է իր մօրեղբայրներուն մօտ: Զանազան նկատումներով պր. Թագուր Ահարոնեան առած ու իր տունը տարած է ու վեց ամիս պահած է իր տան մէջ ու յետոյ ամուսնացուցած է իրենց դրացի շէյթան¹⁷ Բարսեղի տղուն՝ Յովհաննէս

¹⁷ *Շէյթան* (թուրք.՝ şeytan), սատանա:

Էթեմէզեանսի հետ, որ Նուարդէն մօտ 17 տարեկան մեծ էր, սակայն շատ պարկեշտ, ազնիւ, բարի ու աշխատասէր մէկն էր ու սիրուած բոլորէն: Հոս ստիպուած եմ քանի մը կծու ակնարկութիւններ ընել պարոն Թագուր Ահարոնեանին ու իր շուրջիներուն, որոնք այս ամուսնութիւնը ծրագրեցին: Այս մարդիկը, Նուարդը վեց ամիս իրենց տունը պահած ըլլալով, ինքզինքնին տէր ու տիրական կարծելով, անխղճօրէն իր հարազատ մօր ու հօր կարծիքն անգամ առնելու պէտքը չտեսան. ծնողք մը, որոնք մինչեւ 16 տարեկան, առանց զանազանելու միւս վեց զաւակներէն, մեծցուցեր ու դաստիարակեր են Նուարդը, այժմ իրենք իրենց իրաւունքը կը զգան ամուսնացնել իրենց ուզած մարդուն: Հոս ստիպուած եմ ճշմարտութիւն մը գրի առնել ըստ տիկ. Մարթա Ռսկանեանի, որ շատ լաւ իրազեկ էր բոլոր այս խնդիրներուն, ըսաւ, թէ Ահարոնեանենք շատ դժգոհ էին Նուարդէն, նոյնիսկ տիկ. Սոֆին յաճախ ջղային նուայաներ կ'ունենար Նուարդին պատճառաւ, որով ժամ առաջ տունէն հեռացնելու նպատակաւ ամուսնացուցին իրմէ 17 տարեկան մեծ տղու մը՝ հակառակ անոր, որ տիկ. Սոֆին քրօջը հետ ամուսնալու խօսք տուած էր Յովհաննէսը: Այսքան երկար զպաղեցայ Նուարդին խնդրով, որովհետեւ ինձ համար գոնէ զայրացուցիչ ու անմարտելի էր պատահածը ու իմ կարծիքով ասոնց բոլոր պատասխանատուութիւնը կ'իյնայ այր. Թագուր Ահարոնեանին մասնաւորաբար:

Անշուշտ, Նուարդը դժբախտ չեղաւ, որովհետեւ Էթեմէզեանները հարուստ էին, ունէին տուն, տեղ, այգի, պարտէզ, արտեր եւ այլն, ունեցաւ երեք մանչ զաւակներ՝ Յովիկ, Հրայր, Արտաւազդ, որով տիպար կին մը եղած է ու ազգային մարքուր դաստիարակութեամբ կրթած է զաւակները, որոնք այսօր բոլորն ալ մեծցած դիրքեր շինած ու զաւակներու տէր են, սակայն պէտք է ըսեմ անմիջապէս, որ այր. Ահարոնեանի յղացած այս ամուսնութիւնը անխիղճ ու անմարդկային էր. ինք իր հարազատ աղջիկը պիտի չտար 17 տարի անելի մեծ տղու մը ու այսօր այս տողերը գրած պահուս աչքիս առջեւ կու գան

նախ Նուարդը, որ այժմ մօտ 58 տարեկան գեղեցիկ ու առողջ կին մ'է՝ այրի մնացած, խեղճ ամուսինը մեռած ըլլալով 2 տարի առաջ Ամմանի¹⁸ մէջ 74 տարեկան հասակին մէջ:

ԷՕՏԷՄԻՇԷՆ ԻԶՄԻՐ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆԸ

1907 թուին էր, որ մեկնեցանք Էօտէմիշէն ու եկանք հաստատուիլ Իզմիր. նախ առժամաբար ժամանակ մը մնացինք Գայիանէ՝ հորաքրոջս տունը՝ Այ Նիգուա թաղամասին մէջ. հակառակ, որ տուներնին շատ մեծ չէր, մեզ հիւրասիրեցին մեծ սիրով: Մենք, որ ութը հոգիէ բաղկացած էինք, հորաքրոյրս Թագուիի անունով ազնիւ աղջիկ մ'ունէր՝ ամուսնացած պր. Նշան Աճէմեան անուն շատ բարի ու ազնիւ մարդու մը հետ, որ նաւամատոյցի նաւերուն մէջ Քոնյորուլի պաշտօն ունէր. անոնք ալ միասին կը բնակէինք նոյն երդիկին տակ ուրախ գուարթ, մինչեւ որ տուն մը գտանք ու հոն փոխադրուեցանք՝ ոչ շատ հեռու հորաքրոջս բնակարանէն: Մեր ուրախութիւնը սահման չունէր. փոքր էինք ու չէինք զգար հօրս պատասխանատուութեան ահաւորութիւնը. 6 զուակներով հաստատուիլ Իզմիր՝ ապրուստի միակ միջոց ունենալով 150 դեղին ոսկին, որ սրդէն բաւական պակասած էր ամիսներէ ի վեր: Մեծ եղբայրս՝ Ղազարոսը, անճարակ էր, շփացած մեծցած էր. դժուարաւ գործ մը գտաւ նպարավաճառի մը քով. կը յիշեմ՝ շատ կը յոգնէր ու քիչ կը շահէր: Փոքրերը մանկապարտէզ կ'երթային, իսկ ես ազգային Մեսրոպեան վարժարանը¹⁹ սկսայ յաճախել.

¹⁸ *Ամման* (արաբ.՝ عمان), Ռաբբաթ-Ամմոն. Հորդանանի մայրաքաղաքը: 7-9-րդ դարերում արաբական խալիֆայության. իսկ 1516 թվականից մինչև Առաջին աշխարհամարտի ավարտն Օսմանյան պետության կազմի մեջ է եղել:

¹⁹ *Մեսրոպյան վարժարան* (1799-1922). Զմյուռնիայի հայկական առաջին դպրոցը. որտեղ ուսանում էին նաև արտասահմանցի հայ երեխաներ: 1870-1900-ականներին դպրոցն ունեցել է 300-400 աշակերտ. քնդհանուր առմամբ՝ 1500 շրջանավարտ:

ինչ երջանիկ էի, որ նպատակիս հասած էի: Մինչ այդ հայրս որոշ գործ մը չ'եր կրցած հաստատել. ոսկիները երթալէն կը պակսէին, պէտք էր խնայողութեան սկսիլ: Տան վարձքը սուղ էր, պէտք էր աժանը գտնել. նոյն փողոցին վրայ Էօտէմիշցի կին մը, Հաճի Մամա կը կոչուէր, որ Գառնիկ Յովհաննէսեանի հօրաքոյրն էր, իր տան վարի յարկը մեզի վարձեց, կարծեմ տարեկան վեց դեղին ոսկիի, փողոցէն մէկ սանթուռի²⁰ վար է բնակարանը, հոս բաւական տարիներ մնացինք. այս տունը մեր մանկական տարիներու տխուր ու մռայլ շրջանը հանդիսացաւ, որու տխուր պատմականը պիտի գրեմ աւելի վերջը: Հաճի Մարիամը շատ նիւթապաշտ կին մ'էր, ֆալճի²¹ էր, սուրճի գաւաթով մարդոց բախտը կը նայէր. պզտիկ էի, կը յիշեմ՝ մեր բնակարանին վերի յարկը բազմաթիւ աթոռներ շարուած էին, ուր ամեն օր զանազան կողմերէ այցելուներ կու գային, ժամերով կարգի կը սպասէին իրենց բախտը կարդալ տալու համար: Այս կինը շատ դրամ կը շահէր, քանի մը տուներ գնած էր. աղջիկը, որ շատ գեղեցիկ էր, ամուսնացուցած էր դաշնակցական պր. Ստեփան Փափագեանի հետ՝ անոնց տուն մը նուիրելով: Ոնէր երկու մանչեր՝ Թադէոս եւ Յովհաննէս, երկուքն ալ ծոյլ ու դրամ մսխող, տարին հազիւ երկու-երեք ամիս թուզի գործով կը զբաղէին ու ամբողջ տարին պարսպ կը պտտէին: Բանի որ մայրերնին լաւ կը շահէր, պէտք չէին զգար աշխատելու, յաճախ կ'իմանայինք ընտանեկան կոփոներ. դրամ կը պահանջէին իրենց մօրմէն, մագերէն կը քաշէին. երբ մերժէր, իսկ ամուսինը Իսրայէլ անունով նոյնքան ծոյլ ու պարագիտ, ան ալ իր կողմէն կ'օգտուէր կնոջմէն ու չէր աշխատէր: Ես կանոնատու ազգային վարժարանը կը հետեւէի անհուն փափաքով. իրիկունները մինչեւ ուշ ատեն փեթորվի²² լոյսին տակ դասերս կը պատրաստէի, կ'ուզէի ամեն գնով

²⁰ *Սանթուռի*, սանդուղ, սանդուղք:

²¹ *Ֆալճի* (թուրք.՝ *falcı*), գուշակ, բախտագուշակ:

²² *Փկթորուլ*, բենզին, գազոլին:

ուսումն ժամ առաջ լրացնել հորս օգտակար ըլլալու համար: Մեծ եղբայրս թսկապէս շկարողացաւ պէտք եղածին պէս օգտակար ըլլալ հորս, ու ես այդ տարիքէն կը տառապէի՝ տեսնելով ընտանեկան մեր նեղ պայմանները: Հայրս ունէր նաեւ նուագածութեան արհեստ. սանթուր²³ ըսուած գործիքը կը նուագէր, իր խումբը ունէր քանի մը հոգիով. ու յաճախ մօտակայ շրջանները կ'երթային կամ կը հրաւիրուէին հարսանեկան, նշանտուքի կամ զանազան հանդէմներու նուագելու համար: Միշտ բաւական դրամով կը վերադառնար ու այդ միջոցին մեր բոլոր պարտքերը կը վճարէր՝ ըլլայ տան վարձք, ըլլայ նպարավաճառին կամ հացագործին: Հայրս շատ զաւակասէր մարդ էր. երբ ունենար, կ'ուզէր ամեն ինչ գնել, խնայող ու հեռատես չէր, յաճախ իրեն կ'իմացնէի իր սխալը, կ'ըսէի. «Հայրի՛կ, այս օր մտեղէն կերակուր ունինք, ինչո՞ւ ձուկ ալ բերեր ես, լաւ չէր, որ վաղը ծախսէիր այդ դրամը»: Հայրս կը բարկանար, որ այդ տարիքիս իրեն խրատ տալու կ'ելլեմ: Վաղը Աստուած մեծ է՝ կ'ըսէր ու զիս կը յանդիմանէր: Ահա՛ ճիշտ հորս այս սխալ կողմը ինձի դաս մը եղած է, որ ապագային ես ըլլամ հեռատես ու միշտ վաղը խորհող, որ իմ զաւակներս չըլլան դժբախտ ու կարօտ ուրիշի:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

1908-ին էր, որ Թուրքիոյ վարչութիւնը փոխուեցաւ, վար առին զազան Ապտիւլ Համիտ թագաւորը²⁴: Ժէօն թուրքերը յեղափոխական ակտով [շարժում] մը եւ մասնակցութեամբ հայ եւ օտար յեղափոխականներու, տապալեցին կարմիր Սուլթան-

²³ *Սանթուր* (պարսկ.՝ سنتور), բազմալար հարվածային նվագարան: Հին պարսկերենից թարգմանաբար նշանակում է հարյուր լար:

²⁴ *Ապտիւլ Համիտ* (Աբդուլ Համիդ 2-րդ, 1842-1918), Օսմանյան պետության սուլթան (1876-1909):

նի աղտոտ ռեժիմը եւ ստեղծեցին սահմանադրական կարգ ու սարք, բացին բանտերու դռները եւ արձակեցին բոլոր քաղաքական բանտարկեալները. ամեն կողմ խրախճանք կը տիրէր: Բոլոր ժողովուրդները ազատած էին բռնակալ ու անարդար ռեժիմէ: դպրոցին մէջ սկսանք ազգային երգեր սորվիլ, ազատութիւն էր ամեն կողմ, հայերը, նաեւ ուրիշ ազգեր կանոնատր զինուորական ծառայութեան կանչուեցան: Այս թուակասնին էր, որ Էօտէմիշի բարձրաստիճան թուրք սպայ մը՝ հօրս բարեկամ ժամանակին, կը հանդիպի Իզմիրի մէկ թաղամասին մէջ, կը հետաքրքրուի հօրս վիճակով ու երբ կ'իմանայ մեր վատ դրութիւնը, կը փափաքի մեծ եղբօրս՝ սահմանադրական ռեժիմի տակ ոստիկան արձանագրել տալ, ու իսկապէս քիչ ժամանակ վերջ եղբայրս ոստիկան էր թաղի մը ոստիկանատան մէջ: Իսկապէս իրեն ալ շատ կը վայելէր զինուորական հագուստը: Մեր վիճակը սկսաւ մի քիչ բարելաւիլ. ստացած ամսականին մեծ մասը կու տար հօրս, որ իսկապէս ուրախ էր կանոնատր օժանդակ մը ունենալուն: Ժամանակ մը եղբօրս Մանիսա²⁵ քաղաքը դրկեցին պաշտօնով, ուր շուտով հայերու հետ բարեկամութիւն հաստատեց: Օր մը հրամանաւ տուն եկած էր քանի մը օրուայ համար: Զարմանքով իմացանք, որ փափաք ունի ամուսնանալու Մանիսացի Ռնճեան գերդաստանի աղջկան մը հետ: Իսկապէս ոճիր էր մեր այս դրութեան մէջ ամուսնութեան վրայ մտածելն անգամ. նախ պէտք էր մեր այդ վատառողջ ու ցած տունը փոխել, ու եւ այդ փոքր տարիքիս կրակ կտրած բարկութենէս չքաշուեցայ եղբօրս խօսելու, որ անժամանակ էր այդ մտածումը: Նոյնպէս մայրս բաւական խօսելէ ետք համոզուեցաւ թողուլ մէկդի ամուսնութեան որոշումը: Ժամանակ մը վերջը կրկին Իզմիր փոխադրուեցաւ՝ ուրիշ թաղամասի մը մէջ, ուր շատ սիրուած

²⁵ *Մանիսա* (հուն.՝ Μανησα), թարգմանաբար նշանակում է Մագնեսիայի քար: Քաղաքի պատմական անվանումը Մագնեսիա է (Ք.ա. 5-րդ դ.): Մանիսան Օսմանյան պետության կազմի մեջ է մտել 1410 թվականից: 1912 թ. դրությամբ քաղաքում բնակվում էին հույներ, հայեր, հրեաներ, թուրքեր:

էր իբր նոր գաղափարի տէր ու արդարամիտ, սակայն նախկին ռեժիմի պատկանող ոստիկան մը, շիանդուրժելով եղբօրս յաջող վերելքը, նախանձէն գիշեր մը ուզած է եղբօրս կեանքին հետ խաղալ: Չէ յաջողած. եղբայրս իրմէ առաջ ինք քաշած է զէնքը ու վիրաւորած: Այս դէպքէն ետք քաշեցաւ այդ գործէն ու հրաժարականը տուաւ: Ոստիկանութեան մեծ մասը դեռ նախկին ռեժիմի մնացորդներ էին ու հակառակ սահմանադրական կարգերու: Այսպէս ուրեմն, մեր կեանքը կրկին վատացաւ: Տարիները կ'անցնէին, ու ես մեծ եռանդով դպրոցս կը շարունակէի յաջողութեամբ: Ամառուայ արձակուրդներուս թուզի գործին կ'երթայի, շաբաթը 1 դեղին ոսկի կը շահէի. որով հօրս օգտակար կ'ըլլայի եւ թէ իմ դպրոցական պէտքերս կը հոգայի: Ուրախ եմ ըսելու, որ իմ փոքր տարիքէս ծնողքիս օգտակար ըլլալու, տան մէջ մօրս օգնելու, մէկ խօսքով, իմ ձեռքէս եկածը շինուելու ազնիւ գաղափարը շատ զօրաւոր էր մէջս: Ժամանակ մը հայ վաճառականի մը մօտ՝ Գալուստեան-Փափագեան կոչուած, գործի կ'երթայի ամառը՝ եազմայ²⁶ ծալելու. շաբթականս մօտ 15 դրուշի²⁷ ոչինչ գումար մըն էր: Անպայման ամեն շաբաթ դրամս ստանալուս տանը վերաբերեալ որեւէ իրեղէն մը գնած տուն կու գայի, ինչ որ մօրս մեծ ուրախութիւն կը պատճառէր, եւ ես քաջալերուած անելին կ'ընէի: Ու այս ունակութիւնը մէջս զօրացաւ ու մինչեւ այսօր ալ կը շարունակուի: Գալով միւս եղբայրներուս՝ անոնց մէջ այս րնտանեկան գաղափարը այնքան զօրավոր չէր, բայց Փարիզ գալերնէս վերջ փոխուեցան:

Մեր այս կացութեան մէջ ամենէն անելի օգտակար եղաւ Ադանի քոյրս, որ շատ տանտիկին ու աշխատասէր աղջիկ մը եղած էր, կար տորվելով յաջողեցաւ փոքրերու հագուստներ կարել հայ վաճառականներու, ու ես էի, որ կը տանելի կա-

²⁶ *Եազմայ* (թուրք.՝ yazma), ծաղկանկար գլխաշոր:

²⁷ *Դրուշ* (թուրք.՝ gurus), օսմանյան դրամ, հավասար է 40 փարայի. 0.227 ոսկի ֆրանկ:

րուածները ու գանձած դրամով տան ծախսերը կ'ընէի: Աղանին մինչեւ վերջը աշխատեցաւ ու օգտակար եղաւ առանց գանգատելու, մանաւանդ տան բոլոր կարերը ինքը կը կարեր՝ մօրս գործերը թերթեցնելով: Աղանիին այս ազնիւ նկարագիրը մնաց մինչեւ վերջը անփոփոխ, տիպար քոյր մը եղաւ մեր ընտանիքին մէջ, որուն պէտք է բոլորս ալ երախտապարտ մնանք, իր մասին արեւի վերջը պիտի խօսիմ երկարօրէն: Թագուհին բնաւ իրեն չէ նմանած. փոքր եղած ատենը լալով դպրոց կ'երթար, ծոյլ էր, բայց քանի մեծցաւ, փոխուեցաւ: Ղազարոս եղբայրս անգործ էր ու իր պարապ ժամերը զանազան լեզուներ սորվելով կ'անցընէր: Տունը փրոֆեսոր Մարապալեանը կու գար ու ոչինչ վճարումով Անգլերէն կը սորվեցնէր. տոմներնիս դպրոց եղած էր: Բոլորս ալ կը շարուէինք սեղանին շուրջ, իւրաքանչիւրը իր դասերը կը պատրաստէր. ի՛նչ տաք մթնոլորտ կը տիրէր մեր այդ նեղ օրերուն: Դրացիները կը զարմանային ու կը նախանձէին մեր ուսումնասիրութենէն, մինչդէռ մեր սնունդը շատ պակաս էր: Ես լա կը յիշեմ՝ յաճախ մայրս թէ կ'եփէր ու, փոխանակ գաւաթներու, փոս պնակներու մէջ կը լեցնէր ապուրի պէս, ու կտոր մը պանիր, եթէ ըլլար: Ահա այս էր շատ անգամներ մեր գիշերուայ ճաշը. բայց ի՛նչ համակերպութեամբ եւ սիրով կը տանէինք այս կեանքը: Ապագայի յոյսը մեր ամենամեծ բարոյական սնունդն էր. երջանիկ էինք ու կը զգայինք, որ շատ պիտի չտեսէ այս վիճակը: Յաճախ ցորեկը տուն կու գայի դպրոցէն, պատրաստ ոչինչ կ'ըլլար. քանի մը կանաչ պղպեղի թուրշու²⁸ կը հանէի՝ վրան քացախ աղ ընելով մեծ ախորժակով կ'ուտէի ու դպրոցս կ'երթայի: Այս պայմաններու տակ ամեն ջանք կը թափէի շուտ դպրոցս արարտել, որ օգտակար ըլլամ հօրս. հիմա կը հասկնամ, թէ ինչո՞ւ դպրոցներու մէջ ամենէն յաջող աշակերտները ընդհանրապէս աղքատ ու համեստ ընտանիքներու զաւակները կ'ըլլային: Գալով մեր բնակարանին վատառողջ դրութեան՝

²⁸ Թուրշու (թուրք.՝ turşu), թթու:

ցաւով ու յուզումով կը վերոյիշեմ զանոնք: Նախ ըսեմ, որ բնակարանը փողոցի մակերեսէն ոտք մը ցած էր. ծռելով ներս կը մտնէինք: Տակը պարապ չէր, որով խոնաւ էր, մլուկի²⁹ բոյն էր: Գիշերները մայրս կ'ելլէր ու բեթրոլի լոյսով կը հաւաքէր հարիւրաւոր ու լոյսին մէջ կը նետէր. Ինչ ոճիր էր այս կեանքը: Օր մը գործիքով մեծ մուկ մը բռնեցի. սարսափով նշմարեցի, որ մուկին վրայ հազարաւոր սեւ գոյն ոջիլներ կը վխտան: Անմիջապէս վրան բեթրոլ թափեցի ու այրեցի ողջ-ողջ: Արդեօք որքա՞ն մուկեր կային միեւնոյն աղտոտութեամբ, իսկ ամենէն ահաւորը, որ երբեք պիտի չմոռնանամ, ան ալ տան արտաքնոցն էր: Օրուայ մէջ քանի մը անգամներ ահաւոր պէտքի հոտ մը կ'ելլէր, անշնչելի կը դառնար մթնոլորտը, անմիջապէս չորս կողմերը կը բանայինք, որ հոսանք ըլլայ ու հոտը անհետանայ: Անշուշտ ասիկա թերութիւն մըն էր, եւ որուն պատասխանատուն տան տէր Հաճի Մաման էր, բայց այդ նիւթապաշտ ու հրէշ կինը մեր բողոքներուն ականջ չէր կախեր: Արդեօք քանի՞ քանի գիշերներ այդ ահաւոր հոտը մենք շնչեցինք մեր քունին մէջ: Այդ անագնի ու ճիւղ կինը կը նախանձեր մեր ընտանեկան խաղաղ ու ճկլացող երջանիկ կեանքէն ու կարծես մասնաւոր շարութեան համար չէր ուզած մաքրել կամ շինել տալ, հակառակ որ շատ դրամ ունէր: Բայց ի՞նչ մեծ հրաշք. մենք ամբողջ ընտանեօք ողջ մնացինք, մինչդեռ ինքը՝ այդ չար կինը, ամուսնոյն հետ 1915-ի կոտորածի ու արքայի ճամբաներուն վրայ անհետացան անշիրիմ:

Ահա այս նեղ պայմաններուն մէջ եւ կանոնաւոր ազգային Մեսրոպեան վարժարանը կը շարունակէի մեծ եռանդով: Այն օրերու մեր տնօրէնն էր պր. Թովմաս Պոյաճեան³⁰, այդ պատկառելի եւ կարող անձը, որու պաշտօնավարութեան շրջանին Մեսրոպեան վարժարանը իսկապէս մտաւորական իր կատա-

²⁹ Մլուկ, մլակ, փայտօցի:

³⁰ Թովմաս Պոյաճեան. Մեսրոպայան վարժարանի երկարամյա տեսուչ, ֆրանսերէնի, աշխարհագրոյթյան և պատմոյթյան ուսուցիչ:

րելություն հասած էր. ամեն տարի նորանոր շրջանաւարտներ պարծանք ու պատիւ կը բերէին Իզմիրի հայ հասարակութեան ու մտաւորականութեան: Պարոն Պոյաճեան տարիներ վարեց այդ դժուակ գործը, խանդավառ ու աչալուրջ, միշտ խստադէմ, որ պատկառանք կ'ազդէր բոլորին՝ պատրաստելով հայ ազգային ու կրօնական ոգիով պատրաստուած հարիւրաւոր աշակերտներ, թէեւ հոս ժամանակը չէ խօսիլ իր այսօրուայ կեանքի մասին, սակայն քանի յոպէն եկած է, կ'ուզեմ երկու զոյգ խօսիլ իր մասին: Պր. Պոյաճեան Իզմիրի աղետէն ետք մագապուրծ ազատած է ու հաստատուած Սելանիկ: Մօտ 25 տարիներ տնօրինած է այր. Կիւլպէնկեանի անուան ազգային վարժարանը՝ պատրաստելով հարիւրաւոր շրջանաւարտներ, եղած է մեր սիրելի Խ. Հայաստանի ջերմ բարեկամ, սատարած է իր ամբողջ կարողութեամբ 1936-ի եւ 1947-ի ներգաղթի դժուակ գործին ու բազմաթիւ ընտանիքներ փոխադրած է մեր պաշտելի հայրենիքը, նոյնիսկ իր հարազատ աղջիկն ու փեսան ու թոռնիկը, որոնցմէ կանոնաւոր նամակ կը ստանայ: Այժմ այր. Պոյաճեան Փարիզ կը գտնուի իր մանչ զակին մօտ ու իր 80 տարեկանին մէջ տակաւին իր դաստիարակչական պարտականութիւնը կը շարունակէ իբր խորհրդատու եւ պատուոյ նախագահ Բէնսիի աղջկանց վարժարանի վարչութեան մէջ: Ուրախ եմ յայտնելու, որ յաճախ այր. Պոյաճեանը մեզ կը պատուէ իր այցելութեամբ, որով ամբողջ օր մը առիթը կ'ունենանք իմ 4 զաւակներովս վայելելու եւ լսելու մեր վերերան դաստիարակչին անցեալի անոյշ յուշերը ու ներկայի տպաւորութիւնները, հակառակ իր 80 տարիքին՝ պահած է իր ամբողջ յիշողութիւնը եւ դատողութիւնը: Առողջ է. ամեն ինչ կրնայ ուտել, ժամերով կրնայ քալել, իսկապէս նախանձելի ծերութեան շրջան մը կ'անցընէ: Որոշած է ամեն գնով մեկնիլ Հայրենիք իր աղջկան մօտ, այս մտով դիմումներ կատարած է ուր որ պէտք է ու անհամբեր կը սպասէ իր վիզային [այցազիր]:

Գանք դարձեալ մեր տան վատառողջ ու տխուր կեանքին. ունէր 3 սենեակներ, ուր մաքուր օդ չկար: Փոքր էին: Կը զար-

մանամ, թէ ինչպէ՛ս 6 փոքրեր կրնայինք ապրիլ այդ տան մէջ: Աղանի քոյրս միշտ կ'աշխատէր ու փոքրերու հագուստներ կը կարէր: Ես այդ մատաղ տարիքէս զայրոյթ ունէի հարուստներու դէմ, որովհետեւ երբ գործերը կը տանէի, ճամբան կը ծրագրէի գանձելիք դրամովս ընելիք անմիջական գնումները, աղտոտ ու անխիղճ վաճառականը, գործերը քննելով, դրամը վաղը եկու առ կ'ըսէր, կը վախնայի ու կ'ամջնայի ըսելու, որ այդ դրամով հաց եւ ուտելիք պիտի գնեմ, յուսախափ, գլուխս կախ, անէծքս բերնիս, վրէժս սրտիս, տրտում, տխուր՝ տուն կու գայի՝ ձեռներս պարապ: Աղտոտ վաճառականը զգացում չունէր ու չէր զգար չունեցողին վիճակը: Ահա՛ այդ փոքր տարիքէս դէմ եղած եմ հարուստներուն ու նողկանք կը զգամ հարուստներէն: Կ'երդնում իմ ամենասիրելիներուս վրայ, որ եթէ օր մը բախտը ունենամ հարուստ ըլլալու, պիտի յիշեմ իմ մանկական տխուր կեանքս ու պիտի ջանամ ըլլալ համեստ, առաքինի ու բարեկամ զրկուածներուն, ամեն կերպով պիտի ջանամ սփոփել թշուառներու կեանքը:

ՊԱԼՔԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ³¹

1911-1912 թուականին քաղաքական մթնոլորտը վատացաւ. պայքանեան ժողովուրդները խրտումի մէջ էին, հաշի ունէին մաքրելիք թուրքերէն: Թուրք սահմանադրական կառավարութիւնը զօրակոչ յայտարարեց բոլոր հպատակ տարրերէն. հագարաւոր հայեր արդէն զէնքի տակ էին: Եղբայր՝ Ղազարոսը,

³¹ *Պայքանեան պատերազմ*, Բալկանյան երկրներ Սերբիան, Բուլղարիան, Հունաստանը և Չեռնոգորիան 1912 թ. ամռանը ստեղծում են Ծագմական դաշինք՝ նպատակ ունենալով թուրքերին վերջնականապէս դուրս մղելու իրենց տարածաշրջանից: Սկսվում է Բալկանյան առաջին պատերազմն Օսմանյան պետության դէմ (1912 թ. հոկտեմբերի 9-ից 1913 թ. մայիսի 30-ը): Բալկանյան երկրորդ պատերազմի (1913 թ. հունիսի 29-ից հուլիսի 29-ը) նպատակը Բալկանյան առաջին պատերազմում հաղթանակած երկրների տարածքային պահանջների բավարարումն էր:

հակառակ էր զինուորը ըլլալու, դիմեց Ամերիկեան վարժարանի տնօրէն մըսթըր Մախալսընի, որ զինք Մարգուան³² Ամերիկեան Անաթոլիա դպրոցը (College)³³ դրկէ՝ խոստանալով դպրոցին մէջ որոշ ժամեր աշխատիլ իբր ատաղձագործ՝ վճարելու համար իր ուսման ու բնակութեան գինը: Ինչ որ յաջողեցաւ, ու մայրս անմիջապէս Էօտէմիշ գնած իր հօրը տունը ծախելով իր եղբօրը՝ պէտք եղած դրամը տուինք եղբօրս ու ելաւ գնաց Մարգուան: Մեծ եռանդով կ'ուսանէր եղբայրս, յաճախ խանդավառ նամակներ կը ստանայինք, ավիտս, որ 1914-ի Ընդհանուր պատերազմի ահաւոր օրերուն ամբողջ ուսանողութիւնը իր ուսուցչական կազմով արքայրած են դէպի Թուրքիա՝ Ամասիա³⁴, Թորատ³⁵, Սըվազ³⁶: Մինչեւ հոս իրմէ քար-

³² *Մարգուան*, գյուղ պատմական Փոքր Հայքում Սեբաստիայի նահանգի Շապին Գարահիսարի գավառում: Տե՛ս *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 3, 730:

³³ *Ամերիկեան Անաթոլիա դպրոց*, Մարգվանի Անատոլիա քոլեջը (արական) հիմնադրվել է 1886 թ.: Սկզբնական շրջանում տղաներն անցնում են երկու տարվա նախապատրաստական դասընթաց՝ անգլերենի և հիմնական գիտելիքի ուսուցման նպատակով, ապա՝ ուսանում քոլեջի չորսամյա ծրագիրը: Ուսանողները հայեր և հույներ էին: 1893 թ. բազմում է Անատոլիայի Իգական վարժարանը: 1916 թ., երբ թուրքական բանակը գրավում է քոլեջի տարածքը, Անատոլիայի գործունեությունը դադարում է. այն դառնում է հիվանդանոց, որը փակվում է 1919 թ.: Անցնելով Մերձավոր Արևելքի Նպաստամատուցի հոգածության ներքո, ստանձնում է 2 500 որբի խնամակալությունը, մանրամասն տե՛ս *Ինեսս Ստեփանյան*, Անատոլիա քոլեջի պատմությունից, <http://www.genocide-museum.am/arm/17.02.2018-Anatolia-College.php>, դիտվել է՝ 12.11.2022:

³⁴ *Ամասիա*, գավառ Սեբաստիայի նահանգում, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 1, 208:

³⁵ *Թորատ*, գավառ (գավառակ) պատմական Փոքր Հայքում Սեբաստիայի նահանգում, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 2, 484:

³⁶ *Սըվազ*, Սվազ, նահանգ/գավառ պատմական Փոքր Հայքում Սեբաստիայի նահանգում, քաղաք Սեբաստիայի գավառում, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 4, 681:

դեր³⁷ կը ստանայինք, նոյնիսկ դրամ դրկեցինք Եբրանոսեան վաճառատան³⁸ հասցէով, սակայն դրամը ետ եկաւ, ու ինք ու իր հարիւրատը դպրոցական ընկերները հաւանաբար Սըվազէն դուրս անխնայ կտտորուեցան թուրք կառավարութեան հրամանաւ:

Ահա այդ Պալքանեան Պատերազմի օրերուն էր, որ միշտ նոյն տան մէջ կը բնակէինք: Խիստ ձմեռէ մը յետոյ հազիւ գարուն կը մտնէինք, Թագուհին եւ Վարդանը սոսկալի հազ մը ունեցան՝ գուզլիւ³⁹: Ես սարսափով կը տեսնէի հազալու ժամանակ խոշոր դեղին թուրքի կտորներ, որոնք թըքերէն դուրս կ'ելլէին. ոճիրը իր աները գործած էր: Ասոնք առաջին զոհերն էին: Բժիշկը, երբ քննեց, ըսաւ՝ անմիջապէս պէտք է այս ցած տունէն ելլէք, այլապէս կրնայ շատ ծանր հետեւանքներ ունենալ, ջանացէք մօտակայ գիւղերէն բնակարան մը գտնել. միայն մաքուր օդը կրնայ բուժիլ այս հազը: Հայրս անմիջապէս չորս կողմ կ'իյնայ ու, շնորհիւ ծանօթ բարեկամներու, Իզմիրի մօտ Քորտելիօ⁴⁰ ըսուած գիւղէն քանի մը սենեակով տուն մը կը գտնէ: Մեր բոլորին ուրախութիւնը սահման չունէր. օդափոխութեան պիտի երթայինք, մանաւանդ այդ ցած տունէն ի սպառ պիտի հեռանայինք: Երբեք զիւր մը երթալու առիթը մեզ տրուած չէր, որով տան մէջ ցնծութիւն կը

³⁷ *Բարդ*, քարտ:

³⁸ 19-րդ դարավերջին և 20-րդ դարակզբին Ամասիայի առևտրային կյանքում նշանակալից դերակատարություն ունեին Եփրեմ / Իբրանոս Իբրանոսյան (1848-1921) և Մարութե Իբրանոսյան (1856-1920/21) եղբայրները. նրանք սերում էին մի ընտանիքից, որ Ամասիայում արդեն հիմնել էին կերպասագործությունը: Եղբայրները ժառանգում են իրենց ընտանեկան գործը և Օսմանյան պետության մեջ հիմնում վաճառատների հսկայական ցանց: Տե՛ս Աեռնա Գ. Եանըք, *Ամասիա/առևտուր – Իբրանոսյան եղբայրները*, <https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/sivasvilayet/sandjakofamasya/economy/ipranossianbrothers.html>. դիտվել է՝ 22.11.2022:

³⁹ *Գուզլիշ* (ֆրանս.՝ coqueluche), կապույտ հազ:

⁴⁰ *Քորտելիօ*, Կորդելիո. արվարձան Զմյուռնիայում:

տիրեր: Վերջապէս տասը օր վերջ արդէն Գորտելիոյի բնակարանը փոխադրուած էինք: Ամեն կողմ կանաչութիւն: Մենք, որ կանաչութեան կարօտը ունէինք, անյագ կը վայելէինք. չորս կողմ ծաղիկներ, ո՛հ, որքան զրկուած էինք այս մաքուր ու կազդուրիչ օդէն: Կարծես նոր աշխարհ եկած էինք. այնքան մեծ էր մեր ուրախութիւնը, ու հազիւ ամիս մը վերջ արդէն Թագուհին ու Վարդանը բուժուած էին: Այսպէս ուրեմն, մեր կեանքը քիչ մը լաւացաւ, անելին՝ հոգեկան բարելաւում մը ունեցանք: Ես կանոնաւոր դպրոցս կը շարունակէի չափազանց ուրախ, որովհետեւ թրէնով [շոգեկառք]ամեն օր կը ճամբորդէի: 1913 թուին էր, եթէ չեմ սխալիր, մեր տնօրէնը՝ պր.Պոյաճեան, հրաժարեցաւ իր պաշտօնէն՝ անձնական դպրոց մը բանալով, որով ունեցանք տէր եւ տիկին Բարթողեաններ իբր տնօրէն, որոնք, թէեւ շատ ազնիւ ու բարի անձնաւորութիւններ էին, սակայն կազմակերպչական ու դեկավարութեան հմտութիւն չունէին, իրենց պաշտօնավարութեան շրջանին դպրոցին մէջ սկսաւ ազատական ու յեղափոխական շարժում մը, մասնաւորաբար մարզանքի ուսուցիչ պր. Մելիքեանի դէմ, որ անհրաւօրէն ապտակած էր մեր ընկերներէն մին՝ Երուանդ Պուլտուբեան, որ արդէն տկար տղայ մ'էր, ինչ որ իր առողջութիւնը անելի վատացուց: Այս պայքարը մեծ համեմատութիւններ ստացաւ. պոյքօթ ըրած⁴¹ էինք Մելիքեանի դէմ ու միջադէպերը անպակաս էին: Այն ատենաց Վարդապետն էր Ինճեան Սրբազան, որ իրազեկ դպրոցին անցուղարձերուն, յաճախ կու գար վարժարան ու զայրոյթով ու ատելութեամբ կ'արտայայտուէր մեր բողոքող տղոց հետ ու կը սպառնար բոլոր անհնազանդ տղաքը փողոց թափել, եթէ շարունակեն իրենց այս ընթացքը: Ահա՛ այս խառնակ պայմաններուն մէջ էր, որ պր. Բարթողեանները թողուցին իրենց պաշտօնը ու հեռացան: 1913-1914 թուին էր, կը կարծեմ, որ Ինճեան Սրբազան Պոլսէն բերել տուաւ պր.

⁴¹ Պոյքօթ, արգելք կամ բանադրանք:

Գառնիկ Բարունակեան իբր տնօրէն՝ ամսական ստանալով 22 դեղին ոսկի, մինչդեռ պր. Պոյաճեան կը ստանար 8 ոսկի միայն: Ես սոյն տարին եօթներորդ դասարանն էի տարի մը մնացած էր ասարտելու, մեր դասարանը իր ամբողջ կազմով յեղափոխական շարժման պարագլուխներն էին: Պր. Բարունակեան շատ ամբարտաւան ու անազնիւ անձ մ'էր, ուզած էր նորանոր փոփոխութիւններ մտցնել դպրոցին մէջ. ձրի աշակերտներուն թիւը հարիւրէ 80 տոկոսով պակսեցուց: Կը տեսնէինք մայրեր, որոնք հեծկլտանքով կը հեռանային դպրոցէն. որովհետեւ Բարունակեան մերժած էր ձրիօրէն արձանագրել իրենց զաւակները, մինչդեռ ինք կը ստանար մեծ ամսական մը: Մեր դասարանի տղաքը սկսան բողոքներ բարձրացնել չորս կողմ Բարունակեանի անխիղճ ընթացքին դէմ: Օր մը պր. Բարունակեան, որ հագիւ երկու ամսոյ պաշտօնավարութեան վրայ էր, մեր դասարանը այցելեց ու ինքզինքը ներկայացուց ու զանազան ամբարտաւան արտայայտութիւնները ետք ըսաւ. «Տղաք, Պոլսէն մասնաւոր բերուած եմ Մեսրոպեանի մէջ ծայր տուած յեղափոխական շարժումը ամեն գնով խեղդելու, ձեզ կարգի կը հրաւիրեմ, այլապէս բոլորդ ալ կը տուժէք»: Արդէն այս յայտարարութիւնը սկիզբն էր նորանոր շարժումներու: Պայքարը երթալով կը լայննար. միւս դասարաններէն շատ մը համակիրներ մեզ կը միանային. գաղտնի ժողովներ կը գումարէինք, որոշումներ կու տայինք, օրինակ՝ կ'իմանայինք, որ մայիս 2-ին ընդհանուր պտոյտի պիտի մեկնինք առաւօտէն դէպի մօտակայ լեռները: Մենք մեր բոլոր դասարաններու համակիրներով կ'որոշէինք մայիս մէկի օրը տօնել իբր բանուորական պայքարի օր ու կ'երթայինք խումբով ամբողջ օր մը վայելելու. ուր կ'երգէինք ազգային երգեր, կ'արտասանէինք ոտանաւորներ ու խանդավառ ճառեր. անշուշտ պատիժներու կ'ենթարկուէինք յաջորդ օրերուն: Մեր եօթներորդ դասարանը իսկապէս դպրոցին փառքն ու պատինն էր. բոլորս ալ կարող եւ ուշիմ ու աշխատասէր: Բոլոր ուսուցիչներուն հիացմունքին արժանի էինք.

դասերնիս ամեն երեկոյ հաւաքաբար կը պատրաստէինք ու այսպիսով բոլորս ալ կարող աշակերտներ էինք, բայց միեւնոյն ատեն՝ արդարամիտ ու ազատական, պր. Բարունակեանի աչքին փուշն էինք. կ'ուզէր մեզ ստրկացնել ու մեր բողոքողի ոգին մեր հոգիներուն մէջ խեղդել: Տասնհինգ օրը անգամ մը լսարան կը կազմակերպուէր, ուր բարձրագոյն դասարանի աշակերտներ զանազան նիւթերու մասին բանախօսութիւններ կ'ընէին: Պր. Բարունակեան ուզեց մեր խօսելիք նիւթերը սանսիրել⁴² անցընել: Իրիկուն մը այս տեսակ լսարանի մը ընթացքին մեր ընկերներէն Վահան Թէրզեանի մի փոքրիկ շեղումը նիւթէն առիթ տուաւ մեծ իրար անցումի: Բարունակեանի պաշտպան մարզանքի ուսուցիչ պր. Մելիքեան բիրտօրէն ելաւ ու արգիլեց շարունակել մեր ընկերը, որ խօսի: Նոյնիսկ հարուած մըն ալ իջեցուց, եւ ահա սկսաւ իրարանցումը. բառերը օդին մէջ մէկ կողմէ միւսը կը նետուին: Տղաքը կը նետուէն Մելիքեանին վրայ հում-հում ուտելու ահաւոր բարկութեամբ, որովհետեւ այս բոլորը իրմէ ծագում առած էր: Վերջապէս փոթորիկը դադրեցաւ, ու բոլորը հեռացան: Յաջորդ օրը մեր դասարանը փակուած էր Ինճեան Սրբազանի հաւանութեամբ: Ամսավերջի քննութիւնները սկսած էին, դպրոցին 2 դռները կղպուած. 2 տնտեսներ կը հսկէին՝ արգիլելով մուտքը ըմբոստ աշակերտներուն: Օր մը բոլորս, հաւաքուած դրան առջեւ, բռնի ուժով մտանք դպրոցէն ներս՝ ահաւոր իրարանցում մը պատճառելով եւ խանգարելով քննութիւնները: Ինճեան, կրակ կտրած, կը սպառնար բոլորս ուստիկանութեան յանձնել, իսկ մենք կը պահանջէինք քննութիւններուն մասնակցիլ, քանի որ ազգին զաւակներն ենք: Վերջապէս յետադիմական քիչքը⁴³ յաջողեցաւ մեր դասարանը ի սպառ լուծել ու փակել՝ դուրս ձգելով

⁴² *Սանսիր*, գրաբնութօրն:

⁴³ *Քիչք*, հանցավոր, շահադիտական նպատակներով գործող անձանց խումբ, հանցախումբ:

դպրոցին ամենակարող աշակերտները: Մեր ուսուցիչներն էին պր. Ամատեան, Տիվրիկեան, Արծրունի, Մխիթեան, Սիրվառտեանց, Վահրամ Թաթուլ, Պ. Գառնիկ Սարաֆեան, Մեծտուրեան, Պ. Պէրպէրեան, Զ. Զաքարեան: Եւ ուրիշներ, որոնք բոլորն ալ առանց բացառութեան ղեմ էին մեր դասարանի փակման ու մեծ ցաւ գգացին մեր դպրոցէն հեռացման: Ահա՛ այս պայմաններուն մէջ ես, արդէն 18 տարեկան եղած, միւս կողմէ մեր ընտանեկան պայմանները ծանր ըլլալով որոշեցի գործ մը գտնել՝ օգնելու համար հօրս. նաւամատուցի ընկերութեան դիմում կարկատելով⁴⁴ յաջող քննութիւն մը անցուցի եւ ընդունուեցայ իբր պիլորոյի պաշտօնեայ: Ընկերութիւնը, որ ֆրանսական էր, դպրոցական սերթիֆիզայ [վկայական] մը ուզեց ինէ, որ Բարունակեան խուսափեցաւ տալու, քանի որ ըմբոստներէն էի եւ ութ օրը հազիւ պաշտօնավարած էի, ինձ դուրս ըրին, քանի որ ուզուած թուղթը չէի բերած: Իմ բոլոր ընկերներս, կրակ կտրած, որոշեցինք պատժել Բարունակեանը: Եւ ահա Վարդանանցի օրն էր, հանդէս մը կազմակերպուած էր դպրոցին մէջ, հանդէսէն ետք, երբ Բարունակեան մինակը Հայնոցէն⁴⁵ իր տունը կ'երթար, պաշարեցինք քանի մը հոգիով ու, չորս դի պատուիրեցի, փառաւոր տփոց մը քաշեցինք՝ աչքը յօնքը ուռեցնելու աստիճան, թէեւ յետոյ դատարան քաշուեցանք ու շաբաթ մը բանտար-

⁴⁴ *Կարկատել*, շարադրել:

⁴⁵ *Հայնոց*, Զմյոռնիայի հայկական թաղամասը: Այն բաժանված էր լայն, կանոնավոր ու մաքուր փողոցների (կարգ, որ բացակայում էր ամբողջ քաղաքում) և նման էր քառակուսու, որի արևմտյան ծայրում Սր Ստեփանոս տաճարն էր (ճարտարապետ՝ Մելքոն Երամյան)՝ գեղեցիկ գմբեթով և գանձակատնով: Այնտեղ էին գտնվում Առաջնորդարանը, Մխիթարյան վարժարանը, Մեսրոպյան (արական), Հռիփսիմյանց (իգական) և այլ դպրոցներ, ազգային հիվանդանոցը, հայ ընթերցաստունը ևն: Տե՛ս Ապա Գրիգորյան, Վաչիկ Բրուտյան, *Զմյոռնահայ կրթական-մշակութային կյանքի պատմության որվագներ (19-րդ դարի սկզբից մինչև 1922 թ.)* (Երևան, Իրավունք, 2007), 10-11:

1914-Ի ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Հազիւ թէ մօտ վեց ամիս է, որ գործի էի սկսած. ու մեր ընտանեկան դրութիւնը մասամբ բարելաւուած էր ու մեծամեծ յոյսերով կը նայէինք ապագային: Քաղաքական մթնոլորտը սկսաւ մթազնել, ու 1914-ի սեպտեմբերին պարզուեցաւ երկու հսկայ ուժերու դիրքաորոշումներ՝ մէկ կողմէ՝ Անգլիա, Ֆրանսա, Ռուսիա, Սերպիա, Իտալիա ու գանազան փոքր ազգեր, միւս կողմէն՝ Գերմանիա, Աստրիա, Հունգարիա, Պուլկարիա եւ Թուրքիա: Բախումը անխուսափելի էր, եւ իսկապէս Սարաժովայի [Սարանո] մէջ Ավստրիոյ-Հունգարիոյ գահաժառանգին սպանութիւնը պատճառ եղաւ, որ այս կառավարութիւնները մէկը միւսի ետեւէն պատերազմ յայտարարեն իրարու: Գերման էմբերիալիզմը [կայսերապաշտութիւն], դժգոհ իր տնտեսական պաշարուած դրութենէն, կ'ուզէր քանդել սահմանները ու անցնիլ հեռու՝ բաց ծովերու վրայ, իր ծովային ուժերով չափուիլ անգլիական ու ֆրանսական ուժերու դէմ: Ե՛ւ աշխարհը, ե՛ւ մարդկութիւնը ականատես եղան պատերազմներու ամենասարսափելիին. միլիոնաւոր մարդիկ դատապարտուած էին կոտորուիլ ճակատներու վրայ: Հազարաւոր քաղաքներ կը կործանէին ռումբերու տակ, արիւնը կը հոսէր գետերու նման ամբողջ Եւրոպայի մէկ ծայրէն միւսը: Ահա՛ այս ահ ու դողին մէջ թուրք կառավարութիւնը՝ ղեկավարութեամբ հրէշածին թալէաթներու, էնուէրներու եւ բազմաթիւ ժէօն թիրք ղեկավարներու, ժամանակը շատ յարմար գտնելով՝ որոշեցին Հայկական հարցը միայնգամ մէջ տեղէն վերցնել ու, գերմաններուն հաւանութիւնը ստանալով, 1915 ապրիլ 11-24-ին մէկ գիշերուան մէջ ձերբակալեցին Պոլսոյ հայութեան եւ մտաւորականութեան ամենընտիր մասը՝ երեսփոխան, գրագէտ, բժիշկ, փաստաբան, սպայ, ուսուցիչ, ուսանող, մեծահարուստ, մէկ խօսքով՝ հայութեան ամենընտիր հատուածը, ու նոյն օրն իսկ հազարաւոր այս ձերբակալուածները գանազան միջոցներով փոխադրել Թուրքիոյ խորքերը՝ ջարդե-

լու համար: Ծայր տուած էր ընդհանուր տեղահանութիւններ Թուրքիոյ բազմաթիւ շրջաններէն դէպի Արաբիոյ անապատները: Տէր Զօրը ամենանշանաւոր վայրը հանդիսացաւ իբրեւ խաչելութեան վայր. հարիւր հազարաւոր մայրեր, քոյրեր ու մանուկներ ու ծերեր անխնայ կոտորուեցան շրջակայ այլազան ցեղերէ, չէչններէ, քիւրտերէ, դըրլաշներէ, խրիզներէ, որոնք թուրք վատ կառավարութենէն հրահանգ ստացած էին անխնայ ջարդել: Հարիւր հազարաւորներ մեռան անօթութենէ, ծարաւէ, հիւսնադութենէ ու անապատի կիզիչ արեւուն տակ մեռան: Հազարաւորներ՝ տղայ թէ աղջիկ, նետուեցան Եփրատ եւ Տիգրիս գետերու անդունդները՝ չինալու համար թուրքերու ձեռքը: Միշտ հաւատալով Աստուծոյ արդարութեան՝ կը մեռնէին այն յոյսով ու հաւատքով, որ թուրքերը իրենց անդուր պատիժը պիտի գտնէին ուշ կամ կանուխ: Խեղճ հայ ժողովուրդ, դարերով խաբուած էր՝ կարծելով, թէ Աստուած բարի է, քրիստոնէայ է, լուր չունէր, թէ Աստուած թուրք էր, չար էր, դարերով մեզ կոտորել տուաւ ճենկիզներէ, լենկթեմուրներէ, պարսիկներէ, արաբներէ: Հայ ժողովուրդը, փոխանակ իր ուժին, իր գէնքին վրայ յոյս դնելու, իր կրօնքին ու Աստուծոյն վրայ յոյս դրաւ: Մեր կրօնականները դարերով հայ ժողովուրդի փրկութիւն ու աշխարհի խաղաղութիւն երզեցին եկեղեցիներու մէջ՝ փոխանակ ուժը եւ զօրութիւնը նշանաբան ընտրելու: Հայ ժողովուրդը զանազան վայրերու մէջ, ինչպէս՝ Վան, Շապին Գարահիսար, Ուրֆա, Սուէլտիա ու զանազան տեղեր: Թէեւ դիմադրեց թուրք ջարդարարներու ու մեծ վնասներ հասցուց, սակայն մեր ընդհանուր կորուստներուն քով ոչինչ էր մեր ըրածը: Անշուշտ այս ահաւոր կոտորածին ամենամեծ պատասխանատուները մեր յեղափոխական կուսակցութիւններն էին, որոնք, սահմանադրական կեդժ ու խարդախ կարգերէն շփացած, չկրցան զադտնիօրէն հայ ժողովուրդը զինել մինչեւ ակռաները, չկրցան հեռատես ըլլալ ու գիտնալ, թէ դարերով հայ կոտորող թուրքը չէր կրնար մէկ օրէն միառ քաղաքակիրթ դառնալ: Դարեր պէտք էին, որ թուրքի երակներէն

յաւէտ հեռանար մոնկոլեան ջարդարար արինը, ու մենք եղբայրացանք կոլորդէն թուրքերու սահմանադրութեան օրերուն, որոնք մենէ արթուն ու մենէ ճկուն իմացան ու լսեցին մեր ապագայ երագները, մեր քաղաքական ըմբռնումները եւ ահա՛ այս նպատակով օրերուն պատահեցաւ անխուսափելին. թուրքը կերաւ մեզ ու նոյն իսկ մարսեց մեզ առանց մեծ նեղութեան: Ապագայ հայ սերունդները միայն պիտի կրնան չափել այս կոտորածներուն ահաւորութիւնը եւ պիտի պատրաստեն հակահարուած մը լաւ պատրաստուած, որ պէտք է ըլլայ անխնայ. անգութ ու ահաւոր: Կը հաւատամ միայն ուժի Աստուծոյն:

1915-ի այս տխուր օրերուն յաճախ մեր տունը ոստիկան կու գար ու Ղազարոսը կը փնտռէր: Նամակները կը ցուցնէինք՝ Մարգուանէն գրուած, չէին հաւատար: Ռճրագործ թուրքը եղբայրս ու իր հարիւրաւոր ընկերները տարած ջարդած էր ու կու գար մենէ եղբայրս կը փնտռէր իբր փախստական: Ի՛նչ ճիւղալային ծրագիր, ավստ՛ս, որ խափուեցանք: Շատ մը վայրերու մէջ մեր կրօնականներն ալ շատ վատ դեր խաղացին. լուլալով միշտ հարուստներու եւ աղաներու ազդեցութեան տակ՝ հակառակեցան զէնք բարձրացողներու եւ նոյնիսկ թուրք կառավարութեան իմացնելու սպառնալիքներ ըրին, օրինակ՝ Զէյթունը, որ երկար տարիներէ ի վեր անառիկ բերդ մըն էր հայոց ձեռքը, Սիսի կրօնականներու բարոյական ճնշումներու եւ սպառնալիքներու տակ վար դրաւ զէնքերը ու հեռացաւ իր արծիւի բոյնէն. ու անխնայ կոտորուեցան գաղթի ճամբաներուն վրայ՝ անիծելով այն ազգային ու կրօնական մարմինները, որոնք պատճառ եղան իրենց հեռացման. մինչդեռ տարիներով դէմ դրած էին թրքական բանակներուն ու միշտ յաղթական դուրս ելած էին իրենց անառիկ դիրքերուն պատճառաւ:

Ահա՛ այս օրերուն էր, որ ժանտարմ մը մեր տունը եկաւ (կարծեմ 1915 օգոստոսն էր)՝ ձեռքը թուղթով մը, որով թուրք կառավարութիւնը գիտ կը կանչէր զինուորական ծառայութեան քանի մը օրուայ ընթացքին: Հարուածը մեծ էր մէկ ըն-

տանիքին, որովհետև գրեթե ես էի միակ նեցուկը հորս. ի՞նչ պիտի ըլլար փոքրերուն վիճակը: Բայց ժամանակ կորսնցունելու առեն չէր: Աղանին կը սկսի կոնսակի սագ⁴⁹ մը կարել իր բոլոր կազմածներով: Ես կը դիմեմ Օրոզուի տնօրէնին՝ յայտնելով իմ գինուոր ըլլալու պարագան ու կը խնդրեմ, որ գոնէ փոքր եղբայրս՝ Գեղամը, իբր պաշտօնեայ առնեն հաստատութեան մէջ, որպէսզի կարենայ բազմամտամ ընտանիքի մը կենսական պէտքերը հոգալ: Տնօրէնը՝ պր. Frame, ծագումով գերմանացի, կ'ընդունի առաջարկս, ու յաջորդ օրն իսկ Գեղամին, երկար տափատ մը ճարելով, կը ներկայացնեմ տնօրէնութեան, որ կը զետեղէ զինք պիւրոյի մէջ որոշ գործով: Ես ալ հանգիստ սրտով կը ներկայանամ որոշեալ օրը գինուորական հաւաքատեղին: Հայրս ու Աղանին կ'ընկերանան ինծի մինչեւ զազէրն [գորամաս] ու մինչեւ իրիկուն կը մնան մօտս, երեկոյեան հրաժեշտ կ'առնեմ, կը համբուրեմ հորս՝ յանձնարարելով, որ բնաւ հոգ չընէ, թէ շուտով կը վերադառնամ ու կրկին օգտակար կ'ըլլամ իրեն: Հայրս յուզուած էր, աչքերը՝ արցունքով թրջուած. վերջին համբոյրն էր, որ կը ստանայ ինէ, անգամ մ'ալ զիս տեսնելու բախտը չունեցաւ, քանի որ ես 4 տարի վերջը միայն հրաշքով ազատած ետ կրցած էի գալ, ուր արդէն հայրս մեռած էր՝ կարօտը սրտին, միշտ յիշելով իմ անունս:

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՍ ԹՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՆ ՄԷՋ

1915 թուին՝ օգոստոսին, ուրեմն, օր մը Իզմիրի զօրանոցը մնալէ ետք մեզ փոխադրեցին Մանիսա, ուր բախտը ունեցաւ գինուորական արհեստանոցը մտնել իբր վրան եւ գինուորական չանթաներ⁵⁰ կարող: Հոս գտայ իմ գուզէնս [գարմիկ]

⁴⁹ *Կոնսակի սագ*, ուսապարկ:

⁵⁰ *Չանթա* (զվո.), ուսաճամպրով, ուսին կրելու պարկ:

Մկրտիչը, Հաճի Զաքարին տղան, որ թրքացած ու թլփատուած էր՝ քարոզէ գերծ մնալու համար, ինչ որ ինծի բարոյական օժանդակութիւն ունեցաւ՝ զիս ներկայացնելով իբր իր ազգականը իմ մեծերուն:

Հոս մօտ 5 ամիս շատ խաղաղ վիճակ մը ունեցայ. շուտով վրան կարելու գործին տիրացայ ու շատ սիրուած էի մեծերէս, որովհետեւ լաւ կ'աշխատէի: Կանոնաւոր նամակ կը գրէի ու կը ստանայի տունէն: Այս գազէրնին մէջ բազմաթիւ հայեր կային՝ զանազան վայրերէ բերուած, բոլորն ալ զանազան արհեստներով իրենց զինուորական ծառայութիւնը կը կատարէին: Ես իմ արձակուրդի ժամերուս յաճախ Մանիսայի հայոց թաղը կ'երթայի, կը սիրէի մօտենալ հայ բարի ընտանիքներու, հայ նազելի օրիորդներ կը շրջապատէին զիս ու կը պատուէին զանազան կարկանդակներով ու խմիչքներով ու կը հետաքրքրուէին իմ կեանքովս: Ի՞նչ բարի ու սիրուն էին այդ փափկատուն ու ամչկոտ աղջիկները, աչքերնէն սէր ու գուրգուրանք կը հոսէր, ծարաւի էի այդ հայեացքներուն ու իմ միակ հաճոյքս էր անոնց հետ շաղակրատել: Շատ անգամներ գործէս ետք Մանիսայի կայարանը կ'երթայի տեսնելու համար հայ քարոզականները, որոնք զանազան քաղաքներէ անվերջ կու գային մասնաւոր թրէներով [շոգեկառք] ու կը մեկնէին դէպի Պոզանթի⁵¹, որ վերջին կայարանն էր եւ որ կը տեւէ 4 օր: Ահաւոր էր տեսարանը. թրէները լեցուն էին իրար վրայ՝ օրօրոցներ շինուած վակոններու մէջ, լաց, աղաչանք, ջուր կ'ուզէին, ուտելիք կ'ուզէին: Արգիլուած էր թրէներէն վար իջնել. սուլիսաւոր զինուորներ կը հսկէին աչալուրջ: Միայն պատուհաններէն կրնային գնումներ ընել սուղ գինե-

⁵¹ Պոզանթի, ավան (քաղաք), իջևան Անոնային Կիլիկիայում Ադանայի նահանգի Ադանայի գավառում Ադանա քաղաքից 60 կմ հյուսիս արևմուտք: Հայտնի է հռոմեական և բյուզանդական ժամանակներից Պոզանդոս անունով, կարևոր հանգույց Փոքր Ասիայի և Ասորիքի միջև: 19-րդ դարի վերջին ուներ 500 բնակիչ, որոնց մի մասը՝ հայեր. *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 4, 350:

րով: Սիրտս արինն կու լար. ոչինչ կրնայի ընել: Թրքական գինտոր էի, անմիջապէս կրնայի նշմարուիլ: Բնաւ պիտի չկրնամ մոռնալ իմ հարազատ հայրենակիցներու անձկագին ու սարսափելի դէմքերը, որոնք գիտակից իրենց սպասուած վաղուայ անողորմ ճակատագրին, լուռ ու մունջ կը մեկնէին՝ միայն յոյսերնին դնելով Աստուծոյ ողորմութեան ու հրաշքին: Ափսոս, շատ ուշ էր. հայ ժողովուրդը խաղը կորսնցուցած էր, ունէր ո՛չ մի տէր ու տիրական: Անգլիա, Ֆրանսա, Ամերիկա ոչինչ ըրին դադրեցնելու համար այս զանգուածային տեղահանութիւններն ու անլուր կոտորածները, եւ զազան թուրք կառավարութիւնը, քաջալերուած մեծ ազգերու դաւադիր լռութենէն, սանձարձակ, առանց խղճի խայթ ունենալու, գործեց ոճիրներու ամենատուկային՝ անլուր ցարդելով մէկուկէս միլիոն անմեղ մայրեր, քոյրեր, մանուկներ ու ծերեր, իսկ զօրակոչի ենթարկուած քսան տարեկանէն մինչեւ 45 տարեկան հայ զօրքերը զատելով կռուի բանակներէն՝ գործածեց ճամբաներու եւ թունելներու շինութեան ծանր աշխատանքին, ու մաս մըն ալ կոտորեց իբր անվստահելի ու դաւադիրներ: Այսպէս ուրեմն, Մանիսայէն անցան ու գացին բազմահազար հայեր ու յաււտ կորան: Շաքաթներ, ամիսներ տեւեց այս առաքումները: Պարպուեցան Այտընի նահանգի⁵² շէն ու ծաղկող հայաշատ քաղաքները՝ թողելով տուն, արտ, այգի ու ամեն ինչ, ու մեր բարի եւ մարդասէր Աստուածը կոյր կտրած էր՝ չտեսնելով ու չպատժելով ցեղասպան թուրք ոճրագործները, իսկ ես ամեն անգամ, որ այդ սրտաճմիկ մեկնումի տեսարաններուն ներկայ կ'ըլլայի, մէջէն անզուսպ փափաք մը կը զգայի միանալու մեկնողներուն, տեսնելու համար ամեն ինչ, որ կը կատարուէր մեր աչքերէն հեռու՝ Թուրքիոյ հեռաւոր անկիւններուն, թուրք ցարդարարներու ձեռքով:

⁵² Այտըն, Այդին, գյուղ Արևմտյան Հայաստանում, Արդվինի շրջանում, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, 229:

ԻՄ ԱՔՍՈՐԻ ՄԵԿՆՈՒՄԸ

1916 թուի յունուար մէկի մռայլ առաւօտն էր. բարակ անձրեւ մը կ'իյնար երկինքէն, կարծէս սուգի օր մըն էր. ամեն կողմ լռութիւն կը տիրէր, դեռ զօրանցը չէր արթնցած: Կարծեմ կիրակի էր, անկողնիս մէջ ծրագիրներ կը պատրաստէի կէսօրէն ետք հայոց թաղը երթալու եւ հիւրասէր հայ բարի ընտանիքներու տաք մթնոլորտին մէջ քանի մը ժամեր անցընելու նպատակաւ: Յանկարծ կը լսեմ փողին ձայնը, որ կ'իմացնէր ընդհանուր զինուորներու հաւաքումը զօրանցի բակին մէջ: Անակնկալ էր այս հաւաքոյթը: Ես անմիջապէս կռահեցի, թէ չարագուշակ դէպք մը կար հաղորդելիք: Իսկոյն կը հագուիմ ու կը նետուիմ բակ, ուր արդէն սկսած էին հաւաքուիլ բոլոր արհեստաւոր զինուորները՝ հայ, յոյն, հրեայ, թուրք եւ ուրիշներ: Սպաները մեզ շարեցին չորս երկար գծերու վրայ: Մօտ 500 հոգի էինք: Խոր լռութիւն կը տիրէր, եւ ակա ընդհանուր հրամանատարը, դուրս գալով իր սենեակէն, կը մօտենայ շատ տխուր եւ մռայլ դէմքով մը մեր մօտը ու կը յայտարարէ հետեւեալը. «Սիրելի վաթանտաշ»⁵³ հայեր, այս առաւօտ Պոլսէն հրահանք ստացած եմ, որով ինձ կը պահանջուի անմիջապէս զօրանցիս բոլոր հայ արհեստաւոր զօրքերը զատել եւ ուղարկել Պոզանթի, հակառակ որ ձեր բոլորէն ալ գոհ եմ իբր վարպետ արհեստաւորներ, սակայն ստիպուած եմ հրամանը գործադրել: Ուրեմն ձեզ ժամ մը կու տամ պատրաստուելու, Աստուած հետերնիդ ըլլայ, ձեզ բարի ճանապարհ»:

Հոգիս թունդ էլաւ, փափաքս իրականացաւ. պիտի անցնէի այն ճանապարհներէն, ուրկէ կ'անցնէին հարիւր հազարաւորներ, պիտի տեսնէի իմ աչքերովս այն, ինչ որ կը կատարուէր աչքերէ հեռու, հեռաւոր վայրերու մէջ: Արդէն ժամ մը վերջը պատրաստ էինք բոլորս: Մօտ 150 հայեր ամեն տարիքի ու հասակի: Մեզ բաժնեցին ձիթապտուղ, չամիչ, երկ-երկու

⁵³ *Վաթանտաշ* (թուրք.՝ vatandaş). քաղաքացի, հայրենակից, համերկրացի:

կլոր հաց ու մեզ շարեցին երկ-երկու հոգի: Ահա՛ այս պահուն էր, որ իմ գումարտակիս սպան, մօտենալով ինձի, ըսաւ. «Օսնի՛կ, տղա՛ս, գիտե՞ս, որ կը մեկնիս չվերադառնալու պայմանաւ: Կը ցաւիմ քեզի, կը փափաքիմ օգտակար ըլլալ, եթէ թրքանալու որոշում մը տաս, կրնամ անմիջապէս քեզ բաժնել խումբէն: Լաւ խորհէ: Յետոյ պիտի գոջաս: Տե՛ս, քուզէնդ չի մեկնիր՝ թրքացած ըլլալուն համար»: Անմիջապէս կը պատասխանեմ ըսելով. «Շնորհակա՛լ եմ, սակայն չեմ ուզեր բաժնուիլ իմ խումբէս, քանի ամբողջն ալ կը մեկնին, պատճառ մը չկայ, որ ես հոս մնամ, միայն եթէ կ’ուզես օգտակար ըլլալ, քիչ մը դրամ տուր եւ քուզենէս կը ստանաս»: Հանկեց քսան դրուշ արծաթ դրամ տուաւ, եւ արդէն խումբը կայարան մեկնելու սկսաւ: Հրաժեշտ առի թուրք սպայէն, որ, զարմացած իմ մերժումէս, «Աստուած հետդ ըլլայ» ըսելով՝ հեռացաւ: Կայարան հասնելուս մեզ զետեղեցին վակոններուն մէջ ու սուինաւոր պահակներ դրին մուտքերուն առջեւ: Մանիսայի կայարանը եկած էին մեզ ողջերթ⁵⁴ մաղթելու բազմաթիւ հայ կիներ եւ օրիորդներ, որոնք արցունքոտ աչքերով մեզ զանազան ուտելիքներ եւ պտուղներ բաժնեցին: Վերջապէս հրաժեշտի ժամը հնչեց: Տխուր պահ մըն էր: Կառախումբը սկսաւ շարժիլ, թաշկինակներ սկսան շարժիլ: Այս բոպէին իսկապէս յուզումս անկարագրելի էր: Կը թողէինք ծնողք, քոյր-եղբայր, սիրելիներ ու Մանիսայի այնքան բարի եւ համեստ հայ ընտանիքներ եւ սիրասուն ամչկոտ օրիորդներ, որոնց հետ վիճաբանելու եւ շաղակրատելու առիթը ի սպառ կորսուած էր ինձ համար: Բաւական ժամանակ զամուած մնացի նստած տեղս: Բոլոր սիրելիներս սինեմայի⁵⁵ ժապաւէնի նման կ’անցնէին աչքիս առջեւէն: Խօսելու տրամադրութիւն չունէի, կը զգայի, որ կ’երթանք՝ ա՛լ չվերադառնալու յոյսով, մէկ խօսքով՝ արքորի ճամբան

⁵⁴ *Ողջերթ*, որնէ տեղ ճանապարհելու բարեմաղթություն՝ բարի երթ, բարի ճանապարհ: Տե՛ս Էդուարդ Աղայան, *Արդի հայերէնի բացատրական բառարան*, հ. 2 (Երևան, Հայաստան, 1976), 1133:

⁵⁵ *Սինեմա*, կինո:

քոնսաձ էինք: Քանի հեռացանք, տրամադրությունները փոխուեցան, ազգային երգերը սկսան լսուիլ բոլոր վակոններէն: Եղբայրական մթնոլորտ մը սկսաւ տիրել վակոններուն մէջ, հաւաքական գաղափար մը ստեղծուեցաւ մեր մէջ. ունեցողը չունեցողին պաշտպան եղաւ, ու այսպէս, անցնելով Ուշաք⁵⁶, Աֆիոն Քարահիսար⁵⁷, Քոնիա⁵⁸, Քարաման⁵⁹, Էրեկլի⁶⁰ ու շատ մը ուրիշ քաղաքներ, չորս օրէն հասանք Պոզանթի ըսուած ամենավերջին կայարանը: Հոս մեր սուինաւոր պահակները մեզ յանձնեցին տեղւոյն զինուորական հրամանատարութեան: Մեզ գետեղեցին զինուորական շէնքի մը մէջ ու մեզ կերակրեցին: Չմոռնամ ըսելու, որ Պոզանթի շրջապատուած է անտառներով, շատ գեղեցիկ տեսարաններ ունի: Այս շրջակայ անտառներուն մէջ իմացանք, որ հազարաւոր հայեր կոտորուած են, հոս էր նաեւ թրքական բանակներու վերջին հանգրուանը, ուրկէ անդին ստիպուած էին ոտքով ճամբորդել դէպի Իսլահիէ⁶¹ ու Հալէպ: Յաջորդ առաւօտուն մեզ դուրս հա-

⁵⁶ *Ուշաք* (թուրք.՝ Uşak), քաղաք Քյոթահիայում (Կուտինա): Ուշաքը հայտնի էր գորգերով և ցորենի հարուստ դաշտերով: Ուշաքի հայերը գաղթել են «Քայը Պազարը» վայրից: 1894 թ. հրդեհի հետևանքով քաղաքի մի քանի ընդարձակ թաղեր և շուկան ավերվում են, այդ թվում՝ զավաթի հայկական բնակավայրերը: Քաղաքի ընդամենը 18 տուն է փրկվում: Քարաշեն եկեղեցին (1835), Առաջնորդարանը և դպրոցը հրկիզվում են, 20 ընտանիք հարկադրված հեռանում է մերձակա քաղաքները: Տե՛ս Ուշազ եւ Ուշագի հայերը, Հանդէս ամսօրեայ (Վիեննա, 1898), հատոր ԺԲ, թիւ 7, 206-208:

⁵⁷ *Աֆիոն Քարահիսար* (թուրք.՝ Afyonkarahisar), քաղաք Օսմանյան պետության Բուրսայի նահանգում:

⁵⁸ *Քոնիա* (թուրք.՝ Konya), քաղաք Օսմանյան պետության համանուն նահանգում:

⁵⁹ *Քարաման* (թուրք.՝ Karaman), քաղաք Օսմանյան պետության Բոնիայի նահանգում:

⁶⁰ *Էրեկլի* (թուրք.՝ Ereğli), քաղաք Օսմանյան պետության Բոնիայի նահանգում:

⁶¹ *Իսլահիէ*, զավաթակ Կիլիկիայի հյուսիսարևելյան հատվածում Ջևրեկ Բերեքեթի զավառում: Կենտրոնն Իսլահիէ ավանն է: 19-րդ դարավերջին ունեցել է 68 գյուղ՝ շուրջ 16 000 բնակչով, այդ թվում հայեր, որոնք 1909-ին և

Նեցին ու, կարգի դնելով վրանիս գրուինիս, խուզարկելով հա-
աքեցին բոլոր ածելի, մկրատ, զմելի⁶² ու որեւէ վտանգատր
գործիք, որ ունէինք մեր ծրարներուն մէջ, ու մեզ հաց ու ձի-
թապառուղ բաժնելով՝ ճամբայ հանեցին քանի մը պահակ զի-
նոտրներով դէպի երկրին ներսը: Իրաքանչիւրս իր բեռը
ունէր կոնակին ու պէտք էինք քալել հաւաքաբար: Պէտք չէր
հեռանայինք մեր խումբէն: Ունէինք նուագածոներ, որոնք
իրենց գործիքները միասին բերած էին, ու ամբողջ ճամբուն
երկայնքին գրեթէ զանազան հայկական ու թրքական երգեր
երգելով՝ կը յառաջանայինք: Յունուար 5 է: Սաստիկ ցուրտ
կ'ընէր, բայց որովհետեւ միշտ կը քալէինք, ցուրտը չէինք
զգար: Օրուան ընթացքին քանի մը անգամներ դադար առնե-
լով՝ կը հանգչէինք ճամբու եզերքին, մասնաւորաբար ջուր
զտնուած վայրերուն, ուր ծարանիս կը յագեցնէինք՝ կուշտ ու
կուռ⁶³ խմելով պաղ ջուրէն: Այսպէս, ուրեմն, մինչեւ իրիկուայ
ուշ ատեն քալելով՝ կանգ առինք ճամբու եզերքին լքուած տան
մը առջեւ, ուր պէտք էինք գիշերել: Ո՛չ դուռ եւ ո՛չ պատուհան
ունէր. դուրսը սաստիկ ցուրտ էր եւ մշուշ: Տղաքը խուժեցին
տունէն ներս ու ամեն մէկը հագիւ նստելու տեղ մը կըրցաւ
ունենալ: Ինչպէ՞ս կարելի էր 150 հոգի զետեղել տան մը մէջ:
Նոյն իսկ տան մտանններուն մէջ ամեն մէկը տեղ մը կ'ուզէր
ունենալ. հակառակ սոսկալի յոգնած ըլլալու՝ աչքերս չէի
կրնար զոցել: Ահաւոր մթնոթին կը տիրէր տան մէջ ու դուրսը:
Գայլերու եւ բուերու ձայնը սոսկում կը ազդէր բոլորիս վրայ:
Ժամէ՛ ժամ կը սպասէինք թուրք գիւղացիներու յարձակումը.
ահաւոր էր մեր առաջին գիշերը: Առտուն կանուխ դուրս թա-
փեցանք՝ հագուստնիս ճնոթկած, ոտքերնիս թմրած: Վերջա-
պէս քիչ մը մաքրուելէ ու պատահ մը ուտելէ ետք ճամբայ ին-

1915-ին կոտորվել կամ տարագրվել են, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 2, 539:

⁶² *Զմելի*, գրպանի փոքրիկ դանակ, գրչահատ:

⁶³ *Կուշտ ու կուռ*, լավ կշտացած՝ հագեցած, լիացած:

կանք: Սաստիկ ցուրտ էր, գետինը սառած, յաճախ կը սահէինք ու կ'իյնայինք: Այսպէս քանի մ'օր քալելէ ետք հասանք Իսլահիէ ըսուած քաղաքը: Մեզ փոխադրեցին մեծ շէնք մը՝ հոն գիշերելու համար: Շէնքը լուսաւորուած էր աղօտ լոյսերով: ճաշերնէս ետք, երբ երկնցած էի խսիրներու վրայ՝ հանգիստ ընելու, ի՞նչ տեսնեմ. մեր Էօտէմիշցի Հաճի Մերգիսին տղան ու մանաւանդ իմ դաշնակցական ընկերս՝ Յովհաննէս Յովհաննէսեանը կամաց մը եկաւ ու քովս նստաւ: Շուարած կը զարմանայի, թէ ուրկէ՞ ուր այս կողմերը ինկած է: Պատմեց, թէ իբր դաշնակցական ձերբակալուած է իր ամբողջ ընկերներով, թէ առայժմ կը մնան մեր շէնքէն քիչ մը հեռու վրաններու տակ իբր քաղաքական դատապարտուածներ, ու չեն գիտեր, թէ ի՞նչ պիտի պատահի իրենց, ըսաւ, թէ նիւթական ահաւոր դրոյթեան մատնուած են, թէ հիւանդներ կան մէջերնին: Ամիջապէս կ'ելլեմ մեր բոլոր ընկերներէն, քանի մը հարիւր դրուշ կը հաւաքեմ ու կու տամ մեր սիրելի Յովհաննէսին, որուն դէմքին վրայ կը նշմարեմ հոգեկան մեծ հրճուանք մը: Գոհ էր այս նիւթական արդիւնքէն, քանի որ մեր ալ սպազան մութ էր. գուցէ մենք ալ վաղը նոյն վիճակին պիտի ենթարկուէինք: Ամբողջ գիշերը չէի կրցած քնանալ, կ'ուզէի ժամ մը առաջ երթալ տեսնել իմ ընկերներս: Առաւօտուն կանուխ սափոր մը ուսս առած, ջուր բերելու պատրուակով՝ պահակ գինուորէն հրաման կ'առնեմ ու, վազելով դէպի աղբիւրը, կը նշմարեմ սեւ վրանները: Արագ մը կը մօտենամ առաջին վրանին ու ներս կը մտնեմ անասիման կարօտով: Հոն կը գտնեմ մեր սիրելի ընկերներէն Թոքաճեան, Բ. Միլտոնեան, Միլքի, Յովհաննէսեան եւ շատ մը ուրիշ ընկերներ, որոնց անունը չեմ յիշեր: Տեսարանը ահաւոր էր, ու մթնոլորտը՝ անշնչելի: Տղաքը բոլորն ալ մօրուքնին ձգած, ոջիլները կը վխտային մօրուքնին մէջ, նիհարցած ու հոգեկան շատ վատ դրոյթեան մէջ: Յուզումէս չէի կրնար խօսիլ: Ջանք ըրի յուզումս բռնել ու գիրենք քաջալերեցի՝ յայտնելով, թէ շուտով քաղաքական դէպքերը կը փոխուին, ու իրենք ետ կը վերադառնան ողջ առողջ ու անմի-

ջապէս հրաժեշտ կ'առնեմ ու, սափորս լեցուն, մեր բնակած շէնքը կու գամ: Ամբողջ իմ արքայի ընթացքիս չէի կրցած մոռնալ այդ խոշոր ոջիլներու ահաւոր պարը իմ ընկերներուս մօրուքներուն վրայ: Ինչ կրնային ընել խեղճերը, քանի ո՛չ օճառ, ո՛չ ածելի եւ ո՛չ մկրատ ունէին: Յաջորդ օրն իսկ մեզ ճամբայ կը հանեն, ու քանի մ'օր հոս քալելէ ետք իրիկուն մը կանգ կ'առնենք Ռաճօ⁶⁴ ըսուած քրտական գիւղ մը: Քիւրտերը կու գան մեզ կը շրջապատեն՝ բերելով ուտելիք, պտուղ, լաւաշ եւ զանազան ուտելիքներ՝ փոխարէնը ստանալով զանազան հագուստներ, թաշկինակ, շալ, շապիկ, գուլպայ եւ զանազան զարդեր, որ ունէինք մեր քով: Քիւրտերը շատ գեղեցիկ, արթուն, ուշիմ նայուածքներով ժողովուրդ են, կիները՝ նազելի եւ դէմքերնին բաց. հաւանաբար իրենց նախնիքը հայեր եղած են: Այն աստիճան մօտիկ էին մեզի ու բարեացակամ մեր պահակ ուստիկանները մեզ յանձնեցին տեղոյն զինուորական հրամանատարին, որ իսկապէս բարի վարմունք ունեցաւ մեզ հետ ու ըսաւ. «Զաւակներս, դուք բոլորդ ալ հոս իմ մօտս պիտի մնաք ու իմ հրամանիս տակ ճամբայ պիտի շինէք: Կը յուսամ գոհ պիտի մնաք, ու կրնամ ձեզ վստահեցնել, որ ձեր կեանքին ոչ մէկ վտանգ կը սպառնայ»: Ու անմիջապէս զիւղին կողքին վրանները շարեցինք ու տասնական հոգիով վրաններու մէջ բաժնուեցանք ու չոր խոտերով մեր անկողինները պատրաստեցինք: Մոռցայ ըսելու, որ, դեռ Ռաճօ չհասած, Հասան Պէյլիք⁶⁵ կոչուած քաղաքէն կ'անցնէինք, յուզումով տեսայ դիմացը՝ լեռան կողքին, հայկական գիւղը՝ իր եկեղեցիով, որուն զանգակատունը քանդուած էր, իսկ ժողովուրդն ալ՝ արքայութեամբ ու ջարդութեամբ, զայրոյթով իմացանք, որ տեղ-

⁶⁴ Ռաճօ, բնակավայր Օսմանյան պետության Ադանայի նահանգում, այժմ Սիրիայի տարածքում է, սահմանակից է Թուրքիային: 2018 թվականից թուրքերի վերահսկողության ներքո է:

⁶⁵ Հասան Պէյլիք (թուրք.՝ Hasanbeyli), շրջան Օսմանյան պետության Ադանա նահանգում:

ւոյն կառավարիչը քանի մը գեղեցիկ ու մատղաշ հայ աղջիկներ կը պահէր իր հարեմին մէջ, ուրկէ հեռացանք՝ արցունքը աչքիս, վրէժը սրտիս:

Ուրեմն, Ռաճօ հասնելու յաջորդ օրը ես մատակարարի Պէօյիք էմինի⁶⁶ պաշտօնը ունեցայ՝ լաւ թրքերէն գրել կարողալ գիտնալու առիթով: Գործս ցանկերը շինել ու մնունդի մատակարար սպային յանձնել էր ամեն առաւօտ, հիւանդները բժիշկին տանել ու այլ եւ այլ գրական գործեր էր: Գոհ էի, գործս ծանր չէր. առաւօտները վրանները կ'այցելէի ու տկարներուն ու հիւանդներուն անունները կ'առնէի, յաճախ գրեթէ ամեն օր մէկ երկու մեռածներ կ'ունենայինք վրաններուն տակ: Տեղերնիս ցուրտ էր, մանաւանդ ձմռան ամենասաստիկ օրերն էին: Մնունդնիս յաճախ պուրդուրէ ապուր կամ փիլաւ էր, երբեմն ալ միս կ'ունենայինք: Մէջերնիս կրօնական արարողութիւն գիտցողներ ալ ունէինք, որով մեռեալները պատշաճ կերպով կը թաղէինք: Հրամանատարը շատ բարի էր ու ազնիւ, կարծեմ ծագումով քիւրտ էր: Մեր տղաքը կանոնաւոր կ'աշխատէին, ու ճամբան կանոնաւոր կը շինուէր, ոմանք քար կը կոտրէին, ուրիշներ հող կը կրէին:

Վերջապէս իւրաքանչիւր մարդ իր կարողութիւնը ի սպաս կը դնէր գոհ ձգելու համար հրամանատարը: Այսպէս քանի մը ամիսներ կանոնաւոր պաշտօնս վարելէ ետք կարգը ինծի եկաւ հիւանդանալու: Օր մը կ'արթնամ սաստիկ գլխուցաւով, տաքութիւն ունէի, լեզուս ճերմակ, ախորժակ չունէի: Բժիշկը լուծողական տուաւ, այդ լուծողականը քանդէց զիս: Ահաւոր փորհարութիւն մը, որ օրերով դադար չունեցաւ. սաստիկօրէն տկարացայ, այն աստիճան, որ բժիշկը պէտք տեսաւ զիս դրկել Հալէպ՝ զինուորական հիւանդանոցը: Ռաճոյի կայարանը մօտ 2 քիլոմէթր էր: Իմ ամենանկեղծ ու հաւատարիմ ընկերս, որ մեր Մանիսայէն մեկնելէն մինչեւ այսօր մնացած էր անկեղծ, եւ որ կը կոչուէր Քարամանցի Սարգիս

⁶⁶ Պէօյիք էմին (թուրք. Bıyık emir), ավագ սպասավոր:

աղայ, անմիջապէս տողոցմէ դրամ հաւաքեց ու գրայանս դրաւ: Ես անկարող էի քալելու. գնաց էշ մը վարձեց քիւրտերէն, ու զիս վրան նստեցուցին ու Սարգիս աղան զիս մինչեւ կայարանն քովէն քալելով տարաւ յանձնեց զհնուորական սպային: Չմոռնամ ըսելու, որ ճամբան ծուռ ու մոռ ըլլալուն՝ քանի մը անգամ էշէն վար գլտորեցայ, որովհետեւ ինքզինքս բռնելու ուժ չունէի: Վերջապէս, թրէնը եկաւ, ու զիս հիւանդներով լեցուն վակոն մը դրին. ամեն կայարան կը վազէի պէտքարան. փորհարութիւնս դադար չունէր, ալ ծունկերուս վրայ ուժ չէր մնացեր: Այսպէս բաւական ժամանակ ճամբորդելէ ետք՝ վերջապէս հասանք Հալէպ, որ շատ ընդարձակ քաղաք մըն էր: Պահակները մեզ՝ հիւանդներս, որ մօտ յիսուն հոգի էինք, ճամբայ հանեցին դէպի կեդրոնական հիւանդանոցը: Ստիպուած էինք քալել. ուրիշ միջոց չկար: ճամբան քանի մը անգամ պատի մը տակ ստիպուած էի պէտք ընել, թէեւ բան չէի ունենար, յետոյ յայտնի եղաւ, որ տեզանթրի⁶⁷ էր ունեցածս: ճամբան մէջ մըն ալ ֆրանսական սէօրեր⁶⁸ կը մտնեն մեր շարքերը ու իբր մարդասիրութիւն կը սկսին դրամ բաժնել առանց յայտնի ընելու: Երբ կարգը ինծի եկաւ, իբր շնորհակալութիւն, «մերսի մա սէօր»⁶⁹ ըսի, սարսուռ մը ունեցաւ սէօրը եւ, զգալով, որ քրիստոնէայ եմ, դարձաւ գնաց ու անգամ մըն ալ քովէն անցաւ ու առանց յայտնի ընելու քանի մը դրուշ եւս տուաւ: Որքան ուրախ էի: Կ'անցնէինք շուկաէ մը, խանութի մը առջեւ կը տեսնեմ մեծ ամաններով մածոն: Ներսս կ'այրէր, ծարաւ էի, կու տամ դրուշ մը եւ բաւական մեծկակ⁷⁰ թաս մը մածոն կու կու տամ: Այսպէս բաւական ժամանակ կամաց կամաց քալելով կը հասնինք կեդրոնական հիւանդանոցը, որ բլուրի

⁶⁷ *Shquanթրի*, դիզենտերիա, հաստ աղու ախտահարմամբ ուղեկցվող սուր կամ խրոնիկական կրկնվող վարակիչ հիվանդություն:

⁶⁸ *Սէօր* (ֆրանս.՝ *sœur*), քույր:

⁶⁹ *Մերսի մա սէօր* (ֆրանս.՝ *merci ma sœur*), շնորհակալություն, իմ քույր:

⁷⁰ *Մեծկակ*, բավական մեծ:

մը վրայ շինուած հսկայ հաստատոյթին մըն էր՝ բազմաթիւ հսկայ սրահներով: Այն օրը ստիպուած էինք բացօթեայ գիշերել, որովհետեւ ուշ էր, հնարաւորութիւն չկար ներս ընդունիլ, արդէն մենք առաջ ուրիշ վայրերէ բազմաթիւ հիւանդներ եկած, տեղ գրաւած էին մօտակայ դաշտերուն մէջ: Իմ փոքրահարութիւնս դադար չունէր. ժամը անգամ մը պէտքը կը զգայի, ու այսպէս, մինչեւ լոյս աչքերս չփակած, կարգով կը ներկայանանք հիւանդանոցի մուտքի դրան, ուր մեզ տուէ՛⁷¹ մը անցընելով՝ կը փոխադրեն սրահ մը՝ յիսուն անկողինով, գրեթէ լեցուն հիւանդներով: Երբ անկողինս կը մտնեմ, սոսկումով կը տեսնեմ, թէ երկու կողմերուս հիւանդները մեռած են, ու վրանին սաւան մը ծածկուած: Քանի մը հատ եւս դիմացի կարգին վրայ մեռածներ կային, ու դեռ մեռածները վերցնելու ժամանակ չէին ունեցած: Այլ կրնա՞ք երեւակայել իմ հոգեկան ահաւոր դրութիւնս: Ես, որ չափազանց յոգնած ու տխուր էի, կը զգայի, որ կարգը ինծի պիտի գար այսպէս փչանալու: Ուրախ եմ ըսելու, որ մանկութենէս կամքի տէր էի ու միշտ լաւատես, որու շնորհիւ կարողացայ դիմադրել բոլոր ցաւերս եւ յուզումներս: Չափազանց արթուն էի. գիշերները գրեթէ չէի քնանար: Արդէն հիւանդներուն աղաղակներն ու զառանցանքները սոսկում կ'ազդեն վրադ. սպասարկութիւնը շատ անկանոն ու անխիղճ էր: Հոս կամաց կամաց լաւանալու սկսայ: Բժշկական կողմը գրեթէ մեծաւ մասամբ քրիստոնեայներէ բաղկացած էր: Մօտ երեք շաբաթ հոս բուժուելէ ետք օր մը բժիշկները քովս եկան, քննեցին ու, զիս լաւ գտնելով, իրարու մէջ ֆրանսերէն խօսելով՝ իմացայ, որ կ'ուզէին զիս դարձեալ Ռաճօ՝ իմ նախկին տեղս, որկէլ իբր բուժուած: Անմիջապէս, ֆրանսերէն խօսելով, կը յայտնեմ, թէ դեռ բոլորովին լաւացած չեմ զգար, եթէ կարելի է, քիչ մ'ալ մնամ: Լռութիւն տիրեց: Բժիշկները իրար նայեցան: Կրնամ ըսել՝ աչքերով խօսեցան իրար հետ: Թուղթս քննելով ու հաւանաբար հայ ըլլալս հասկնալով, երեք ամիս

⁷¹ Տո՛ւ, ցնցողով լոզանք:

օղափոխութեան վայր մը դրկելու որոշում կու տան: Յաջորդ առաւօտուն զիս կը տանին վարի գրասենեակը ուրիշներու հետ՝ յայտնելով, որ պիտի մեկնինք հանգստավայր մը: Մեզ կը փոխադրեն մեծ սենեակ մը, ուր դիզուած էր մեռածներու հագուստները՝ իրար խառնուած, ու պաշտօնեայ մը կը յայտարարէ. «Զատեցէ՛ք այս հագուստներէն ու շուտով հագուեցէ՛ք»: Կը խնդրեմ իմ նոր հագուստներս, որ հիւանդանոց մտած օրս յանձնած էի պաշտօնեային: Մաստիկ գայրացած, արաբերէն հայկոյելով՝ ապտակ մը կը զարնէ երեսիս՝ ստիպելով, որ շուտով հագուիմ: Ստիպուած կը հնազանդիմ ու այդ իրար խառնուած մեռածներու հագուստներէն կ'ընտրեմ ինծի պէտք եղածները: Ահատր էր վիճակս, իրական ինչու մը: Ափսոս, որ նկար մը չունիմ այդ վիճակով: Այսպէս մեզ ճամբայ կը հանեն քանի մը տասնեակ հիւանդներ ոտքով, ու կը հասնինք Հալէպի մէկ թաղամասին մէջ մեծ պարտէզներով ու ծառերով շրջապատուած շէնք մը, որուն մէջէն կ'անցնէր գետակ մը: Արդէն ուրիշ հիւանդներ մենէ առաջ եկած, տեղ գրաւած էին, սրահներուն մէջ խոտէ հիւսուած թափիներ⁷² դրած էին, որուն վրայ պիտի քնանայինք՝ կարգով շարուած: 1916-ի ամառն էր, տաքերը սկսան, ամեն կողմ կանաչոյթին, ափսոս, որ տակալին լաւացած չէի, մանաւանդ տրուած կերակուրները ինծի լաւ չէր գար. դեռ փորհարութիւնս կը շարունակուէր: Չափազանց ուժասպառ կը զգայի ինքզինքս: Մեզ ալել կու տային չորս կողմերը, ուժ չունէի, չէի կրնար լաւ շունչ առնել, թոքերս չէին բացուիր, ախորժակ բնաւ չունէի, շատ անգամներ օրուայ կլոր հացի բաժինս կը փոխանակէի զաւաթ մը ջուրով խառնուած մածոնի հետ: Քանի մը հայեր ալ կային մեր մօտ, որոնք մեռան՝ տկարացած ոջլախտ: Մեր հագուստները ոջիլի ձուերով զարդարուած էր, առտու իրիկուն արեւին տակ ոջիլ կը մաքրէինք, կրկին վրանիս կը վխտար: Փոխնորդ մէջի հագուստ չունէի. ստիպուած կը լուայի գետին ծայրը ու ծառէն

⁷² Թափի (թուրք.՝ tapis), խսիր:

կը կախէի ու չորնալէն ետք կը հագուէի: Բնաւ դրամ չունէի ու չէի կրնար տունը նամակ գրել: Օր մը հանդիպեցայ հիւանդ հայու մը, որ մանիսացի էր ու պաշտօն ունէր, դուրս կրնար ելլել: Իրմէ խնդրեցի, որ փոխառութիւն մը ընէ 15 դրուշ, որ կարենամ հեռագիր մը քաշել տունը, որ դրամ դրկէն: Սիրով ընդունեց, ու ինք գնաց, ձեռքովը հեռագիրը տուաւ Քորտոն հետեւեալ ձեռով՝ Իզմիրի Օրոզտիի միջոցաւ դրկել չալէպի Օրոզտիի վրայ իմ անունովս: Նամակ մ'ալ գրեցի չալէպի Օրոզտիի տնօրէնին, որ եթէ դրամ ստանայ Իզմիրէն, բարի ըլլայ իմ գտնուած վայրը դրկէ պաշտօնեայի մը միջոցաւ: Օրեր կ'անցնէին: Անհամբեր լուրի մը կը սպասէի: Տխուր էի: Պէտք ունէի սնունդի, մանաւանդ ճերմակեղէնի: Ոջիլներու գոհ պիտի երթայի, ինչպէս որ գոհ գացին ծանօթ հայերը, մանաւանդ շատ մը թուրքեր: Ահա այս պայմաններու տակ մօտ քսան օր վերջը, կէսօրէն ետք մը երկնցած էի գետնի վրայ ու զանազան մտածումներով անցեալ կեանքս ու մանաւանդ տունիները կ'երեւակայէի: Հեռուէն ձայն կը լսեմ. դռան պահակն էր: Անուն մը կը կանչէր, ականջ կու տամ: Ի՛նչ հրճուանք, ի՛նչ երջանկութիւն. իմ անունս էր՝ Իզմիրլի Ակոբ օղլու Ռվանէս: Տեղէս կը ցատկեմ, կը զգամ, որ բարի լուր մը կար զիս հաղորդելիք: Կը վագեմ դէպի պահակը, որ կ'ըսէ, թէ երկու հայեր եկած են ու զիս կ'ուզեն: Հագիւ դուռը կը հասնիմ, կը տեսնեմ երկու գեղեցկադէմ պատանիներ մաքուր հագուած: Ներսս արին կու լայ. ես, որ տարի մը առաջ իրենց նման մաքուր հագուած առողջ տղայ մըն էի, այս օր գնչուի պէս հագուած՝ տկար էակ մը դարձած էի: Յուզումէս, ամօթէս կամ ուրախութենէս, չեմ գիտեր, կը սկսիմ լայ: Տղաքը յուզուած կը նստեցնեն զիս խոտերուն վրայ, իրենք ալ քովս նստած կը քաջալերեն զիս՝ ըսելով, որ տունէն դեղին ոսկի մը ստացած են Օրոզտիի միջոցաւ ինծի յանձնելու համար ու կը հանեն հարիւր ութը դրուշ արծաթ դրամներ կու տան՝ խոստանալով կրկին այցելել զիս ու կարելի միջոցներով օգտակար ըլլալ ինծի: Ուրախութիւնս սահման չունէր, տունին հեռ: կապս հաստա-

տամ էի, կը զգայի, որ այ փրկուած եմ, մանաւանդ Օրոզտիի տողոց տուած խոստումը՝ ինձմով հետաքրքրուելու, զիս չափազանց ուրախացուցին, յուզումով հրաժեշտ կ'առնեմ տողոցմէ. այ հարուստ էի: Ես, որ սանթիմ չունէի, դեղին ոսկի մը ունէի այժմ: Նախ կ'երթամ հայ ընկերոջս պարտքս կը վճարեմ ու շնորհակալութիւն կը յայտնեմ, որ պատճառ հանդիսացաւ դրամ ստանալուս, կը նորոգեմ վրաս գլուխս, ճերմակեղէն եւ գուլպայ կը ճարեմ ու այսպէս կամաց կամաց մարդու վիճակ կը ստանամ: Հոգեկան ուրախութիւնս մեծապէս սատարեց առողջութեանս. կրնայի ուզածս առնել, ուզածս գնել: Ահա՛ այս պայմաններուն մէջ քանի մը ամիս հոս մնալէ ետք, օր մը բժիշկը եկաւ ու բոլոր հիւանդները կարգի շարել տուաւ ու, ամենուն առջեւէն անցնելով, տասը հոգի դուրս հանեց կարգէն, որոնց մէջ ես ալ կայի, ու մեզ հաւաքելով, ըսաւ, թէ պիտի երթայինք մօտակայ Ազիզիէ թաղը, ուր քրիստոնեայի մը հսկայ պալատը պիտի մաքրէինք, որովհետեւ հիւանդանոցի պիտի վերածուէր: Ու իսկապէս, քիչ ետք մեզ կը փոխադրեն այդ շէնքը, ուր շաբաթ մը չորս կողմերը լուարով ու ապակիները մաքրելէ ետք, սկսան անկողիներն ու զանազան հիւանդանոցի վիրաբերեալ պիտոյքները զամեօններով⁷³ հասնիլ: Օրերով այդ մահճակալները շարեցինք, ու ամէն ինչ կարգի դնելէ ետք սկսան հիւանդներն ու վիրաւորները հասնիլ: Բնական բերումով այդ նորաբաց հիւանդանոցին մէջ մնացի, ու ինձի տուին քսան անկողիննոց սենեակ մը, որուն պատասխանատուն էի. հիւանդներուն տաքութիւնները կ'առնէի, կերակուրնին կը բաժնէի ու զանազան պարտականութիւններ սիրով կը կատարէի: Միակ հայն էի հիւանդանոցին մէջ, թուրք չաուշը լաւ չէր հետս: Գործէս դուրս զանազան աշխատանքներ ալ կու տար ու միշտ կեւաւոր կը կանչէր զիս: Անկողինս մաքուր չէր. ուրիշ զինուորներու մօտ կը քնանայի: Դեռ տկար էի ու վրայիս ոջիւները չէին մաքրուած: Շնորհիւ հայ հիւան-

⁷³ *Quilliois* (թուրք.՝ *kamyon*), բեռնատար մեքենա:

դապահուիլներու գուրգուրանքին, որոնք բոլորն ալ Կիլրկիոյ շրջաններէն, Այնթապ, Մարաշ, Ուրֆա, Զէյթուն եւ զանազան ուրիշ քաղաքներէն էին, մեծ խնամք տարին ինծի իբր հարազատ եղբայր, որու շնորհիւ քիչ ժամանակուայ մէջ շատ մաքուր եւ ներկայանալի դարձայ՝ փոխելով բոլոր հագուստներս: Օր մը նոր բժիշկ մը եկաւ, այցելեց իմ սրահս: Տարիքոտ էր: Սկսաւ հիւանդները քննել. իրեն ընկերացած էի՝ բացատրելու համար իւրաքանչիւրին վիճակը: Հիւանդները գրեթէ բոլորն ալ թուրքեր էին. բժիշկը արաբերէն հարցում կ'ընէր հիւանդին, խեղճը թրքերէն կը պատասխանէր ու իր ցաւը կը յայտնէր: Բժիշկը ոչինչ կը հասկնար, ու այս տխուր պատկերին առջեւ կը ստիպուիմ իմ գիտցած ֆրանսերէնովս թարգմանի պաշտօնը կատարել: Բժիշկը չափազանց ուրախ էր, որ ֆրանսերէն գիտեմ, ու իմանալով, որ հայ եմ, պաշտպան կը հանդիսանայ զիս: Կը կանչէ չաուշը ու կը հրամայէ, որ զիս մաքուր անկողին տայ ու գործէս դուրս զանազան աշխատանք չտայ: Այս բժիշկը կաթողիկէ յոն էր Լաթաքիայէն, հակառակ իր յիսունը անց ըլլալուն՝ զօրակոչի ենթարկուած էր ու քափիթէնի⁷⁴ աստիճան ունէր, անունն էր տոքթոր Իլիաս Աշի: Շատ սիրուած էր իր ընկեր բժիշկներէն ու շատ ծանօթներ ունէր հարուստ վաճառականներուն մէջ, ու ես, բժիշկին շնորհիւ, շատերուն ծանօթացայ ու աւելի վերջերը գրեթէ յաճախ իրիկունները կը հրաւիրուէի ճաշի կամ զուարճանալու ընտանեկան մթնոլորտի տակ: Այս ընտանիքներէն ամենազնիւր գտայ Շարազի ընտանիքը՝ մետաքսի վաճառական, բազմանդամ ընտանիք մը՝ երեք զաւակներով, մայրով, քոյրերով. որոնք շատ ազնիւ վերաբերում ունէին իմ հանդէպ: Ես ալ կրնամ ըսել՝ իրենց տան բժիշկն էի. միշտ ասեղ կը զարնէի տան ռեւէ մէկ անդամին, երբ պէտք ըլլար: Այս պայմաններուն տակ ես կամաց կամաց սկսայ վերքեր ինսամել եւ ամենօրեայ գործողութիւններուն ներկայ ըլլալ: Չափազանց կը հետաքրքրէր զիս վիրաբուժու-

⁷⁴ *Բափիթէն* (ֆրանս. capitaine), կապիտան:

թինը, այն աստիճան, որ ամեն անգամ, որ վիրատրի մը ոտքը ամփիլթէ⁷⁵ կ'ընէին, գործողութենէն վերջը ժամ մը կտրուած ոտքին վրայ փորձեր կ'ընէի դանակով. ալ մոյին դարձած էի ու այսպէս, գրեթէ վեց ամիս չանցած, արդէն հարիւր յիսուն վիրատրներով լեցուն հիւանդանոցին ընդհանուր վերքեր խնամողն էի՝ Chef Penseur⁷⁶, դադար չունէի. ամեն առաւօտ վիրատրները կարգով կու գային վիրաբուժական սրահը, եւ ես իմ քանի մը օգնականներովս վերքերը կը մաքրէի ու նոր բանսուման⁷⁷ մը դնելով՝ նոր մը ձեռք կ'առնէի: Չափազանց խղճմտանքով եւ զգուշութեամբ կը բանայի վերքերը, ու գրեթէ բոլոր հիւանդները զանազան աղօթքներ ու մաղթանքներ կ'ընէին դուրս ելած ատենը:

Յաճախ գիշերները պարտականութեան գիտակցութեամբ կ'ելլէի հիւանդներու սրահները կ'այցելէի ու ծանր եւ տառապող հիւանդներու վերքերը կը փոխէի՝ մեղմացնելով ցաւերնին: Ո՛հ, ինչ աղօթքներ ու մաղթանքներ ինծի են ուղղուած՝ հող բռնես՝ ոսկի ըլլայ, կարօտներուդ ու փափաքներուդ Սատուած գոհացում տայ եւ զանազան արտայայտութիւններ: Հիւանդանոցին ընդհանուր բժշկապետը՝ տոքթօր Նաֆի Պէկ, իսլամ արաբ պատուական ու բարի մարդ էր, կը հիանար իմ այսքան արագ յառաջանալուս եւ միշտ յարգանքով կը խօսէր հետս: Այս Նաֆի Պէկի մասնաւոր դիմումով էր, որ զիս պարզեւատրեցին արծաթեայ նշանով մը՝ ճեմալ փաշայի ստորագրութեամբ՝ ի նշան իմ անկեղծ ու հաւատարիմ ծառայութեանս: Հասած էի փափաքիս, լաւ դիրք գրուած էի, ամեն ինչ ինծի կը հարցուէր, մասնաւոր մաքուր սենեակ ունէի ու պարսպ ժամերուս բժշկական գրքեր կը կարդայի, խսնդավառ նամակներ կը գրէի տուն, մանաւանդ, շատ սիրած հօրս յուսադրելու համար զգայուն նամակներ կը գրէի:

⁷⁵ *Ամփիլթէ* (ֆրանս.՝ amputer), անդամահատել:

⁷⁶ *Chef penseur* (ֆրանս.), գլխավոր վիրակապող:

⁷⁷ *Բանսուման* (ֆրանս.՝ Pansement), վիրակապում:

Թեև պատասխան չէի ստանար, կը զգայի, որ գույում եւ տառապանք կար տունը: Հայրս շատ զգայուն մարդ էր. ‘Ղազարոսը՝ քսորուած, ես՝ զինուոր եղած, վստահ էի, որ հայրս պիտի չդիմանար, մանաւանդ սնունդի պակասը ահաւոր ըլլալու էր, միակ յոյսս Գեղամն էր: Վստահ էի, որ պակասս զգալի պիտի չդարձներ ու ձեռքէն եկածին չափ պիտի մխիթարէր հայրս ու մայրս, քանի կ’աշխատէր Օրոգտիի մէջ:

ԳԵՂԱՄ ԵՂՔՕՐՍ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ ՄԷՋ

1917 թուի տաք օր մըն էր, բոլոր գործերս լնցուցած, քաշուած էի սենեակս ու կը կարդայի: Իրիկնամուտի մօտ էր: Յանկարծ պահակ մը կու գայ, զիս կը կանչէ՝ յայտնելով, թէ տասնեակ մը վիրաւորներ եկած են եզան կառքով, անմիջապէս կը վազեմ վար ու բոլորն ալ քննութեան սրահը կը հաւաքեմ ու կը սկսիմ մէկիկ մէկիկ հարց ու փորձել ու իրենց թուղթերը լեցնել: Ամենավերջին հիւանդն էր, որ պիտի հարց ու փորձէի, առաջին հարցումէս կռահեցի, որ օտար մ’էր, անունը կը հարցնեմ, Գէորգ կ’ըսէ, հոգիս կը ցնծայ, ուրտեղացի՞ ես՝ կ’ըսեմ. Իզմիր՝ կ’ըսէ, կը հրճուիմ: Իզմիրի ո՞ր կողմէն ես՝ կը հարցնեմ, Քորտեվիօհայոց եկեղեցիի փողոցէն՝ կը պատասխանէ ու յուզումէն ա՛լ չդիմանալով՝ – «դեռ եղբայրդ չճանչցա՞ր», – կ’ըսէ. ահաւոր ցնցում մը կ’ունենամ, կարծես շէնքը վրաս փլաւ: Այն աստիճան անակնկալ էր Գեղամին՝ դիմացս ըլլալը, ինքզինքիս կու գամ, գլխարկը վար կ’առնեմ ու զարմանքով կը տեսնեմ դեղին մազերով եղբայրս, կը փաթթուինք իրար. բոլոր ներկաները զարմանքով կը հետեւին այս յուզիչ պատկերին. ահա՛ այս յուզիչ մէկ վայրկեանին էր, որ Գեղամը հօրս մահը իմացուց, յուզումս եւ ուրախութիւնս սահման չ’ունէին, անմիջապէս կը կանչեմ զինուոր մը ու տուչ մը առնել կու տամ եղբորս ու զինուորի մը կռնակը տալով՝ կը գետեղեմ վերի օդատուն սրահի մը մէջ, ոտքերը մինչև ծունկերը ուռած էին՝ կը-

կար ճամբայ քալելուն հետեւանքով: Ամբողջ գիշերը քուն չունէի, կ'երթայի անկողնին մօտ հազար ու մէկ հարցումներ կ'ուղղէի. կ'ուզէի ամենուն մասին մանրամասն տեղեկութիւններ ունենալ, սենեակս կը վերադառնայի, կէս ժամ վերջը կրկին քովը կ'երթայի՝ ուրիշ հարցումներ տալու ու այսպէս գրեթէ ամբողջ գիշերը քուն չունէինք: Պատմեց, թէ վեց ամիս առաջ զինուոր կանչուած է ու Պոլիս դրկուած ու մարգուած ու յետոյ միանալով եօթներորդ ելտրըմ⁷⁸ զօրաբանակի, դրկուած է Երուսաղէմի ճակատը: Պօզանթին վերջ երկաթուղի չըլլալուն՝ ոտքով քալելու դատապարտուած են, որով երկար օրեր այսպէս կռնակը ծանր բեռով, զէնքը ուսին, գրեթէ առանց սնունդի: Ոտքերը ուռած են, ու զինք Հալէպ ուղարկած են բուժուելու: Հալէպի մէջ կար մօտաւորապէս 65 հիւանդանոց, բոլորն ալ զինուորական ու բախտը այնպէս կը բերէ, որ Գեղամը մեր հիւանդանոցը կը դրկուի, ինչ որ իր փրկութիւնը եղաւ, քանի որ անգամ մըն ալ ձեռքը զէնք բռնելու առիթ չունեցաւ: Այս մասին ատկի վերջը մանրամասն խօսելու հնարաւորութիւն կ'ունենանք: Գեղամը զիս առաջին մէկ բոպէին ճանչցած է, բայց չէ արտայայտուած՝ վախնալով որ միգուցէ թրքացած եմ, զիս չլտանգելու համար: Յաջորդ առաւօտուն, երբ բժիշկը հիւանդները կ'այցելէ, զարմանքով կը տեսնէ դեղին մազերով Գեղամը ու ժպիտով մը զիս կը նայի: «Եղբայրդ է», – կ'ըսէ ու այն օրէն սկսեալ լաւ սնունդ կը յանձնարարէ: Արդէն ժամ մը վերջը եղբօրս ոտքին ուռերը ճեղքած էինք, ուրկէ քանի մը գաւաթ թանձր թարախ վազած էր, ու այսպէս բաւական օրեր անկողին մնալէ ու լաւ մը կ'ազդդորուելէ ետք թելին տակ փայտերով սկսաւ կամաց կամաց քալել, ամիս ու կէս վերջը գրեթէ բոլորովին լաւացած ըլլալով՝ կու գար զիս կ'օգնէր առաւօտները վերքերը փոխած ժամուս: Օր մը հրամանագիր մը

⁷⁸ *Ելտրըմ* (թուրք.՝ Yıldırım, Yıldırım Ordular Grubu), Կայծակ բանակախումբ: Չնաւորվել է Առաջին աշխարհամարտի տարիներին, գործել է մեկ տարի (1917 թ. հուլիս – 1918 թ. նոյեմբեր): 1918 թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 8-ը Յըլդըրըմ բանակախումբը ղեկավարել է Մուսթաֆա Բենալը:

կու գայ հիւանդանոց, որով բոլոր եօթներորդ զօրաբանակի առողջացած զինուորները ճակատ դրկելու հրահանգ կը տրուէր, տոքթօրին շնորհիւ անմիջապէս եղբօրս անկողին կը դնենք, վիզը կը փաթթենք իբր թէ անժին⁷⁹ ունէր, ու այսպէս այդ օրերու հրամանագրէն կ'ազատէր: Իր զօրաբանակը սոսկափօրէն կոտորուեցաւ Երուսաղէմի ճակատին վրայ անգլիական ուժերու հարուածներուն տակ, որով Գեղամը այս կոտորածէն զերծ մնաց՝ ազնիւ բժիշկի շնորհիւ: Պէտք էր ամեն գնով Գեղամը փրկել, արմատական միջոց մը պէտք էր գտնել: Օր մը ընդհանուր բժշկապետ Նուֆի Պէկին կը ներկայանամ ու կը խնդրեմ իրմէ, որ եղբօրս իմ քովս իբր օգնական պահելու միջոց մը խորհի՛ յայտնելով, թէ ամեն ինչ կորսնցուցած եմ, ու միայն եղբայր մը մնացած է: Կ'ըսեմ, թէ ժամանակին եղբայրս վար ինկած ու աջ թելի ոսկորը կոտորած է ու լաւ չէ փակած, թէ ոտքերուն վրայ ոտ մը կայ միշտ, թէ ականջը քիչ մը խուլ է եւ այլն, ու կրկին կը խնդրեմ, որ կարելին ի գործ դնէ փրկելու համար եղբայրս: Նուֆի Պէկ կը խոստանայ ընթացք տալ առաջարկիս, եւ իսկապէս, շաբաթ մը վերջը բոլոր բժիշկները ժողովի կը հրաւիրէ, որու մէջ կար նաեւ երկու հայ բժիշկներ՝ Չիլեան ու Ինճեան: Եղբայրս քննութեան կը կանչեն ու իմ տուած ցուցմունքներուս հիման վրայ որոշում մը կ'անցնեն, որով եղբայրս հիւանդանոցի մէջ ծառայելու թուղթը կը ստանայ՝ շնորհիւ Նուֆի Պէկի: Ուրախութիւնս սահման չունէր. ալ Գեղամը փրկուած էր ու կանոնաւոր քովս կ'աշխատէր իբր օգնական:

Կ'ուզեմ քիչ մը Հալէպի հայութեան մասին խօսիլ:

Հալէպ շատ ընդարձակ եւ խոշոր քաղաք մըն է, տասնեակ հազարաւոր հայեր, կոտորածներէ եւ տանջանքներէ մազապօրծ ազատած, գաղտնի մտած են Հալէպ ու զանազան թաղերու մէջ ամենավատ պայմաններու տակ քարշ կու տային կեանքերնին: Հազարաւոր մանուկներ՝ բոպիկ ոտքերով,

⁷⁹ Անժին. նշիկաբորբ:

կմախք դարձած, կը մուրային փողոցներուն մէջ՝ անօթի ու ծարաւ, գիշերները տուներու առջեւները կը քնանային ցուրտին ու անձրեւին՝ առանց ծածկոցի: ՌԻ, սհաւոր էր այդ մատաղ սերունդին վիճակը՝ զրկուած իրենց ծնողներէն, որոնք կոտորուած էին կամ իրար կորսնցուցած, քարշ կու տային իրենց կեանքը փողոցներուն մէջ՝ լքուած բոլորէ, ամեն առաւօտ տասնեակներ կը մեռնէին պատերու տակ, մինչեւ 125 դիակ հաւաքուած օրեր եղած են թաղապետական կառքերով, զորս կը նետէին հաւաքական խոշոր փոսերու մէջ՝ կանխաւ պատրաստուած: Օր մը փողոցի մը մէկ անկիւնը աղբեր թափուած էին, քանի մը հայ փոքրեր, ծունկի եկած, աղբերէն որբել ուտելիք քաներ կը հաւաքէին, իրենց մօտն ալ՝ խոշոր շուն մը, ան ալ եկած էր ոսկոր մը զտնելու նպատակաւ: Կռիւ մըն է ծայր տուաւ. որբերը կ'ուզէին շունին բերնէն խել ոսկորի կտորը, շունը կը սպառնար ակռաներով: Ես սոսկումով կը դիտէի այս տեսարանը. մեր հազարաւոր անմեղ որբերը փողոցներու աղբերով կը սնուէին այդ սհաւոր օրերուն: Թուրք կառավարութիւնը՝ իր ոճրածին դեկավարներով, հասած էր նպատակին. հայ ժողովուրդը կորսնցուցած էր խաղը, ի սպառ փճանալու դատապարտուած, ու եթէ այսքան անիրաւութիւն եւ տանջանք ու կոտորած մոռցունին ապագայ հայ սերունդներու կողմէ՝ ես ալ այն ատեն կը ձայնակցիմ մեր պաշտելի ու անզուգական Աւետիս Ահարոնեանի⁸⁰ այն խօսքին, որ գրած էր. «Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք, ամբողջ աշխարհի հայուն թող տայ նախատինք»: Հայոց եկեղեցիին շնորհքը ու պատերուն տակ հարիւրաւորներ կը գիշերէին: Ազգային մարմինները շուարած էին. արտասահմանէն որբել օգնութիւն

⁸⁰ *Ավետիս Ահարոնեան* (1866-1948), հայ հասարակական—քաղաքական գործիչ, գրող: Հայոց ազգային խորհրդի նախագահ (1917), Հայաստանի առաջին հանրապետության (1918-1920) խորհրդարանի անդամ, ապա՝ նախագահ: 1919-1920 թթ. Փարիզի հաշտության խորհրդածողովում դեկավարել է ՀՀ պատվիրակությունը: 1920 թ. ստորագրել է Սևրի հաշտության պայմանագիրը. մասնակցել Լոնդոնի (1921) խորհրդածողովին:

կարելի չէր ստանալ: Տեղական իշխանությունները մասնատոր ու բազմաթիւ աշխատանոցներ բացած էին, ուր հազարաւոր հայ կիներ ու աղջիկներ կ'աշխատէին կլոր հացի մը փոխարէն: Խեղճերը սիրով կ'աշխատէին քաղաքէն շինուած ելու համար, որովհետեւ միշտ դամոկլեան սուրի պէս՝ Հալէպէն հեռացնելու վտանգ կար անպէտ հայերը: Հալէպի մէջ եւ շրջանները բազմաթիւ կուսակցականներ ու մտաւորականներ պահուած էին կեղծ թուղթերով, որոնք յաճախ հայ դաւաճան մատնիչներու գոհ կ'երթային: Այդ թշուառական մատնիչներէն շատերը մաքրուեցան վրիժառու հայ տղոցմէ:

Գանք կրկին մեր հիւանդանոցի կենսքին: Գեղամը կամաց կամաց սկսաւ վերքեր փոխել եւ նոյնիսկ օր եղաւ, որ իմ գործս կը կատարէր: Օր մը մեր բժշկապետ Նուֆի Պէկի որոշումով կը փոխադրուինք երկու եղբայր Թիլէի թաղի Սպայից հիւանդանոցը, որ նոյնպէս Նուֆի Պէկի հսկողութեան տակ էր: Հոս իսկապէս մեծ յաջողութիւն ձեռք ձգեցի. բոլոր բիքիւրները⁸¹ մանաւանդ երակային ասեղները, որ վտանգաւոր էին, բժիշկները ինծի կը ձգէին, օր մը միայն սիֆիլիթիք հազարապետի մը նէօ սալվերսան⁸² երակային ասեղ մը զարկած էի, քառորդ կաթիլ մը դեղ միսին մէջ կաթելով՝ մեծ վերք մը գոյացաւ, որ հազիւ 2 ամիսէն լաւացաւ: Թէեւ սպան ուրախ էր, որ ճակատէն հեռու էր, բայց երբեմն կը պոռար կը կանչէր բժիշկներուն հասցէին, որ թողած էին ինծի, որ ասեղ զարնեմ:

1917-ի վերջերն էին: Հալէպի մէջ քոլերայ ծագում առաւ: Կառավարությունը որոշեց ընդհանուր պատուաստ ընել ժողովրդին: Բոլոր հիւանդանոցներէն կարող ասեղ զարնողներ ուզեցին: Ինծի ալ բաժին ինկաւ այդ գործէն. ամբողջ Մեծիտիլ թաղամասը ինծի յանձնուեցաւ, քովս ոստիկաններով

⁸¹ *Բիքիւր*, ներարկում:

⁸² *Սալվերսան* (անգլ.՝ salvarsan). վեներական հիվանդությունների արդյունավետ դեղամիջոց:

օրեր շարունակ տունէ տուն ու խանութէ խանութ մտնելով՝ քղերայի դէմ ասեղ կը զարնէի հանդիպածիս եւ ընկալագիր⁸³ կու տայի: Շատ մը վաճառականներ կը խնդրէին, որ երեկոյեան իրենց տունը երթամ ամբողջ ընտանեօք ասեղ ընելու համար, մանաւանդ որ աւելի մաքուր պիտի ըլլար: Սիրով յանձն կ'առնէի, որով ամեն իրիկուն բազմաթիւ այցելութիւններ կ'ունենայի զանազան տուններ ու զիս շատ լաւ կը հիւրասիրէին ու լաւ կը վճարէին:

Առաջին անգամն էր, որ գրպանս դրամ կը մտնէր: Այսպէս քիչ մը խնայողութիւն ընելով՝ կը տանիմ կը յանձնեմ Օրոզտիի վաճառատունը՝ դրկուելու համար Իզմիրի Օրոզտիի միջոցաւ մօրս ու քոյրերուս, որոնք բոլորովին աննեցուկ կը կարծէի, թէ ահաուր դրութեան մատնուած են: Ինչ ուրախ էի, որ վերջապէս կարող էի օգնութեան հասնիլ իմիններուս: Այսպէս գրեթէ ամեն ամիս այս միջոցաւ կանոնաոր փոքրիկ գումար մը կը հասցնէի տուն: Օրոզտիի տնօրէնը, որ հայ էր, կը հիանար ու կը զարմանար իմ վրաս, քանի որ տարիուկէս առաջ ոջիւներու մէջ կը խեղդուէի ու իրենց միջոցաւ դրամ ստացած էի տունէն, մինչդէռ հիմա ես էի, որ դրամ կը դրկէի տուն: Իմ բժշկապետս անձնական քիմիք ունէր, յաճախ գործողութիւններ⁸⁴ կ'ընէր տեղացիներու վրայ ու բանսումանները ինծի կը ձգէր, որ երթամ տուներնին ընեմ: Ամեն անգամ երթալուս այցեգին կը վճարէին, որ ինծի կը մնար Նուֆի Պէկին որոշումով: Օր մը Նուֆի Պէկը կ'ըսէ, որ պէտք է գործողութեան վերաբերեալ գործիքները պատրաստեմ ու հականեխեմ. յաջորդ առաւօտուն գործողութիւն մը ունի ընելիք Էտիեմ փաշայի բնակարանին մէջ: Յաջորդ օրը բժիշկ մըն ալ կ'ընկերանայ մեզի, կ'երթանք յիշեալ փաշային տունը եւ իր ամուսնացած աղջկան վրայ գործողութիւն կը կատարենք: Այս կինը 2 մանչ զաւակներ ունէր ու ամուսինը սպայ էր թրքական բանակին մէջ, գե-

⁸³ *Ընկալագիր*, ստացագիր, անդորրագիր, ստացական:

⁸⁴ *Գործողութիւն*, բժշկական ոլորտում վիրահատություն:

րի ինկած էր Զիւթ էլ Ամար⁸⁵ ճակատին վրայ: Գործողութենէն վերջ, երբ գործիքները կը հաւաքէի, երիտասարդ գեղեցիկ կին մը ներս մտաւ ու սկսաւ հետս խօսիլ՝ գիտնալու համար, թէ որ օրը եւ ժամը քանիին պիտի գամ վերքը փոխելու: Արիւնս եռաց, ձայնը ծանօթ էր ինձի, նաեւ իր սեւ ու խոշոր աչքերը, սակայն չէի կրնար յիշել, թէ ո՞ր եւ ե՞րբ տեսած եմ: Հետո ֆրանսերէն կը խօսէր, քաջութիւնը ունեցայ հարցնելու, թէ միգուցէ Իգմիրի կողմերէն է: Անհուն ժպիտով մը պատասխանեց, թէ Էօտէմիշ քոյր մ'ունի Հաւարտայեան: Արդէն անմիջապէս յիշեցի: «Կիլան էք», – ըսի: Կը ճանչնայի զինք Էօտէմիշէն, շատ զուարթ, երգող ու շէն աղջիկ մը, ու այս օր դարձած էր եօթանասուննոց Էտիեմ փաշային կինը. լաւ ուտ կը նուագեր ու փաշան կը զուարճացներ: Ես յաճախ բանսումանի կ'երթայի ու գրեթէ իրենց տան անդամն էի, փաշան շատ անգամներ լուր կը դրկէր ու զիս ճաշի կը կանչէր, մանաւանդ ռամազանի⁸⁶ օրերուն: Տունը մեծ էր, ու կային քանի մը տարիքոտ սեւամորթ կիներ՝ լալա կոչուած, զորս փաշան ամբողջ կը լրջնէր ու մեծցուցած էր իբր զաւակ: Կիլան ամբողջ տունը կը դեկավարէր, քանի մը ծառաներ ունէր: Երբեմն թրքական հագուստով ու յաճախ եւրոպական տարագով դուրս կ'ելլէր: Կրնամ ըսել, որ բազմաթիւ հայ ընտանիքներու նիւթական ու բարոյական օժանդակութիւն ունեցած է:

Ունէի նաեւ ուրիշ հիւանդ մը՝ Ապտիլլահ փաշային կինը, որ քանի մը անգամ մեր հիւանդանոցին մէջ քիւրթած⁸⁷ եղած

⁸⁵ *Զիւթ էլ Ամար* (թուրք.՝ Küt'ül-Amare). Զութ ու Ամարե կամ Էլ Զութ, բնակավայր Օսմանյան պետության Բաղդադի նահանգում (այժմ Իրաք): Էլ Զութի ճակատամարտը տեղի է ունեցել 1915 թ. բրիտանական և օսմանյան զորքերի միջև, որն ավարտվել է թուրքերի պարտությամբ:

⁸⁶ *Ռամազան* (թուրք.՝ ramazan), իսլամական օրացույցի ինններորդ ամիսը: Մուսուլմաններն այդ ամսին պահք են պահում: Ռամազան ամսվա պահեցողությունն իսլամի հինգ հիմնապուններից է:

⁸⁷ *Զիւրթած* (ֆրանս.՝ curetage), վերքի, խոցի քերում. վիժեցում բժշկական միջամտությամբ:

է, կուրծքին վրայ վերք մը ունէր, ոսկրախտ, ու բանասումանը ինծի յանձնուած էր Նուֆի Պէկի որոշումով: Ուրեմն ամեն կէսօրէն ետք Ապտիլլահ փաշան իր ձիու կառքը կը դրկէր ու զիս տուն կ'առաջնորդէր՝ իր կնոջ բանասումանը ընելու: Շատ կը յարզէին զիս, թէւ դրամ չէի ստանար: Միակ հոգեկան ուրախութիւն մը, որ կ'ունենայի, այն էր, թէ երբ այս ձիու կառքով կը ճամբորդէի լայն պողոտայի վրայով, շատ մաքուր զինուորական հագուստով ու մորթէ քափալափիս՝ վերի կարմիրը մէջը թխած՝ զիս բարձրաստիճան սպայ կարծելով: Քանի որ ֆայթօն կառքով եմ, փողոցին աջէն ու ձախէն սպաներ եւ զինուորներ բարեւ կու տային ինծի. վայ եթէ զիտնային, թէ պարզ զինուոր եմ ու մանաւանդ հայ՝ հղում հում կ'ուտէին զիս:

Օր մը, երբ բոլոր հիւանդներուն վերքերը փոխած էի ու կը պատրաստուէնք մեկնիլ, յանկարծ երկու ժանտարմ ներկայացան՝ վիրատուր մը հետերնին, ու ըսին. «Այս մարդը դասալիք մըն է, անմիջապէս, որ վերքերը լաւանան, պէտք է մեզի վերադարձնէք, որ իր պատիժը քաւէ»: Ներս կ'առնենք հիւանդը, կը նստեցնենք սեղանին վրայ, ամբողջ գլխունը փաթթուած էր ու արիւնը չորցած էր պանտին վրայ: Քակելը անկարելի էր. պէտք էր մկրատով կտրել: «Գեղամ, մկրատը սուր», – կ'ըսեմ հայերէն, հիւանդը ցնցում մը կ'ունենայ ուրախութենէն. հայ էր ու հայ սողոց ձեռքը ինկած էր: Կը հարցնեմ, թէ ի՞նչ է պատահած իրեն: «Կը վախնամ պատմելու», – կ'ըսէ: Արար օգնականը տեղ մը կը դրկեմ, սենեակին դուռը կը կղպեմ ու կը յայտնեմ, թէ մենք երկու եղբայր հայրենասէր հայեր ենք, կրնայ վստահիլ մեզի ու պատմել: Բայց նախ գլխուն պանտերը⁸⁸ կը կտրեմ ու վերքերը կը բանամ: Ո՛հ, ի՞նչ տեսարան, գլխուն վրայ երեք խորունկ ճեղքեր, հաւանաբար սրածայր գործիքով եղած, որոնց մէջերը սեւ որդեր կը վխտային: Ահաւոր էր տեսարանը. անմիջապէս կ'ածիլեմ մագերը, կը մաքրեմ որդերը զանազան

⁸⁸ Պանտ, վիրակապ:

դեղերով, ճեղքերը իրար միացնելով՝ ակրաֆներ⁸⁹ կը դնեմ ու լաւ մը մաքրելէ ետք լաւ մը կը փաթթեմ գլուխը ու կ'ըսեմ. «Հիմա պատմէ՛ նայիմ պատահածը»: Այս հայր, որ կը կոչուէր Լեւոն, մակամունը չեմ յիշեր, սկսաւ սարսուռով պատմել իմ եղբօրս ներկայութեան: Ըսաւ, թէ Կիլիկիոյ շրջանին մէջ զինք ձեռքակալած էին ոստիկանները ու զօրանոց մը տարած ու հոն հաւաքուած ու զանազան շրջաններէ բերուած մօտ երկու հարիւր հայերով ճամբայ հանած են ոտքով, իբր թէ ուրիշ վայր մը պիտի փոխադրեն իբր զինուորացուներ: Երեկոյեան դէմ բռնորդ, ձեռք ձեռքի, չուաններով կը կապեն, իբր թէ չփախչին ըսելով: Մոսկալի ծարաւ էինք ու ջուր կը խնդրէինք թուրք պահակներէ: Պահակները մեզ դէպի ձոր մը կ'առաջնորդէին՝ մեզ ջուր խմցնելու պատրուակով: Մութը կոխելու վրայ էր, հագի գետին ծայրը կը հասնինք մեր պապակը յագեցնելու տենչով, ահա՛ ոճրագործ բազմաթիւ թուրքեր դուրս կ'ելլեն նշանի մը վրայ իրենց թաքստոցներէն ու, զինուած կացիներով, փայտերով, սուրերով ու զանազան գործիքներով, կը յարձակին մեր վրայ եւ պահակ զօրքերու մասնակցութեամբ, բոլորին զանկերը ջարդ ու փշուր կ'ընեն ու մահացած գետին կը փռէն՝ բոլորը իրար կապուած, կողոպտելով բոլորին ունեցած դրամներն ու անձնական գոյքերը: Ոճրագործ պահակներն ու գիւղացիները, յագեցած իրենց անմարդկային ահաւոր ոճիրէն, ու հաստատելէ ետք, թէ ոչ մի ողջ չէ մնացած, կը քաշուին լեռան միւս լանջին, կրակ վառած՝ գառնուկ կ'եփեն ու կը սկսին երգել ու պարել ու փառք տալ Ալլահին: «Կէս գիշերը անցած. – կ'ըսէ Լեւոն, – գիշերուայ գովութենէն կը սթափիմ՝ արիւնաթաթախ վիճակի մէջ, ձեռքերս կապուած: Չուանները կրծելով՝ կ'ազատեմ ինքզինքս, ձայն կու տամ քովի ընկերներուս, ափսոս, ոչ մի շշուկ»: Բոլորն ալ մեռած էին, իր ողջ մնալը իրաջք էր: Կը տեսնէ հեռուն վառած կրակը ու կ'իմանայ զազան թուրքերու ցնծութեան աղաղակները ու կը սկսի, կամաց

⁸⁹ Ակրաֆ (ֆրանս.՝ agraffe), ամրակ:

կամաց սողալով, դէպի վեր՝ դէպի մեծ բարձունքը մազլցիլ, ու այսպէս քանի մը ժամ յառաջանալէ ետք արշալոյսը ծագելու վրայ էր, կ'ըսէ, հեռուն գազան թուրքերը, ձորին միւս կողմէն նշմարելով սողացող կենդանի մը ու քիչ վերջը հաստատելով, որ մարդ մըն է, ու մանաւանդ վախնալով, որ միգուցէ վերապրող մը կրնայ ըլլալ ջարդէն ու կենդանի վկայ մը ահաւոր ջարդին, կը սկսին կրակել ու պոռալ կանչել, որ կանգ առնէ: Լեւոն կ'արագացնէ իր վերելքը: Թուրքերը յիսուն մէթրի չափ մօտեցած էին, երբ Լեւոն մեծ ճամբուն վրայ կ'ելլէ ուժասպառ: Այդ պահուն կը նշմարէ երկաթուղիի մը գնացքին արագ գալը դէպի իր կողմը՝ դէպի Հալէպ: Անմիջապէս կը վազէ, երկու երկաթգծերուն մէջ կը կայնի՝ նախընտրելով մեռնիլ, քան նորէն յանձնուիլ թուրքերուն, ու կը սկսի խաչակնքել ու աղօթել: Առաւօտեան կանուխ այդ շրջակայ տեսարանները դիտող գերման սպաներ, նշմարելով գծի վրայ խաչակնքող մարդը, ազդանշանը կու տան մեքենավարին, որով թրէնը կանգ կ'առնէ, սպաները վար կը ցատկեն: Արդէն թուրքերը հասած էին ու կը սկսին քաշել տանիլ Լեւոնը, որուն աղաչանքներուն վրայ ու մանաւանդ քրիստոնեայ ըլլալը կռահելով, գերմանները կը գրկեն խեղճ Լեւոնը ու իրենց վակոնը կը խոթեն ու այսպէս, թրէնը ճամբան շարունակելով, ժամեր վերջը կը հասնի Հալէպ: Գերմանները՝ իբր Թուրքիոյ զինակից, ստիպուած Լեւոնը կը յանձնեն ժանտարմերիայի: Եւ ահա՛ այդ դէպքէն քանի մը օրեր վերջը միայն ժանտարմները կը բերեն մեր հիւանդանոցը իբր դասալիք: Ոճրագործ թուրք ոստիկանութիւնը, առանց ամչնալու եւ առանց խղճի, ջարդէն հրաշքով ազատած Լեւոնը իբր փախստական նկատած է գինք: Ի՛նչ հեգնանք մարդկային խղճմտանքի: Լեւոնը, մօտ 2 ամիս խնամելէ ու լաւ մը կազդուրելէ ետք հայ հիւանդապահուիիներու օժանդակութեամբ հազուստ կապուստ ու դրամ հաւաքելով, գիշեր մը փախցուցինք հիւանդանոցէն ու իրեն, իբր թաքստոց տուն մըն ալ ցոյց տալով, ազատեցինք Լեւոնը: Յաջորդ առաւօտուն աչքիս առջեւը բոլոր պա-

հակները շարուած, ամբողջն ալ թուրք, փառաւոր ծեծ մը կերան քաւչուկէ մտրակով ընդհանուր տնօրէնին ձեռամբ իբր դաւաճան հայրենիքին ու տասնական օր բանտ դրուեցան անօթի ծարաւ: Հոգիս քիչ մը թեթեւցած էր՝ ըրած այս փոքրիկ գործով: Թէեւ հոս տեղը չէ խօսելու, բայց քանի որ առիթ մը ներկայացած է Լեւոնի մասին խօսելու. անմիջապէս ըսեմ, որ Լեւոն այս դէպքէն 35 տարի վերջ իր յուշերը գրած է Ամերիկայի «Հայրենիք» օրաթերթին մէջ ու մեծ յուզումով մեզ՝ երկու եղբայրները, կը փնտռէ՝ կոչելով մեզ իր ազատարարները: «Հայրենիքի» միջոցաւ իր բուն հասցէն ուզեցի ու իրեն երկար նամակ մը գրեցի, որ անպատասխան մնաց, անունն էր Լեւոն Լիլլէճեան⁹⁰:

Շատ անգամներ իզմիրցի ընկերներ կու գային լուր կու տային, որ սա ինչ թաղին, սա ինչ թիւ տունը հայրենակից մը կամ կուսակցական ընկեր մը տաքութիւններու մէջ կը տառապի, կէսօրէն ետք առիթ մը կը գտնէի. կ'երթայի այդ ընկերոջ արհունը կ'առնէի ապակիի մը վրայ ու, թուրք հիւանդի մը անունով ու թողոթին վրայ նշան մը ընելով, կը դրկէի գերմանական լապարաթուար [տարրալուծարան]: Քսան չորս ժամէն կը ստանայի պատասխանը ու անմիջապէս, հիւանդութեան տեսակին համաձայն, դեղարանէն դեղը կ'առնէի ու կ'եր-

⁹⁰ *Լեւոն Լիլլէճեան*, Եփրատ քոյեցի շրջանավարտ, ուսուցիչ, հրատարակիչ: 1914 թ. որպէս թուրքական բանակի զինվոր ծառայել է Էննի Թրեյսի Տիկզ ամերիկյան հիվանդանոցում: Դերսիմի ճանապարհով հասել է Կովկաս. ապա՝ Մոսկվա. որտեղ աշխատել է Հայկական կոմիտէի հիվանդանոցի դեղատանը: Վայելելով Ջորավար Անդրանիկի համակրանքը՝ 1917 թ. դարձել է նրա թիկնապահը: 1920 թ. հաստատվել է Ֆրեզնոյում և խմբագրել վերակազմյալ Հնչակյան կուսակցության «Արոր» թերթը: 1925 թվականից հրատարակել է «Մշակ» կիսաշաբաթաթերթը: Գրի է առել Ջորավար Անդրանիկի կովկասյան օրագրությունը (1914-1917), «Առաքելոց վանքին կոնիք», «Պշարէ Խալիլի սպանութիւնը», «Տէրսիմի քիլոտկըր», «Խարբերդի գաւառաբարբառը», դասակարգել Անդրանիկի «Ջանգեզուրեան նամակամիլն», թարգմանել Հոլ Քէնիի «Անառակ որդին» սիրավեպը ևն.: Տե՛ս *Յիշատակարան Եփրատ Գոլէճի* (խմբ.՝ Յարթ Մ. Փիլիպոսեան) (Պոսթոն, Եփրատ Գոլէճի Սանոց Միութիւն, 1942), 226:

թայի էնթրալինէօզ ասեղ մը կը զարնէի, քսան չորս ժամ վերջը կ'երթայի, որ հիւանդին տաքութիւնը 36-ի իջած է, թէև սուկալի ուժաթափ կ'ըլլային քանի մ'օրեր: Չափազանց ուրախ կը զգայի ինքզինքս ու երջանիկ, որովհետև պարտականութիւնս յաջողութեամբ վերջացուցած էի:

Օր մը գերման հարիւրապետ մը կու գայ հիւանդանոց ու զիս կը փնտռէ: Իրենց մօտ աշխատող ու մեր հիւանդանոցը ժամանակ մը մնացող հիւանդէ մը իմացած էր իմ յաջող ասեղ զարնելս: Շանքըր⁹¹ ունէր, սարսափելի սիֆիլիէն կը վախնար, չէր ուզեր իր զօրանոցին հիւանդանոցը դարմանուիլ, որովհետև իր ունեցած հիւանդութիւնը իր տոսիէին մէջ պիտի գրուէր, որով կը խնդրէ ինձ, որ զինք բուժեմ այս սոսկալի հիւանդութենէն, չափազանց պատուախնդիր, կ'ուզէր խուսափիլ իր տոսիէն⁹² աղտոտելէ: Սիրով յանձն կ'առնեմ ու շաքաթը անգամ մը երակային ասեղ մը կը զարնեմ նէօսուվարսոն ըսուած գերմանական դեղը, որ, 5 անգամ զարնելով, արդէն շանքըր կորսուած էր, ու սպան չափազանց ուրախ ու երջանիկ էր բուժուած ըլլալուն համար ու վերջին օրը հանեց 20 թրքական ոսկի տուաւ ու, շնորհակալութիւն յայտնելով, հեռացաւ: Եղբայրս միշտ ներկայ կ'ըլլար: Ան էր, որ թիւին լաստիկը⁹³ կը քակէր: Այսպէս՝ ուրեմն, ես յաջողութենէ յաջողութիւն կը յառաջանայի ու կանոնաւոր ծնողքիս կ'օգնէի: Անհուն փափաք ունէի անգամ մը տուն դառնալ՝ մայրս ու քոյր-եղբայրս տեսնելու, ահաոր կարօտ մը կ'այրէր սիրտս, մօտ 3 տարի է չէի տեսած սիրելիներս: Կ'իմանամ, որ հարիւրի մօտ թուրք հիւանդներ պիտի մեկնին դէպի տուն իբր արձակուրդով, բոլորն ալ Իզմիրի շրջանները: Կը դիմեմ Նուֆի Պէկին, որ սիրով կ'ընդունի առաջարկս ու կը յաջողի զիս ալ իբր հսկիչ հիւանդներուն մօտ ընդունիլ

⁹¹ *Շանքըր* (ֆրանս.՝ chancere), շանկը, վններական հիվանդություն:

⁹² *Տոսիէ* (ֆրանս.՝ dossier), թղթապանակ:

⁹³ *Լաստիկ*, ռետին, կաուչուկ:

տալ: Երկու խոշոր վալիզներ⁹⁴ կը լեցնեմ զանազան ուտելիքներով ու զանազան արաբական նուէրներով. որոշեալ օրը ճամբայ կ'ելլեմ հիւանդներուն հետ՝ Գեղամին թողնելով ամբողջ գործս ու դրսի հիւանդներս: Այս անգամ երկաթուղին կ'անցնէր Տաւրուսեան լեռներու տակէն, ուր բացուած էր ահաւոր թինէլներ՝ հնդիկ, ռուս, հայ եւ զանազան գերիներու քրտիխքով, ղեկավարութեամբ գերման ճարտարագէտներու: Երբ Պոզանթի կը հասնինք, զինուորական պետը արգելք կը հանդիսանայ ինձի վիզայ տալու դէպի Իզմիր՝ առարկելով, թէ հրաման ունի ոչ մէկ հայ թողուլ, որ անցնի դէպի Իզմիր: Հրաշքով մը յոյն բժիշկի մը կը հանդիպիմ, որու կը պարզեմ իմ վիճակս, թէ 100 հիւանդներ ունիմ հոգալիք. թէ պարտականութեամբ կ'երթամ, որ կ'երթայ կը բարեխօսէ սպային ու այսպէս 4 օր ճամբորդելէ ետք կը հասնիմ Քորսելիոյի կայարանը: Ուրախութիւնս չափ ու սահման չունէր. հասած էի նպատակիս: Քիչ վերջը մօրս համբուրելու բախտը պիտի ունենայի: Անմիջապէս թրէնէն դուրս կը նետուիմ, կը կանչեմ բեռնակիր մը ու, բեռերս կռնակը տալով, կը յառաջանանք դէպի տուն:

Յուզումս զագաթնակէտին հասած էր: Արդեօք ի՞նչ պայմաններու տակ պիտի գտնէի սիրելիներս: Սիրտս կը տրոփէր, կարծես ճամբան չէր լմնար ու, երբ հայոց եկեղեցիին առջեւէն կ'անցնէի, զարմանքով տեսայ դուռ նետուիլը երեցկին⁹⁵ մայրիկին, որ ճանչցած ըլլալով զիս, կը վազեր ինէ՞⁹⁶ առաջ բարի լուրը հաղորդելու իմ պաշտելի մօրս պատշաճ եղանակով մը, որ մայրս յանկարծ զիս տեսնելով, յուզումէն չնուաղի, ու երբ տանը բաւական մօտեցած էի, կը նշմարեմ մայրս, կմախք դարձած, սեւեր հագած՝ դէպի զիս կը վազեր՝ լոպէ մը առաջ զիս ողջագուրելու եւ տարիներու կարօտը

⁹⁴ *Վալիզ* (ֆրանս.՝ valise), ճամպորուկ:

⁹⁵ *Երեցկին*, երեցի՝ քահանայի կին:

⁹⁶ *Ինէ*, ինձմէ (բարբառային), ինձնից: Չենէ՛ ձեզմէ, (բարբառային), ձեզնից:

առնելու համար: Այս ահաւոր վայրկեանը երբեք չեմ կրցած մոռնալ. չէինք կարող քանի մը վայրկեաններ բառ մը արտասանել, լեզունիս բռնուած էր, շրթունքնիս կը դողար, ու այսպէս, քանի մը թոպէներ իրար փաթթուած՝ կ'արտասուէինք: Բեռնակիրը, տեսնելով այս տխուր տեսարանը, ու մանաւանդ իմ գինուորի հանգամանքս, յուզումէն աչքերը լեցուած՝ կը ձգէ վալիզները ու կը հեռանայ՝ առանց վարձքը առնելու: Վերջապէս կը մտնենք տուն: Ռհ, ինչ տեսարան. հայրս մեռած, Աղանին ամիսներ առաջ հիւանդացած Էօտէմիշ տարած էին բուժելու պաշտելի Էթեմէզեանները, Թագուհին, Վարդանը կը բացակայէին: Տունը չորցած էր, կը պակսէր ամեն ինչ: Կը բանաւ վալիզներս եւ կ'ուրախացնեմ մայրս, սուրճ, շաքար անգամ բերած էի: Լաւ սուրճ մը եփել կու տամ ու դրացիներով կը խմենք: Այսպէս օրերով կը լսեմ մօրս քաշածները, հօրս սնունդի եւ դեղի պակասէն վաղաժամ մահը, Աղանիին քաշածները, Վարդանին գործի մտած ըլլալը տասը տարեկան հասակին՝ օգտակար ըլլալու համար տունը: Արցունքով կը պատմէր Գառնիկ Սարգիսեանէնց տունը օրական 5 դրուշով սեւ չամիչ ճգմելը ոտքերով ու մանաւանդ Գառնիկին մօրը անգութ ընթացքը, որ, հակառակ մօրս աղաչանքին, վեսիքայի⁹⁷ հացը չէր տար մօրս ու դուրսը ատելի սուղ գինով ուրիշներու կը ծախէ եղեր: Իրենք ճերմակ հաց կ'ուտեն եղեր, միայն ողորմած հոգի մեր բարի եւ ազնիւ Թագուհի քուզինը [գարմուխի] իր կարելին կ'ընէ եղեր գաղտնօրէն չամիչ, հաց ու զանազան ուտելիքներ հազուստներուն տակ պահելով կու գայ օգտակար կ'ըլլայ մերիններուն: Ու այսպէս օրերով չլնցան մօրս պատմութիւնները: Կը քաջալերեմ մայրս ու կ'ըսեմ, թէ այլեւս հոգ ընելու պէտք չունի. ողջ ենք ու շուտով կը փրկուինք:

Այսպէս ուրեմն շաբաթ մը մօրս մօտ մնալէ ետք կ'անցնիմ Էօտէմիշ՝ տեսնելու համար քոյրս՝ Աղանին, նաեւ Նուարդ

⁹⁷ *Վեսիքայի* (թուրք.՝ vesika), մթերաբարս:

եւ Յովհաննէս Էթեմէզեանները ու բոլոր ազգականներս: Ի՞նչ երջանիկ օր մ'էր, երբ կը գտնեմ քոյրս՝ կ'ազդուրուած ու առողջացած: Ամառ էր: Կ'երթայինք ձմերուկի եւ թուզի պարտէզները առաւօտուն շատ կանուխ: Ինչ երանելի օրեր էին, կուշտ ու կուռ յագեցած պտուղներէ՝ կը վերադառնայինք տուն: Մօտ շաբաթ մը մնալէ ետք վերադարձայ Իզմիր: Հոս պարտք կը զգամ յայտնելու իմ անկեղծ երախտագիտութիւնս հանդէպ Յովհաննէս Էթեմէզեանին՝ այս բարի ու առաքինի մարդուն, որ յաճախ ծրարներ դրկած է ուտելիքի ու հագնելիքի՝ մօրս ու քոյրերուս: Մանաւանդ ձմռան ցուրտին ու բուքին փոքր տուփերով ալիւր կը դրկէ եղեր ճամբորդներու միջոցաւ Օրոզտի՝ եղբօրս յանձնելու համար, իսկ Նուարդ քոյրս ալ ամեն ջանք ու ինձամբ թափած է բուժելու համար Ադանին: Քոյրս ալ բուժուելէն ետք, իրեն օժանդակութեան փոխարէն, Նուարդին զաւակներուն ինձամբը իր վրան կ'առնէ ու շատ օգտակար կ'ըլլայ Նուարդին՝ տան գործերուն մէջ:

Ամիս մը Իզմիր մնալէ ու սիրելիներս տեսնելէ ու վայելելէ ետք կը մեկնիմ կրկին Հալէպ՝ շատ լաւ պայմաններու տակ: Հագլի ամիս մը երկու անցած էր, արդէն քաղաքական մթնոլորտը տարօրինակ ելեւէջներ կ'ունենար: Մենք, որ կը կարծէինք, թէ Հայ ժողովուրդը ամբողջովին կոտորուած ու լմնցած է, զարմանքով կը տեսնենք թրքական թերթերու մէջ Հայկական Հանրապետութեան ստեղծումը, Խատիսեանի եւ Ահարոնեանի ու զանազան հայերու նկարները, որոնք, իբր պատուիրակ, Պոլիս եկած, ժողովի նստած են թուրք կառավարութեան հետ սկսած էր թրքական ճակատներու փլուզումը: Երուսաղէմի ճակատին վրայ հայկական լեզեոնը յաջողած էր, Արարայի⁹⁸

⁹⁸ *Արարա*, Ռաֆայթ-Արարա բարձունք (Պաղեստին), 1918 թ. սեպտեմբերի 19-ին Պաղեստինի Ռաֆայթ-Արարա բարձունքի մոտ ֆրանսիական զինված ուժերի (այդ թվում նրա կազմում գործող Հայկական լեզեոնի) և թուրքական բանակի միջև տեղի է ունենում Արարայի ճակատամարտը, որին մասնակցում էր մոտավորապես 5 000 հայ և 12 000 թուրք զինվոր: Հայկական ուժերին հաջողվում է ճեղքել թշնամու ճակատը և անցնել

բարձունքը գրաւելով, թրքական ուժերը անելի մատնել⁹⁹: Անգլիացիք կը յառաջանային, թուրքերը ամեն գնով կ'ուզէին ռուսական ճակատը վերջացնել: Կազմելով Կովկասեան երեք հանրապետութիւններ՝ Հայաստան, Վրաստան եւ Ագրայէճան՝ գերմանները կը կորսնցնէին բոլոր ճակատներուն վրայ: Հասած էր գերման ու թրքական բանակներու կործանման ժամը:

Այս փոթորկալից օրերուն ես եւ եղբայրս, միշտ մեր պաշտօնին գլուխը, նորանոր վիրաւորներ կ'ընդունինք: Լուրերը արագընթաց կը հասնին. անգլիացիք Շամր¹⁰⁰ գրաւած են: Ընդհանուր խուճապ Հալէպի մէջ. գերմանները կը հեռանան Հալէպէն, չորս կողմ իրարանցում: Կը գոջամ Հալէպ վերադարձիս. երանի Իզմիր մնայի: Հրաման կը ստանանք հիւանդները հեռացնել դէպի Ատանա՝ թողնելով միայն ծանր հիւանդները: Իրիկուն մը հրաման կը ստանանք ամբողջ բժշկական կազմին հեռացումը դէպի Ատանա: Բոլորս կը պատրաստուինք. գիշերը մութով ճամբայ կ'ելլենք դէպի կայարան: Ժամը հնչած էր ազատագրման: Ես ու եղբայրս, փոխանակ կայարան, կանխաւ պատրաստուած թաքստոց մը կը մտնենք: Հայու մը տունն է: Յովսէփի աղայ ինչ ազնիւ մարդ մըն էր. մեզ կը պահեն քանի մը օրեր: Կ'իմանանք արաբական բանակներու մուտքը, պարիսպին վրայ կը տեսնենք արաբական դրօշի ծածանումը: Ամեն կողմ ցնծութիւն: Փողոց կ'ելլենք՝ աչքով տեսնելու արաբ զօրքերը: Կը հանդիպինք խումբ մը սուլիատորներու, որոնք կու գան մեր վրայ: Կարծելով, որ թուրք ենք, սուլիաները կը քաշեն: Հայ ենք՝ կ'ըսենք: Այս իմանալով՝ ներդուրս կը խնդրեն ու կը հեռանան: Մենք յաջորդ օրը դարձեալ հիւանդանոց կ'երթանք՝ ծանր հիւանդները խնամելու:

թիկունք: Անգլո-ֆրանսիական դաշնակից զորքերի ընդհանուր հարձակման հետևանքով թուրքերը լիակատար պարտություն են կրում, մանրամասն տե՛ս Լեւոն Կ. Լիլլեճեան, *Արարաւ, պատմական ճակատամարտին առթիւ* (Հայրենիք, սեպտեմբեր 19, 1962), 1-2:

⁹⁹ *Անելի մատնել*, անելանելի վիճակի մեջ թողնել:

¹⁰⁰ *Շամր*, Դամասկոս, Շամի պետություն՝ Սիրիա:

Այս օրերուն էր, որ իմ նախկին բժիշկս՝ սուրբօր Իլիաս Ալին, հիւանդ կ'իյնայ ու զինքը տունը դրկելու որոշում կ'անցնեն բժիշկները: Պէտք էր վստահելի մէկը՝ իրեն ընկերանալու համար: Նուֆի Պէկը կը կանչէ զիս ու կըսէ. «Պարոն Օսնի՛կ, քեզի պաշտօն մը պիտի տամ, յուսամ սիրով կը կատարես: Տոքթոր Աշիլը իր տունը օղափոխութեան պիտի տանիս. ինք տկար է: Զանա՛ լաւ պայմաններու տակ զինքը տունը հասցնել: Քեզի ալ ամիս մը արձակուրդ կու տամ. Կը զգամ, որ շատ յոգնած ես, որով իր տան մէջ լաւ մը կը հանգստանաս»: Սիրով կ'ընդունիմ ու քանի մ'օր վերջը ճամբայ կ'ելլենք կառքով մը: Ամբողջ օրը ճամբորդելով՝ զիշերը կանգ կ'առնենք զիտի մը մէջ: Յաջորդ օրը ստիպուած կ'ըլլանք ձիով ճամբորդել՝ անցնելով գեղեցիկ վայրերէ: Կարծեմ չորրորդ ու վերջին օրն էր, ես, ջորիի մը վրայ նստած՝ բժիշկը ձիով մեզի կ'ընկերանար, 4 զինուորներ, որոնք նույնպէս Լաթաքիա կ'երթային: Գետէ մը պիտի անցնէինք, որ խորունկ չէր, տոքթօրը ջուր ուզեց խմել: Ջորիէն վար կը ցատկեմ ու թատով մը ջուր կու տամ: Իրենք կ'անցնին ջուրէն ու անմիջապէս անտառը կը մտնեն, իսկ ես կը ջանամ ջորիին վրայ հեծնիլ. չեմ յաջողիր: Քանի քանի փորձերէ ետք կ'որոշեմ. ոտքս ջորիին վզին պոնճուխներով¹⁰¹ զարդարուած օղակին դնելով՝ ոստում մը կ'ընեմ ջորիին վրայ նստելու: Կարծ չէի ջորի կամ ձի նստելու: Այս բոպէին ջորին, կատղած, ետեւի ոտքերը վեր ընելով, զիս վար կը ձգէ, մինչդեռ ոտքս օղակին մէջ սահելով, ոտքս մէջը սեղմուած, իսկ մարմինս վար ինկած, ձախ թեւս արմուկէն տեղէն ելլելով, միւս կողմէ՝ ջորին վրաս կոխելով՝ կը յառաջանար դէպի ջուրը: Ահաւոր այս դրութեան մէջ կը սկսիմ տոքթօրը ահռելի ուժով մը օգնութեան կանչել: Անտառը կ'արձագանգէր: Քանի մը բոպէ ետք զինուորները կը հասնին ու զիս կ'ազատեն վտանգաւոր դրութենէս: Տոքթօրը կը նստեցնէ զիս, քանի մը ապտակ կու տայ զիս սթափեցնելու համար.

¹⁰¹ Պոնճուխ, ուլունք:

արմուկս տեղը կը դնէ ու ճամբանիս կը շարունակենք: Ամիս մը տոքթորին տունը մնալէ ետք կը վերադառնամ թեւս առողջացած, որ սեփսեւ կտրած էր, եւ որ տաք պանիոններով¹⁰² լաւացած էր, ու կրկին կ'անցնիմ գործիս գլուխը:

ԵՂՔՕՐՍ ԾԱՆԵՐ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Արաքներու գրաւումէն ետք մենք սենեակ մը գտանք, ու հոն կը բնակէինք, բայց միշտ հիւանդանոցի մեր պաշտօնը կը շարունակէինք: Օր մը կ'արթննամ առաւօտուն, կը տեսնեմ Գեղամը անհանգիստ՝ լեզուն ճերմակ. տաքութիւն ունէր: Քանի մ'օրեր կը ինամեմ ու անկողին կը պահեմ, կը տեսնեմ, որ լաւացում մը չկայ, մտահոգ կը վազեմ ծանօթ հայ բժիշկ մը կը բերեմ. առաջին քննելուն թիֆիւզ¹⁰³ է կ'ըլտ: Պէտք է անմիջապէս փոխադրես հիւանդանոց, այլապէս, ես, իբր թաղապետական բժիշկ, ստիպուած եմ լոյր տալ կառավարութեան. կրնայ ըլլալ որ անորոշ տեղ մը փոխադրեն ու վտանգեն եղբայրդ: Անմիջապէս կը վազեմ մեր հիւանդանոցի նոր տնօրէնին ու կը խնդրեմ, որ թոյլատրէ եղբայրս հիւանդանոց բերեմ, քանի որ շատ մը սրահներ պարսպ են՝ հիւանդները Ատանա մեկնած ըլլալով: Տնօրէնը սիրով կ'ընդունի, ու այսպէս 15 օր եղբայրս կը ինամեմ ձեռքովս. ամէն օր ասեղներ կը զարնէի, օրերով 40 աստիճան տաքութիւն ունէր, ոչ մէկ հիւանդապահուիչի կը վստահէի, գիշերները իր մօտ նոյն սենեակին մէջ կը քնանայի, գրեթէ միշտ արթուն էի, մանաւանդ 13-րդ օրը շատ ծանր էր, լեզուին վրայ հաստ կեղեւ գոյացած էր ու չէր կրնար ո'չ խօսիլ, ո'չ կլլել: Սիթորնով լեզուն միշտ կը մաքրէի ու քանի մը անգամ օրական քոֆէին կը զարնէի՝ սիրտը զօրացնելու համար:

¹⁰² Պանիոն, լոզանք:

¹⁰³ Թիֆիւզ (հուն.՝ τυφός), մի քանի սուր վարակիչ հիվանդությունների ընդհանուր անվանում, որոնք ուղեկցվում են բարձր ջերմությամբ:

Վերջապէս, մարդկային ամեն միջոց ի գործ դնելով, ազատեցի եղբայրս ստոյգ մահէ:

Այս օրերուն Հալէայի ազգային մարմինները՝ ի յարգանս միլիոնատր հայ զոհերու, սգատօն մը կազմակերպած էր, ու հսկայ թափորով մը տողանցք, քաղաքի գլխաւոր պողոտաներէն: Առջեւէն երկու հայ լեզեղնականներ արաբական ու հայկական հսկայ դրօշները կը տանէին, ետեւէն՝ հարիւրատր որբեր, չափահաս տղաներ ու աղջիկներ: Յետոյ կու գային հարիւրատր սէւեր հագած սզակիր մայրեր, մէկ խօսքով՝ ամբողջ Հալէայի հայութիւնը, կրնամ ըսել, կը մասնակցէր: Ֆանֆարը¹⁰⁴ սգաւոր երգեր կը զարնէր: Իրաքանչիւր հայ՝ մեծ ու պզտիկ, արցունքոտ աչերով, իրենց կողսուցած սիրելիները կ'ոգեկոչէին. տողանցքը շատ իմաստալից հանգամանք ունէր: Զարթօնքի նշան էր եւ նոյն իսկ վրէժի: Տեղացի թուրք եւ արաբ շատ ծուռ աչքով նայեցան այս ցոյցին: Այն օրերուն Կիլիկիան կը գրաւէին հայկական լեզեղնականները: Ամեն կողմ սուտ լուրեր կը տարածէին տեղացի թուրքերը՝ ըսելով, թէ հայ կամաւորներ արաբներ կը սպանեն ու պիտի գան, Հալէայը պիտի գրաւեն: Ահա՛ այս տեսակ խառնակ օրերուն էր, կարծեմ Վարդանանցի տօնն էր, ուրբաթ առաւօտ մը Հալէայի մեծ պազարն էր: Թուրքերու դրդումով ծագում կ'առնէ հայերու ջարդը¹⁰⁵: Նախ պազարի հայերը կը կոտորին, յետոյ կը յարձակին հայոց թաղերը:

¹⁰⁴ *Ֆանֆար*, փողերախումբ:

¹⁰⁵ 1919 թ. փետրվարի 28-ին Հալէայի հայերը ենթարկվում են մուսուլմանների հարձակմանը: Թուրքերը, առաջնորդելով մի խումբ արաբների, տարածվում են քաղաքով մեկ՝ Զումաա բազար, Ագապե, Բաբ Ալ-Ջնեյ-նի, Բասթալ Հարամի, Բաբ Ալ-Նասր, որտեղ տեղակայված էին հայերի որբանոցը, դպրոցները, նախկին գորանոցը: Շուրջ 50 հայ սպանվում է, 100-ը՝ վիրավորվում: Բրիտանական իշխանությունները, րնդատաօջելով Հայոց առաջնորդարանի դիմումներին՝ ստեղծում են ռազմական դատարան և ձեռքակալում հայերի կոտորածների մի շարք պատասխանատուների, աշխատանքից հեռացնում բռնություններ գործադրած պաշտոնյաներին, իսկ 35 անձ դատապարտվում է մահվան: Մանրամասն տես՝ Նարինե Մարգարյան, *Հայոց ցեղասպանության հետևանքով Սիրիայում*

Շատեր կը դիմադրեն ու վնասներ կու տան արաբներուն: Մեր բնակարանի պատուհանէն աչքերովս տեսայ թաղապետական կառքեր՝ լեցուած հայոց դիակներով, որոնք կը փոխադրուէին Թիլէի¹⁰⁶ հիւանդանոցը: Հարիւրաւոր վիրաւորներ կ'ապաստանէին նոյնպէս հիւանդանոց: Անգլիացիները, որ մինչեւ այս օրը Հալէպ չէին մտած ու թողած էին, որ արաբները կառավարեն քաղաքը, ու իրենք բաական հեռու հաստատուած էին, կոտորածին լուրը առնելով՝ կը հասնին օգնութեան: Հնդիկ զօրքեր նետերով թնդանօթներ ու բազմաթիւ հսկայ ինքնաշարժներով կը յառաջանան դէպի ջարդիյն վայրը ու այսպիսով հարիւրաւոր վիրաւորներ ու մեռածներ կը հաւաքեն: Կէսօրը մօտ էր, ամեն ինչ վերջացած, ապահովութիւնը հաստատուած: Կը վազեմ Թիլէի հիւանդանոցը օգտակար ըլլալու համար վիրաւորեալներուն: Հսկայ բազմութիւն մը դռան առջեւ իր սիրելիներուն մասին լուր մը կ'ուզէին ունենալ: Կը ճեղքեմ բազմութիւնը զինուորականի հանգամանքովս, հնդիկ զինեալ պահակներուն կը յայտնեմ, որ եկած եմ օգտակար ըլլալու վիրաւորեալներուն ու կը յաջողիմ ներս մտնել: Ո՛հ, ի՞նչ սարսափելի տեսարան. բոլոր սրահները լեցուած էին վիրաւորներով, բոլոր Հալէպի հայ եւ քրիստոնեայ բժիշկները հոն էին, ամեն մէկը իր կարելին ի գործ կը դնէր մեղմելու համար վիրաւորներուն ցաւերը: Սրահ մը ամբողջ հայ կիներ ու աղջիկներ՝ ոմանց ծիծերը կտրուած, ուրիշներ, որոնց մատն ու ականջը կտրած էին գոհարեղէնները առնելու համար: Անդին՝ ուրիշ սրահի մը մէջ՝ ծանր գլխէն վիրաւորներ, որոնք հապճեպով փաթթուած ահաւոր ձայներով կը գառանցէին: Ուրիշ սրահի մը մէջ բժիշկները արագ գործողութիւններ կը կատարէին, մէկ խօսքով՝ սարսափելի տեսարան մը կը ներկայացնէր հիւանդանոցը: Ահա՛ այս պահուն դռները կը բացուին, ու քանի մը օթոներ

հաստատուած հայ տարագիրների կարգավիճակը և հայ-արաբական փոխհարաբերությունները (1915-1924) (Երևան, ՀՅԹԻ, 2013), 102-103:

¹⁰⁶ Թիլէյ, թաղամաս Հալէպում:

[ինքնաշարժ] ներս կը մտնեն հիւանդանոցէն: Անգլիական եւ արաբական բարձրագոյն հրամանատարներն էին, որ եկած էին իրենց աչքովը տեսնելու վիրաւորներն ու մեռեալները: Հայ ղեկավարներ կ'առաջնորդէն մեծ սրահ մը, ուր քառասուն հինգ անմեղ հայեր մեռած, շարուած էին քով քովի եւ ոտներուն ծայրը անուննին գրուած: Ի՞նչ սրտաճմլիկ տեսարան. բոլոր մեռեալներու դէմքերուն վրայ սոսկումի ու վախի արտայայտութիւններ կային: Հրամանատարները վայրկեան մը բարեւի կը կենան այս անմեղ զոհերուն առջեւ: Մինչեւ այն օրը արաբները կը կառավարէին մինակնին: Այս տեսակ կոտորած մը պէտք էր, որ անգլիացիները միջամտէին, ու իրենք ձեռք առնէին երկրին ղեկը: Ի՞նչ դաւադիր ու նենգամիտ էր Ալլիոնը: Ջարդի լուրը շատ կանուխէն անգլիական ուժերու հրամանատարութեան հաղորդուած էր հայ ազգայիններու կողմէ եւ պատասխանուած էր, որ այժմ զօրքերը կը ճաշեն, անմիջապէս որ աւարտեն, կը հասնինք: Ու իսկապէս ժամը 11-ին միայն օգնութեան հասան: Արդէն ոճիրը գործուած էր, ու զոհերը միայն հաւաքեցին: Քանի մը օր յետոյ հսկայ թաղում մը տեղի ունեցաւ ամեն մի դագաղ՝ ձիու կառքի մը մէջ տնկուած, ծաղիկներ ու պսակներ ամենուն վրայ: Կրնամ ըսել՝ 50 հազար ժողովուրդ կը հետեւէր այս 45 դագաղներուն՝ վրէժը սրտին ու արցունքը աչերուն:

ՄԵՐ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԴԷՊԻ ԻԶՄԻՐ

... Ամառուայ տաքերը սկսած էին. Հալէպի մէջ խաղաղութիւնը հաստատուած էր: Լուրեր կը ստանայինք Կիլիկիոյ շրջաններէն, ուր հայկական լեզնոններ ֆրանսական դրօշի տակ յաղթանակէ յաղթանակ կը գրաւէին Ատանա, Այնթապ, Մարաշ, Սիս, Տէօրթեոլ ու զանազան շրջաններ: Անհուն փափաք ունէինք անցնիլ Կիլիկիա, հոնկէ՝ Իզմիր, սակայն անկարելի էր. ֆրանսական տեղույս բարձրագոյն բովիսերը վիզայ չէր ուզեր տալ, կարծես տրամադրութիւնները փոխուած էին ու ֆրանսական

կառավարութիւնը չէր ուզեր հայերու գաղթը դէպի Կիլիկիա: Բազմաթիւ հայեր գաղտնի, խուճերով, առանց վիզայի ճամբայ կ'ելլէին Հալէպէն մտնելու համար իրենց ծննդավայրը՝ յաճախ ճամբան կռուի բռնուելով արաբական զօրքերու հետ ու վնասներ կրելով: Վերջապէս բազմաթիւ խնդրանքներէ ետք ու մանաւանդ ապացուցանելով, որ մենք պիտի մեկնինք Իզմիր՝ մեր տունը, ֆրանսական քովիսէրը, կարծեմ «Puon» էր, իմ եւ եղբորս վիզան կու տայ: Այս օրերուն թրքական բանակները ամեն ճակատի վրայ ջախջախուած էին, համաձայնական ուժեր գրաւած էին Պոլիսը, ու Թուրքիոյ երկաթուղագծերու ամբողջ երկայնքին բոլոր կայարանները համաձայնական զօրքերու ձեռքն էր: Թուրքիա ստորագրած էր իր պարտութիւնը՝ առանց պայմանի: Ամեն հայ, որ հրաշքով ազատած էր, չորս տափի տեւող ահաւոր ու աննման պատերազմէն ու կոտորածէն, մէկ մտածում ունէր՝ անցնիլ տուն, իր ծննդավայրը ու գտնել իր սիրելիները:

Ահա՛ այս պայմաններու տակ կը մեկնինք Հալէպէն ու կը հասնինք Ատանա՝ մեր սիրելի ու դարերէ ի վեր երգուած Կիլիկիան: Ի՛նչ երջանկութիւն. ամեն կողմ ուրախութիւն, երգ, խրախճանք չորս կողմ հայկական զօրքեր՝ մաքուր հագուած, լայն կուրծքերով, առողջ կեցուածքով: Այս զօրքերը, որոնց մեծամասնութիւնը Ամերիկայէն եկած էին, տոլարներով, մէկ մտածում ունէին. կռուիլ թուրքերու դէմ ու իրենց կորսնցուցած սիրելիներուն վրէժը առնել դասաճան թուրքէն: Օր մը հայկական լեգէոնին մէկ պաշտօնական տողանցքին ներկայ եղայ Ատանայի մէջ: Յուզումէն չէի կրնար զսպել արցունքներս. սովինները մէկ գծի վրայ, մաքուր, առողջ կեցուածքով, ոչ մէկ ազգի գինուոր կրնար հաւասարիլ հայկականին: Ափսոս, որ այս կամաւոր լեգէոնները, որոնք բերուած էին Երուսաղէմի ճակատէն, սկսած էին դժգոհ վիճակ մը ստանալ: Տրանսական գինուորական հրամանատարութիւնը կը կասկածէր հայկական օճախի մը կազմութեան: Բազմաթիւ սպաներ կաշառուած էին թուրքերէ: Շատ մը վայրերու մէջ հայ կամաւորներ ֆրանսացիներու մեղսակցութեամբ կոտորուեցան թուրքերէ: Հաճը-

նր որ ամիսներէ ի վեր պաշարուած էր թուրքերէ, որուն ժողովուրդը ու հայ կամաւորներ հերոսաբար կը դիմադրէին ճեպլ-ճիի հրամանատարութեան տակ, եւ որ բազմաթիւ սուրհանդակներ դրկած էր ֆրանսացիներուն՝ անմիջական օգնութիւն խնդրելով. մանաւանդ փամփուշտի, սնունդի ու դեղորայքի: Ֆրանսացի հրամանատարը ոչ միայն չհասաւ օգնութեան. այլ եւ արգիլեց հայերու ձեռքով կազմակերպուած օժանդակ ուժեր, որ օգնութեան հասնին իրենց եղբայրներուն՝ գրաւելով անոնց ջորիներն ու զէնքերը: Շատ պարզ կ'երեւար, որ ֆրանսացիները դէմ էին հայկական Կիլիկիա մը կազմուելուն ու կ'ուզէին ամեն գնով թուրքերու բարեկամութիւնը շահիլ: Նոյն իսկ հայ կամաւորներ երգ մը շինած էին.

Ասպետական սեւ սատանան
Կ'ուզէ կլլել մեր Ատանան,
Լէպլէպուճի¹⁰⁷ ըրին մեզի,
Առտու իրկուն սիսեռ կու տան:

Ատանա եկաւ Ալեմային,
Ուր կը հսկէր թուրքին վալին,
Ո՛ւր կը տանէք այսքան հային՝
Հարցուց մերին քոլոնէլին¹⁰⁸:

Մենք վալիին բարեւ չենք տար,
Թէ որ ընէք գնդակահար,
Բարեւեցինք հինգ երկար դար,
Դուք եղած էք թուրքէն ալ վար:

Հալիները¹⁰⁹ Պընտըր կապած,
Դէպի Փարիզ ճամբայ հանած,
Հայ զինուորներ՝ ճամբան բռնած,
Մերսինի մէջ վար են դրած:

¹⁰⁷ *Լեպլեբիջի*. ոլոռ վաճառող:

¹⁰⁸ *Քոլոնէլ*, գնդապետ:

¹⁰⁹ *Հալի*, խալի, գորգ, օգտագործվում է նաև «բոխչա» իմաստով՝ հագուստկապուստ:

Ահա այս երգերը կ'ապացուցանեն հայ կամաւորներու ունեցած ցան ու դժգոհութիւնը ֆրանսացիներէն, որոնք խաբուած էին զանազան խոստումներով, ու, իրենց գործն ու տունը ձգելով, եկած էին զանազան երկիրներէ՝ անկախ Հայկական Կիլիկիա մը ունենալու փափաքով ու երագով, ֆրանսական մանտայի¹¹⁰ տակ:

Պէտք է ընդունիլ, որ հայերն ալ այն օրերուն մեծ սխալներ գործեցին: Ազգային մարմիններ անկախութիւն հռչակեցին ու հեռագիրներ տեղացուցին չորս կողմ: Ամերիկահայեր էլան Ամերիկեան մանտայ ուզեցին: Ասոնք սխալ ակտեր էին, Ֆրանսային զգուցուցին, ու մեր ապագայ բոլոր երազները ջուրը ինկաւ՝ Ֆրանսիին-Պոլոններու¹¹¹ թրքաւեր քաղաքակաւութեան շնորհիւ, որով ոչ միայն պարպուեցաւ Կիլիկիան, այլ եւ շատ անելի յետոյ մեր զմայլելի Իսկէնտերունը:

Այսպէս մօտ 15 օր մնալէ ետք Ատանա կը մեկնինք՝ դէպի Իզմիր, ու չորս օր ճամբորդելէ ետք կը հասնինք տուն: Յնծութիւն կը տիրէր տան մէջ, երկու եղբայր վերադարձած էինք ողջ առողջ, ապագան մերն էր, ժամանակ չկար անցընելու, պէտք էր անմիջապէս գործի սկսիլ՝ կործանած մեր տնտեսութիւնը փրկելու համար: Երկուքս ալ զանազան պաշտօններով կը սկսինք աշխատիլ ու շահիլ: Նախ կը փոխենք մեր Բորտելիոյի փոքր բնակարանը, ու կը փոխադրուինք Իզմիր՝ Այ

¹¹⁰ *Մանտայ* (լատ.՝ *mandatum*), մանդատ, լիազորություն, հանձնարարություն:

¹¹¹ *Հենրի Ֆրանկլին Բուլոն* (Henri, Franklin Bouillon, 1870-1937), ֆրանսիացի քաղաքական գործիչ:

1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում Ֆրանսիայի և Անկարայի ազգային մեծ ժողովի կառավարության միջև կնքվել է Ֆրանկլին Բուլոնի կամ Անկարայի պայմանագիրը, համաձայն որի նախատեսվում էր պատերազմի դադարեցում և երկու ամսվա ընթացքում ֆրանսիական զորքերի դուրսբերում Կիլիկիայից՝ բացառությամբ Ալեքսանդրետի սանջակի. այն «հատուկ վարչակարգի» կարգավիճակով մնում էր Ֆրանսիայի կառավարման ներքո: Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը երաշխավորում էր ազգային փոքրամասնությունների իրավունքները:

Եօրքի թաղ՝ պարոն Թաղեոսեաննց բնակած շէնքը՝ շնորհիւ Յովհաննէս Էթեմեզեանի բարոյական եւ նիւթական գոհողութեան եւ օժանդակութեան: Ժամանակ մը իր բացած խանութին քարտուղարն ու տոմարակալը¹¹² կ'ըլլամ, ու այսպէս երկու եղբայր քիչ ժամանակուայ մէջ կը բարելաւենք մեր տան կենցաղը: Վարդան՝ փոքր եղբայրս, Մեսրոպեան վարժարան կը գետնդէնք, Աղանին Էօտէմիշէն բերել կու տանք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

1919 թուականը պատմական էր Իգմիրի հայութեան համար: Հայաստանի Հանրապետութեան ստեղծումը մեծ խանդավառութիւն ստեղծած էր: Բացուած էին զանազան ակումբներ՝ տարբեր միութիւններու կողմէ: Դաշնակցութիւնը ունէր Ժողովուրդի տունը, որուն ղեկավարութիւնը ինձի յանձնուած էր: Կազմած էինք Հայ սպայից միութիւնը, եւ բազմաթիւ սպաներ ղրկած էինք Հայաստան, միւս կողմէ գէնք կը ղրկէինք գաղտնի միջոցներով Կիլիկիա՝ զինելու համար հայութիւնը, կը կազմակերպէինք հանդէսներ՝ գրական եւ գեղարուեստական: Ունէինք ճոխ գրադարան մը, կը ստանայինք բազմաթիւ թերթեր ու գրքեր Հայաստանէն ու արտասահմանէն: Դիմեցինք Իգմիրի մեծահարուստ հայ վաճառականներուն, որ մեզի տրամադրեն ճերմակ ու հաստ հիւսուածեղէն, որոնցմով պարկեր պատրաստելով՝ կ'ուզէինք հայ զինուորին կադանդի նուէր ղրկել: Վաճառականները սիրայօժար տրամադրեցին բազմաթիւ ծրարներ, զորս Ժողովուրդի տուն բերելով՝ բազմաթիւ կուսակցական ու համակիր աջակներու ձեռքով հարիւրատր պարկերու վերածուեցան: Այս պարկերը մեր բազմաթիւ ընկերներու ձեռքով բաժնուեցան հայերու բնակարանները

¹¹² *Տոմարակալ*, հաշվապահ:

շրջաբերականով մը: Շաբաթ մը յետոյ հարիւրաւոր պարկերը լեցուած ու կարուած կը հասնէին ակումբ: Միայն Էօտէմիշէն ստացանք 6 խոշոր սնտուկներ՝ ծրարներով լեցուն: Այսպէս չորս կողմերէն հաւաքուած ծրարները սնտուկներու մէջ լեցնելով՝ շոգենաւ դրուեցան, որ Հայաստանի դրկուին Պաթումի վրայով: Ցաւալի է, որ դէպքերը իրար ետեւէ արգելք եղան, որ նաւը Պաթում հասնի, ու այսպէս սնտուկները Պոլիս վար դրուեցան ու գործածուեցան բարենպաստակ հաստատութեանց ձեռքով:

Այս օրերուն Հայաստանի վարչապետ Ա. Խատիսեան¹¹³ Իզմիր եկած էր մասնաւոր Յունական նաւով մը. ինչ խանդավառութիւն: Պարոն Խատիսեան հիւրասիրուեցաւ պարոն Մարտիրոս Սարրեանի¹¹⁴ հսկայ պալատին մէջ՝ Հորտեւլոյի ծովեզրին վրայ: Զանի մը հարիւր ընկերներ ու բարեկամներ ներկայ էին այս ընդունելութեան՝ տեսակ մը «Կարտըն փարթի», ուր պարոն Խատիսեան երկար բացատրեց Հայաստանի ներկայ վիճակը, անմիջական կարիքները, ու ոսկիի ֆոնտ [հիմնադրամ] մը հիմնելու ծրագիրը Հայաստանի պետական Մատուկին համար: Իզմիրի էլ շրջակայ քաղաքներուն մէջ մասնաւոր եկեղեցական պատարագներ տեղի ունեցան, ուր ճառախօսներ պարզեցին պարոն Խատիսեանի այցելութեան նպատակը: Ես ներկայ եղայ Իզմիրի Սուրբ Ստեփանոս հսկայ մայր տաճարին մէջ հազարաւոր բազմութեան առջեւ պարոն Խատիսեանին խօսած ճառին: Ժողովուրդը, որ 600 տարիէ վերջ, առաջին անգամ ըլլալով, անկախ Հայաստանի մը գոյութիւնը կ'ողջունէ, իր առաջին վարչապետին խանդավառ ճառէն կը հանէ իր վրայ ունեցած որեւէ ոսկիէ զարդ ու կը նետէ եկեղեցիին ճիշդ մէջտեղը փոռած հսկայ սաւանի մը վրայ: Կիներ ու աղջիկներ կը հանեն իրենց ապարանջան-

¹¹³ *Ալեքսանդր Խատիսեան* (1874-1945), Հայաստանի առաջին հանրապետության արտաքին գործերի առաջին նախարար և երկրորդ վարչապետ:

¹¹⁴ *Մարտիրոս Սարրեան* (1870-1940), Մանիսայում հայտնի առևտրական:

ներն ու մատանիները ու կը նետեն սաւանին վրայ: Շատեր կու լային յուզուած՝ տեսնելով ժողովուրդային այս ինքնաբերական արտայայտութիւնը: Քիչ ատենուայ մէջ մեծ քանակութեամբ արժէքաւոր իրեր հաւաքուեցան: Այսպէս ամեն շրջաններէն նոյն ձեով արժէքաւոր իրեր հանելով՝ յանձնուեցան պարոն Խատիսեանի, որ տարաւ հետը Հայաստան՝ գորացնելու համար պետական գանձը: Ես կասկածներ ունիմ, որ այդ տարուած ոսկեղէնը իրենց նպատակին չժառայեցին, քանի որ քիչ ժամանակ յետոյ պոլշեփկեան յառաջխաղացումով՝ Հայաստանի դաշնակցական ղեկավարները գերի շինալու համար հեռացան Հայաստանէն դէպի Պարսկաստան՝ անշուշտ հետերնին տանելով ոսկիի ֆոնտը: Տարիներով այս ոսկիի ֆոնտի հարցը ծեծուեցաւ հակառակորդ թերթերու մէջ՝ գիտնալու համար թէ ի՛նչ եղան այդ հաւաքուած ոսկեղէնը: Ես անգամ դեռ չեմ գիտեր ու յաճախ կը կասկածիմ:

ԻԶՄԻՐԻ ԳՐԱԻՌԻՄԸ ՅՈՒՆԱԿԱՆ ԶՕՐՔԵՐՈՎ

1920 թուի գեղեցիկ օր մըն էր: Իմ սիրելի ազգականիս՝ Գառնիկ Յովհաննէսեանի հետ կը պտտէինք Քարափին վրայ՝ վիճարանելով զանազան նիւթերու շուրջ: Հագիւ թէ մօտեցած էինք նաւամատոյցի ընկերութեան, յանկարծ հեռուէն կը նշմարենք բազմաթիւ նաւեր, որոնք, սուլելով, սահաւոր մեծ աղմուկով մը, կը մօտենային ծովափ: Ամբողջ ծովեզերքի ժողովուրդը, անտեղեակ բոլորովին, զարմանքով կը դիտէր այսքան բազմաթիւ նաւերու երևումը: Քանի վայրկեանները կ'անցնէին, նաւերը կը խոշորնային, ու հագիւ տաւոր վայրկեան վերջ արդէն մօտ 15 հսկայ նաւեր՝ մինչեւ կայմերու գագաթները մագլցած հազարաւոր յունական գօրքերով, կը խարսխեն կարգով ծովեզերքին առջեւ, ու կը սկսին հսկայ կամուրջները նետել քարափին վրայ ու դուրս թափել, ու շարքեր կազմել: մենք շուարած էինք այս արագ գրաւման պա-

հուն ու պատի մը տակ կայնած, զարմանքով կը դիտէինք ու կը զգայինք, որ տխուր դէպքերու ականատես պիտի ըլլանք: Յայտնի կ'երեւար որ Իզմիրը ծախուած էր յոյներուն, նենգաւիտ Ալայիոնի մեղսակցութեամբ. ու նաերը մտած էին Իզմիրի ծովախորշը առանց թնդանօթի հարուած մը քաշելու թուրք պահակներու կողմէ: Այսպէս յունական զօրքերը խիտ շարքերով կը յառաջանան դէպի զօրանոցը՝ գրաւելու համար: Հազիւ թէ բանակը մօտեցած էր զօրանոցին, կը լսենք գնդացիներու ահաւոր զարկը: Զօրանոցի մէջ հաւաքուած թուրքական սպայակոյտը՝ բազմաթիւ սպաներով ու կռուող ուժերով, ուզած էր դիմադրել ու կռուով յանձնել քաղաքը, ու անխնայ կը կրակէին յառաջացող բանակին վրայ: Յոյները՝ վայրկեան մը անակնկալի եկած. ետ-ետ ընկրկում մը ունեցան, բայց անմիջապէս մեծ յարձակումով մը գրաւեցին զօրանոցը ու, բոլոր դիմադրողները գերի բռնելով քանի մը հարիւր հոգի, ձեռքերնին վեր բարձրացուցած, շրջապատուած էլզոն սուլինատրներով, անցուցին ծովեզերքի վրայով ու, շարունակ ստիպելով իրենց սուլիններուն ծայրով, որ գոչեն Զիթօ Վենիզելոս¹¹⁵, այսինքն՝ կեցցէ Վենիզելոս՝ օրուայ Յունաստանի վարչապետը: Այս բոլոր գերիները անմիջապէս նաւ փոխադրեցին ու դրկեցին Յունաստան: Ահա՛ այս իրար անցումին մէջ յունական զօրքերը հրաման ստացան թափանցելու քաղաքին խորերը: Սուինատր խումբեր թուրքեր կը փնտռէին ու տեղն ու տեղով կը սպանէին: Ես ու Գառնիկը, կացութիւնը վտանգաւոր նկատելով, խոհեմութիւն սեպեցինք մօտակայ Սիրաիէ Դաւիթեանի տունը ապաստանիլ՝ հաւանական վտանգէ մը գերծ մնալու համար: Պէտք է քսեմ, որ Գառնիկը՝ չափազանց յուզուած ու մանաւանդ խորհելով, որ իր կինն ու զաւակները Էօտէվիշ կը գտնուին, կասկածելով, որ թուրքերու կողմէ կրնան ջարդուիլ, ջղային նուազ մը ունեցաւ. կու լար, կը պոռար, կինն ու զա-

¹¹⁵ *Էլնիթերիոս Կիրիակոս Վենիզելոս* (1864-1936) (հուն.՝ Έλευθέριος Κυριακος Βενιζέλος). Իտլի պետական և քաղաքական գործիչ, Հունաստանի վարչապետ (1910-15, 1917-20, 1924, 1926-32 և 1933-35):

լակները կը կանչէր: Շատ դժուարաւ հանդարտեցուցինք զինքը: Այս վայրկեաններուն մեր գոնուած տան մօտերը երկու հակայոյն թուրքեր տուներնէն դուրս քաշելով՝ բազմաթիւ յոյներ դաշոյններով սպանեցին երկու թուրքերը՝ յոյն զինուորներու ներկայութեան: Ես վերէն զարմանքով կը դիտէի այս թուրքերու սպանութիւնը, մանաւանդ մին ճիշդ մեր տան առջեւ էր ու, հակառակ ստացած բազմաթիւ դաշոյնի հարուածներուն, կը շարունակէր ոտքի վրայ մնալ: Այդ րոպէին մէկը դաշոյն մը խրեց վզին տակի մեծ երակին. արիւնը ժայթքեց բարձր, ու մարդը, որ հուժկու մէկն էր, տապալեցաւ գետին: Յոյները կողոպտեցին բոլոր վրայի հագուստները, թողուցին միայն մէջի վարտիքը: Գօտին առնելու համար երկու հոգի, ուժեղ բռնած գօտիին ծայրէն, վեր կը քաշէին ու դիակը կը դառնար ինքն իր վրայ: Մինչեւ անգամ ոսկիէ ակօսաները քակեցին: Իսկապէս շատ տխուր տեսարան մըն էր, որ օրերով մտքէս չկրցայ հեռացնել: Ուշ ատեն, երբ բաւական յառաջացած էին յոյները դէպի քաղաքի խորերը, դուրս ելանք ու մեր բնակարանը հասանք՝ ճամբուն վրայ բազմաթիւ դիակներ տեսնելով:

Այսպէս ուրեմն, յոյները քանի մը ամիսներու մէջ բազմաթիւ քաղաքներ գրաւեցին ու հասան Ուշաբ: Թուրքերը, ամեն տեղ դիմադրելով, կը յանձնէին իրենց դիրքերը, ամեն տեղ արիւն կը հոսէր: Զիչ վերջը Էօտէմիշն ալ գրաւուեցաւ: Ամեն տեղ հայերը սիրով կը դիմադրէին յունական զօրքերը՝ ի բնէ թուրքին դէմ վրէժով լեցուած: Առիթը եկած կը կարծէինք մեր վրէժը առնելու: Թորգոմ զօրավար Իզմիր եկած էր, ու կամաւորական անկախ խումբեր կազմած՝ յունական բանակներու առջեւէն կ'երթային, կ'ասպատակէին ու կը կոտորէին ու կը կողոպտէին հանդիպած գիւղերն ու քաղաքները: Այս խումբերը՝ իբր յառաջապահ ուժեր, յունական հրամանատարութեան ազդեցութեան ու հրամանին տակ կը գործէին: Թուրքերը, հայերուն դէմ ակռայ կը կրճտէին: Ափսոս, որ այս հայկական ուժերու գործած ոճիրներն ու ասպատակութիւնները ապա-

գային շատ սուղի նստաւ հայոց, որու մասին պիտի խօսիմ աւելի վերջ:

Իզմիրի եւ շրջաններու գրաւումը՝ Յունաստանի կողմէ, անգործութիւն բերաւ երկրին մէջ. Յունաստան՝ արդէն աղքատ երկիր, չէր կրնար նիւթական հսկայ ուժեր տրամադրել երկրին վերելքին, ընդհակառակը՝ գրաւող ուժերը կը սպառէին երկրին հարստութիւնը, որով վաճառականութիւնը կանգ առած էր. անգործութիւն կար ամեն կողմ: Ահա՛ այս օրերուն ստիպուած կ'ըլլամ թողոյ Էթեմէզեանի քովի պաշտօնս ու փոքրիկ դրամագլխով կը գնեմ շատ մը իրեր, որոնք յունական զօրքերուն պէտքացու են ու կ'երթամ Ուշաք: Հոն պզտիկ անկիւն մը կը գտնեմ ու կը սկսիմ գործի: Յունարէն գիտնալս շատ կը նպաստէ յաջողութեանս. քանի մը ամսուայ մէջ կը բազմապատկեմ դրամագլուխս: Յաճախ Իզմիր կ'իջնեմ ու նորանոր ապրանքներ կը տանիմ Ուշաք ու մեծաքանակ կը ծախեմ. ալ փրկուած էի, կլոր դրամագլուխի մը տէրն էի: Հոս բաւական ամիսներ մնալէ ետք, կ'իմանանք, որ Աֆիոն Բարահիսար գրաւուած է յոյն զօրքերով: Կը դիմեմ յոյն կառավարիչին ու արտօնութիւն կ'ուզեմ Աֆիոն Բարահիսար անցնելու՝ իբր վաճառական: Կը յայտնէ, որ տակաւին ճամբաները ապահով չեն, թէ կրնամ վտանգել կեանքս: Վերջապէս մէկ երկու ամիս վերջը մօտ տասը հայ եւ յոյն վաճառականներ արտօնութիւն կը ստանանք մեկնելու: Ամբողջ դրամագլուխս ապրանքի կը կապեմ ու բազմաթիւ կառքերով ճամբայ կ'ելլենք դէպի Աֆիոն: ճամբու կամուրջները քանդուած էին. քանի մը փոքր գետերէ անցանք՝ մինչեւ ծունկերնիս ջուրին մէջ, մեծ նեղութիւն քաշեցինք, մինչեւ որ ձիերը եւ կառքերը դուրս հանեցինք ջուրէն: Կ'անցնէինք թրքական գիւղերէ, հաց եւ ուտելիք կ'ուզէինք գիւղացիներէ, դուռերնին երեսնիս կը գոցէին՝ «կեաւորին հաց չունինք տալու» ըսելով: Այսպէս ճամբանիս շարունակելով՝ իրիկուն ուշ ատեն հասանք Աֆիոն:

ԱՖԻՈՆԻ ՄԷՋ ԽԱՆՈՒԹ ԲԱՆԱԼՍ

Ցաջորդ առաւօտուն շուկայ կ'ելլեմ գաղափար մը կազմելու համար հրապարակի կացութեան: Խանութներուն մեծ մասը փակ էին, մէկ մասն ալ՝ կէս մը բաց, ուր թուրք խանութպաններ, պարապ խանութին առջեւը նստած, կկկակ¹¹⁶ կը քաշէին: Յայտնի կ'երեւար ապրանքի պակասութիւնը: Յոյն զինուորներ ի գուր կը փնտռէին իրենց պէտք ունեցածը: Վեր վար պտտելով՝ կը գտնեմ գեղեցիկ խանութ մը փողոցի վրայ՝ մեծ ապակիներով: Կը մտնեմ ներս ու կը հարցնեմ թուրքին. եթէ կ'ուզէ զիս վարձել խանութը, սիրով կ'ընդունի ու կը համաձայնիմք, ու քանի մ'օր վերջը կը յանձնէ: Անմիջապէս կը մաքրեմ չորս դին ու կը շարեմ բերած ապրանքներս: Ունեցածներս բոլորն ալ զրեթէ զինուորներու պէտքացու քաներ էին: Երբ ամեն ինչ վերջացուցած՝ առաւօտ մը խանութիս փեղկերը կը բանամ, զարմանքով կը դիտեմ յոյն զինուորները, որոնք խանութիս ճոխութեան առջեւ խաչ կը հանեն՝ «փառք Աստուծոյ, քրիստոնեայ վաճառական մը եկած է» ըսելով: Խենդենալիք գործ: Դադար չունէի: Զօրքերը զինը չէին հարցնէր. ուրախ էին, որ ուզածին կը գտնեն: Ու այսպէս քանի մը օրուայ ընթացքին, կրնամ ըսել, կը լմնցնեմ ապրանքներս: Կ'իմանամ, որ նոր վաճառականներ եկած են, կ'երթամ կը գտնեմ: Նոյն օրն իսկ կը համաձայնիմք ու բոլորը կը գնեմ ֆաթթիւրի¹¹⁷ վրայ 30 տոկոս շահով: Բերողները լուր չունէին ապրանքի պակասի մասին, ու այսպէս յաճախ գնումներ ընելով տեղոյն վրայ՝ միշտ առատ տեսակ կ'ունենայի: Երկաթուղին տակաւին չէր գործեր, կամուրջները քանդուած էին, որով շատ դժուար էր ապրանք փոխադրելը: Այս պայմաններու տակ քանի մը ամիսներու մէջ մեծ յաջողութիւն կ'ունենամ ու դրամագլուխս զգալիօրէն կ'աւելցնեմ: Երբ երկաթուղին կանոնաւոր կ'աշ-

¹¹⁶ *Կկկակ*, ղեյլան, նարգիլէ:

¹¹⁷ *Ֆաթթիւր*, անդորրագիր:

խատի, քանի մը օրուայ համար կը գոցեմ խանութս ու կը նե-տուիմ մեծաքանակ ապրանք բերելու Իզմիրէն: Սքանչելի տեսակ մը կը պատրաստեմ քանի մը օրուայ մէջ ու հետս կը տանիմ Աֆիոն՝ գարմանք պատճառելով բոլոր ծանօթներուս, որ այսքան կարճ ժամանակի մէջ յաջողած էի այս տեսակ կա-ցութիւն մը ունենայ:

Աֆիոնի մէջ կը բնակէի ազնիւ հայ ընտանիքի մը մօտ, որ իմ կերակուրս ալ կը պատրաստէր, շատ բարի ու ազնիւ կիին մը՝ տիկին Աղանի, որուն երկու մանչ զաւակները կը գտնուէին քեմալական կառավարութեան ձեռքը իբրեւ գերի:

Գիշեր մը իմ խոր քունիս մէջ, սենեակիս դուռը կը գար-նուի, տեղէս կը ցատկեմ: Տիկին Աղանին՝ էր. «Ե՛լ, պարոն Օննիկ, Աֆիոնը կ'այրի. շո՛ւտ ել»: Պատուհանս կը բանամ: Ո՛հ, ի՛նչ տեսարան. երկինքը՝ լոյսերու մէջ, շուկայի կողմը՝ ահաւորօրէն բոցերու մէջ, քաղաքը կ'այրէր: Կը մտաբերեմ իմ այսքան զոհողութիւններով ձեռք ձգած խանութս, որ բո-ցերու մէջ պիտի փչանայ մէկ գիշերուայ մէջ: Հապճեպով կը վազենք: Լապտեր մը տիկին Աղանիին ձեռքը՝ դէպի խանութ կը մօտենանք՝ կրակին վայրը: Խանութները կ'այրէին իրար ետեւ: Աչքերովս տեսայ թուրքեր, որ տուներէն ջուր կը բե-րէին թիթեղներով, որ կրակը մարեն: Յոյն զօրքեր կ'արգիլէին իրենց սովիններով. յայտնի կ'երեւար, որ յոյն զօրքերը դրած էին կրակը: Հազիւ ճամբայ մը գտնելով՝ կը հասնինք խանութ ու կը սկսինք ապրանքները սնտուկներու մէջ լեցնել: Այն ի՛նչ ահաւոր գիշեր էր. զօրքերը խանութները կը մտնէին կողոպու-տի համար: Բարեկամ ազնիւ յոյն սպայ մը կը վազէ կու գայ ու խանութիս առջեւ ասորճանակը ձեռին պաշտպան կը հանդի-սանայ:

Ուրախ եմ յայտնելու, որ կրակը կանգ կ'առնէ՝ առտուան դէմ խանութէն բաւական հեռու, որով փրկուած կ'ըլլամ ստոյգ կորուստէ:

Գործս օրէ օր կը յառաջանայ, բանուոր կ'ունենամ, օգ-նական ու աւելի վերջ կը ստիպուիմ եղբօրս հեռագրել, որ իր

գործը քէ ու գայ իմ մօտ: Եկած օրը իրեն կը յայտնեմ որ ինչ որ ունիմ, երկուքիս է, թէ իբր ընկեր հաւասար իրաւունքով պիտի աշխատի քովս: Ու այսպէս բաւական գործին վարժուելէ ետք ես յաճախ Իզմիր կ'իջնէի՝ գնումներ ընելու, խանութք Գեղամին ձգելով:

Կրնամ ըսել՝ կեանքիս առաջին յաջողութիւնս էր, որ ունեցայ՝ շնորհիւ իմ ուժեղ կամքիս ու եռանդիս: Մօտ քառասուն կտոր գորգեր ու քիլիմներ¹¹⁸ գնած էի ու փոխադրած Իզմիր: Տանս բոլոր պատերը զարդարած էի գորգերով, տունն այցելողը պարտէզի մէջ կը զգար ինքզինքը, մէկ խօսքով՝ ամբողջ ընտանիքը փրկուած էր, գործս միշտ կ'ընդարձակէր, խանութս եկողը ուզածը կը գտնէր, հարիւրաւոր մանդոլին, կիթառ, ջութակ ծախած եմ զօրքերուն: Յաճախ սպանները կու գային սքանչելի կտորներ կը նուագէին խումբով: 1920 թուականն էր: Յունական բանակը մեծ պարտութիւն մը ունեցած էր Սաքարիոյ առջեւ, որ շատ բարոյալքեց յունական զօրքերը, որոնք ետ եկան՝ չափազանց կոտորակուած, յոգնած եւ ուժասպառ: Յաւալին հոն էր, որ բանակին մէջ երկու հոսանք կար՝ թագաւորական ու հանրապետական, որոնք հակառակ էին իրարու, եւ որ իրենց պարտութեան ամենամեծ պատճառներէն մին եղաւ:

ԱՖԻՈՆ ՔԱՐԱՀԻՄԱՐԻ ՃԱԿԱՏԻՆ ՓԼՈՒԶՈՒՄԸ ԵՒ ԽՈՒՃԱՊԱՐԱՐ ՄԵՐ ՓԱԽՈՒՄՏԸ 1922 ՕԳՈՍՏՈՍԻՆ

Յունական բանակի բարոյական ուժը խախտած էր, պատերազմը կ'երկարէր ու նորանոր գոհեր կը խլէր, սնունդի որակը զգալիօրէն պակասած էր: Քեմալական ուժերը չէին ջախջախուած, յոյն զինուորը զգուած էր, տուն կ'ուզէր վերադառնալ: Յաճախ սպանները կ'ըսէին ինձի. «Ի՞նչ գործ ունինք այս հեռաւոր Անատոլիոյ տափաստաններուն մէջ, որո՞ւ եւ ինչո՞ւ

¹¹⁸ Քիլիմ, կարպետ:

համար հոս եկած ու մեր կեանքը կը գոհենք, պետք է վերջ տալ այս անիմաստ կռուին»:

1922 օգոստոսի տաք ամիսն էր: Գործս հրաշալիորէն կը քալէր, ամսոյս 15-ին կ'որոշեմ կրկին Իզմիր մեկնիլ՝ նոր տեսակներ բերելու համար: Յոյն զինուորը առատ դրամ ունէր, կ'ուզէր ծախսել: Վակոն մը մօտ 20 սնտուկ նոր տեսակներ բեռցած կը մեկնիմ Իզմիրէն: Ուշաք կը հասնիմ բազմաթիւ վալիզներով ու հոն կը հանդիպեմ Օրոզուիի ներկայացուցիչ Յ. Յովհաննէսեանին ու կը խնդրեմ իրմէ, որ եքք վակոնս հասնի, անմիջապէս Աֆիոն դրկելու գործողութիւնները կատարէ, որ օր առաջ ստանամ: Ու ես կ'առնեմ իմ բազմաթիւ վալիզներս, որոնք արժէքաւոր իրերով լեցուն էին, ու կը մեկնիմ Աֆիոն: Ճամբուն զարմանքով կը նշմարեմ հեռուն՝ Սանտքլլի լեռներուն վրայ հսկայ մուխեր, որոնք կ'երկարէին ամբողջ մեր ճամբու ընթացքին: Ափսո՛ւ, յետոյ հասկցանք, որ պատերազմը ահաւորօրէն սկսած ու նոր փուլի մէջ մտած էր:

Իրիկուն կը հասնիմ Աֆիոն: Ռ՛հ, ի՛նչ ահաւոր տեսարան. բազմաթիւ վակոններու մէջ շարուած հարիւրաւոր յոյն վիրաւորներ օգնութեան կը կանչէին. «Վոյիթիա»¹¹⁹: Կը սահմուկիմ այս անակնկալ տեսարանին առջեւ ու, վալիզներս առնելով, դուրս կ'ելլեմ կայարանէն: Ճիշդ այս միջոցին թրքական թեթեւ ռումբ մը կ'իջնայ կայարանին վրայ՝ իրարանցումի մատնելով հրամանատարութիւնն ու պաշտօնէութիւնը: Ես անմիջապէս ձիու կառք մը կը վարձեմ ու կը հասնիմ խանութ: Գեղամը անհոգ նստած էր, ոչ մի լուր ունէր կացութեան մասին: Հայ եւ յոյն վաճառականներ կու գան խանութս՝ լուր մը առնելու դէպքերու եւ կացութեան մասին: Կը նկարագրեմ ճամբու տեսածներս ու մանաւանդ ռումբի պայթումը կայարանին մէջ, կը յայտնեմ, թէ կացութիւնը շատ վտանգաւոր ըլլալու է ու կը յանձնարարեմ արթուն մնալ գիշերը, ու ասորճանակները բարձին տակ, պաշտպանուելու համար որեւէ հաւանական յար-

¹¹⁹ Վոյիթիա (հուն.՝ βοήθεια), օգնություն:

ձակումէ: Բարեբախտաբար գիշերը անվտանգ կ'անցընենք: Յաջորդ օրը՝ կիրակի 22 օգոստոս, պայծառ առաւօտ մըն էր, ամեն կողմ խաղաղ էր: Թուրք խանութպաններ խանութնին կէս բաց, մռայլ դէմքերով կլկլակ կը քաշէին. կարծես գիտէին քիչ վերջը պատահելիքը:

Կ'այցելեմ հայ բարեկամ խանութպաններուն. կը խօսինք կացութեան մասին, բայց ոչ ոքի մտքէն կ'անցնէր, որ հազիւ ժամ մը վերջը պիտի թողնէինք ամեն ինչ եւ խուճապահար պիտի փախչէինք քաղքէն: Եւ իսկապէս քիչ ետք, երբ կը վերադառնամ խանութ քանի մը ընկերներով, ու կը սկսինք Մանիսայէն հետս բերած խաղող ու թուզերը ուտել: Ժամը 10-ի մօտերն էին: Յանկարծ խուճապ մըն է կը սկսի. դուրս կը նետովինք զարմացած, սարսափով կը տեսնենք հսկայ բազմութիւն մը, որ կը վազէին դէպի կայարան, սպայ, զինուոր, կիներ՝ իրենց ծրարներով, մէկ խօսքով՝ բոլորն ալ իրենց փոքր ու արժէքաւոր ծրարներով խոյս կու տային հայոց թաղէն ու կը վազէին դէպի կայարան՝ հաւանական միակ փրկութեան վայր:

Ժամանակ չկար կորսնցունելու: Խանութները իրար ետեւէ կը գոցուէին: Բոլորին դէմքերուն վրայ սարսափի եւ անորոշութեան տպաւորութիւն կար: Մենք ալ մեր կարգին. խանութը փակելով, առանց բան մը առնելու հետերնիս՝ ո՛չ ուտելիք, ո՛չ հագնելիք, ո՛չ ալ արժէքաւոր իրերով լեցուն վալիզ մը. կը հետեւինք ամբոխին այս յոյսով, որ քիչ ետքը խուճապը կը հանդարտի, ու կրկին մենք ալ կը վերադառնանք խանութ: Ափսոս, որ մեր վերջին մեկնումն էր, ու անգամ մըն ալ վերադառնալու եւ խանութը բանալու առիթ չունեցանք: Կայարանը բաւական հեռու էր, ճամբան լեցուած էր ահռելի բազմութեամբ մը, որ կը վազէր փոշիներուն մէջէն դէպի կայարան: Օթոնները արագընթաց կ'անցնէին՝ փոխադրելով սպաներ ու զինուորական կարեւոր իրեր: Մայրեր, փոքրերուն ձեռքէն բռնած, ուժասպառ, դժուարաւ կը յառաջանային, մէկ խօսքով՝ ահաւոր խուճապ մը, որ կը փախչէր իսկական ջարդէ մը ազատելու նպատակաւ:

Երբ կայարան կը հասնինք, կը տեսնենք 4 զծի վրայ չորս մասնաւոր թրէններ՝ ետեւ առջեւ լօթոմոթիներով [ինքնավար շոգեկառք], միջով դրսով լեցուած սպաներով ու գօրքերով ու ժողովուրդով ասեղ ձգելու տեղ չկար: Եւ նկատելով, որ հող աւելի մնալը վտանգաւոր էր, քանի որ օր մը առաջ ռումբ ինկած էր թուրքերու կողմէ քաշուած, կ'որոշենք մօտ 15 հայ խանութպաններ, ոտքով հեռանալ անմիջապէս դէպի Էսկի Շեհիր, քանի որ դէպի Իզմիր ճամբուն կամուրջները քանդուած էին քենալականներու կողմէ գիշերուայ ընթացքին:

Ու այսպէս կը թողունք Աֆիոնի կայարանը ու ոտքով ճամբայ կ'ելլենք: Մէջերնիս ատամնաքոյժ Չաքմաքճեանն ալ կար, որ մաուզէր մըն ալ ունէր: Ճամբու երկայնքին կը հանդիպինք շատ մը պահականոցներու, որոնց սպաները զարմանքով կը դիտեն մեր հեռացումը, կը համոզեն մեզ, որ ետ դառնանք Աֆիոն՝ անդելով, որ կարելի բան չէ մեր ուժերու հեռացումը, թէ՛ հսկայ ուժեր ունին Աֆիոնի շուրջը, թէ՛ ապուշ բան էր մեր ըրածը: Կը բացատրենք մեր տեսած խուճապը, թրէններու պատրաստութիւնը, թէ՛ ճակատը խախտած էր:

Ափսոս, շատ լաւ կ'երեւար, որ յունական բանակները իրարու հետ կապը կորսնցուցած էին դաւադիր բարձրաստիճան սպաներու մեղսակցութեամբ, որով կոռուղ ուժերը, ինքզինքնին մինակ զգալով, նահանջի որոշումներ տուած են, պատճառ ըլլալով ճակատի խորտակման ու անկանոն նահանջի:

Մենք, ուրեմն, շարունակ կը քալենք դէպի առաջին կայարանը՝ Համամ-Խայք կոչուած, ուր հազիւ կարող կ'ըլլանք առնելու չորրորդ թրէնը, որ Աֆիոնէն կու գար, եթէ չհասնէինք այդ չորրորդ կառախումքին, հաւանաբար բոլորս ալ կոտորուէինք թուրքերու ձեռք, ինչպէս կոտորուեցան քահանան ու թաղականութեան մեծամասնութիւնը, եւ ի՛նչ տանջանքներով, որոնք չէին կրցած հասնիլ կայարան՝ ժամանակ կորսն-

ցուցած ըլլալով գինուորական կառավարիչին մօտ, ուր գացած էին հրահանգ ստանալու:

Այսպէս ուրեմն, մենք բոլորս ալ քրտնաթաթախ հագիւ կը յաջողինք վերջին թրէնը առնել ու այսպէս անօթի ծարաւ կը հասնինք Էսկի Շեհիր:

Հոս կացութիւնը բոլորովին խաղաղ էր: Բոլորն ալ կը զարմանային մեր փախուստին վրայ: Շաբաթ մը մնալէ ետք, հոս ալ սկսաւ վատ լուրեր տարածուիլ: Շատ դժուարաւ թրէն կը նստինք՝ միշտ բոլորս միասին, ու կը հասնինք Պրուսա:

Հոս բոլորովին խաղաղութիւն էր: Միշտ կը խորհիմ խանութիս ու գործիս վրայ, վակոն մը ապրանքիս, որ Ուշաք հասած էր, արդեօք Աֆիոն դրկուեցա՞ւ, արդեօք դարձեալ ետ՝ Աֆիոն պիտի դառնամ ու խանութիս պիտի տիրանա՞մ: Ափսոս, անօգուտ էր. յոյները խաղը կորսնցուցած էին: Թագաւորական ու վենեզիլուսական կուսակցութիւնները իրենց անիմաստ վէճերով բանակը բարոյալքած էին ու այս ահաւոր ու անպատիւ փախուստին պատճառ եղած էին:

Պրուսա լեռան կողքին շինուած գեղեցիկ քաղաք էր. ոնէր բազմաթիւ տաք ջուրերու հաստատութիւններ. ուր գրեթէ ամեն օր կ'երթայինք զուարճանալու: Հոս ալ շաբաթ մը մնալէ ետք կը մեկնինք Մուտանիա ծովեզրեայ փոքրիկ քաղաքը¹²⁰: Ա՛լ հանգիստ չունինք՝ կորսնցուցած ամեն յոյս ետ դառնալու Աֆիոն, կ'ուզենք ժամ առաջ հասնիլ Իզմիր՝ մեր սիրելիներու մօտ: Տխուր լուրեր սկսած էին հասնիլ, թուրքերը կը յառաջանային դէպի Իզմիր: Ուշաք ինկած էր թուրքերուն ձեռքը, թէ յունական բանակները մեծ պարտութիւն կրած են Սանտքլըի կիրճերուն մէջ ու մեծամեծ կորուստներ տուած:

¹²⁰ *Մուտանիա*, ծովեզրայ քաղաք Մարմարա ծովի ափին, որտեղ 1922 թ. հոկտեմբերի 11-ին կնքվել է զինադադար, որով ավարտվել է հուլիս-թուրքական պատերազմը:

ԹՐԲԱԿԱՆ ՀՈՂԵՐԷՆ ՄԵՐ Ի ՍՊԱՌ ՀԵՌԱՑՈՒՄԸ

Մուտանիա կը հասնէին նորանոր գաղթականներ՝ հայ թէ յոյն, տխուր լուրեր կը հասնէին ժամէ ժամ. Էսկի Շեհիր ինկած էր, Պրուսա՝ պաշարուած: Ժամանակ չկար տատամսելու, պետք էր ժամ առաջ հեռանալ Մուտանիայէն: Կ'իմանանք, որ միակ շոգենաւը, որ փակած էր մաքսատան, բեռնատրուած բազմաթիւ օթոներով ու զանազան զինուորական կազմաձևերով, պիտի մեկնէր նոյն գիշերն իսկ: Ամեն անհնարին միջոց ի գործ դնելով՝ կը յաջողինք մէկիկ մէկիկ նաւ մագլցիլ: Գրեթէ մեր խումբը ամբողջութեամբ նաւ մտած էր, ու մենք առանց տոմսի, մտահոգ, անհամբեր կը սպասէինք մեր մեկնումը:

Իրիկուն, հագիւ արեւը մարը մտած, նաւը կը սկսի շարժիլ մեր ուրախութիւնը սահման չունէր: Երկար ժամանակ կը դիտեմ Մուտանիոյ ծովախորշը, կը մտաբերեմ խանութս, ունեցած յաջողութիւններս, գորգերս ու այսպէս հրաժեշտ կ'առնեմ թրքական հողերէն, ուր անզամ մըն ալ ոտք դնելու ո՛չ առիթը, ո՛չ ալ տրամադրութիւնը պիտի ունենայի ապագային:

Յաջորդ օրը կը հասնինք Սելանիկ¹²¹: Մեր առաջին մտածումը կ'ըլլայ նաւ մը առնել ու մեկնիլ Իզմիր: Ես ու եղբայրս կ'երթանք Նաւային ընկերութեան գրասենեակը տոմսակ առնելու համար: Մեզ կը պատասխանեն, որ անկարելի է մեկնիլ, թէ թուրքերը հասած են Մանիսա, թէ Իզմիրի անկումը օրերու խնդիր է, որով մեզ կը յանձնարարեն խոհեմ ըլլալ ու տեղերնէս չշարժիլ:

Իսկապէս, հագիւ քանի մը օր վերջը յունական ընդծովեայ¹²² մը կը հասնի Սելանիկ՝ բերելով բազմաթիւ գաղթականներ, որոնք առաջին փախչողներն էին Իզմիրի աղէտէն: Քանի մը օրեր վերջ արդէն խոշոր փոխադրանաւերով Սելա-

¹²¹ *Սելանիկ* (հուն.՝ Θεσσαλονίκη), նավահանգստային քաղաք Հունաստանում Էգեյան ծովի ափին:

¹²² *Ընդծովեայ*, սուլթանալ:

նիկ կը հասնէին հարիւրաւոր ու հազարաւոր նոր նոր գաղթականներ, որոնք լալով կը նկարագրեն պատահած աղէտը. թէ Իզմիր բոցերու մէջ է, թէ հարիւր հազարաւորներ ծովեզերքին վրայ կը դեգերին՝ բոպիկ ոտքերով. անօթի ու ծարաւ, միջոց մը գտնելու յոյսով խոյս տալու համար Իզմիրէն: Այս աղետին մանրամասն նկարագրութիւնը պիտի ընեմ աւելի վերջը, երբ հասնիմ մօրս ու եղբայր-քոյրերու Փաթրասի¹²³ մէջ գտնելու նկարագրութիւնը լրացնեմ:

Սելանիկ բաւական օրեր կը մնամ ի գուր փնտռելով ծնողքէս ռեւէ մէկը: Նաւերը կը հասնին իրար ետեւէ: Անձկագին կ'որոշեմ ամեն գնով մեկնիլ Աթենք ու անկէ՛ զանազան վայրեր ամեն գնով գտնելու համար իմիններս: Օր մը կ'իմանամ, որ յունական նաւ մը պիտի մեկնի Փիրէա: Ամեն միջոց ի գործ կը դնեմ ու նաւ կը մտնեմ: Ճամբորդութիւնս շատ յոգնեցուցիչ եղաւ. փոքր խցիկ մը տուած էին նաւուն վարի մասէն, ուր անկարելի էր ոտքերս երկարել ու քնանալ: Այսպէս շատ անհանգիստ բաւական ժամեր ճամբորդելէ ետք նաւը կանգ կ'առնէ Միտիլի կոչուած մեծ կղզին, ուր կ'իմանամ, որ բազմաթիւ գաղթականներ եկած են:

ՄԻՏԻԼԼԻ ԿՂԶԻՆ ՀԱՍՆԻԼՍ

Այսպէս, երբ Միտիլի կը հասնիմ, նաւէն կ'իջնեմ՝ իմիններս գտնելու յոյսով, ու ծովեզերքին վրայ կը հանդիպիմ բարեկամ հայերու, որոնք զիս կ'առաջնորդեն հանրային պարտէզը, ուր լեցուած էին բազմաթիւ գաղթականներ: Ռ'հ, ի'նչ ահաւոր տեսարան. հարիւրաւոր ընտանիքներ ծառերու տակ տեղ գրաւած, բացօթեայ կը գիշերէին: Հոս գտայ բազ-

¹²³ Փաթրաս (իուն.՝ Πάτρα), Հունաստանի երրորդ խոշոր քաղաքը, Պելոպոնեսի հյուսիս արևմտյան հատվածում Հոնիական ծովի ափին:

մաթիւ Էօտէմիշցի հայ ընտանիքներ, որոնց գրեթէ բոլորին էրիկմարդիկը Իզմիր գերի մնացած էին թուրքերու ձեռքը, որոնք ուժասպառ ու արցունքը աչքերնուն, իրենց բացակաները կ'ողբային: Մերիններէն ոչ ոք կար, ոչ իսկ տեսնող մը: Ի՞նչ յուզում պատած էր հոգիս. արդեօք չէի՞ն կրցած փախչիլ, մի՞թէ բոլորն ալ կոտորուած են թուրքերէ: Հոս էր նաեւ հօրաքոյրս՝ իր գաւակներով ու թոռներով, գրեթէ բոլորն ալ տկարացած մնունդի պակասէն, կը գտնուէին ահաւոր ու աննկարագրելի դրութեան մէջ, չունէին ոեւէ օգնական: Զօրաքրոջս թոռը՝ Ծատուրը, որ հազիւ 8 տարեկան էր, աչքերը փակ, վերքերու մէջ, ահաւոր վիճակ մը ունէր: Անմիջապէս կը վազեմ դեղատուն ու, պէտք եղած դեղերը գնելով, կու գամ Ծատուրին աչքերը տաք ջուրով ու դեղերով կը լուամ ու կը յաջողիմ աչքի ծայրերուն աղտոտութիւնները մաքրել ու քանալ գոցուած աչքերը. իմ կարելի միջօցներովս հաց եւ ուտելիք ու մանաւանդ օճառ կը բերեմ, որպէսզի մաքրուին: Աւելի մեծ զոհողութիւն չկրցայ ընել. նախ, որ մեծ դրամ չէր մնացած քովս, երկրորդ, որ տակաւին շատ մը ծախսերու ենթակայ էի գտնելու համար ծնողքս ու քոյրերս: Կ'իմանամ, որ Նուարդ քոյրս՝ ամուսնոյն ու գաւակներուն հետ, ազատած կը գտնուին քաղաքին մէջ. կը վազեմ, կը գտնեմ: Ռ՛հ, ի՞նչ ողջագորում. նստած սենեակի մը մէջ՝ պանիք, հաց ու խաղող կ'ուտէին: Ամուսինը հրաշքով մը ազատած էր Իզմիրէն: Արտաւազդը իր գիրկը ըլլալով քանի մը ամսու՝ թուրքերը խնայած էին ու թողած, որ ան մտնէ: Ոչ մէկ լոյր ունէին մերիններէն, հակառակ, որ բոլորն ալ Իզմիր մեր տունը ապաստանած են եղեր: Կրակը մեր տան մօտենալով՝ կը հեռանան տունէն ու ծովեզերքին վրայ իրար կը կորսնցունեն: Ձեռքէս եկած չափով անոնց ալ օգտակար կ'ըլլամ նիւթապէս:

Յաջորդ օրը քաղաքի ծայրամասին մօտ՝ ճամբու եզրին, կը նշմարեմ հիւանդ մը, որ պատռած ծածկոցի մը տակ կը քնանար: Կը մօտենամ, կը քանամ ծածկոցը: Ռ՛հ, ի՞նչ ահաւոր անակնկալ մը. Էօտէմիշի մեծահարուստներէն բո-

ղոքական Յովհաննէս Հովարտայեանն էր՝ ոտքերուն լաթեր փաթթած, գլխն վիրաւոր, շապիկն ու զգեստները պատռած ու արին լուայ: Բոլորովին անճանաչելի գիս տեսնելով՝ յուզուած կը սկսի լալ ու կը սկսի իր ողիսականը պատմել: Կրթողում գինք՝ խոստանալով անմիջապէս վերադառնալ, ու կ'իջնեմ քաղաք, կը գնեմ կօշիկ, գուլպայ, շապիկ, քսուքներ օճառ ու զանազան ուտելիքներ, ու շուտով կը վերադառնամ իր մօտ, կը տանիմ մօտակայ գետակի մը ծայրը, ուր լաւ մը կը լուացուի ու, պատռած շապիկն ու վարտիքը փոխելով, կը հագուի բերածներս: Այն ինչ օրհնութիւններ կու տար՝ արցունքը աչքերուն, վիզս փաթթուած: Փառք կու տար Աստուծոյ, որ ինձմով իրեն ձեռք երկարած էր: Ես բողոքական չէի, ես իմ մարդկային ու ազգային պարտականութիւնս է որ կը կատարէի: Այսպէս երկու օր մնալէ ետք զանազան միջոցներով շրջանը կ'ընեմ Միտիլլի կղզիին, որու ծովեզերքներուն բոլոր քաղաքները լեցուն էին գաղթականներով: Չմոռնամ ըսելու, որ իւրաքանչիւր վայրի հայերու ցանկը կը տանելի հետս ու այսպէս շարունակաբար, որպէսզի ծնողքներ իրար գտնեն ու միանան: Ու ես դարձեալ կը վերադառնամ Միտիլլի քաղաքը առանց մերիները գտնելու: Հոս բազմաթիւ էօտէմիջցի ընտանիքներ կը պաղատեն ինձի, որ գիրենք Սելանիկ փոխադրեմ, ու ես, փոխանակ Աթենք երթալու, ծնողքս գտնելու, կը խոստանամ ամեն միջոց ի գործ դնել՝ իրենց օգտակար ըլլալու, քանի որ ոչ մէկ պաշտպան ունէին: Անմիջապէս նաւային ընկերութեան մը դիմելով՝ կը համաձայնիմք, ու նաւ մը վարձելով՝ մարդ գլուխ որոշ գումարով մը, կը լեցնեմ բոլոր փափաքողները նաւուն մէջ՝ իրենց բեռներով: Կը յիշեմ ընտանիքներէն Հաճի Օհաննէսին կիներ՝ իր աղջկով ու թոռներով: Կուզէիմ կիներ, ֆեսաճի Թագուորին կիներ՝ զաւակներով, Արամ Յովհաննէսեանին կիներ՝ մօրմով ու զաւակներով նաեւ քրոջը զաւակներով, Էթեմկզեանները՝ զաւակներով եւ շատ մը ուրիշներ, որոնց անունները չեմ յիշեր:

Կը ցաւիմ ըսելու, որ ճամբան մեծ փոթորիկի մը հանդիպելով, եւ մանաւանդ նաւը փոքր ըլլալով՝ շատ մեծ վտանգ անցուցինք եւ իսկական մահէ ազատեցանք: Ալիքները ահաւորօրէն կը զարնուէին մեր փոքր նաւուն՝ թըջելով բոլոր ճամբորդողները, որոնք ահաւոր ճիչեր կ'արձակէին ու զանազան սուրբեր օգնութեան կը կանչէին: Մենակ ես էի, իբր էրիկմարդ, որ երթալով քովերնին կը քաջալերէի ու կը յուսադրէի. գրեթէ բոլորն ալ ազդուած էին ծովէն ու կը փսխէին: Իսկապէս ուժեղ կամք կ'ուզէր այս բոլորին տոկալու:

ՏԷՏԷ ԱՂԱՃ¹²⁴ ՄԵՐ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Այսպէս բաւական ժամեր ահ ու դողով ճամբորդելէ ետք ծովը կը հանդարտի, ու պայծառ արեւը իր տաք ճառագայթները կը տարածէ: Ամեն ոք իր հագուստները կը չորցնէ: Հեռուէն կը նշմարենք Տէտէ Աղաճը: Բոլոր ճամբորդներն ալ կը փափաքին վար իջնել ու թրէնով ճամբորդել դէպի Սելանիկ: Ժամ մը վերջը արդէն Տէտէ Աղաճ ենք: Կը ցատկեմ վար ու կը վազեմ, կը գտնեմ հայոց եկեղեցին, թաղականներուն կը բացատրեմ մեր յոգնած վիճակը, որոնք անմիջապէս կու գան մեզ կ'առաջնորդեն հայկական վարժարանը, ուր կրակ կը վառեն ու բոլորին հագուստները կը չորցնեն, մեզ կը կերակրեն առատօրէն: Հոն կը գիշերենք ու յաջորդ առաւօտուն բեռնատար վակոն մը վարձելով՝ մեզ ձրիաբար ճամբայ կը դնեն դէպի Սելանիկ: Առաւօտուն կանուխ կը հասնինք Սելանիկ, ուր բոլորը զետեղելով իրենց ծանօթներուն կամ ազգականներուն մօտ՝ կը գտնեմ եղբայրս ու յաջորդ օրն իսկ շոգեկառք կը նստիմ դէպի Աթենք՝ փնտռելու համար մերինները:

¹²⁴ *Տէտէ Աղաճ* (թուրքերէն՝ Dedeağaç), քաղաք Հունաստանի հյուսիսարևելքում (Թրակիա), այժմ Ալեքսանդրուպոլիս (հուն.՝ Αλεξανδρούπολη):

ԱԹԷՆՔ ԺԱՄԱՆՈՒՄՍ

Յաջորդ առաւօտուն կը հասնիմ Աթենք, կը հանդիպիմ բարեկամներու, որոնք զիս կ'առաջնորդեն մեծ արճարան մը, ուր հայերու հաւաքատեղին եղած էր: Բոլոր ծանօթներս կը հարցուփորձեմ լուր մը առնելու համար մերիններէն: Վերջապէս ժամեր վերջը միայն կը հանդիպեմ պարոն ճամճրեանի, որ մեր Քորտելիոյէն էր, եւ որ կը հաւաստիացնէ, թէ մերինները կը գտնուին Փաթրաս քաղաքը, թէ՛ իր մայրը մերիններուն հետ ճամբորդած է, թէ՛ բոլորն ալ ողջ առողջ են եւ այլն:

Ուրախութիւնս չափ ու սահման չունէր: Ա՛լ վստահ էի, որ յաջորդ օրն իսկ մայրս ու քոյրերս ողջագուրելու բախտը պիտի ունենայի: Հրաժեշտ կ'առնեմ ընկերներէս ու կը վազեմ կայարան ու թրէն շոգեկառք մը կ'առնեմ Փաթրասի համար:

**ՓԱԹՐԱՍ ՀԱՄԵԼԸ ՈՒ ՄԵՐԻՆՆԵՐՈՒՆ
ՀԱՆԴԻՊՈՒՄՍ ՄԱՐԱՆԻՓ ՓՈՒԼՅՅԻ ՀՍԿԱՅ
ՀԱՆԿԱՐՆԵՐՈՒՆ¹²⁵ ՏԱԿ**

Յաջորդ օրը՝ կէսօրէն ետք՝ գեղեցիկ ու հաճելի ճամբորդութիւնէ մը ետք, կը հասնիմ Փաթրաս: Անձկագին վիճակով մը կը մօտենամ ոստիկանի մը, ու կը հարցնեմ գաղթակայանը: Ոստիկանը շատ մաքուր հագուած ու շատ քաղաքավար կերպով կը բացատրէ կայանին վայրը: Կը յառաջանամ ծովեզերքի վրայով, յուզուած ու հոգեմաշ, կասկածը սրտիս. արդէօք պիտի գտնե՞մ իմ սիրելիներս ողջ առողջ: Մէկ ու կէս ամիս է բաժնուած էինք իրարմէ՞ն հիւսիսեան ու ֆիզիքեան շատ լաւ պայմաններու տակ, երբ վերջին անգամ Իզմիր իջած էի զնումներ ընելու, ու այսօր եկած եմ զիրենք փնտռելու գաղթակայանի մը մէկ անկիւնը. ահաւոր էր այս մտածումը: Հե-

¹²⁵ Հանկար, բաց շինություն:

ռուկն կը նշմարեմ հսկայ Հանկարը, դռան առջև փոքր բազմութիւն մը կը նշմարեմ: Մօտեցամ էր ողջագոյրումի պահը. սիրտս կը տրոփէր ուժգին: Կը մօտենամ դռան ու հագիւ ակնարկ մը կը նետեմ դէպի ներս՝ հսկայ սրահը, կ'իմանամ ճիշեր, ուրսխութեան աղաղակներ: Մայրս ու քոյրերս հեռուէն՝ սրահին մէկ անկիւնէն, ճանչցամ էին զիս, անունս կու տային շարունակ: Կամաց կամաց կը յառաջանամ գետնի վրայ նստած բազմաթիւ ընտանիքներու քովերէն ու կը հասնիմ սիրելիներուս քով: Ո՛հ, ի՞նչ յուզումի տեսարան էր. արցունքոտ աչքերով կ'ողջագոյրուինք, կը հանդարտեցնեմ զիրենք, որ Գեղամն ալ ողջ ու առողջ Սելանիկ կը գտնուի, թէ մտածելու բնաւ կարիք չկայ, շուտով զիրենք կ'ազատեմ ասկէ: Այն գիշերը ստիպուած քովերնին կը մնամ: Արդէն քնանալու տրամադրութիւն չկար. այնքան բաներ կար պատմելիք:

Մայրս, Աղանին, Թագուհին, Վարդանը գտած էի, ա՛լ վերջ գտած էր իմ Գողգոթան՝ քաղաքէ քաղաք ու կղզիէ կղզի իմ հոգեմաշ փնտռտութիւններս: Նոյն գիշերն իսկ որոշած էի ծրագիրներս՝ ժամ առաջ մոռցնել տալու իմ սիրելիներուս քաշած արսորի ու գոլումի անպատմելի կեանքը:

Առտուն կանուխ դուրս կու գամ կայանէն ու, ժամերով թաղէ թաղ, տունէ տուն հարցնելով, կը յաջողիմ բնակարան մը գտնել: Անմիջապէս կու գամ մերինները տուն կը փոխադրեմ: Օրեր պէտք եղաւ մաքրելու համար իրենց վրայի ոջիւները, բոլորին վրայ-գլուխը կը նորոգեմ. նոր հագուստներով ու շատ քիչ ժամանակուայ մէջ կը ստեղծեմ տանելի կեանք մը: Քովս հագիւ քանի մը հազար տրահիմ¹²⁶ մնացած էր, պէտք էր ժամ առաջ գործ մը գտնել գոնէ օրուայ ուտելիքը ճարելու համար: Մարդ չէի ճանչնար: Կը գրեմ Գեղամին որ շուտ վերադառնայ Փաթրաս: Ես ալ քովի ոչինչ դրամովս կ'երթամ

¹²⁶ *Տրիստիս* (հուն.՝ *δραχμή*), դրախտ, դրամական միավոր հին հունական պոլիսներում, ապա՝ հելլենիստական պետություններում, ինչպէս նաև ժամանակակից Հունաստանում: ԵՄ-ին անդամագրվելուց հետո դրախտն դուրս է եկել գործածությունից:

մարդու վերաբերեալ ապրանք կ'առնեմ՝ գուպայ, վարտիք, շապիկ, թաշկինակ ու այսպէս զանազան իրեր ու, ծրար մը ըրած կը նետեմ ուսիս ու ծովագերքին վրայ, նաուաստիններուն կամ ճամբորդներուն առջեւ բարձրաձայն կանչելով, կը ծախէի: Ի բնէ արթուն ու ճարպիկ ըլլալով եւ մանաւանդ խանութեան ըլլալով՝ չէի ամչնար պոռալ-կանչելու, մանաւանդ որ ուրիշ միջոց չկար ապրուստ հոգալու: Հինգ հոգի էինք, սնունդ պէտք էր, մանաւանդ որ շաբաթներով կանոնաւոր սնունդ չէին առած: Զարմանալի է, որ կը յաջողէի ու ամեն օր ծախսերս կը հոգայի: Կամաց կամաց ծրարս ճիւղացուցի եւ սկսայ սրճարաններն ալ մտնել, բնաւ չէի ամչնար: Հերոսութիւն էր ըրածս, հինգ հոգի կ'ապրեցնէի օտար ու անծանօթ քաղաքի մը մէջ: Քանի մը շաբաթներ այսպէս կանոնաւոր աշխատելէ ետք, օր մը մեծ ու հարուստ սրճարան մը կը մտնեմ ուսիս վրայ ծրարովս, ապրանք ծախելու նպատակաւ: Հագիւ թէ քանի մը քայլ յառաջացած էի, անկիւն մը քանի մը հոգինոց խումբէ մը ձայն կու տան ու զիս կը կանչեն: Ուրախ էի, որ բան մը պիտի ծախէի: Հապճեպով կը մօտենամ իրենց սեղանին շուրջ, ծրարս ուսէս վար կ'առնեմ ու քաղաքավարութեամբ կը հարցնեմ, թէ ի՞նչ կը փափաքէին գնել: Անձերէն միս գարմանքով, ուշի ուշով զիս քննելէ ետք կը հարցնէ յուզուած. «Ներեցէ՛ք, պարո՞ն, դուք Աֆիոն Քարահիսար մեծ խանութ մը չունէի՞ք»: Այո՛, կ'ըսեմ: Այս մարդը ոտքի կ'ելլէ ու, իր շուրջիններուն դառնալով, կը պոռայ: Տեսէ՛ք, կ'ըսէ, դեռ երկու ամիս առաջ սքանչելի խանութ մ'ունէր Աֆիոնի մէջ, եւ որուն ամենօրեայ յաճախորդն էի, այսօր մեր պարտութեան պատճառաւ ամեն ինչ կորսնցուցած, եկած է Փաթրաս ու նորէն գործի է սկսած՝ ուսին վրայ ապրանք ծախելով: Ու իր հիացումը կը յայտնէր իմ ունեցած ուժեղ կամքիս ու աշխատասիրութեանս: Կը ճանչնամ անմիջապէս, տոքթոր Անաղնասաթովուլոն էր, որ քափիթէնի աստիճանով յաճախ կու գար խանութս եւ զանազան գնումներ կ'ընէր ու կը սիրէր հետս խօսիլ: Ազնուական մէկն էր ու կը հիանայի իր շատ քաղաքավար ու մաքուր

արտայայտություններուն վրայ: Այս պարոնը կը նստեցնէ իր մօտ, կ'ապսպրէ սանտուիչ ու գարեջուր, ու կը սկսի գանազան հարցումներու: Ամբողջ նկարագրութիւնը կ'ընեն մեր խուճապային փախուստին ու ամիս ու կէս փնտռտուքէ ետք Փաթրասի մէջ իմիններուս հանդիպումս: Յուզուած կը ջանայ զիս քաջալերել ու զիս օգտակար ըլլալ: Դուրս կ'ելլենք միասին՝ ծրարս ուսս, ու զիս կը նստեցնէ իր գեղեցիկ ինքնաշարժին մէջ ու կ'առաջնորդէ իր թէքսթիլի ֆապրիքը [հյուսածոյի գործարան], ուր զիս կը պտտցնէ բոլոր բաժանմունքներուն մէջ, ու երբ դուրս կ'ելլեինք ֆապրիքէն, դառնալով ինծի կ'ըսէ. «Պարոն, ինչո՞վ կրնամ քեզ օգտակար ըլլալ, ուզէ, ի՛նչ որ կը փափաքիս. կ'ուզեմ ամեն գնով քեզ փրկել այս դրութենէդ»: Կը յայտնեն, որ ամենամեծ ծառայութիւնը, որ կը փափաքի գործադրել, զիս ճանչցնելն է քանի մը մեծ վաճառատուններուն բով, ուրկէ կարենամ ապրանք առնել ապառիկ ու երթամ ծախել մօտակայ քաղաքներ ու այսպէս կարենամ կեանքս շահիլ: Սիրով կ'ընդունի առաջարկս ու զիս կը տանի ու կը ներկայացնէ քանի մը մեծ վաճառատուններ ու կը խնդրէ, որ զիս զոհացնեն՝ ուզածիս չափ ապրանք տալով՝ իր պատասխանատուութեան տակ: Այսպէս ուրեմն, կը բաժնուինք իրարմէ՝ յաճախ տեսնուելու խոստումով:

Յաջորդ օրն իսկ կը ներկայանամ վաճառատուներէն միւնուն, Էմմանուիլիս կոչուած, որոնք սիրով կը պատրաստեն ուզածներս ու մեծ Պօլիա¹²⁷ մը կապած, յաջորդ օրն իսկ նա կը նստիմ ու կ'անցնիմ Փաթրասի դիմաց Մեստլոնկի ըսուած քաղաքը, որ երեւելի եւ պատմական քաղաք մըն է Յունաստանի անկախութեան հռչակման օրերուն իր ունեցած հերոսական պայքարին համար թուրքերուն դէմ: Նաւը երկու ժամ յետոյ կը հասնի Մեստլոնկի, մեծ տիկ մը (Մաունա) կը մօտենայ նաւուն ու բոլոր ճամբորդները կ'իջնեն տիկի վրայ, ու

¹²⁷ Պոլիա, ենթադրաբար (առանց ստուգաբանության), «բոխչա»՝ հագուստ-կապուստի հին ավանդական ճամպորով:

քանի մը անձեր երկար ձողերով տիկը կը քշեն դէպի ցամաք: Վայ, եթէ փոթորիկ ըլլայ, ժամեր կը տեսէ փոխադրութիւնը:

Այս քաղաքը ձկնորսութեան կեդրոն է: Ամէն ընտանիք ծովուն ծայրը, թելերով շրջապատուած բաւական ընդարձակ հողեր ունի: Երբ ջուրը մակընթացութեամբ բարձրանայ, բոլոր շրջակայ հողերը ջուրով կը ծածկէ. ժամեր վերջ, երբ ջուրը կը քաշուի, ձկները կը մնան թելերուն մէջ. ու այսպէս կու գան դիրաւ կը հաւաքեն:

Այսպէս ուրեմն, երբ ցամաք կ'ելլեմ, պտոյտ մը կ'ընեմ քաղաքին մէջ՝ գաղափար մը կազմելու համար: Յաջորդ առաւօտուն ապրանքներս կը փոխադրեմ հրապարակի մը վրայ: Յոյն փոքրիկ տղայ մը կը վարձեմ, որ կը սկսի պոռայ ու յաճախորդներ կանչել: Այս միջոցաւ քանի մը օրերու մէջ բոլոր ապրանքներս գրեթէ կը ծախեմ ու, յետոյ մաս մը աննդեղէն (կարագ, պանիր, մածոն, ձուկ) առնելով, կը վերադառնամ Փաթրաս, տունիները չափազանց կ'ուրախանան իմ առաջին յաջողութենէս, մանաւանդ բերած ուտելիքներէս: Յոյն վաճառականը անակնկալի եկած էր իմ այս առաջին յաջողութենէս. կը զարմանար, թէ ինչպէ՞ս օտար ըլլալով երկրին՝ կրցած էի քանի մը օրուայ մէջ բոլորը ծախել: Ես չափազանց խանդավառ էի, որովհետեւ մօտ 1500 տրաքի գուտ շահ մնացած էր: Առանց ժամանակ անցընելու, նոր ծրար մը կը պատրաստեմ՝ աւելի ճոխ, ու կ'անցնիմ ուրիշ վայր մը՝ Ադրինէոն: Այս քաղաքը նշանաւոր է իր ծխախոտի արտադրութեամբ. հազարաւոր բանուոր ու բանուորուհիներ կ'աշխատին ծխախոտի աշխատանոցներու մէջ: Հոս ալ միեւնոյն ձեւով ապրանքներս կը ծախեմ ու կը վերադառնամ Փաթրաս: Այլ յաջողութիւնս ապահովուած էր. բոլոր Փելոփոնէսի մեծ թերակղզիին շրջանը կ'ընեմ՝ անցնելով Այիոն. Բեփարիսիա, Ֆիլաթրա, Բալամարա, Զօրենթա ու բազմաթիւ ուրիշ քաղաքներ, նաեւ Կարկալիանօ: Այս բոլորը ծովեզերեայ քաղաքներ են՝ շատ սիրուն տեսարաններով եւ իրար կապուած երկաթուղագիծով մը:

Վաճառականը, քաջալերուած իմ այս յաջողութիւններէս, զիս իր գակին այն կը սիրէր ու յաճախ իր տունը կը տանէր զիս ճաշի:

Գեղամ եղբայրս վերադարձած էր արդէն, ու պէտք էր իրեն գործ մը ապահովել: Կ'որոշեմ շարժուն խանութիկ մը շինել տալ չորս անիւի վրայ ու գետեղել Փաթրասի կայարանին առջեւը:

Վաճառականիս միջամտութեամբ հրամանը կը ստանամ թաղապետութենէն ու անմիջապէս գործը կը սկսեմ: Ամիս մը վերջը արդէն պատրաստ էր գեղեցիկ ու կոկիկ շարժուն խանութը, զոր կը լեցնեմ ամեն տեսակ պէտքացու ապրանքներով ու կը գրաւեմ իմ տեղս կայարանին առջեւը: Նորութիւն մըն էր ըրածս. շուտով ուրիշներ ալ ինծի հետեւեցան: Այս շարժուն խանութը Գեղամին համար էր, որ, լաւ մը վարժուելով, սկսաւ օգտակար ըլլալ տունին: Յաջողութիւններէս քաջալերուած՝ կ'ուզեմ ընդարձակել գործս: Աղանի քոյրս շատ լաւ մարդու շապիկ կարող էր, Թագուհին կրնար օգտակար ըլլալ իրեն, որով կարող էի շապիկի գործին սկսիլ: Պէտք էր նախ տուներնիս փոխել: Կը յաջողիմ քաղաքին կեդրոնին մօտ տուն մը գտնել ու հոն փոխադրուիլ:

Վարձքով կը գտնեմ երկու կարի մեքենայ, վաճառականէս կ'առնեմ շապիկցու գեֆիր, ու կը սկսինք գործի: Աղանին թուղթի վրայ կը պատրաստէ քաթրոնները, ու ես ալ կը կտրեմ: Այն ի՜նչ մեղուաջան աշխատանք. կամքս ուժեղ էր ու միշտ լաւատես: Շինել կու տամ գեղեցիկ տուփեր՝ 12 շապիկ պարունակող, կը գտնեմ քոյրս ընող մը, տպարանէ մը թիւեր կը ճարեմ նաեւ շինական մելան¹²⁸, մէկ խօսքով՝ ամեն միջոց ի գործ կը դնեմ, որպէսզի առաջին տուփը, որ 12 շապիկ պիտի պարունակէր իբր նմոյշ, անթերի դուրս գար:

Յաղթանակը տարած էի: Գեղեցիկ օր մը, մաքուր հա-

¹²⁸ Միլան (հուն.՝ μέλας), գրելու համար նախատեսուած որևէ ներկանյութի լուծույթ, թանաք:

գուած տուփը ձեռս, կը ներկայանամ շապիկի վաճառատուն մը, կը յայտնեմ, որ Իզմիրի գաղթականներէն եմ, բազմանդամ ընտանիք մը ունենալով՝ ստիպուած եմ քիչ մը աժան տալ, որպէսզի կարենամ միշտ գործ ունենալ, ու կը բանամ տուփը: Վաճառականը կը հիանայ գործին մաքրութեան վրայ ու անմիջապէս զիս քաջալերելու համար քանի մը տուփ ապսպրանք կու տայ՝ զանազան գոյներով: Ու այսպէս, շատ մը խանութներ ներկայանալով՝ բաւական ապսպրանք կը հաւաքեմ: Առաջին քայլս յաջողած էր. կը ստիպուիմ հայ աղջիկ մը գտնել օգնական: Ուրախութիւնս սահման չունէր. մեծ ասպարէզ մը կը բացուէր առջեւ: Կը ստանայի բազմաթիւ ապսպրանքներ, դադար չունէինք: Քաջալերուած ունեցած յաջողութենէս ու ստացած ապսպրանքներէն՝ մեծաքանակ իտալական զեֆիր կոչուած շապիկցուներ կը գնեմ՝ մեթորը 24 տրահմի, ու այսպէս, ահագին քանակութեամբ ապրանք կը դիզեմ տունը:

1923 տարուոյ գարնան էր. յունական ընտրութիւններ տեղի կ'ունենան. կառավարութիւնը կը փոխուի, կ'իյնայ Նաեւ անգլիական ոսկիի արժէքը, տրախմին¹²⁹ կ'արժէքաւորի. ու այսպէս զիներու անկում մը տեղի կ'ունենայ, բազմաթիւ մնանկութիւններ տեղի կ'ունենան, իմ 24 տրահմի գնած զեֆիրի մեթորը 8 տրահմի կ'իջնէ, ահաւոր կորուստ կ'ունենամ: Ամբողջ երազներս ջուրը ինկած էր: Զգուած այս զիներու ելևէջէն՝ կ'որոշեմ հեռանալ Յունաստանէն: Նամակ կը գրեմ պարոն Մարտիրոս Սարըեանին, որ իմ շատ մօտիկ ընկերս ու բարեկամս էր եւ որ Փարիզի մէջ կարած [կառատուն] մը ունէր ու թաքսի [վարձակառք] կը բանեցնէր, որ փրկէ զիս Յունաստանէն ու, պէտք եղած Էֆիտեիտը¹³⁰ հանելով, ուղարկէ անմիջապէս Փաթրաս:

¹²⁹ *Տրախմի*, տե՛ս տրրահմ, 84:

¹³⁰ *Էֆիտեիտ* (ֆրանս.՝ affidavit), հաւատարմագիր:

ԻՄ ՖՐԱՆՍԱ ՄՈՒՏՔԱ

Ուրախ եմ յայտնելու, որ պարոն Սարդեան, ընթացք տալով իմ խնդրանքիս, կը դիմէ անմիջապէս ազգային պատուիրակութեան¹³¹ պետ պարոն Խատիսեանի ու, պէտք եղած թուղթերը պատրաստել տալով, կ'ուղարկէ զիս ամենակարճ ժամանակուայ մէջ: Ափսոս, որ այսքան զոհողութիւններով ու աշխատանքով ձեռք ձգած յաջողութիւնս կորսնցուցած՝ ստիպուած էի թողուլ սիրելիներս՝ նորանոր զոհողութիւններով՝ Ֆրանսայի մէջ դիրք շինելու եւ իմիններուս օգտակար ըլլալու երագով: Հրաժեշտ կ'առնեմ բոլորէն: Իմ պաշտպան վաճառականը կը խնդրէ ու կը ստիպէ, որ ետ կենամ Ֆրանսա երթալու որոշումէս՝ խոստանալով ուզած քաղաքիս մէջ մեծ խանութ մը բանալ իմ անունիս: Ես հասկցած էի իր ծրագիրը. չափազանց գոհ իմ նկարագրէս ու գործունէութենէս՝ կ'ուզէր ամեն գնով ամուսնացնել զիս իր աղջկան հետ: Օտարի հետ ամուսնանալը իմ ազգային համոզումներուս դէմ էր, երկրորդ՝ իմ բազմանդամ ծնողքս, որ ահաւոր կարիքի պէտք ունէր, ու հարկաւոր էր ժամ առաջ փրկել զիրենք, ոճիր մը պիտի ըլլար լքել զիրենք ու ամուսնանալ: Այսպէս ուրեմն, 1923 թուի օգոստոսի տաք օր մը կը մեկնիմ Փաթրասէն՝ խոստանալով իմիններուս ժամ առաջ օգնութեան հասնիլ: Կ'անցնիմ Աթենք, ուր Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչ պարոն Ղազարեան, պաշտօնական բասբորդ [անցագիր] մը տալով, յունական նաւով մը կը հասնիմ Մարսէլ 12 սեպտեմբերին:

Մարսէլ կը մնամ քանի մը օրեր, կը հանդիպիմ բազմաթիւ բարեկամներու, որոնք զիս կը հիւրասիրեն ու կը

¹³¹ *Ազգային պատմիկականութիւն*, ստեղծվել է Հայկական հարցը միջազգային տարբեր համաժողովներում ու բանակցություններում արծարծելու և պաշտպանելու նպատակով:

պտտցնեն չորս դին: Հոս իսկապէս կեանքը հաճելի էր. մեծ թուով հայեր արդէն եկած հաստատուած էին, օդը շատ գեղեցիկ ու կը նմանէր Իզմիրի կլիմային՝ առատ պտուղներ ամեն տեսակ ու աժան: Ցաւով կը բաժնուիմ ընկերներէս ու կը մեկնիմ Փարիզ:

Փարիզ հասնիլս 1923 սեպտեմբեր, 15-ին:

Կազմի ձևավորումը՝ Բրիտիլնե Վարդանյանի
Համակարգչային ձևավորումը՝ Արարս Ալեքսանյանի

Տպագրությունը՝ «Պրինտարմ» ՍՊԸ

Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը օֆսեթ:

Ծավալը՝ 20 տպագր. մասնու:

Հասցե՝ ք. Երևան, Անդրանիկի 34/32

Հեռ.՝ +374 91 40-25-86

Էլ.փոստ՝ printarm@mail.ru

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադան.



FL0679921

A Ի
A 110282

ISBN 978-9939-622-99-0



9 789939 622990

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂՈՒԹՅԱՆ ԳԵՂՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԻ ԴԻՄԻՏՐԻՍՏՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ARMENIAN GENOCIDE MUSEUM-INSTITUTE FOUNDATION